

ՀՐԱՄԱՆԱԻ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

CATHOLICOSATE OF ALL ARMENIANS

VARDAN DEVRIKYAN
SHOGHAKAT DEVRIKYAN

FOUNDATION OF THE PRINTING HOUSE OF THE HOLY ETCHMIADZIN AND ACTIVITY IN XVIII CENTURIE

Holy Etchmiadzin - 2022

КАТОЛИКОСАТ ВСЕХ АРМЯН

ВАРДАН ДЕВРИКЯН
ШОГАКАТ ДЕВРИКЯН

ОСНОВАНИЕ ТИПОГРАФИИ СВЯТОГО ЭЧМИАДЗИНА И ДЕЯТЕЛЬНОСТЬ В XVIII ВЕКЕ

Св. Эчмиадзин - 2022

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ
ՇՈՂԱԿԱԹ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

18-ՐԴ ԴԱՐՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2022

ՀՏԴ 655:27
ԳՄԴ 37.8+76.1+86.37
Դ 418

Հրատարակվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի
և ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳԻ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ՇՈՂԱԿԱԹ ՎԱՐԴԱՆԻ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Դ 418 ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 18-ՐԴ ԴԱՐՈՒՄ / Աշխ.՝ Վ. Դևրիկյան, Շողակաթ Դևրիկյան; Խմբ.՝ Հ. Որսկանյան. – Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2022.– 296 էջ:

Գրքում ներկայացված են Ս. Էջմիածնի տպարանի և թղթի գործարանի հիմնման պատմությունը, կապը Ամստերդամի հայկական տպարանի հետ: Ցույց է տրվում, թե միևնույն թեմայով նկարները հրատարակությունից հրատարակություն ինչ փոփոխություններ են կրել և մանրանկարչության ավանդները ինչ նոր ձևերով ու արտահայտչամիջոցներով են փոխանցվել տպագիր հրատարակություններին:

Ներկայացվում են Ս. Էջմիածնի տպարանի՝ հայ մտավոր կյանքում խաղացած հսկայական դերը և տպագրական ու մշակութային ավանդների շարունակումը հաջորդող շրջանի հայ գրատպության մեջ, տպարանի փակումը պայմանավորող աննպաստ պայմանները և գործունեության վերսկսումը 19-րդ դարի առաջին տասնամյակներին:

Հավելվածում Ս. Էջմիածնի 18րդ դարի 14 հրատարակությունների գրքագիտական-մատենագիտական նկարագրությունն է բերվում:

ՀՏԴ 655:27
ԳՄԴ 37.8+76.1+86.37

Տպագրվում է մեկենասությամբ
«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-296-1

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2022

ՆԱԽԱԲԱՆ

Նոր Ջուղայի տպարանի 1638 թ. հիմնադրմամբ հայկական տպագրությունը գաղթաշխարհից մոտեցավ Մայր երկրին՝ Արարատյան աշխարհին, սակայն ավելի քան 130 տարի էր հարկավոր, որ կատարվեր հաջորդ քայլը՝ հաստատվեր Հայրենիքում: Այն իրականացավ շնորհիվ Սիմեոն Ա Երևանցի (կթղ. 1763-1780 թթ.) իրապես մեծագործ հայրապետի:

Ինչպես նշում է Գ. Լևոնյանը. «Իր քաղաքական-վարչական և հոգևոր դիրքը ամրացած տեսնելով՝ Սիմեոն կաթողիկոս Երևանցին մտածում է Մայր Աթոռի տպարան հաստատել Էջմիածնում, ինչ որ չէր հաջողվել նախորդ կաթողիկոսներին»[1]:

Ս. Էջմիածնի տպարանի պատմության ուսումնասիրվածության աստիճանի մասին Շ. Շահնազարյանը գրում է. «Պետք է ասել, որքան էլ այդ զարմանալի թվա, Հայաստանի առաջին տպարանի գործունեությունը մեր բանասիրության մեջ անհրաժեշտ ուշադրության չի արժանացել: Այն դեպքում, երբ Հայաստանից հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող Վենետիկի, Մարսելի, Պետերբուրգի և այլ քաղաքների հայկական տպարանների գործունեությունը լուրջ ուսումնասիրության առարկա է դարձել, Էջմիածնի տպարանի աշխատանքը շատ կողմերով մնացել է չլուսաբանված»[2]:

Ժամանակին այս բացը մասնակիորեն լրացրել է Մայր Աթոռի նահատակ միաբաններից Արտակ եպս. Սմբատյանցը «Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը» մեծարժեք ուսումնասիրությամբ: Այն, սակայն, ինչպես վերնագիրն իսկ հուշում է, տպարանի գործունեությունից առավել վերաբերում է Մայր Աթոռի միաբանության գրական և մշակութային գործունեությանը և միաբանների իրականացրած հրատարակություններին, որոնք գլխավորաբար տպագրվել են Ս. Էջմիածնի տպարանում: Այնպես որ այստեղ ոչ թե տպարանի պատմությունն է ներկայացվում, այլ Մայր Աթոռի կրթամշակութային գործունեությունը և այն էլ՝ առավելապես 19-րդ դարում:

---

1 **Գ. Լևոնյան,** Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 148:

2 **Շ. Շահնազարյան,** Էջեր Հայաստանի առաջին տպարանի պատմությունից, «Էջմիածին», 1972, ԺԲ, էջ 68:

18-րդ դարի հրատարակություններից ընդամենը մի քանիսն են հպանցիկ հիշվում մեծարժեք այս աշխատության մեջ, քանի որ դրանք հիշյալ գործը գրելու ժամանակ դեռևս հայտնի չէին և ավելի ուշ էին գտնվելու հայ գրքի տարբեր պահոցներում:

Սմբատյանցը, սակայն, անգնահատելի տեղեկություններ է հայտնում տպարանի հիմնադրման մասին՝ վկայակոչելով Մայր Աթոռում վանական բանավոր ավանդույթով հասած մի շարք պատմություններ, որոնք վերաբերում են նաև տպարանի՝ Ս. Էջմիածնում սկզբնապես որտեղ գտնվելուն: Գիտնական հոգևորականը շրջանառության մեջ է դրել տպարանի հետ կապված մի քանի կարևոր վավերագրեր, ինչպես նաև հավաքել տպարանի հիմնադրման շրջանի հետ կապված մի շարք առարկաներ:

Հետագայում հայ հնատիպ գրքի պատմության, հայկական մատենագիտության, հայ ժողովրդի և հատկապես Հայոց եկեղեցու 18-19-րդ դարերի պատմության մասին գրելիս տպարանին անդրադարձել են մի շարք հետազոտողներ, որոնց աշխատանքները համապատասխան վերլուծություններով վկայակոչվել են այս գրքում: Մեր ուսումնասիրության նպատակն է եղել ներկայացնել Ս. Էջմիածնի տպարանի գործունեությունը 18-րդ դարում Սիմեոն Ա Երևանցու (կթղ. 1763-1780 թթ.) և Ղուկաս Ա Կարնեցու (կթղ. 1780-1799 թթ.) հայրապետության տարիներին:

Հայ հնատիպ գրքերի շրջանակում Ս. Էջմիածնի հրատարակությունները գրքագիտական համառոտ նկարագրություններով ներկայացրել է Տ. Ներսես քհն. Ներսիսյանը՝ թվարկելով, թե դրանցից որ հրատարակություններն են գտնվում բրիտանական տարբեր հավաքածուներում [3]:

Վերջերս լույս տեսավ Ս. Էջմիածնի 1772-1920 թթ. հրատարակությունները ընդգրկող Մատենագիտությունը՝ ծավալուն առաջաբանով: Այն իրապես կոթողային աշխատանք է և մանրամասն պատկերացում է տալիս Ս. Էջմիածնի տպարանի 150 տարվա հրատարակությունների մասին[4]:

Գյուտ ավ. քհն. Աղանյանցը տպարանի հիմնադրման պատճառների մասին գրում է. «Այդ խաւարին դարում, ազգի անյատակ տգիտութիւնը, որի շնորհիւ հեշտութեամբ պատուաստում էին նորան կրօնական

---

[3] **Vrej Nersessian**, Catalogue of early Armenian books, 1512-1850, The British Library, 1980. Pp. 32-34.

[4] Տե՛ս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայ գրատպության կենտրոն. Հրատարակությունների մատենագիտություն՝ 1772-1920, կազմողներ՝ Մ. Գրիգորյան, Ս. Պետոյան, Գ. Գրիգորյան, Գ. Նազարյան, Շ. Ոսկանյան, Հ. Սուվախչյան, Ա. Գալստյան, պատասխանատու խմբագիր՝ Գ. Տեր-Վարդանյան, խմբագրությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Գրիգորյանի, նախագծի հեղինակ և համակարգող՝ Տ. Ասողիկ աբեղ. Կարապետյան, 744 էջ:

օտար գաղափարներ, միաբանութեան մտաւոր խեղճութիւնը և վերջապէս այն հոսանքը, որ գալիս էր արևմուտքից՝ Ս. Ղազարու վանքից, շատ վաղուց յղացրել էին Սիմէոնի մէջ Ս. Էջմիածնում տպարան հիմնելու միտքը»[5]:

Հ. Գ. Զարպհանալեանը երկու պատճառ է նշում. առաջին՝ ետ չմնալ Կ. Պոլսի և Վենետիկի հայկական հրատարակություններից, երկրորդ՝ հակազդել լույս տեսնող այն գրքերին, որոնք հակասում էին Հայոց եկեղեցու դավանությանը. «Նոյն միջոցին՝ Վենետիկ և Պոլիս քիչ շատ գործունէութիւն կը ցուցնէին, տպագրութեամբ թէ եկեղեցական և թէ արտաքին մատենագրութեան երկասիրութիւններ ընծայելով ազգին: Հայրապետական աթոռոյն պատիւն և պարտք կը պահանջէին, որ անոնցմէ յետամնաց չերեւնայ, մանաւանդ որ երբեմն այնպիսի երկասիրութիւնք կը հրատարակուէին՝ որ չէին կրնար ըստ ամենայնի հաճոյանալ Աթոռոյն, հարկ համարուելով՝ իր կրօնական ուղղութեան և սկզբանց հաւատարիմ մնալու համար, կերպով մը հակառակիլ այդ գործունէութեան»[6]:

Ս. Էջմիածնում այս շրջանում հրատարակված գրքերը փորձել ենք ներկայացնել միջգիտակարգային համալիր հետևյալ մոտեցմամբ: Ցույց տալ ժամանակի պատմական եկեղեցաքաղաքական այն միջավայրը, որով պայմանավորված են եղել Ս. Էջմիածնի հրատարակությունները և անդրադառնալ այն հարցերին, թե հայ ձեռագրային ավանդները ինչպես են փոխանցվել Մայր Աթոռի տպագիր հրատարակություններին՝ սկսած ձեռագրային լուսանցազարդերի, զարդագրերի, կիսախորանների և ճակատազարդերի կիրառությունից:

Ս. Էջմիածնի տպարանը գտնվում էր ոչ միայն Հայոց աշխարհի սրտում, այլև այստեղ էր հայ ձեռագրային աշխարհի ամենամեծ հավաքածուն՝ Ս. Էջմիածնի հռչակավոր Մատենադարանը: Մայր Աթոռում կենդանիորեն շարունակվում էին նաև հայ ձեռագրային և հատկապես զարդանկարչության անցյալի ավանդները կաթողիկոսական կոնդակներով և Հայոց հայրապետական աթոռի համար գրվող ծիսա-տոնացուցային տարբեր ժողովածուներով:

Հայ գաղթաշխարհի տպարաններում 16-18-րդ դարերում ծառանում էր անգամ հրատարակվող գրքերի բնագրերի ձեռագիր օրինակներ գտնելու հարցը, էլ չասած բավարար թվով ձեռագրեր ունենալը տպագիր գրքերի զարդանկարչական ձևավորման համար: Ս. Էջմիածնի Մատենադարանը, այնինչ, հնարավորություն էր տալիս ընտրել առա-

---

5 Դիւան հայոց պատմութեան, հտ. Գ,Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, կազմեց Գիւտ աւ. քհնյ. Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ ՃԾԷ:

6 **Հ. Գ. Զարպհանալյան,** Պատմութիւն հայկական տպագրութեան, Վենետիկ, 1895, էջ 181-182:

վել բնորոշ ձեռագրեր՝ կատարելով ստեղծագործական համապատասխան ընդհանրացումներ, որը տեսնում ենք Մայր Աթոռի 18-րդ դարի հրատարակություններում:

Ելնելով վերն ասվածից՝ սույն աշխատության մեջ անդրադարձել ենք հետևյալ հարցերին:

Առաջին՝ հայկական տպագրության ընդհանուր օրինաչափություններին և հատկապես Ամստերդամի Ոսկանյան տպարանի, Կ. Պոլսի և Ս. Ղազարի հրատարակությունների հետ Ս. Էջմիածնի տպարանի ունեցած ընդհանրություններին և կապին:

Երկրորդ՝ կապը եվրոպական և հատկապես հոլանդական և իտալական գրքարվեստի հետ, որն արտահայտվել է ուղղակի և անուղղակի առնչություններով: Անուղղակիորեն այն դրսևորվել է՝ փոխանցվելով հայ գաղթաշխարհի տպագրական կենտրոններին, որոնց միջոցով և Ս. Էջմիածնի հրատարակություններին: Ուղղակիորեն՝ իրականացվել է եվրոպական գրքարվեստի անմիջական ազդեցությամբ:

Երրորդ՝ նշվում է, որ Ս. Էջմիածնի հրատարակություններում ազգային թեմաներով ընտրվել են այնպիսի պատկերներ, որոնք պատմական միջավայրի առումով և աշխարհագրորեն կապվում են Սուրբ Էջմիածնի, Լուսավորչի տեսիլի և Հայոց Դարձի հետ՝ յուրօրինակ պատկերային վերախմբագրման և պանծացման ենթարկելով տարբեր հրատարակություններում մինչ այդ այս թեմաներով եղած նկարները:

Պատկերների իմաստային նման բացարձակացումը համահունչ էր Ս. Էջմիածնի հրատարակություններին, որոնց առանցքային նպատակն էր Հայոց եկեղեցու ծեսի ու դավանանքի պաշտպանությունը և Ս. Էջմիածնի, որպես հայ ժողովրդի հոգևոր կենտրոնի ու ազգահավաքման գաղափարի ընդգծումը:

Չորրորդ՝ հայ գրքի պատմությանը նվիրված որևէ աշխատության մեջ անդրադարձ չի եղել հնատիպ գրքերում այնքան տարածված փորագրապատկեր և վերջինիս ներքո գտնվող չափածո մեկնաբանական տողեր հարաբերակցությանը: Նման պատկերները հայ հնատիպ գրքում սկսում են «Սաղմոսարանի»՝ Ամստերդամի հայկական տպարանի 1661-62 թթ. հրատարակությունից, ապա մեծ տարածում գտնում 18-րդ դարում:

Մենք ուսումնասիրել ենք նման պատկերներից յուրաքանչյուրի ներքո գտնվող չափածո տողերը, թե դրանք որքանով են ներկայացնում նկարի պատկերագրական կառուցվածքը և Տերունական տվյալ պատկերի պարունակած հոգևոր խորհուրդը: Նման վերլուծության ընթացքում բոլոր այդ պատկերները և վերջիններիս չափածոները զուգահեռի մեջ ենք դիտել 17-18-րդ դարերի համաբնույթ կառուցվածք ունեցող նկարների հետ:

Հինգերորդ՝ Տերունական պատկերների փորագրանկարների տեղադրման սկզբունքները Ս. Էջմիածնի ծիսատոնական հրատարակություններում՝ «Սաղմոսարան», «Տոնացույց», «Շարակնոց»: Ցույց է տրվում, թե հայ ձեռագրային ավանդույթի թելադրանքով որ տոներին կից են Տերունական պատկերները դրվել, և այդ պատկերները իրենց պատկերագրությամբ որքանով են համապատասխանում հայ ձեռագրային ավանդույթին և ժամանակի եվրոպական գրատպությանը, այդ թվում նաև գաղթաշխարհի հայկական հրատարակությունների պատկերների ընդհանուր ոճին և կոմպոզիցիային:

Վեցերորդ՝ գրքագիտական և բնագրագիտական առումով հնատիպ և հատկապես հայ հնատիպ գրքի պատմության համար հատուկ կարևորություն ունի այն հարցը, թե ինչ ձեռագրերից է իրականացվել տպագիր հրատարակությունը, և տվյալ գրքի շարվածքը ինչ ձեռագրերից է կատարվել: Մեզ հաջողվել է գտնել Ս. Էջմիածնի մի քանի հրատարակությունների՝ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագիր այն օրինակները, որոնցից իրականացվել է այդ հրատարակությունների շարվածքը:

Տպագրության համար հիմք ծառայած ձեռագիր այդ օրինակները առավել տեսանելի ձևով են ցույց տալիս, թե ձեռագրերի գեղարվեստական հարդարանքը որքանով է վերարտադրվել կամ փոփոխություններ կրել տպագիր օրինակներում:

Այսպիսով Ս. Էջմիածնի հրատարակությունները գրքարվեստի տեսանկյունից՝ գրքային ձևավորում, գեղարվեստական հարդարանք և փորագրապատկերներ, զուգահեռի մեջ ենք դիտել հայկական ձեռագրերի և 16-18-րդ դարերի հայկական ու եվրոպական տպագրությունների հետ:

Էջմիածնի տպարանի պատմության շրջանակում յուրաքանչյուր հրատարակության դեպքում այն համապատասխան թեմատիկ-բովանդակային վերլուծության ենք ենթարկել՝ ցույց տալով նաև եկեղեցապատմական այն գործոնները, որոնք պայմանավորել են տվյալ գրքի տպագրությունը: Նման վերլուծությանը զուգահեռ ամեն գրքի դեպքում «Գրքարվեստ» խորագրի ներքո կատարել ենք այդ հրատարակության գրքագիտական և արվեստագիտական վերլուծությունը:

Նման եղանակով կատարված սույն աշխատանքը, կարծում ենք, առավել հստակ պատկերացում կտա, թե ինչպես ժամանակի դժնդակ պայմաններում իրականացվեց Ս. Էջմիածնի տպարանի ու թղթի գործարանի հիմնման անհրագործելի թվացող ծրագիրը և Մայր Աթոռի միաբանության հավաքական ջանքերով նման բարձրարվեստ հրատարակությունների լույս ընծայումը, որոնցից մի քանիսը կարող են մրցել ժամանակի եվրոպական տպագրությունների հետ:

Սուրբ Էջմիածնի տպարանի հիմնումը և գործունեությունը գալիս է մեկ անգամ ևս վկայելու, որ ազգային մեծ ծրագրերի իրականացման համար ժամանակի նպաստավոր պայմաններից առավել հարկավոր է գաղափարի մտասևեռում՝ ուժերի անօրինակ լարմամբ, նվիրումով և ապագայի հանդեպ աներեր հավատով:

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Տպարանի կառուցման գաղափարը Սիմեոն Ա. երևանցին հղացել էր կաթողիկոսական գահ բարձրանալուց դեռևս 20 տարի առաջ՝ հնդկահայ գաղութում նվիրակ եղած ժամանակ, երբ հնդկահայ մեծահարուստներից Գրիգոր Զաքիկյանցը նրան խոստացել էր հոգալ անհրաժեշտ բոլոր ծախսերը՝ ի հիշատակ իրեն և իր գերդաստանի[7]։

Սիմեոն Երևանցին 1763 թվականին՝ կաթողիկոսական ընտրությունից հետո, Հնդկաստանում Մայր Աթոռի նվիրակ Հովսեփ վարդապետի միջոցով բարերարին հիշեցնում է տված խոստումը։ Հովսեփ վարդապետը գրում է, որ Զաքիկյանցը խոստացել էր 9000 ոսկի տալ, եթե Սիմեոն կաթողիկոսը Ս. Էջմիածնում տպագրատուն հաստատի՝ «մեն տպայգրատուն հաստատէ, մշտնջենաւոր, որ մեր հայոց գրքերն միշտ ստամբայ տան իւրն ծնօղացն յիշիտակ մնա»։

Զաքիկյանցը, վերահաստատելով խոստումը, կնքում է նվիրակի ներկայացրած թղթի ներքո[8]։ Նա տպարանի կառուցման համար հատկացնում է 3106 ոսկի[9]։ 9000-ի փոխարեն այսքան է տալիս, որովհետև, ըստ երևույթին, հնդկահայ բարերարը ամբողջ գումարը հաշվել էր թղթի գործարանի հետ միասին, ինչպես որ մի քանի տարի անց տալիս է նաև գործարանի գումարը, որով երկուսը միասին գերազանցում են 10000 ոսկին։ Ասվածը հաստատվում է և կաթողիկոսի՝ բարերարին ուղղված խոսքերով, թե Մայր Աթոռին անհրաժեշտ է ունենալ նախ տպարան, ապա և թղթաշինարան, որոնք կարևորելով ասում է, թե «ուսմամբ է յառաջադիմում ամեն ազգ»[10]։

---

7 **Մաղաքիա արքեպս. Օրմանյան,** Ազգապատում, հտ. Բ, Կ. Պոլիս, 1912, էջ 3099:

8 Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 6, տես նաև **Շ. Շահնազարյան**, Էջեր Հայաստանի առաջին տպարանի պատմությունից, «Էջմիածին», 1972, հմր. ԺԲ, էջ 66:

9 **Գ. Լևոնյան,** Հայ գիրքը և տպագրության արվեստը, էջ 148:

10 Դիւան Հայոց պատմութեան, հտ. Գ, աշխտ.Գիւտ աւ. քհնյ. Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ ՃԾԷ:

Այդ ժամանակ Ամստերդամում նորջուղայեցի Առաքել խոջա Պողոսյանը Յոհան Միխայել Ֆլայդշմանին (1707-1768 թթ.), ով Նյուրնբերգում ծնված և Ամստերդամում հաստատված տպագրափորագրիչ վարպետ էր, հայերեն տառեր է պատվիրում պատրաստել: Սակայն ձեռք բերված տառերով գրքեր չի կարողանում տպագրել՝ հայերեն իմացող գրաշարներ չունենալու պատճառով:

Տեղեկանալով այս մասին՝ Սիմեոն կաթողիկոսը փորձում է նրան Մայր Աթոռ հրավիրել կամ գնել նրա ունեցած տառատեսակները: Կաթողիկոսական դիվանում ասվում է, որ Ամստերդամում բնակվող Խոջա Առաքել Ջուղայեցին «ունէր զգիր ազնիւ»: Սիմեոն կաթողիկոսը ասում է, որ եթե տպագրական այդ տառերը նվիրի Մայր Աթոռին, ապա դա մեծ հիշատակ կլինի նրա հոգու համար, իսկ եթե չուղարկի, միգուցե այնտեղ չկարողանա տպագրատուն հաստատել, ինչպես որ չի կարողացել մինչև այդ:

Առաքել Ջուղայեցուն նաև ասում է, որ եթե ինչ-ինչ պատճառներով, այնուամենայնիվ, չի կարող իր ունեցած տպատառերը նրան տալ, ապա այն փորագրիչին, ում մոտ պատվիրել է իր տառերը և փորագրանկարները, բոլոր տառատեսակներից՝ «զգիր յամենայն տեսակէ մանր և մեծ, պատկերօք և ծաղկագրօք և այլ պարագայիւք», պատրաստել տա և Ղուկաս վարդապետի միջոցով ուղարկի Մայր Աթոռ, իսկ Զմյուռնիայի առաջնորդ ու նվիրակ Ղուկաս վարդապետը նրան կտա անհրաժեշտ գումարը[11]:

Այս ծրագիրը, սակայն, չի հաջողվում, քանի որ Առաքել Ջուղայեցու տպարանը գրավ է դրվում և բռնագրավվում[12]:

Նույն ժամանակահատվածում Վենետիկում հայկական տառեր է պատրաստում Մայր Աթոռի միաբան և այդ ժամանակ Պոլսում ապրող Սարգիս վարդապետ Կեսարացին: Սիմեոն կաթողիկոսը փորձել է ձեռք բերել և այս տառերը: Կաթողիկոսական դիվանում 1766 թ. հոկտեմբերի երկուսի ներքո գտնվող «Հարցումն սրբազան Վեհին յաղագս բերելոյ զտպագրական գիր ի սուրբ Աթոռս» գրության սկզբում շեշտվում է, թե կաթողիկոսը մեծ ջանքեր է գործադրել Մայր Աթոռում տպարան հաստատելու համար. «Ջան մեծ էր սրբազան Վեհիս մերոյ, հաստատել զտպագրատուն ի Սուրբ Աթոռոջս»[13]:

Այնուհետև ասվում է, որ Կ. Պոլսում Կեսարացի Սարգիս վարդապետի մոտ կա «գիր տպագրական փորագրեցեալ ի Վենետիկ, յոյժ ազնիւ և քաղցրատես, որով զէֆէմէրտէս գիրքն տպեալ էր»: Այդ տառերով ո՛չ Սարգիս վարդապետն ինքն էր որևէ գիրք տպագրում և ո՛չ էլ այդ գրերն էր տալիս ուրիշներին, որ նրանք տպագրեին, ուստի «Գրեաց առ նա Սր-

---

11 Նույն տեղում, էջ 552-553:

12 Տես **Հ. Գ. Զարբհանալյան,** Պատմութիւն հայկական տպագրութեան, Վենետիկ, 1895, էջ 183:

13 Դիւան Հայոց պատմութեան, հտ. Գ, աշխտ. Գիւտ քինյ. Աղանեանց, էջ 550:

բազան Վեհն զթուղթ սիրոյ և խնդրեաց տալ զտպագրական գիրն Սրբոյ Աթոռոյս»՝ կա՛մ վաճառելով և կա՛մ էլ ի հիշատակ իր հոգու[14]։

Սիմեոն կաթողիկոսը 1766 թ. վերջին նամակ է գրում Պոլսում գտնվող մահտեսի Մովսեսին, որ նա բանակցի Սարգիս վարդապետի հետ՝ այդ տառերը ձեռք բերելու համար։ Տեղեկացնում է, որ Սարգիս վարդապետը իր մոտ եղած տառերը ցանկացել է վաճառել 1800 ղուռուշով։ Կաթողիկոսը մահտեսի Մովսեսին ասում է, որ փորձի սակարկել և ավելի էժան գնել, սակայն եթե չստացվի, ապա այդ գնով ձեռք բերի[15]։

Մինչ կաթողիկոսի գրած նամակը տեղ է հասնում, Սարգիս վարդապետը վաճառած է լինում տառերը կեսարացի Գևորգ դպիրին։ Վերջինս Կ. Պոլսի Վեզիր խանում տպարան է հիմնում[16]։

Սիմեոն Ա. Երևանցին Զմյուռնիայի նվիրակ Ղուկաս վարդապետին պատվիրում է տեղի հայ տպագրիչ Մարկոսի հետ պայմանավորվել, որպեսզի նա էջմիածին գա և Մայր Աթոռում կազմակերպի տպագրական գործը։ Ղուկաս վարդապետն ի պատասխան ասում է, որ Մարկոս տպագրիչը ցանկանում է նախ մի «Սաղմոսարան» տպագրել և հետո գալ։

Կաթողիկոսը նվիրակին գրում է, որ եթե տպագրիչը փողի պատճառով է ձգձգում իր գալը, թող նրան համապատասխան գումարը տա, և Մարկոսը, գալով Մայր Աթոռ, այնտեղ տպագրի «Սաղմոսարանը»։ Կարճ ժամանակ անց նույնը կրկնում է ավելի խիստ ձևով[17]։

Ակնցի Մարկոս տպագրիչը Զմյուռնիայից գալիս է տպարանի բացվելուց հետո։ Կարճ ժամանակ անց, սակայն, վախճանվում է և թաղվում Ս. Գայանե վանքի Ս. էջմիածնի միաբանական գերեզմանատանը։ Նրա տապանաքարին գրված է. «Այս է տապան հանգստեան Ակնցի տպագիր ծերունազարդ Մարկոսին, որ եկեալ ի Սուրբ Աթոռս և շինեալ զգործարանն, փոխեցաւ առ Քրիստոս բարի մահուամբ, որում Տէր ողորմեսցի, ի ՌՄԻ (1771) թվին»[18]։

Մեծագործ հայրապետն այնուհետև որոշում է Մայր Աթոռի միաբանության ուժերով կազմակերպել և իրականացնել տպագրական գործը։

Տպարանի շինությունն ավարտվում է 1771 թվականին, որի կառուցման և տպագրական գործիքների ու տառերի ձեռքբերման բոլոր ծախսերը հոգում է Գրիգոր Միքայելյան-Խոջաջանյան Ջաքիկյանցը։

---

14 Նույն տեղում, էջ 551:

15 Նույն տեղում, էջ 551-552:

16 Տես **Մաղաքիա արքեպս. Օրմանյան,** Ազգապատում, հտ. Բ, Կ. Պոլիս, 1912, էջ 3098-99:

17 Դիւան հայոց պատմութեան, հտ. Գ, էջ ՃԾԸ:

18 **Արտակ եպս. Սմբատյանց**, Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, Ս. Էջմիածին, 1973թ., էջ 46, տես նաև **Հարությունյան Ա.,** Վաղարշապատ.վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 180-181:

Նորակառույց տպարանի կենտրոնական դռան ճակատին զետեղված արձանագրությունը բարեբախտաբար պահպանվել է և այժմ գտնվում է ՀՀ Պատմության պետական թանգարանում: Նրանում ասվում է, որ տպարանը կառուցվել է Գրիգոր Զաքիկյանցի միջոցներով՝ ի հիշատակ իրեն և իր գերդաստանի. «Աստուծով հաստատեցաւ տպագրատունս ի նորոյ ի Սուրբ Աթոռս էջմիածին ամենայն պարագայիւքն հոգաբարձութեամբ Տեառն Սիմէօն սրբազան կաթուղիկոսին երեւանցւոյ, արդեամբ Ջուղայեցի ի Հինդ բնակեալ բարեպաշտօն Գրիգոր աղային Խօջաջանեան, որ մականուամբ Զաքիկեանց կոչի»[19]: Շարունակության մեջ նշվում է, որ տարեկան երկու անգամ՝ Գրիգոր Լուսավորչի և Հրեշտակապետաց տոներին, հոգեհանգստյան կարգ է սահմանվում՝ ի հիշատակ Զաքիկյանց գերդաստանի. «Ի տարին Բ (2) ի տօնի Լուսաւորչին, Հրեշտակապետացն ի Սուրբ աթոռոջս պատարագ մատչիցի հանդիսաւորութեամբ յիշելով զնոսա»[20]:

Տպարանը կոչվում է Գրիգոր Լուսավորչի անվամբ: Ս. էջմիածնի անունով չի կոչվում ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ չշփոթվի Ամստերդամի Ս. էջմիածնի և Ս. Սարգսի տպարանի հետ: Անհրաժեշտ է նշել, որ 19-րդ դարի 80-ական թվականներից Ամստերդամի տպարանի հրատարակություններն են սխալմամբ համարվել Ս. էջմիածնում լույս տեսած՝ տպարանի անվան առաջ բերած շփոթության պատճառով: Անգամ այն տեսակետն է հայտնվել, որ Սիմեոն Ա Երևանցին ոչ թե հիմնել, այլ նորոգել է տպարանը[21]:

Սիմեոն կաթողիկոսը 1773 թ. Զաքիկյանցին գրած նամակում ասում է, որ տպարանի շենքը վերակառուցմամբ ընդլայնվել է. «Զտպագրատունն սակաւ ինչ փոքրիկ էր, յայսմ ամի մեծացուցաք, զի ամենայն գրոց և գործավարաց նոցին, ընդարձակ տեղիւ լինիցին մերձ միմեանց»[22]:

Հետևաբար մինչև շենքի նոր հատվածի կառուցումը տպագրության համար անհրաժեշտ աշխատանքների մի մասը, թերևս նաև պահեստը և գրաձուլարանը, այլ շինություններում են եղել: Սիմեոն կաթողիկոսը տպագրության հետ կապված բոլոր աշխատանքները կենտրոնացրել է մի շենքում:

Զաքիկյանցին 1773 թ. ուղղված մեկ այլ նամակում տպարանի մասին գրում է. «Իսկ ի կողմանէ տպագրատան միամիտ և անհոգ և ուրախ լիցիս, զի Աստուծով ահա հաստատեցաւ լաւապէս և օրըստօրէ լաւագոյն հաստատի»[23]:

---

19 **Հարությունյան Ա.,** Վաղարշապատ. վանքը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 74:

20 Նույն տեղում, էջ 74:

21 Տես «Արձագանք», Թիֆլիս, 1886, հմր. 10, էջ 147-149, հմր. 17, էջ 249-251 և «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1886, հմր. 35:

22 Տես **Շահնազարյան Շ.,** Էջեր Հայաստանի առաջին տպարանի պատմությունից, «Էջմիածին», 1972, հմր. 12, էջ 67, տես նաև Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 35:

23 Դիւան հայոց պատմութեան, հտ. Գ, էջ ՃԿԳ:

Տեսնելով, որ Եվրոպայից չի հաջողվում հայերեն տպատառեր ձեռք բերել, Սիմեոն կաթողիկոսը որոշում է տառերը, զարդանախշերը և փորագրապատկերները պատրաստել տեղում։

Սիմեոն կաթողիկոսի՝ Ս. Էջմիածնում 1772 թ. տպագրած «Ջբօսարան հոգեւոր» աղոթագրքում մեկ առ մեկ հիշվում են այն միաբանները, ովքեր մասնակցել են գրքի տպագրությանը։

Առաջինը հիշվում է կաթողիկոսական տեղապահ Մկրտիչ արքեպս. Շոռոթեցին, ով անվանվում է «հանճարաշատ»։ Նման բնորոշումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ինչպես հիշատակարանում է ասվում, նա «առանց հեղինակի և ուսուցանողի՝ աստուածատուր շնորհօքն իւրովք զամենայն այբուբենական գիրս մեր՝ եթէ զբոլորատառան և թէ զնօտրատառան՝ հանդերձ գլխագրովք և ամենայն պարագայիւքն իւրեանց նոր ի նորոյ փորագրեաց ի պողովատս՝ էհար ի պղնձեայս, և ի լոյս էած ի կապարեայս զգիրս զայս գեղեցկատես՝ զոր տեսանէք»[24]։

Այստեղ ներկայացված է տպագրական տառերի պատրաստման ողջ ընթացքը։ Շոռոթեցու համար ասվում է «առանց հեղինակի և ուսուցանողի», որովհետև նա ինքնուրույնաբար է կատարել տառերի գծագրությունը գրաֆիկական առումով։ Գծել է և՛ շեղագիր, և՛ բոլորգիր տառաձևեր՝ տարբեր չափերի՝ իրենց գլխագրերով։ Ապա իրականացրել է տառաձևերի պողպատյա կաղապարների փորագրումը, հետո դրանցից ձուլել պղնձյա մայրերը, որոնցից պատրաստել է շարվածքի համար անհրաժեշտ կապարե գրերը։ Հիշատակարանի հեղինակը դրանք անվանում է «գեղեցկատես»։

1775 թ. տպագրված «Տօնացոյցի» հիշատակարանում Մկրտիչ եպս. Շոռոթեցին հիշվում է որպես տպարանի տառերի առաջին պատրաստող։ Մկրտիչ արքեպս. Շոռոթեցին որպես տպագրության մասնակից այլևս չի հիշվում Ս. Էջմիածնի հետագա որևէ հրատարակության մեջ։ Մկրտիչ Շոռոթեցուն զուգահեռ՝ Ս. Էջմիածնում 1760 -1780 -ական թթ. հիշվում է մեկ այլ Մկրտիչ արքեպիսկոպոս։ Մկրտիչ արքեպս. Շոռոթեցին և Մկրտիչ արքեպիսկոպոսը, իրար հաջորդելով, հիշվում են «Տոնացույցի» 1774-75 թթ. հիշատակարանում։ Շոռոթեցուց անմիջապես հետո հիշվող Մկրտիչ արքեպիսկոպոսի համար ասվում է, որ «յամենայնի որպէս զմայր՝ հոգածու և խնամատար լինի գործավարացն սորին՝ հոգալով զկարիս և զպիտոյսն յամենայնի»[25], որից կարելի է եզրակացնել, թե նա դարձել է տպարանի ընդհանուր վերատեսուչը, ում գլխավորությամբ իրականացվել է տպարանի գործունեությունը։

Մկրտիչ արքեպիսկոպոսը բնորոշվում է որպես «զհոգեծին և զհարազատ բնական զաւակն մեծի հայրապետիս մերոյ»[26]։ Այս ձևով է նա հիշվում

---

24 **Սիմէօն Ա Երեւանցի,** Ջբօսարան հոգեւոր, Էջմիածին, 1772, էջ177-178:

25 Տօնացոյց, Ս. Էջմիածին, 1774-1775, էջ 563:

26 Նույն տեղում:

նաև 1783 թ. տպագրված «Պարտավճարի» հիշատակարանում, որի տողերից նաև երևում է, որ արդեն կապ չի ունեցել Ս. Էջմիածնի հրատարակութ-յունների հետ. «Արժանի է հիշման և բնիկ հարազատ սպասաւորն և օրհնածին զաւակն հանգուցելոյ Հայրապետին՝ Մկրտիչ արքեպիսկոպոսն, որ յամենայնի խնամածու լինէր գործավարացն սորին, հոգալով զպիտոյսն»[27]:

Գ. Տեր-Վարդանյանի հրատարակած «Ժամանակագրութիւն ձեռնադրութեանց» ժողովածուի մեջ ներկայացված են Մայր Աթոռում կատարված ձեռնադրությունները 1759 -1798 թթ.: Սիմեոն կաթողիկոսը 1763 թ. ապրիլի 20-ին Մկրտիչ սարկավագին պատվիրում է մի մատյանում գրանցել կաթողիկոսի կատարելիք ձեռնադրությունները: Վերջինիս կազմած ժամանակագրությունից երևում է, որ Մկրտիչ սարկավագը երկրորդ այս Մկրտիչ արքեպիսկոպոսն է, ով Սիմեոն Երևանցու՝ 1763 թ. կաթողիկոսական գահ բարձրանալուց հետո՝ 1765 թվականից մինչև կաթողիկոսի վախճանվելը և Ղուկաս կաթողիկոսի ընտրվելուն նախորդող շրջանում հիշվում է որպես կաթողիկոսական տեղապահ[28]: 1768 թ. նա ձեռնադրվել է եպիսկոպոս: Նույն 1768 թ. նա որպես արքեպիսկոպոս է հիշվում Սիմեոն Երևանցու գործերը պարունակող ձեռագրում, որն այժմ Երևանի Մատենադարանի հմր. 1817 մատյանն է: Այս ձեռագրի 1779 թ. գրված հիշատակարանում նա իր մասին ասում է. «Ես՝ Սրբոյ էջմիածնի միաբան, տեղապահ Մկրտիչ վարդապետս»[29]: Արքեպիսկոպոսի փոխարեն վարդապետ է գրում՝ ընդգծելով իր գիտնական հոգևորական լինելը: Նույն ձևով թեև արքեպիսկոպոս էր նաև հայ տպագրության երախտավորներից Ոսկան Երևանցին, սակայն նա ևս իրեն անվանում էր վարդապետ, և այսպես է հիշվում պատմության մեջ:

Մկրտիչ արքեպիսկոպոսը իր միջոցներով կառուցել է Ս. Հռիփսիմե վանքի հյուսիսային պարիսպը[30]:

Վախճանվել է 1789 թ.: Նրա տապանաքարին գրված է.

Այս է գերեզման և մարմնոյ տեղին
Մկրտիչ արհիեպիսկոպոսին,
Սիմէօն վեհի մեծ պաշտօնէին,
Որ հանգեաւ ի Տէր մեր թուականին
ՌՄԼԸ (1789) ի յուլիսի Ը (8)[31]:

---

27 **Սիմեոն կաթողիկոս**, Պարտավճար, Ս. Էջմիածին, 1779-1783, էջ 381:

28 Տես **Հունանյան Գ.** (Գ. Տեր-Վարդանյան), ժամանակագրութիւն ձեռնադրութեանց, «Էջմիածին», 1980, հմր. Ժ, էջ 43-44, տես նաև Դիւան հայոց պատմութեան, Գիրք Գ, էջ 150, 759, Գիրք Դ, էջ ԼԳ-ԼԴ:

29 Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց, Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Զ, խմբ. Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2012, էջ 62:

30 **Հարությունյան Ա.,** Վաղարշապատ, Վանքեր և վիմական արձանագրություններ, Ս. Էջմիածին, 2016, էջ 253:

31 Նույն տեղում, էջ 195:

Ինչ վերաբերում է Մկրտիչ արքեպս. Շոռեթեցուն, նա 1781 և 1784 թթ. հիշվում է որպես առաջնորդ Ուչքիլիսեի Ս. Կարապետ վանքի[32]։

Տպագրության ընթացքը հսկել է Իսահակ վրդ. Գեղամացին, ով անվանվում է «շնորհաշատ»։ Նրա համար ասվում է, որ «աշխատի անձանձիր ի շարագրելն, ի սրբագրելն և ի փորձատես լինիլն տառից, բառից՝ բանից և այլոց որպիսութեանցն գործոյս, և գրեթէ՝ սա կանօնաւորէ յամենայնի զգործս զայս»[33]։ «Փորձատես լինել» բառերով նկատի ունի շարվածքից ազդօրինակը որպես փորձնական տպագրություն հանելը, որը կատարվում է տպաքանակը տպագրելուց առաջ։ Նա իրականացրել է նաև շարվածքի սրբագրությունը։ Վերջինս այնպես տաժանալից չի եղել, ինչպես էր Եվրոպայի հայ տպագրիչների համար, քանի որ գրաշարները ոչ թե օտարազգիներ էին, այլ հայ գրչությանը քաջահմուտ միաբաններ։

Նրան տրված այն բնորոշումը, թե կանոնավորում է տպագրության հետ կապված բոլոր գործերը, ցույց է տալիս, որ եղել է տպարանի տեսուչը։ Գեղամացու տպարանի տեսուչ լինելը և աշխատանքները վերահսկելն ավելի ցայտուն երևում են 1774-75 թթ. տպագրված «Տօնացոյցի» հիշատակարանի հետևյալ խոսքերից. «ՋԻսահակ եպիսկոպոսն Գեղամացի, որ յամենայնի կարգաւորիչ և տնօրինիչ է գործոյս և գործավարացն սորին անձանձիր աշխատեցմամբ»[34]։ 1777 թ. տպագրված «Կարգ թաղման կարգաւորաց» գրքի հիշատակարանում նույն ձևով ասվում է. «Այլև յիշեսջիք զԻսահակ եպիսկոպոսն Գեղամացի, որ վերակացու և կարգաւորիչ է գործարանիս»[35]։

Իսահակ եպս. Գեղամացին Ս. Էջմիածնի հրատարակություններում վերջին անգամ հիշվում է «Պարտավճարի» հիշատակարանում։ Նրա մասին եղած հիշատակությունից երևում է, որ մասնակցել է «Պարտավճարի» տպագրությանը Սիմեոն կաթողիկոսի հայրապետության շրջանում, ապա այլ ծառայության է կոչվել։ Նրա՝ տպարանում աշխատելու մասին թեև արդեն անցյալ ժամանակով է խոսվում, սակայն ասվում է, որ մասնակցել է «Պարտավճարի» տպագրությանը՝ «..որ կարգաւորիչ և կառավարիչն էր գործոյս և գործավարաց սորին։ Որ և մանաւանդապէս ի տպեցումն և ի սրբագրութիւն սոյնոյ գրքոյս աշխատեցաւ»[36]։ Այնուհետև դառնում է Ս. Էջմիածնի նվիրակը Կ. Պոլսում։ Նրա գործունեության այս շրջանի մասին կգրենք տպարանի հրատարակությունների Ղուկաս Ա Կարնեցուն վերաբերող բաժնում։

---

32 «Ժամանակագրութիւն ձեռնադրութեանց», «Էջմիածին», 1980, հմր. Ժ, էջ 47-48:

33 **Սիմեոն Ա Երևանցի,** Զբօսարան հոգեւոր, էջ 179:

34 Տօնացոյց, Ս. Էջմիածին, 1774-75, էջ 563:

35 Կարգ թաղման կարգաւորաց, Ս. Էջմիածին, 1777, էջ 160:

36 Պարտավճար, Ս. Էջմիածին, 1779-1783, էջ 381:

Գեղամացին Սիմեոն կաթողիկոսի հայրապետության շրջանում դառնում է նաև կառուցվող Թղթի գործարանի տեսուչը՝ հետևելով Թղթի պատրաստման ընթացքին։

Սիմեոն կաթողիկոսի գործունեությունը ներկայացնող պատմական կարևոր սկզբնաղբյուր է Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 2891 ձեռագիրը, որը կաթողիկոսական Մաշտոց է։ Գրիչը և ծավալուն հիշատակարանի հեղինակն է Եփրեմ վարդապետը՝ ապագա Ամենայն հայոց կաթողիկոս Եփրեմ Ա. Զորագեղցին (կթղ. 1809-1830 թթ.)։ Այս մասին նշվում է ձեռագրի հիշատակարանում։ Այն կարևոր սկզբնաղբյուր է Սիմեոն կաթողիկոսի գործունեության և Ս. Էջմիածնի տպարանի պատմության համար, որը դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից։

Ձեռագրի 1780 թ. գրված հիշատակարանում, Իսահակ Գեղամացին արդեն հիշվում է որպես արքեպիսկոպոս, ով պատանեկան տարիքից սպասավորել, ապա և գործակիցն է դարձել Սիմեոն կաթողիկոսի. «Որ եւս ի բնէ սպասաւորէր սրբազան վեհիս մերոյ, եւ ի մանկութենէ վարժեալ առ ոտս սորին, ձեռնասուն աշակերտ եւ օրհնածին որդի»[37]։

Հատկապես շեշտում է Գեղամացու կատարած աշխատանքը կաթողիկոսական գրագրության և տպարանի գործունեության բնագավառում. «Եւ պիտանի սմին ի բազում իրս և թղթագրութիւնս եւ ի հոգս տպարանին, զոր բարեյարմար կարգաւորէր»։ Ձեռագրի գրիչ և հիշատակարանի հեղինակ Եփրեմ վարդապետը Իսահակ արքեպիսկոպոսին անվանում է «զվարժիչն իմ»։ Իսահակ եպիսկոպոսի գործունեությունից նա առանձնացնում է թղթագործությունը, գրագրությունը և տպագրական աշխատանքը։ Հետևաբար Եփրեմ վարդապետին նա սովորեցրել է գրչության և տպագրության գործը։ «Ձբօսարան հոգևոր»-ը տպագրվել է 1772 թ., որի հիշատակարանում Իսահակ եպիսկոպոսին տրված բնորոշումները հիշեցնում են հմր. 2891 ձեռագրի հիշատակարանի՝ նրան վերաբերվող հատվածը։

«Ձբօսարանի» հիշատակարանում որպես գրաշար հիշվում է Եփրեմ սարկավագը[38]։ 1780 թ. Մայր Աթոռում որոշակի դիրքի և հեղինակության հասած Եփրեմ վարդապետը ձեռագրի հիշատակարանում գրում է, որ Իսահակ վարդապետը եղել է իր «վարժիչը», ուստի վստահությամբ կարող ենք պնդել, որ 1772 թ. Էջմիածնի տպարանում Իսահակ եպիսկոպոսի ղեկավարությամբ գրաշարություն կատարած Եփրեմ սարկավագը 1780 թ. որպես վարդապետ հիշվող նույն Եփրեմն է։

Տպարանի փորագրիչ վարպետն է եղել ոսկերիչ Հարություն սարկավագ (տիրացու) Էջմիածնեցին, ով «քանդակէ ըզպատկերս՝ զձագագիրս, զկանօնս՝ զծաղկանիշս. և հարթէ և **կանօնաւորէ զկապարեայս և տպէ**

---

37 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Թ, խմբ. Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2016, էջ 1145:

38 Ձբօսարան հոգեւոր, էջ 180:

զտպելիսն»[39]: Հետևաբար նա եղել է փորագրիչ վարպետը և պատրաստել զարդագրերը, զարդանախշերը, լուսանցազարդերը և փորագրապատկերները: Ընդգծված բնորոշումից երևում է, որ Հարությյուն սարկավագը կատարել է նաև գրքի ձևավորումը և էջադրումը: «Տօնացոյցի» հիշատակարանում նա միաժամանակ հիշվում է որպես «փորագրող և քանդակող բոլորից գրոց, պատկերաց, խորանաց, կանոնաց և ծաղկանց»[40]: «Կարգ թաղման կարգաւորաց» գրքում նա բնորոշվում է որպես «զվարպետ Յարութիւն»[41]: Նրա գործունեությանն առավել մանրամասն կանդրադառնանք Ղուկաս Ա Կարնեցու կաթողիկոսության շրջանում տպագրված գրքերին վերաբերող բաժնում:

Տոնացույցում հիշվում է նաև շարվածքը ցրողը՝ «զցրուօղ գրոցն զՏիրացու Խաչատուրն»[42]: Այս շրջանում, երբ դեռևս չկար լինոտիպը՝ տողային շարվածքը, տպագրությունն իրականացվում էր տառային շարվածքով՝ տառերը հատ-հատ շարելով: Տպագրության ավարտվելուց հետո, եթե կապված էջերը չէին պահվում նոր տպագրության համար, ապա շարվածքը ցրում էին հետևյալ ձևով: Հատ-հատ հանում էին շարվածքի կապարյա տառերից յուրաքանչյուրը և դնում տառերի արկղի՝ տվյալ տառի համար նախատեսված քառակուսի վանդակում, որպեսզի այնուհետև օգտագործեին հաջորդ գրքի շարվածքի համար:

Շարվածքը ցրելը գրաշարության նման տաժանակիր աշխատանք էր, քանի որ յուրաքանչյուր տառը պետք է վերցվեր և դրվեր տվյալ տառատեսակի փոքր, մեծ կամ միջին տառաչափերով արկղի համապատասխան վանդակում: «Կարգ թաղման կարգաւորաց» կանոնի հրատարակության հիշատակարանում Խաչատուր սարկավագի համար ասվում է. «Խաչատուր մշակն»[43]: 1785 թ. տպագրված «Աւետնի ժամագրքում» և հաջորդող հրատարակություններում Խաչատուր Տիրացուն հիշվում է որպես Հարությյուն Վաղարշապատեցու աշակերտ:

Անհրաժեշտ է նշել, որ տպարանի ամենաերկարակյաց աշխատողը եղել է և գրեթե բոլոր գրքերի տպագրությանը փորագրանկարային ձևավորումներով մասնակցել է Հարությյուն էջմիածնեցին կամ Վաղարշապատեցին, որը կարելի է բացատրել թե՛ իր նվիրվածությամբ և թե՛ այն հանգամանքով, որ նա կատարել է ամենակարևոր և վարպետության առումով ամենադժվարին գործը՝ պատկերների տախտակների (կլիշեների) պատրաստումը: Նրա մասնակցությունը տպարանի աշխատանքներին Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսների հայրապետության շրջանում թերևս պետք է բացատրել նաև այն հանգամանքով, որ նա սարկավագ (տիրացու) է եղել,

39 Նույն տեղում, էջ 179:

40 Տօնացոյց, Ս. Էջմիածին, 1774-1775, էջ 562:

41 Կարգ թաղման կարգաւորաց, 1777, էջ 160:

42 Տօնացոյց, 1774-1775, էջ 562:

43 Կարգ թաղման կարգաւորաց, Ս. Էջմիածին, 1777, էջ 160:

քահանայական ձեռնադրություն չի ստացել և աշխատել է որպես վարպետ, որպես արհեստավոր: Հոգևորականների նման այլ պարտականություններ չի ունեցել և տարբեր վայրեր ծառայության չի կոչվել:

Պատահական չէ, որ նրա հետ հավասարաչափ աշխատած երկրորդ անձնավորությունը եղել է Խաչատուր Տիրացուն: Նա թեև հետո քահանայական ձեռնադրություն է ստացել, սակայն քանի որ հիշվում է որպես քահանա և ոչ թե աբեղա կամ վարդապետ, նշանակում է ամուսնացյալ քահանա է եղել: Ինչպես Հարություն սարկավագը, նա ևս միաբաններին վերապահված աշխատանքներ չի կատարել, այլ տպարանում է աշխատել:

«Պարտավճարի» (տպ. 1778-1783 թթ.) տպագրությունը սկսվել է Սիմեոն կաթողիկոսի հայրապետության շրջանում և ավարտվել Ղուկաս Ա կարնեցու օրոք: Գրքի հիշատակարանում Հարություն էջմիածնեցին և Խաչատուրը, ով այստեղ դպիր է անվանվում, միասին են հիշվում. «Ընդ նմին և զտիրացու Յարութիւն էջմիածնեցի, որ է փորագրօղ և քանդակօղ գրոց, պատկերաց, խորանաց, կանոնաց և այլոց ծաղկանշից՝ հանդերձ աշակերտեցելովն իւրով Խաչատուր դպրիւն»[44]: Ղուկաս կաթողիկոսի հայրապետության շրջանում Խաչատուրը ավելի բարձր վարպետություն և մտավոր պատրաստություն պահանջող աշխատանքներով է զբաղվել, որին ևս դեռ կանդրադառնանք:

«Զբօսարանի» շարվածքը Եփրեմ սարկավագից բացի իրականացրել է Հովսեփ վարդապետը[45]:

«Զբօսարան հոգեւոր»-ի հիշատակարանը պահել է Ս. էջմիածնի տպարանից մեզ հասած առաջին գրքի տպագրությանը իրենց մասնակցությունը բերած ևս չորս հոգու անունները. «Նաև՝ զՄկրտիչ վարդապետն, զՅովհաննէս աբեղայն, զՆերսես սարկաւագն, զյառաջընթաց Վարդանն»: Տպագրությանը իրենց մասնակցությունը բերած մյուս անձերի համար այնուհետև հավաքաբար ասվում է. «Եւ զայլ պաշտօնեայսն, որք ամենեքեան բաց ի յատուկ պաշտամանց իւրեանց, պաշտօնատարք եղեն սիրահար ըղձիւ և այս գործոյս»[46]:

«Տօնացոյցի» հիշատակարանում տպագրության մասնակիցների շարքի թվարկումը եզրափակվում է Ղուկիանոս վարդապետ Աշտարակեցիով: Վերջինիս համար ասվում է. «Զհարազատ միաբան և զանձանձիր գրագիրն Սրբոյ և մեծի աթոռոյս զՂուկիանոս վարդապետն Աշտարակցի, որ բաց ի հասարակ պաշտօնէն իւրմէ, քանիցս վերակրկնելով պարզագրեաց զգիրքս զայս մեծաւ աշխատութեամբ ի շաղագրեցմանէ հեղինակին»[47]: Այս բնորոշումից նաև իմանում ենք, որ նա եղել է Մայր Աթոռի գրագիրը:

---

44 Պարտավճար, Ս. Էջմիածին, 1778-1783, էջ 381:

45 Զբօսարան հոգեւոր, էջ 180:

46 Նույն տեղում:

47 Տօնացոյց, 1774-1775, էջ 563:

«Պարզագրել» նշանակում է մաքրագրել, ինչպես որ պարզաջրելը՝ մաքրաջրել: «Տօնացոյցը» Սիմեոն կաթողիկոսի շաղագրությունից քանիցս պարզագրելը, նշանակում է, որ Ղունկիանոս վրդ. Աշտարակեցին Սիմեոն կաթողիկոսի գրածը մաքրագրել է, ապա մաքրագիր օրինակի վրա վերստին աշխատել է կաթողիկոսը, և Ղունկիանոս վարդապետը նորից մաքրագրել է:

«Պարտավճարի» համար վերջինիս հիշատակարանում ասվում է, որ Սիմեոն կաթողիկոսը, այս գործն ավարտելով 1779 թ., «պարզագրեցուցեալ», այսինքն՝ մաքրագրելով տալիս է տպագրության[48]: Որքան մաքուր և հստակ լիներ բնագիրը, այնքան անսխալ կլիներ և շարվածքը: «Պարտավճարի» հիշատակարանում հիշվում է այն մաքրագրած Անանիա սարկավագը, ում համար ասվում է. «Պարզագրեաց զսոյն գիրք կարի զգուշութեամբ ի շաղագրեցմանէ հեղինակին, ի դիւրութիւն գրաշարացն»[49]: Այստեղ շեշտվում է, որ մաքրագրումը կատարվել է, որպեսզի հեշտ լինի գրաշարների համար:

Նման աշխատանքը կրկնվել է մի քանի անգամ՝ «քանիցս վերակրկնելով»: Մատենադարանում պահվում են Սիմեոն Ա Երևանցու «Քարոզգրքի» մի քանի ինքնագիր օրինակները՝ ուղղակի խզմզված, դժվարընթեռնելի շղագրով: Ուստի, իսկապես, հիշատակության արժանի գործ է կատարել Ղունկիանոս վարդապետը՝ մի քանի անգամ մաքրագրելով 544 տպագիր էջ կազմող ձեռագիր բնագիրը:

Ղունկիանոս վրդ. Աստապատեցու անցած հոգևորականի ճանապարհի մասին ևս տեղեկություններ կան «Ժամանակագրութիւն ձեռնադրութեանց» գործի մեջ: Նա սարկավագ է ձեռնադրվել 1763 թ., աբեղա՝ 1771 թ., վարդապետ՝ 1772 թ. և եպիսկոպոս՝ 1781 թ.: Եպիսկոպոսական ձեռնադրությանը վերաբերող հիշատակության մեջ նշվում է նրա գրագիր լինելը: Ասվում է, որ Ղուկաս Ա Կարնեցին «ձեռնադրեաց եպիսկոպոս... զԱշտարակեցի գրագիր Ղունկիանոս վարդապետն»[50]:

Ինչպես նշում է Վ. Գրիգորյանը, Ղունկիանոս վարդապետը վախճանվել է ժանտախտից 1797 թ.[51]:

Նրա կաթողիկոսական գրագիրը լինելու հետ սերտորեն կապված է Ս. Էջմիածնի մի քանի հրատարակությունների շարվածքի համար անհրաժեշտ բնագրերը մաքրագրելով տպագրության համար պատրաստելը: Պատահական չէ, որ Ղունկիանոս վարդապետի տապանաքարի արձա-

---

48 Պարտավճար, Ս. Էջմիածին, 1779-1783, էջ 377:

49 Նույն տեղում, էջ 381:

50 **Գ. Տեր-Վարդանյան**, Ժամանակագրութիւն ձեռնադրութեանց (1759-1798 թթ.), «Էջմիածին», 1980, հմր. Ժ, էջ 47:

51 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, Գիրք Ա, աշխտ. **Վ. Գրիգորյանի**, Երևան, էջ 34:

նագրությունում որպես գլխավոր բնորոշում իր համար ասվում է. «Քաջ նօտար գահիս մեծի»[52]։

«Տօնացոյցի» հիշատակարանում որպես գրաշար է հիշվում Գրիգոր սարկավագը։ Նրա համար ասվում է. «Յիշեսջիք և զբազմաշխատ գրաշար Գրիգոր արիաջան սարկաւագն»։ Ս. Էջմիածնի հաջորդ հրատարակության՝ 1777 թ. տպագրված «Կարգ թաղման կարգաւորաց» գրքի հիշատակարանում նրա համար դարձյալ ասվում է. «Զգրաշար Գրիգոր սարկաւագն»։ Գրաշար Գրիգոր սարկավագը «Պարտավճարում» արդեն հիշվում է որպես վարդապետ։ Նրա աշակերտն էր գրաշար և շարվածքը ցրող Մաղաքիան։

«Պարտավճարում» հիշվում է նաև «զմրազարկ և զտպիչ Գրիգորն»[53]։

Թե ինչպես էին տպագրական աշխատանքներն իրարից տարանջատվել և մասնագիտացվել, երևում է երկրորդ և երրորդ գրաշարներ եղած մյուս Գրիգորի և Մանուկի օրինակով, որոնց տրված է «մրազարկ» բնորոշումը։ Նրանք կապարյա գրերին մուր քսողն էին և թուղթը գրերի մրին խփելով (զարկելով)՝ սպիտակ թղթի վրա տպագրությունն իրականացնողը։

«Կարգ թաղման կարգաւորաց» գրքի հիշատակարանի վերջում հավաքաբար հիշվում են «զԳրիգոր, Մանուկ և Խաչատուր մշական և զայլս ամենայնսն, որ մասամբ ինչ աշխատեցան ի սոյն»[54]։

Զաքիկյանցին ուղղված վերը հիշված թղթում Սիմեոն կաթողիկոսը երեք տեսակի տառաձևերի մասին է գրում։ Առաջինը Էջմիածնի տպարանում պատրաստվածն է. «Յառաջագոյն զփոքրիկ գրքոյկ մի աղօթից յօրինեալ էի, զոր նորաքանդակ գրով տպեցաք»[55]։ Նկատի ունի 1772 թ. տպագրված «Ջբօսարան հոգեւոր» աղոթագիրքը։ Վերջինիս հիշատակարանում Ս. Էջմիածնում պատրաստված այս գիրքը բնորոշվում է որպես «նոր ի նորոյ»։

«Ջբոսարանի» հրատարակությանը հաջորդած «Տաղարանի» տառատեսակների մասին գրում է. «Իսկ յայսմ թուովն նոյն Տաղարանն՝ զոր յառաջ տպեալ էաք, այժմ ևս նոյն Աղօթից գիրն քոյ գրովն վերստին տպել ետուք վասն բարւոք փորձառութեան գործարանին»[56]։

Ոչ այնքան հասկանալի այս տողերից կարելի է եզրակացնել, որ 1772 թ. տպագրված «Տաղարանի» տառատեսակով տպագրվել է նաև նույն տարում լույս տեսած «Աղոթագիրքը»։ Այդ տառատեսակը Սիմեոն կաթողիկոսին է ուղարկել Զաքիկյանցը։ Այս հրատարակության համար ասում

---

52 **Հարությունյան Ա. Է.,** Գրիչ Ղունկիանոս Աշտարակեցու տապանագիրը և մատենագրական վաստակը, «Վէմ», 2016, հմր. 2, էջ 106։

53 Պարտավճար, էջ 381։

54 Կարգ թաղման կարգաւորաց, էջ 160։

55 Դիւան հայոց պատմութեան, հտ. Գ, էջ ՃԿԳ։

56 Նույն տեղում։

է, թե դրա տպագրության որակն ավելի լավն է, որը տեսնելով՝ բարերարը կուրախանա։

Եվ վերջապես երրորդ տառատեսակը, իր բնորոշմամբ, «այլ տեսակ նորաքանդակ» գեղեցիկ գիրն է, որով պատրաստվում է տպագրել «Տոնացույցը»։ Ինչպես տեսանք, այս գրքի վերջում հիշվում է Հարություն սրկ. էջմիածնեցին՝ որպես գրերի փորագրող, ինչը ևս վկայում է, որ նա նոր տառեր է պատրաստել, քանի որ 1772 թ. տպագրված «Զբոսարան հոգևոր»-ի հիշատակարանում ասվում է, որ նոր գրերը պատրաստել է Մկրտիչ արքեպս. Շոռոթեցին։

Էջմիածնի տպարանում 1774-75 թթ. կիրառված տառատեսակների մասին մի կարևոր տեղեկություն կա պոլսահայ նշանավոր տպագրիչ Պողոս Արապյանի գործունեության հետ կապված վավերագրերից մեկում։ Ինչպես կտեսնենք, Արապյանը 1780 թ. համաձայնագիր է կնքում Հերակլ Երկրորդի հետ՝ վրացական նոր տպարան հիմնելու համար։ Մինչ այդ, սակայն, դեռևս 1774 թ. լինում է Թիֆլիսում, ապա գալիս Ս. էջմիածին՝ ներկա գտնվելու Մյուռոնօրհնության արարողությանը։

Կաթողիկոսական դիվանում ասվում է, որ նա իր հետ էջմիածնի տպարանի համար բերել էր երկու տառատեսակի տպագրական տառեր, որոնք «վասն խոշորութեան ոչ պիտոյացաւ մեզ։ Եւ մանաւանդ Բ [2] տեսակ գիր ունէաք այժմ ի պատրաստի։ Որոց մինն է, որով զնորատիպ Աղօթից գիրքն տպեցաք, և միւսն է՝ որով զտարեկան Տօնացոյցն տպեցուցանեմք։ Եւ Սուրբ Վեհին ոչ հաւանեալ Պօղոսի բերեալ գրեանցն, Ոսկանի գիրն յառաջադրեաց նմա ի շինել, և նա ևս ահա շինէ։ Եւ մերձ է ի լրացուցանել»[57]։

Արապյանի բերած տառատեսակները կաթողիկոսը չի ընդունում դրանց խոշոր լինելու պատճառով։ Ասում է, որ այդ ժամանակ տպարանն արդեն ուներ երկու տառատեսակ։ Մեկով «Աղօթագիրքը», այսինքն՝ «Զբոսարանն» էր տպագրվել, իսկ մյուսով տպագրվում էր «Տոնացույցը»։ Վերջինիս հիշատակարանում ևս նշվում է, որ այս հրատարակության համար նոր տառատեսակներ էին պատվիրվել։

Ասացինք, որ կաթողիկոսին չհաջողվեց Ամստերդամից բերել այնտեղ պահվող հայկական տառատեսակները։ Վերը բերված վավերագրից պարզվում է, որ Սիմեոնը Արապյանին պատվիրում է պատրաստել Ամստերդամի հայկական տպարանի տառատեսակները հիշեցնող տառեր։ Այստեղ մեկ անգամ ևս երևում է Ամստերդամի կամ Ոսկանյան տպարանի հանդեպ հայ տպագրիչների՝ ուղղակի ակնածանքի հասնող վերաբերմունքը Մխիթար Սեբաստացուց մինչև Սիմեոն Երևանցի, Հովսեփ արքեպս. Արղությանց և Ներսես Աշտարակեցի։ Ամստերդամի հայկական տպարանը առաջին կանոնավոր ու տևական գործած հայկական տպա-

57 Դիւան հայոց պատմութեան, հտ. Ը, աշխտ. Գիւտ քհնյ. Աղանեանց, Թիֆլիս, 1908, էջ 304։

րանն էր ու, թերևս, ընկալվել է որպես հայ գրատպության ակունքը, որին են շարունակ դիմել հայ տպագրիչները 17-18-րդ դարերում:

Պահպանված վավերագրերից երևում է, որ Ս. Էջմիածնի տպարանն ունեցել է գրաձուլարան, ուր տառամայրերից կապարյա գրեր են ձուլվել: Միաբանները պատրաստել են ձեռքի տպագրական մամուլ, որը հետագայում, դժբախտաբար, ջարդվել է: Պահպանված երկու պտուտակները տպարանի վարպետ Ղևոնդ Ղարախանյանը և Արտակ եպս. Սմբատյանցը գտել են 1910 թ. և զետեղել Մայր Աթոռի թանգարանում: Սմբատյանցն այս մասին գրում է. «Սիմեոն կաթողիկոսի հիմնած տպարանում գործելիս են եղել երկու հատ ձեռքի մամուլներ: Հայտնի չէ՝ երբ են այդ մամուլները գործածությունից դուրս եկել, հավանականորեն, երբ նոր կատարելագործված մեքենաներ են ստացվում, Սիմեոն կաթողիկոսի ձեռքի մամուլները մնում են անգործածելի, և անուշադրության են մատնում այն մամուլները, որոնց տակից էջմիածնում **առաջին գիրքն** *է լույս տեսնում: Հետագայում անփութության և անհասկացողության շնորհիվ այդ մամուլների տախտակները տգետ ձեռքերով կոտրտվել էին, և միայն երկու մեծ պտուտակներն էին մնացել, որոնք անհայտության մեջ էին և միայն 1910 թվին գտնվելով՝ Հնությանց թանգարանում դրվեցին»[58]:*

Աղ. Երիցյանը գրում է, որ հաշվի առնելով ժամանակի տիրող պայմանները՝ «մի յանդուգն և անհաւատալի գործ» պետք էր համարել Սիմեոն կաթողիկոսի տպարան հիմնելու ծրագիրը, որը նա իրականացրեց հաջողությամբ[59]:

ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Թուղթը՝ որպես ձեռագիր և տպագիր գրքի գլխավոր գրանյութ, մեծ պահանջարկ է ունեցել թե՛ միջնադարում և թե՛ նոր շրջանում:

Գրքի ձեռագրային շրջանում ևս թուղթը նախընտրելի է եղել որպես առավել էժան գրանյութ, քանի որ կաշվից պատրաստված մագաղաթն անհամեմատ ավելի թանկ արժեր:

Հայկական հնագույն թղթյա ձեռագիրը (Երևանի Մատենադարան, ձեռ. հմ. 2679) գրվել է 981 թ.: Ինչպես նշում է Ա. Մաթևոսյանը, ձեռագրի հնագրական և ֆիզիկաքիմիական քննությունը վկայում է, որ այս ձեռագրի թուղթը պատրաստվել է Հայաստանում, որով հայերը դառնում են աշխարհում թուղթ պատրաստած առաջին ժողովուրդներից մեկը[60]:

---

58 **Արտակ եպս. Սմբատյանց**, Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, Ս. Էջմիածին, 1973թ., էջ 57:

59 **Աղ. Երիցեան,** Պատմական տեսութիւն հայ տպագրութեան, «Փորձ», Թիֆլիս, 1881, հմր. 4, էջ 25:

60 Տես Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դաւթի քահանայի, աշխտ. Ա. Մաթևոսյանի,

Միջնադարում ևս, թեև ոչ թե Հայաստանում պատրաստված, այլ բերված թղթով, բազմաթիվ ձեռագրեր են գրվել հայ գրչության կենտրոններում: Ձեռագրերի հիշատակարանների հաղորդած տեղեկություններըվկայում են, որ թուղթը միշտ էլ դժվարությամբ է ձեռք բերվել: Հայ դպրության նվիրյալների երազանքն է եղել Հայաստանում թղթի պատրաստումը, որն իրականացնելը վիճակված էր Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսին (կթղ.՝ 1763-1780 թթ.):

Տպագրության գյուտից հետո՝ 15-րդ դարի կեսերից, թուղթը նորովի է կարևորվում Եվրոպայում: Հայկական միջավայրում այս կարևորությունը շեշտված ձևով զգացվում է 1640-ական թվականներին Նոր Ջուղայում, երբ տեղի առաջնորդ Խաչատուր արքեպիսկոպոս Կեսարացին, ինչպես հայ տպագրության պատմաբաններն են նշում, մեր իրականությունում, ըստ էության, կրկնում է գուտենբերգյան գյուտը՝ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում տեղի միաբանության ուժերով հիմնելով տպարան և տպարանի համար անհրաժեշտ թուղթը պատրաստելով տեղում[61]:

Էջմիածնի տպարանի գործել սկսելուց անմիջապես հետո իրականանում է Սիմեոն կաթողիկոսի մտավախությունը, որ հրատարակչական գործը կարող է խափանվել թղթի պատճառով:

Պոլիս՝ Ղուկաս վարդապետին 1772 թվականին գրած նամակում կաթողիկոսն ասում է, որ տպարանի աշխատանքը խափանվել է թուղթ չլինելու պատճառով. «Ծանոյր և... զխափանումն տպագրատանն վասն թուղթ չլինելոյն»[62]: Նույն թվականին Ղուկաս վարդապետին գրված մեկ այլ նամակում պատվիրում է հետաքրքրվել, թե արդյոք այնտեղ կա՞ն թուղթ պատրաստող վարպետներ[63]:

Թղթի պատրաստման կարևորությունը չվհատվող հայրապետին մղում է առավել վճռական գործողությունների: Ֆրանսերենից հայերեն է թարգմանել տալիս թղթաշինության մասին մի ձեռնարկ, որ եթե մասնագետներ չկարողանա բերել, ապա այդ ձեռնարկով առաջնորդվելով՝ թուղթ պատրաստեն Մայր Աթոռում: Հիշյալ ձեռնարկի առաջին թարգմանությունն այնքան էլ հաջող չի լինում: Ինչպես կաթողիկոսական դիվանում է ասվում, կաթողիկոսն այդ թարգմանությունից չի կարողանում օգտվել, որովհետև «թարգմանութիւնն և գրեալն կարի խառնափնդոր էին»: Ահա այս պատճառով Սիմեոն Երևանցին նորից է պատվիրում «զթղթաշինութեան խրատն հայերէն բառիւ և պարզ ոճիւ վերստին լաւ թարգմանի թարգմանել տացէ, և առ ինքն յղեսցէ»[64]:

Երևան, 1995, Ձեռագրի նմանահանություն և բնագրերի հրատարակություն, էջ 34-36:

61 **Ռ. Իշխանյան,** Հայ գրքի պատմություն, հտ. Ա, Երևան, 1977, էջ 355-356:

62 Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ը, էջ 203:

63 Նույն տեղում, էջ 144:

64 Դիւան հայոց պատմութեան, հտ. Գ, էջ ՃԿԳ:

Պարսկաստանում այս շրջանում կային թղթի գործարաններ։ Սիմեոն Երևանցին այնտեղից վարպետներ է բերում, սակայն նրանք չեն կարողանում լավ թուղթ ստանալ[65]։

Մինչ թղթի գործարանի կառուցումը կաթողիկոսը նախ թղթի պատրաստման համար անհրաժեշտ գործիքների և հումքի պահեստն է կառուցում. «1776 թուին կանգնեց Տաճարի հարաւային կողմը բաւականին հեռու մի ահագին շէնք, այնտեղ ուր առաջ պարտէզ էր «խաղաւարտ և սեղխենիք» սերմելու համար, զետեղելով նորա մէջ թղթարանի համար բերել տուած կարևոր գործիքները, իսկ թղթաշինութեան անհրաժեշտ երկու գլխաւոր պայմանները՝ բամբակի ու ջրի առատութիւնը, որոնցով օժտուած է Արարատեան դաշտը, մեծ յաջողութիւն էին խոստանում»[66]։

Սիմեոն կաթողիկոսն ուստի 1774 թ. Գրիգոր Զաքիկյանցին խնդրում է, որ նա ոչ միայն հանձն առնի թղթագործարանի կառուցման ծախսերը, այլև համապատասխան վարպետներ գտնի[67]։

Զաքիկյանցն այդ խնդրանքը ևս կատարում է։ Նա Պոլսի Զաքարիա պատրիարքի միջոցով պատվիրում է այդ ժամանակ Պոլսում գտնվող ֆրանսիացի երկու վարպետների, որ նրանք էջմիածնում պատրաստեին կամ այնտեղ հասցնեին անհրաժեշտ բոլոր սարքավորումները, ինչպես նաև Մայր Աթոռի միաբաններին սովորեցնեին թղթաշինության արվեստը, որպեսզի երբ նրանց պայմանաժամանակը լրանար, և նրանք գնային, էջմիածնում շարունակեին թուղթ ստանալ[68]։ Աշխատանքներն ավարտելուց հետո երկու վարպետներին պետք է վճարվեր 14000 ռուբլի՝ չհաշված ամենօրյա սնունդը[69]։

Թղթի գործարան հիմնելու և թղթի պատրաստման եղանակը սովորեցնելու համար երկու ֆրանսիացի վարպետներ հրավիրելու մասին լրացուցիչ տեղեկություններ են հաղորդվում Վարդեն Դը Վիրնեյի 1772 թ. հունվարի 15-ին գրված նամակում[70]։

Այն ցույց է տալիս, որ 1771 թ., երբ տպարանը սկսում է աշխատել, Սիմեոն կաթողիկոսը իսկույն ձեռնամուխ է եղել թղթի գործարանի կառուցմանը։

Վիրնեյը դիմում է իր գործընկերներից Դավթին՝ ասելով, որ մադրասահայ վաճառական Գրիգոր Միքայելյանը (Զաքիկյանց), ով իր գոր-

---

65 Նույն տեղում:

66 Նույն տեղում, էջ ՃԿԱ-ՃԿԲ:

67 Նույն տեղում, էջ ՃԿԲ- ՃԿԳ:

68 Դիւան հայոց պատմութեան, հտ. Ը, էջ 308:

69 Դիւան հայոց պատմութեան, հտ. Գ, էջ ՃԿԴ:

70 Տես Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Ի. Ս. Էջմիածինը եւ Հայոց գրերի գիւտի 1500 ու տպագրութեան 400-ամեակների տօնակատարութիւնը 1912-1913 թթ., փաստաթղթերի ժողովածու, կազմեց Գ. Աւագեան, Ս. Էջմիածին, 2018, էջ 351-355:

ծընկերն ու բարեկամն է, իրենից խնդրում է գտնել թուղթ պատրաստող ֆրանսիացի երկու վարպետներ և նրանց ուղարկել էջմիածին, որպեսզի այնտեղ թղթի արտադրություն հիմնեն։

Նամակում ասվում է, որ տպարանի համար թուղթը Եվրոպայից բերելը մեծ դժվարություններ է կապված և թանկ կարժենա։ Այնուհետև նշվում է, որ ընտրվելիք երկու վարպետները Ս. էջմիածնում պետք է մնան երեք տարի և ոչ միայն գործարանը կառուցեն անհրաժեշտ սարքավորումներով, այլև իրենց աշակերտներին սովորեցնեն թղթի պատրաստման եղանակը։

Նաև գրում է, թե ինչքան պետք է վճարել ընտրվելիք երկու վարպետներին, և որ նրանք նավով Կ. Պոլիս հասնելուց հետո ինչպես են ուղևորվելու էջմիածին։ Ասում է, որ երկու վարպետների բոլոր ծախսերը, նեռադյալ թղթի արտադրության համար անհրաժեշտ գործիքների, կվճարի ինքը և հետո դրանք կստանա Ջաքիկյանից։

Կ. Պոլսի իր գործընկեր Դավթին նա միայն խնդրում է կազմակերպել երկու վարպետների՝ Ս. էջմիածին հասնելը և անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելը։

Այս նամակը ցույց է տալիս, թե հնդկահայ բարերարը ևս կարևորում էր էջմիածնում արտադրվելիք թղթի միջոցով տպարանի գործունեությունը անխափան դարձնելը և ինչպես էր խանդավառված Սիմեոն կաթողիկոսի ծրագրով։

Պոլսի պատրիարքի միջնորդությամբ Օսմանյան իշխանությունները թույլ են տալիս ընտրված ֆրանսիացի երկու վարպետներին՝ Բեյսոնին և Տեսիոյին, էջմիածին գնալ։ Ֆրանսիացի վարպետները էջմիածին գնալու համար պետք է ստանային նաև Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպանի թույլտվությունը, որին նպաստում են պոլսեցի Աբրահամ և Թովմաս ամիրաները, որոնց շնորհակալության մի նամակ է գրում Սիմեոն կաթողիկոսը։ Նա շնորհակալության նամակ է ուղղում նաև Ֆրանսիայի դեսպանին[71]։ Երկու վարպետները, իրենց հետ թարգմանիչ ունենալով ֆրանսերեն իմացող Ստեփան անունով կաթոլիկ մի հայի, վերջինիս ուղեկցությամբ հասնում են մինչև Կարս, ուր Կարսի փաշան, իմանալով նրանց գալու մասին, կանչում և հարցնում է գալու պատճառները։ Ֆրանսիայում որպեսզի չիմացվի, որ իրենք էջմիածին են գնում՝ թուղթ պատրաստելու եղանակը սովորեցնելու, ասում են, թե էջմիածին ուխտի են գնում։ Փաշան, չհավատալով նրանց խոսքերին, ենթադրում է, որ լրտեսներ են, և հրամայում է բանտարկել և Պոլիս նամակ է գրում՝ պարզելու, թե ովքեր են և ինչ նպատակներով են եկել[72]։

Իմանալով այս մասին՝ Սիմեոն կաթողիկոսը նամակով նրան բացատ-

---

71 Դիւան հայոց պատմութեան, հտ. Ը, էջ 345:

72 Նույն տեղում, էջ 329:

րում է ֆրանսիացիների գալու նպատակը, որից հետո վարպետներին թույլատրվում է գնալ էջմիածին[73]։

1775 թվականի փետրվարի 13-ին ֆրանսիացի վարպետները թարգմանչի հետ վերջապես հասնում են Սուրբ էջմիածին. «Առ այս ոչ սակաւ ցնծութիւն եղև Սբ. Վեհին, զի ի վաղուց հետէ ցանկայր և սպասէր գալստեան նոցա», գրում է կաթողիկոսի հիշատակագիրը[74]։ Վերջինս նաև ասում է, որ տպարանի համար հնարավոր չէր լինում թուղթ ձեռք բերել, իսկ բերված թուղթն էլ «անօգուտ ու անտպավայել» էր։ Սիմեոն կաթողիկոսն այսպես ձեռնամուխ է լինում Մայր Աթոռի հրատարակությունների համար «վայել» թուղթ պատրաստելուն՝ չընկրկելով այդ ճանապարհին ի հայտ եկող ամենատարբեր բարդությունների և դժվարությունների առջև։

Ֆրանսիացի վարպետները, խուսափելով թուղթ պատրաստելուց և այդ արվեստը Մայր Աթոռի միաբաններին սովորեցնելուց, տարբեր դժվարություններ են հարուցում, սակայն կաթողիկոսը կատարում է նրանց բոլոր պահանջները։ Այսպես, նրանք ասում են, որ թղթաշինության գործարանի համար հարկավոր են բավականին մեծ գերաններ։ Արարատյան դաշտում քանի որ չկային այդ չափի գերաններ, կաթողիկոսը պատվիրում է բերել Բամբակաձորի անտառներից և երկու ֆրանսիացիներին էլ ուղարկում է, որպեսզի տեղում նայեն և որոշեն ու նշան անեն այն ծառերի վրա, որոնք հարկավոր է կտրել։

Կաթողիկոսը այդ բնակավայր նամակ է գրում, որը կաթողիկոսական դիվանի համառոտ ընդօրինակությունում բերված է հետևյալ խորագրի ներքո. «Ի Բամբակաձոր՝ առ Բաբաբէկն՝ Դամղուլին և Մահմատ աղայն, յանձնարարութիւն վասն թղթաշինացն»[75]։ Թղթի սկզբում ասվում է. «Վասն թղթաշինութեան գործեացն հաստ և մեծ փայտք պիտոյացան։ Եւ յերկրոջս մերում ըստ այնքանութեան փայտք ոչ գտանեցան։ Եւ լուաք թէ՝ ի մայրին Բամբակաձորու հաստ և մեծ փայտք շատ գոն»։

Նույն նպատակով կաթողիկոսը Բամբակաձոր է ուղարկում խաչատուր վարդապետին։ Կաթողիկոսական դիվանում այս մասին ասվում է. «Յղելն Սրբ. Վեհին զխաչատուր վարդապետն ի Բամբկուձոր վասն թղթաշինութեան փայտիցն»[76]։ Նամակից պարզվում է, որ ֆրանսիացի վարպետներն այնտեղի անտառում «հաստ և երկայն ծառս գտեալ, յոյժ հաւանեալ էին նոցա։ Ուստի՝ և նշան արարեալ ի վերայ նոցա՝ թողեալ էին անդ, զի մեք վասն թղթաշինութեան գործեացն բերել տացուք զնոսա աստ»։ Նշան արված ծառերը բերելու համար է, որ Սիմեոն կաթողիկոսը Բամբակաձոր է ուղարկում խաչատուր վարդապետին, որպեսզի տեղում կազմակերպի «զփայտսն ի Ս. Աթոռս» բերելը։

---

73 Նույն տեղում, էջ 330:

74 Նույն տեղում, էջ 332:

75 Նույն տեղում, էջ 366:

76 Նույն տեղում, էջ 376:

Այն անձինք, ում դիմել էր Սիմեոն կաթողիկոսը, օժանդակում են ֆրանսիացիներին, և անհրաժեշտ գերանները բերվում են, որի համար կաթողիկոսը շնորհակալական թուղթ է ուղարկում Բամբակաձոր. «Թուղթ մի ևս շնորհակալութեան առ Բաբաբէկն գրեաց, զի ի բերելն մերայնոցն ի Բամբակաձորու զթղթատան փայտսն, վասն խաթեր Սրբ. Վեհին ձեռնտու լեալ նոցա»[77]:

1775 թվականի ապրիլի մեկի գրությունից տեղեկանում ենք, որ թղթի գործարանի շինությունն արդեն սկսվել էր: Կաթողիկոսական դիվանում այս մասին ասվում է. «Ծանոյց և զգալն թղթաշինացն ի Ս. Աթոռս, և ձեռնարկելն ի թղթաշինութեան քեարխանային»[78]:

Ֆրանսիացի վարպետները 1775 թ. նաև պատվիրում են, որ երկու «փայտատաշ խառատներ» գան, որոնց կաթողիկոսը բերել է տալիս Թիֆլիսից: Կաթողիկոսի գրած նամակում իրարից տարբերակվում են փայտատաշ և չարխաքաշ խառատները:

Երկու ֆրանսիացիների գալու լուրը հասնում է մինչև Արցախ: Մելիք Հովսեփի որդին՝ Բեգլարը, երկար ժամանակ հիվանդ էր: Մելիք Հովսեփը յուզբաշի Ալամխանին ուղարկում է կաթողիկոսի մոտ, որպեսզի ֆրանսիացիներից մեկը գա բուժելու իր որդուն: Կաթողիկոսը ուղարկված պատվիրակին բացատրում է, որ նրանք թուղթ պատրաստելու համար են եկել: Սիմեոն Երևանցին նաև մի քանի խորհուրդ է տալիս պատվիրակին, թե ինչ միջոցներ ձեռնարկի Հովսեփը որդու համար՝ «թերեւս այնու բժշկութիւն գտցէ որդին իւր»[79]:

Կաթողիկոսի տված խորհուրդները վկայում են նրա ունեցած որոշակի բժշկագիտական գիտելիքների մասին, ինչը պատահական չէ: Մեզ են հասել 18-րդ դարում գրված և Ս. Էջմիածնի գահակալների համար նախատեսված մի շարք բժշկարաններ:

Մեկ այլ՝ մայիսի 21-ի գրությունից իմանում ենք, որ թուղթ պատրաստողները իրենց ընտանիքներին նամակներ են գրում, և դրանք Սիմեոն կաթողիկոսն ուղարկում է Պոլսի պատրիարքին, որպեսզի նա փոստով Ֆրանսիա ուղարկի. «Որպէս յառաջ՝ և այժմ ևս թուղթ գրեցին առ ընտանիսն իւրեանց, և ետուն Սրբ. Վեհին յղել յերկիրն իւրեանց»[80]: Նրանք նաև թղթի պատրաստության համար անհրաժեշտ գործիքներ են պատվիրում, որոնք նույն ձևով բերվում են Սուրբ Էջմիածին[81]:

Թուղթ պատրաստողների հետ կապված մի դրվագ է ներկայացնում Սիմեոն կաթողիկոսը «Պարտավճարում», որը զարմանալիորեն չի նկատվել հետազոտողների կողմից:

---

77 Նույն տեղում, էջ 460:

78 Նույն տեղում, էջ 372:

79 Նույն տեղում, էջ 411:

80 Նույն տեղում, էջ 402:

81 Նույն տեղում, էջ 424:

Կաթողիկոսը, քննադատելով Հայոց եկեղեցուց կաթոլիկությանը դարձած հայերին, հետևյալն է պատմում։ Ասում է, որ 1775 թ. Մայր Աթոռ է բերել երկու ֆրանսիացիների, ովքեր թուղթ պատրաստելու համար երկու տարի մնում են էջմիածնում։ Այս ընթացքում նրանք կանոնավորապես գալիս և մասնակցում են Ս. Պատարագին, իրենց մոտ եղած գրքերով ֆրանսերեն ասում Ս. Պատարագի աղոթքները։ Թեև պահք չեն պահել, սակայն ուրբաթ և շաբաթ օրերին նավակատիքն են պահել և միս չեն կերել։

Նրանց թարգմանիչը, կաթողիկոսի բնորոշմամբ, «ի մէնջ հեստեալ» կաթոլիկ դարձած հայ է եղել։ Երկու տարվա ընթացքում նա եկեղեցում որևէ արարողության չի մասնակցել։ Երբևէ չեն տեսել, որ ծնկի գա, խաչակնքի կամ աղոթի։ Նա թեև երկու ֆրանսիացի վարպետների հետ եկել է եկեղեցի, սակայն, ի տարբերություն նրանց, հավատո և ջերմեռանդության որևէ նշան ցույց չի տվել, այլ «անմռունչ և անզգայաբար նստելով»՝ չի աղոթել բնավ։

Ուրբաթ և շաբաթ օրերին, երբ երկու վարպետները միս չեն կերել, նա կերել է։ Մայր Աթոռի միաբանները երբ հարցնում են, թե ինչո՞ւ չի պահում նավակատիքը, ասում է, որ ինքը հայ է և ոչ ֆռանկ։ Իսկ երբ Հայոց եկեղեցու պահքի օրերն են լինում, և հարցնում են, թե ինչո՞ւ պահքը չի պահում, ասում է, թե ինքը ֆռանկ է և ոչ հայ։

Ֆրանսիացի երկու վարպետները կաթողիկոսին մի անգամ խնդրում են գնալ Թիֆլիս՝ խոստովանության և հաղորդության համար, քանի որ էջմիածնում կաթոլիկ հոգևորական չի եղել։ Թարգմանին ևս իրենց հետ տանում են։ Թիֆլիսից երբ վերադառնում են, էջմիածնում նրանց հարցնում են, թե արդյոք հայ թարգմանը և՞ս իրենց հետ խոստովանեց և հաղորդություն ստացավ։ Ասում են՝ ոչ։ Նա երբ հիվանդանում է, քանիցս հարցնում են՝ խոստովանահայր կանչե՞ն, և նա պատասխանում է՝ ոչ։ Այդպես առանց խոստովանության և հաղորդության մահանում է[82]։

Բերված հատվածից երևում է, որ ֆրանսիացի վարպետներն ապրել են Մայր Աթոռի միաբանական առօրյայով։ Նրանց թույլատրվել է Թիֆլիս գնալ խոստովանության և հաղորդություն ստանալու։ Լարվածությունն առաջացել է վերջում, երբ նրանք փորձել են խաբել և թուղթ չպատրաստել։

1776 թվականի հոկտեմբերի 25-ին գրված նամակում ասվում է, որ թղթաշինության գործարանի կառուցումն ավարտվել է, ու Երևանի խանին կաթողիկոսը ցանկանում է հրավիրել, որ գա և տեսնի։ Այս մասին կաթողիկոսական դիվանում ասվում է. «Իսկ յայսմ միջոցի՝ գործ շինութեան թղթատանն աւարտեալ էր, և նոր թուղթն ելեալ, ուստի՝ կամէր Սբ. Վեհն մեծարել զխանն ի Ս. Աթոռս, ի տեսանել զթղթատունն»։ Երևանի խանը ևս ցանկանում էր տեսնել թղթատունը և սպասում էր կաթողիկո-

82 Պարտավճար, Ս. Էջմիածին, 1779-83, էջ 222-223։

սի հրավերին. «Զսոյն դիտումնս և ինքն խանն ևս ունելով ի մտի, դրան մարդիկքն ասէին մեզ իբրու չինքեանց, թէ խալիֆայն թող մեծարեսցէ զխանն ի տեսութիւն թղթատանն»[83]:

Խանը հետևաբար սպասում էր հրավերի: Իր ցանկությունը արտահայտում է ծառաների միջոցով, ովքեր որպես թե իրենց կողմից ասում են, որ խալիֆան՝ կաթողիկոսը, թող մեծարի՝ կանչի խանին, թղթաշինարանը տեսնելու:

Մեկ օր անց գրված մեկ այլ նամակում կաթողիկոսը ասում է, որ ֆրանսիացի վարպետները դեռևս լավ թուղթ չեն պատրաստել, որ իրենք տեսնեն և ուրախանան: Նաև գրում է, որ նրանց ասել է՝ եթե լավ թուղթ պատրաստել գիտեն, ասեն, եթե ոչ, ապա այդ մասին տեղեկացնեն, որ իրենք իմանան, թե ինչ անեն:

Նույն նամակում նաև գրում է, որ երկու ֆրանսիացիներից կրտսերը՝ Մուսի Բեյսոնը՝ Հովհաննեսը, որևէ ձևով օգտակար չի եղել, քանի որ ողջ թղթատունը մյուս ֆրանսիացու ղեկավարությամբ է պատրաստվել և կառուցվել է «հոյժ հաստատագոյն» ձևով:

Տարիքով կրտսեր ֆրանսիացու համար գրում է, որ միայն նա լավ թուղթ պատրաստել գիտեր, սակայն երբ եկավ ժամանակը, ոչ միայն թուղթ չպատրաստեց, այլև սկսեց շարունակ գժտվել իր ավագ ընկերոջ հետ, ինչպես նաև անընդհատ ասում էր. «Թողեք գնամ իմ երկիրը»: Սիմեոն կաթողիկոսն ստիպված նրան ետ է ուղարկում Պոլիս[84]:

Կաթողիկոսական դիվանում թուղթ պատրաստող վարպետներն անվանվում են «թղթաշեններ»: 1777 թվականի հոկտեմբերի 28-ին ավագ թղթաշենը ևս վերադառնում է ետ, քանի որ շարունակ մտածում էր Ֆրանսիա գնալու մասին: Այս երկու վարպետների մասին կաթողիկոսը գրում է, որ «նենգաւոր մտօք ոչ հանին ըզլաւ թուղթ, և ոչ ուսուցին զաշակերտս»: Այսպիսով, նրանք ո՛չ լավ թուղթ են պատրաստում և ո՛չ էլ այդ արվեստը սովորեցնում Մայր Աթոռի միաբաններին:

Ֆրանսիացի երկու վարպետների հակառակության պատճառն այն էր, որ նրանք չէին ցանկանում թղթի պատրաստության եղանակը սովորեցնել: Վարպետները նաև այն մտավախությունն ունեին, որ Ֆրանսիա վերադառնալուց հետո իրենց կարող էին պատժել թուղթ պատրաստելը սովորեցնելու համար: Կաթողիկոսին այս պատճառով խնդրում են, որ իրենց ոչ թե Պոլսից Ֆրանսիա գնացող նավով ուղարկեն, այլ Զմյուռնիայից մեկ այլ երկիր գնացող նավով, որից հետո իրենք Ֆրանսիա կվերադառնային[85]: Այդպիսով ցանկանում են իրենց գալու հետքերը ջնջել, քանի որ ասում են, թե իրենք ուրիշ բացատրություն էին տվել Ս. Էջմիածին գալու մասին:

---

83 Դիւան հայոց պատմութեան, գիրք Ը, էջ 500:

84 Նույն տեղում, էջ 526:

85 Նույն տեղում, էջ 529:

Այս հանգամանքը Սիմեոն կաթողիկոսը լավ էր հասկացել: Նա կանչել էր երկու վարպետներին և հարցրել, թե ինչո՞ւ են ձգձգում թղթի արտադրությունն սկսելը: Տարբեր պատճառաբանություններ բերելուց հետո, տեղի տալով կաթողիկոսի սպառնալիքին, թե նրանց կպատժի Արևելքին բնորոշ գանահարությամբ, վեց ամսվա ընթացքում աշխատեցնում են գործարանը, սակայն ո՛չ բավարար որակի թուղթ են պատրաստում և ո՛չ էլ պատրաստման արվեստը սովորեցնում, որի համար էլ Սիմեոն կաթողիկոսը հիասթափված նրանց ետ է ուղարկում:

Կաթողիկոսը թղթի գործարանի վերաբերյալ նշանակում Իսահակ արքեպս. Գեղամացուն, ում հսկողությամբ ֆրանսիացի վարպետները կառուցում են գործարանը[86]*:*

Թղթի արտադրությունը այնուհետև Սիմեոն կաթողիկոսը կազմակերպում է Մայր Աթոռի միաբանների ուժերով՝ Գրիգոր Զաքիկյանցին գրելով, որ նրանք այժմ ֆրանսիացի վարպետներից ավելի լավ թուղթ են պատրաստում. «Թէպէտ իւրեանք մեր տղայոցն բան ոչ ցուցին, այլ տղայքն իմացան զկէրպն, և քան զնոսա լաւ թուղթ են հանելոց»[87]*:*

Թղթի գործարանի տեղի մասին Հովհաննես եպս. Շահխաթունյանցը գրում է. «Ոչ խնայելով՝ ոչ յաշխատանս և ոչ ի ծախսն, կանգնեաց և զայն գործարան ի հարաւակողման Տաճարին՝ արտաքոյ մեծ պարսպին հանդէպ հարաւային դրան Ղազարապատին»[88]*:*

Կաթողիկոսական դիվանի հրատարակիչ Գյուտ քահանա Աղանյանցը թղթի գործարանի կառուցման տեղի մասին Շահխաթունյանցի հետևողությամբ գրում է, որ Սիմեոն կաթողիկոսը «Ղազարապատի դրան հանդէպ՝ պարսպից դուրս, դէպի հարաւ, շինեց թղթի գործարանի շինութիւնը ճիշտ այնտեղ, ուր ըստ Ագաթանգեղայ Պատմութեան, թագաւորական պալատի տեղն էր: Այդ տեղը 1825 թուին տաճարի տակը մաքրելու ժամանակ աղիւսաշէն մի նկուղ բացուեց, խաչի նշաններով: Թղթի գործարանի շինութեան աւերակները դեռ կենդանի են մնում»[89]*: Այս տողերը գրվել են 1894 թվականին, ուստի այդ ժամանակ գործարանի ավերակները դեռ եղել են:*

Աղանյանցից մի քանի տարի անց՝ որպես ականատես, ավելի հստակ է գրում Արտակ եպս. Սմբատյանցը. «Թղթագործարանի կիսավեր շենքը մինչև վերջին ժամանակները գոյություն ուներ: Այդ շինությունը ժողովրդի մեջ հայտնի էր «Քիաղզխանա (թղթի գործարան)» անվամբ: Սույն շինությունից սկսած մի կողմից մինչև Գայանեի վանքը, մյուս կողմից մինչև

---

86 Դիւան հայոց պատմութեան, հտ. Գ, էջ ՃԿԴ:

87 Դիւան հայոց պատմութեան, հտ. Ը, էջ 584:

88 **Հովհաննես եպս. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հտ. Ա, Ս. Էջմիածին, 1842, էջ 98:

89 Դիւան հայոց պատմութեան, հտ. Գ, էջ ՂԳ:

վանքի հարավային դարբասը պղտատու ծառերով լի պարտեզն է եղել, որտեղ պատրաստելիս են եղել թղթի զանգվածը»[90]։

Հիշյալ պարտեզը, թղթագործարանի հետ, հիշվում է 19-րդ դարի աշուղ Կարապետի հետևյալ խոսքերում՝ «Քիաղզխանի բաղչի տակին»[91]։

Կաթողիկոսական դիվանում ասվում է, որ 1775 թ. գարնանը սկսում են կառուցել թղթի գործարանը և հարակից շինությունները, որոնցից գլխավորը «մէկ մեծ եկեղեցւոյ չափ կլինի, տաշեալ քարամբք և կրով։ Երկայնութիւն Ի (20) գազ է, և լայնութիւնն Թ (9) գազ»[92]։

Անհրաժեշտ է նշել, որ թղթի գործարանը հետագայում ոչ թե դադարեցրել է իր աշխատանքը ոչ օգտավետ լինելու պատճառով, այլ ավերվել և կողոպտվել է։ Սիմեոն կաթողիկոսի վախճանվելուց հետո ևս տպարանի գործելը Գյուտ քհն. Աղանյանցը պայմանավորում է այն հանգամանքով, որ Մայր Աթոռի պարսպից ներս էր գտնվում, իսկ «թղթագործարանը, պարսպից դուրս լինելու պատճառով՝ նորա երկաթեայ ու պղնձեայ գործիքները՝ ասպատակող զօրքերը յափշտակեցին, որով և իսպառ դադարեց նորա գոյութիւնը Ս. էջմիածնում և ոչ ոք այնուհետև փորձեց նորոգել»[93]։

1775 թ. Սիմեոն կաթողիկոսը Զաքիկյանցին ուղղված նամակներից մեկում գրում է, որ թղթի պատրաստմամբ զբաղված լինելով՝ երկու տարի է, որ գիրք չի տպագրել և որ շուտով նոր գիրք տպագրելով՝ կուղարկի։ Այս խոսքերով նկատի ունի 1774 թ. սկսված և 1775 թ. ավարտված «Տոնացույցի» տպագրությունը։

Մեկ պրակ կազմող և մի մամուլի հավասար չծալված թուղթը 18-րդ դարի գրություններում անվանվում էր «թապաղա»։ Սիմեոն կաթողիկոսի գրածից երևում է, որ էջմիածնում երկար ժապավենով հավաքելով գլանաձև փաթաթվող թուղթ չեն կարողացել պատրաստել, այլ տարբեր կաղապարների մեջ թերթ թուղթ են ստացել։ Նամակից երևում է, որ տարբեր չափերի կաղապարներ են եղել։

Ասացինք, որ սկզբնապես թուղթ պատրաստող վարպետներ Սիմեոնը հրավիրել էր Պարսկաստանից, ովքեր, պարզվում է՝ նույնպես նման կաղապար են պատրաստել, որի մասին գրում է, թե ուղարկում է «մի թապաղա ևս ի Սպահանու թղթաշէնի հանեցելոյն»[94]։

Հ. Աբրահամյանը այս և մի շարք այլ վկայությունների հիման վրա այն կարծիքն է հայտնում, որ Պարսկաստանից եկած վարպետները ոչ թե պարզապես թղթի նմուշներ են պատրաստել, այլ թղթի առանձին գործարան կամ արտադրություն հիմնել. «Էջմիածնում միաժամանակ հիմ-

90 **Արտակ եպս. Սմբատյանց**, Սուրբ էջմիածնի միաբանության գրական կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, էջ 64:

91 Հայ աշուղներ, աշխտ. Գ. Ախվերդյանի, Թիֆլիս, 1903, էջ 86:

92 Դիւան հայոց պատմութեան, գիրք Ը, էջ 419:

93 Դիւան հայոց պատմութեան, հտ. Գ, Թիֆլիս, 1894, էջ ՃԿՋ- ՃԿԷ:

94 Դիւան հայոց պատմութեան, գիրք Ը, էջ 583:

նադրվել է թղթի ոչ թե մեկ, այլ երկու գործարան, մեկը ֆրանսիացի և մյուսը պարսիկ վարպետների ձեռքով: Սրանցից մեծը, որ հավանաբար ֆրանսիացի վարպետներն էին կառուցել 20 գազ երկարություն և 9 գազ լայնություն ուներ և կառուցված էր Զաքիկենց Գրիգոր աղայի ծախքով. պարսիկ վարպետների կատարած արհեստանոցի տարածության մասին տեղեկություններ չկան:

Պատվավոր կերպով ավարտելով իրենց գործը՝ 1776 թվի ապրիլի 16-ին մեկնում են պարսիկ վարպետները: Նույն թվի հոկտեմբերի 28-ին աշխատանքից հեռացվում է ֆրանսիացի փոքր թղթաշենը և ապա նոյեմբերին՝ մեծը:

Այնուհետև գործարանի ղեկավարությունը անցնում է առաջին հայ թղթագործ վարպետ Նիկողայոսին, որը սովորել էր պարսիկ թղթագործների մոտ և ճարպկորեն յուրացրել ֆրանսիացի վարպետների հմտությունը:

Սրա մասին 1777 թ. ծախսերի մատյանում արձանագրված է. «Յապրիլի 21. օրն ուրբաթ, նոր վարպետ Նիկողայոսն սկսաւ ծեծել զնիւթ թղթոյն: Բաշխիշ ետու երկու հազար դիան»[95]:

Թղթի երկրորդ գործարանի մասին նման պնդումն կարոտ է լրացուցիչ փաստարկների, որոնք կարող են ի հայտ գալ կաթողիկոսական դիվանի բոլոր նյութերի գիտական շրջանառության մեջ դրվելուց հետո:

Երբ գործարանն սկսում է աշխատել, նոր պատրաստված թղթով առաջինը (1777 թ.) տպագրվում է «Պարտավճարը»: Այս գրքից ուղարկելով Հնդկաստան՝ Գրիգոր աղային, Սիմեոն կաթողիկոսը տեղեկացնում է, որ տպարանի կառուցման վրա ծախսվել է 7800 թուման:

Գրիգոր Զաքիկյանցը, տեսնելով էջմիածնում պատրաստված թղթով տպագրված գիրքը, ոչ միայն Սիմեոն կաթողիկոսի նշած գումարն է ուղարկում, այլև կաթողիկոսին է նվիրում 400 կտորից բաղկացած հախճապակե սպասք, որի յուրաքանչյուր կտորի վրա ոսկեգիր գրված էր. «Ի վայելումն Տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին Ամենայն Հայոց ի ՌՄԻԶ [1777] թուին»: Ինչպես, սակայն, նշում է Գյուտ քահանա Աղանյանցը, այս սպասքի մեծ մասը կոտրվում է Իրաքի նավահանգիստ Բասրայում գրաստներին բարձելիս, և միայն չորս ըմպանակ է մնում և հասնում Մայր Աթոռ[96]:

Հնդկահայ բարերարը այսպես ուրախությամբ և առատաձեռնությամբ է արձագանքում, որովհետև տեսնում է, թե հայոց հայրապետը որքան բարձր է գնահատում իր կատարած բարերարությունը: Հայրապետական այդ բարձր գնահատանքն արտահայտվում է երեք ձևով:

Առաջին՝ տպարանի կենտրոնական դռան գլխավոր արձանագրության մեջ նշվում է, որ տպարանը կառուցվել է նրա միջոցներով:

---

95 **Աբրահամյան Հ.**, Թղթի գործարան Հայաստանում, Գիտական նյութերի ժողովածու, հմր. 1, Երևան, 1941, էջ 63-64:

96 Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, էջ ՃԿԵ:

Երկրորդ՝ տպված յուրաքանչյուր գրքի հիշատակարանում անուննե-րի թվարկումն ավարտվում է Գրիգոր Միքայելյան-Ջաքիկյանցին ու նրա գերդաստանը հիշելով և օրհնելով: Այսպես, 1772 թ. լույս տեսած «Ջբօ-սարան հոգեւոր» գրքի հիշատակարանում կաթողիկոսը գրում է. «եւ մա-նաւանդ յիշեցէք յաղօթս ձեր զարժանին յիշեցման զջուղայեցի և ի Հինդ բնակեալ Ջաքիկենց լուսահոգի պարոն Միքայէլի որդի մեծահաւատ և բարեսէր պարոն Գրիգոր իշխանազունն»: Ապա հիշվում են նրա հարա-զատները[97]: Միջնադարյան հիշատակարաններում ընդունված ձևով՝ այ-նուհետև ասում է, որ նրա հիշատակը թող անմեռ մնա, քանի որ հոգաց տպագրատան կառուցման ծախսը. «Քանզի ի լսելն բարեպաշտիս այսո-րիկ զհաստատիլն տպագրատանս ի Սուրբ Աթոռոջս, յանձն էառ յօժա-րութեամբ տալ զամենայն ծախսն սորին ձրիապէս, որպէսզի հաստա-տուն մնասցէ յաթոռոջս տպագրատունս այս ի յիշատակ յաւիտենական իւրեան և իւրայնոցն»:

Երրորդը, որն առանձնակիորեն է հուզում բարերարին, կապված էր էջմիածնում պատրաստված թղթի ջրանիշ լուսանշանում նրա անվան սկզբնատառերի հիշատակման հետ:

Թղթի գործարանի կենտրոնական մուտքի կառուցողական արձանագ-րության մեջ ևս նշվում է, որ այն կառուցվել է Ջաքիկյանցի բարերա-րությամբ: Այս մասին կաթողիկոսը հնդկահայ բարերարին գրում է. «Ի ճակատ թղթատանն ևս տալոց եմ ի գրել զյիշատակդ, որպէս և ի վերայ տպագրատանն, զի յաւիտեան փառաւորեսցի անուն քո»[98]:

Լուսանշանները կամ լուսադրոշմները, ինչպես հայտնի է, թղթի՝ տվյալ վարպետի կամ արհեստանոցի նշանն են, ինչպես որ ոսկերիչներն ու քարգործ վարպետներն իրենց գործիքների վրա ունեին համապատաս-խան նշաններ:

Էջմիածնում պատրաստված թղթի թերթերն ունեցել են իրենց լուսադ-րոշմը, որը էջմիածնում պատրաստված թղթի թերթերից հարազատորեն վերարտադրել է Գյուտ քահանա Աղանյանցը:

Այստեղ զարդագիր փակագրով գրված է՝ Սուրբ Էջմիածին, կողքը՝ Սի-մեոն կաթողիկոս, կենտրոնում՝ թվին ՌՄԻԵ: Այն հայկական թվականութ-յան 1225 թվականն է, որին գումարելով 551՝ ստանում ենք փրկչական 1776 թվականը՝ թղթի պատրաստման տարին, իսկ ներքևի ԳՄ-ն նշանա-կում է Գրիգոր Միքայելյան:

Այսպիսով լուսադրոշմը վերածվում է յուրօրինակ հիշատակարանի, ուր ասվում է, որ Սուրբ Էջմիածնում Սիմեոն կաթողիկոսի ջանքերով 1776 թվականին Գրիգոր Միքայելյանի միջոցներով պատրաստվեց այս թուղ-թը:

---

97 **Սիմեոն Ա Երևանցի,** Ջբօսարան հոգեւոր, Ս. Էջմիածին, 1772, էջ 181:

98 Դիւան հայոց պատմութեան, հտ. Ը, էջ 584:



Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԹՂԹԻ ՋՐԱՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Գտնվում է «Դիւան հայոց պատմութեան» գրքի Ը հատորում, Թիֆլիս, 1908 թ.

Թղթի ջրանշանի փորագրանկարային մի տարբերակն է այն պատկերը, որը կա Սիմեոն կաթողիկոսի հայրապետության շրջանում էջմիածնում տպագրված մի քանի հրատարակություններում, որին դեռ կանդրադառնանք։

Հայ ձեռագրային ավանդույթի հետևողությամբ՝ կանոնի սկզբում մի պատկեր է, և հաջորդող էջից ճակատազարդով սկսվում է կանոնը։

Փորագրանկարում կան լուսագրոշմի՝ Սիմեոն կաթողիկոս և Գրիգոր Միքայելյան նշանակող սկզբնատառերը։ Էջմիածինը ներկայացված է Մայր Տաճարով, իսկ փորագրանկարի պատրաստման թվականը թե՛

հայկական թվականությամբ (ՌՄԻԱ=1221)և թե՛ փրկչական թվականով (1772) նշված է պատկերի շրջանակի երկու կողմերում։

Գրիգոր Ջաքիկյանցը, իր մուրհակագրերից հինգը թարգմանելով, ուղարկում է Մայր Աթոռ, որպեսզի թարգմանության լեզուն խմբագրեն և մեկական օրինակ տպեն Թղթագործարանում պատրաստվող Թղթով՝ որպես նմուշ, և իրեն ուղարկեն։ Կաթողիկոսն ամեն մեկից տպագրում է 4 օրինակ և ուղարկում [99]։

«Պարտավճարի» վերջում գտնվող և այս գրքին նվիրված չափածո ստեղծագործության սկզբում Սիմեոն կաթողիկոսը շեշտում է, որ գիրքը տպագրվել է էջմիածնում հաստատված տպարանում՝ այնտեղ պատրաստված տառերով և Թղթով.

Նոր թուղթ՝նոր գիր՝նոր տպարան,
Բանքն ևս նոր ի լոյս ածան
Յատուկ պարգևք նորոգական[100]։

Ողջ չափածոն գրված է «ան» հանգով, որը շեշտելու համար անջատված է վերից վար շարքով և բերված է էջի աջ լուսանցքի վերջում։

Անհրաժեշտ է նշել, որ Սիմեոն կաթողիկոսի գրագրությունը մեզ հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու ոչ միայն տպարանի և վերջինիս տառատեսակների ու զարդագրերի մասին, այլև անդրադառնալ գրեթե չքննված այն հարցին, թե Մայր Աթոռում թուղթն ինչ եղանակով է պատրաստվել, որը պարզ է դառնում Սիմեոն կաթողիկոսի գրությունում հիշված այն նյութերի թվարկմամբ, որոնք կաթողիկոսը պատվիրում է բերել Թղթի պատրաստման համար։

Այսպես, 1776 թվականի հոկտեմբերի 28-ին գրված մի նամակում կաթողիկոսը նշում է, որ մաղի պատրաստման համար մի քանի տեսակի մանր պղնձյա թելեր են հարկավոր. «Այլև՝ տեսակ մի ճերմակ շալ՝ պիտոյ էր Թղթատանն, որ ի Պօլիս գտանիւր։

...Նաև՝ բարակ պղնձեայ թել էր պիտոյ վասն Թղթոյ մաղին՝ քանի մի տեսակ»[101]։

Նույն օրով թվագրված մեկ այլ նամակում էլ ասվում է, որ Թղթատան համար հարկավոր է «Դ հօխայ թօրթու, որ է գինւոյ չոր բրոր, որ յայլ տեղեաց գայ, և ոսկերիչք ի գործ արկանեն։ Դ Հօխայ նոր և լաւ առչասպ, Դ հօխայ պղնձի բարակ մաւթուլ, Դ հօխայ ևս քան զայն փոքր մի հաստ։ Իսկ թէ այսչափ չլինիցի, Բ Բ հօխայ, կամ փոքր մի աւելի։ Աճ [100] դրամ սիմ։ Աճ դրամ ևս փոքր մի հաստ սիմ։ Որոց զօրինական ևս յղեաց, այսինքն՝ զթելիցն պղնձեայ, զի զնմանն առցէ»[102]։

---

99 Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, էջ ՃԿՋ։

100 **Սիմեոն Ա Երևանցի,** Պարտավճար, էջ 374։

101 Դիւան հայոց պատմութեան, գիրք Ը, էջ 530։

102 Նույն տեղում, էջ 530-531։

Սիմեոն կաթողիկոսի մեկ այլ գրությունից իմանում ենք ոչ միայն թղթի պատրաստման եղանակի, այլև թղթի հումքի մասին: Սկզբնապես կաթողիկոսը հակված էր այն մտքին, որ թուղթը պետք է ստանալ Արարատյան դաշտում այն ժամանակ առատորեն աճող բամբակից, որը Արարատյան դաշտով հոսող ջրի հետ միասին մեծ արդյունքներ էր խոստանում: Սակայն արտադրության ընթացքում պարզվում է, որ այդ թուղթը բավարար ամրություն չունի, ուստի որոշվում է թուղթը ոչ թե անմիջապես բամբակից կամ կտավատից պատրաստել, այլ բամբակյա կամ կտավատե գործվածքներից, որովհետև այս նյութերը, գործվածք դառնալով, լրացուցիչ ամրություն են ձեռք բերում: Քանի որ նոր կտորեղենից թուղթ պատրաստելը բավականին թանկ կարժենար, ուստի կաթողիկոսը որոշում է թղթի պատրաստումն իրականացնել հին կտորեղենի ժողովմամբ: Այս հին կտորեղենը կաթողիկոսական դիվանում անվանվում է «շորահին», այսինքն՝ հին շոր:

Հին կտորեղեն ժողովելու համար Սիմեոն կաթողիկոսը Հայոց եկեղեցու պատմության մեջ իր բովանդակությամբ թերևս եզակի մի կոնդակ է գրում՝ «շորահինի»՝ հին շորերի ժողովման թուղթ՝ «Վասն թղթատանն թուղթ հասարակ՝ տալ զշորահինն»[103]: Կաթողիկոսական դիվանում այս մասին ասվում է, որ կաթողիկոսը Կյուրեղ անունով մի դերձակի քաթանից կամ բամբակից պատրաստված կտորեղենի ժողովարարության օրհնության գիր է տալիս 1775 թ. հունիսի 17-ին և նրան ուղարկում Ալաշկերտի, Բասենի, Ախլցխայի և Կարսի կողմերը: Թղթի պատրաստության համար հին շորերի ժողովման անհրաժեշտության մասին այս կոնդակում ասվում է. «Եւ զի վասն թղթատանն աստ չգտանիւր ըստ բաւականին շորահին՝ ի քթանէ կամ ի բամբակէ՝ յորոց լինէր թուղթ, և ժողովելն աստի և անտի՝ էր յոյժ դժուարին և անձեռնհաս: Զի դրամով գնել ոչ լինէր, և այլ ինչ կերպ և հնար չգտանէաք: Ուստի՝ այժմ զայս գտաք հնար, զի կիւրեղ անուամբ դերձակ ոմն յղեցաք, կամ դրամով՝ կամ այլ ինչ դիւրաձեռն հնարիւք ժողովել զշորահին վասն թղթատանն, և բերել աստ»[104]:

Այս խոսքերից երևում է, որ թղթի գործարանում հավաքել են քաթանից և բամբակից հին շորեր և դրանցով թուղթ պատրաստել: Սակայն թղթի համար հումք ծառայող հին շորերը չեն բավականացրել: Գնելը թանկ է արժեցել, իսկ որևէ այլ ձևով հնարավոր չի եղել հավաքել: Ահա այս պատճառով էլ կաթողիկոսը որոշում է կազմակերպել հին շորերի շորահավաքություն:

Կաթողիկոսական օրհնության գրում ասվում է, որ ուր այս գիրը ցույց տա Կյուրեղ դերձակը, նրան օժանդակեն հին կտորեղենի ժողովման գործում. «Վասն որոյ գրեաց ևս ընդ սմա զթուղթ օրհնութեան հասարա-

---

103 Դիվան հայոց պատմության, հտ. ԺԱ, Թիֆլիս, 1913, էջ 314:

104 Նույն տեղում:

կապէս, զի ուր և հանդիպեսցի, օգնութիւն արասցեն, տալով զշորահին վասն թղթատանն, առ ի լինիլ նիւթ թղթոյն»[105]։

Կաթողիկոսը նույնաբնույթ մի նամակ է գրում նաև Վրաստանի առաջնորդ Հովհաննեսին՝ պատվիրելով, որ աջակցեն Մայր Աթոռի նվիրակ Մարտիրոս վարդապետին՝ «զհնոտի քեաթանս ժողովեալ տացեն»[106]։

Հայոց եկեղեցու պատմությունից հայտնի են ձեթի, գինու, տարբեր նյութերի, ակնամոմի ժողովման կոնդակներ, սակայն, կարծում ենք, այսպիսի կոնդակը եզակի է իր բովանդակությամբ։ Ահա այսպես Սիմեոն կաթողիկոսն ամենայն ջանքով, զոհողությամբ և հնարամտությամբ առաջ է տանում տպագրական գործը Մայր Աթոռում։

Եփրեմ վարդապետի ընդօրինակած կաթողիկոսական Մաշտոցի հիշատակարանը ասացինք, որ ակնհայտ նմանություն ունի «Ջամբռի»՝ Սիմեոն կաթողիկոսին նվիրված գլխի և «Պարտավճարի» հիշատակարանի հետ, որից կարելի է եզրակացնել, որ կա՛մ երեք գործերի գրությանը մասնակցել է Եփրեմ վարդապետը և կա՛մ երեքն էլ, որպես սկզբնաղբյուր, մի նախօրինակ ունեն։

Հիշատակարանում ամփոփ ձևով գրված է նաև տպարանի և թղթագործարանի կառուցման մասին։ Տպարանի համար ասվում է. «Հաստատեաց եւ զտպագրատունն ի Սուրբ Աթոռոջս ի հիւսիսակողմն հայրապետարանին»[107]։

Եփրեմ վարդապետն ասում է, որ թեև մինչ այդ Պարսկաստանում կային թղթի գործարաններ, սակայն նման որակի թուղթ չէր պատրաստվում։ Ըստ այս հիշատակարանի՝ սկզբնապես Պարսկաստանից եկած վարպետներն են պատրաստել գործարանը, սակայն «անշահ եւ անպետք իմն էր թղթահանութիւն նոցին»[108]։

Տեսնելով, որ նրանց պատրաստածը լավ թուղթ չէ՝ Սիմեոն կաթողիկոսն այնուհետև Գրիգոր Խոջաջանյանի աջակցությամբ բերում է ֆրանսիացի վարպետներին և «լավագոյն շինեցոյց զթղթատունն»։

Էջմիածնում պատրաստված թղթով առաջին հրատարակությունը, ինչպես ասացինք, «Պարտավճարն» է, որի տարբեր մամուլները թեև նույն լուսադրոշմով, սակայն տարբեր հաստության և որակի թղթի թերթեր ունեն, որից կարելի է եզրակացնել, որ նրանք բոլորը թեև նույն կաղապարով են պատրաստվել, սակայն հումքի տարբեր բաղադրությամբ և տեխնիկայով, մինչև ստացվել է կաթողիկոսի ցանկացած պայծառ և սպիտակ թուղթը։

---

105 Նույն տեղում, էջ 314- 315:

106 Դիվան հայոց պատմության, հտ. Ը, էջ 523:

107 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Թ, էջ 1143:

108 Նույն տեղում, էջ 1144:

«Պարտավճարի»՝ Ս. Էջմիածնում պատրաստված թղթով տպագրելու մասին եփրեմ վարդապետի հիշատակարանում ասվում է. «Զոր եւ ետ տպագրել նորոգ թղթով՝ իւր շինեալ թղթատանն ի յիւրակերտ տպարանին»[109]։

«Պարտավճարում» Սիմեոն կաթողիկոսն իր ապրած ժամանակը և ժամանակի իշխողներին այսպես է բնորոշում. «Մրրկածին ժամանակն և կատաղի ժամանակաւորքն»։

Ահա այս մրրկային, փոթորկալից ու խառնակ ժամանակներում և նրանց կատաղի իշխողների տիրապետության պայմաններում, ի թիվս այլ մեծագործությունների, Սիմեոն կաթողիկոսը թողնում է նաև երկու անմար հիշատակներ՝ տպարանը և թղթագործարանը, որոնք հիշելիս հիշում ենք նաև հնդկահայ մեծանուն բարերարին, որի՝ ժամանակի հեքիաթային հարստությունից որպես հիշատակ և հուշարձան մնաց միայն այն, ինչ որ նա առատաբուխ կերպով նվիրեց հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, և բարերարությունն արդյունավորվեց շինարար հայրապետի մեծագործ իրագործումներով։

109 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ը, խմբ. Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2016, էջ 1146:

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

«Սաղմոսարան», 1771 թ.

Ս. էջմիածնի տպարանի անդրանիկ հրատարակությունն է: Որևէ օրինակ չի պահպանվել, ուստի Գ. Լևոնյանը գրում է. «1771 թվին, տպարանի հիմնարկության տարում, գիրք չի լույս տեսնում, փորձեր են անում մի սաղմոսի տպագրության, որ անհաջող է անցնում, և նրա տարածումը արգելվում է»[110]:

«Սաղմոսարանի» տպագրության մասին առաջին սկզբնաղբյուրը Սիմեոն կաթողիկոսի հրատարակած «Տօնացոյցի» վերջաբանն է, ուր ասվում է, թե 5 տարի չարչարվել է տպարանի հիմնման վրա, որից հետո «տպեցաք նախապէս զքանի հատ Սաղմոս, որ զտհասութիւնս շատ ունէր նկատմամբ տպեցմանն»[111]:

«Տհասություն» բառն այստեղ ունի թերություն իմաստը, թե սկզբնապես տպագրել են մի քանի օրինակ «Սաղմոսարան», որը տպագրական առումով շատ թերություններ է ունեցել: Ասվածից նաև երևում է, որ մի քանի օրինակ են տպագրել՝ տեսնելով առկա տեխնիկական թերությունները:

«Սաղմոսարանից» անմիջապես հետո՝ հաջորդ տարի, տպագրվում են Սիմեոն կաթողիկոսի ծավալով անհամեմատ փոքր և տպագրական բարդություն չունեցող «Աղօթագիրքը» և «Տաղարանը»: Թե ինչու նախ այս երկու գրքերը չեն տպագրվել և հետո նոր ձեռնամուխ լինեին ծավալով անհամեմատ մեծ և տպագրական տեխնիկայի առումով շատ ավելի բարդ «Սաղմոսարանի» տպագրությանը, կարծում ենք, բացատրվում է հայ գրատպության մինչ այդ անցած ուղիով, երբ ամեն հայ տպագրիչ, երազելով տպագրել Աստվածաշունչը, նախ փորձել է իրականացնել «Սաղմոսարանի» հրատարակությունը:

Առաջին հայ տպագրիչների՝ իրենց տպագրական գործունեությունը Սաղմոսարանի տպագրությամբ սկսելու կամ անպայմանորեն «Սաղմոսարան» տպագրելու մասին Ռ. Իշխանյանը գրում է. «17-րդ դարի առաջին կեսում հատակ է դառնում, որ թիվ մեկ կարևորությունը, ինչպես որ 5-րդ դարի սկզբներին էր, այդ դարում էլ մնում էր հայերեն Աստվածաշնչի խնդիրը: Եվ այն տպավորությունն է ստացվում, որ Հակոբ Մեղապարտից մինչև Ոսկան Երևանցի հայերի տպագրական ջանքերն ուղղված են եղել

110 **Գ. Լևոնյան**, Հայ գիրքը և տպագրության արվեստը, էջ 149:

111 Տօնացոյց, հտ. 1-2, Ս. Էջմիածին, 1774-75, էջ 554:

այդ գրքի ամբողջական տպագրությանը, իսկ նրա մասը կազմող Սաղմոսարանի տպագրությունները այդ մեծ ու դժվարին հրատարակությունը 1666-68 թթ. իրականացնելու ճանապարհին նախափորձեր են եղել»[112]։

Վստահաբար կարելի է ասել, որ Սիմեոն մեծագործ հայրապետը իր սկզբանե ծրագրել էր Հայոց Հայրապետական աթոռում և հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Սուրբ Էջմիածնում հրատարակել Աստվածաշունչը և ընդունված ավանդույթով, որպես տպագրական նախափորձ, տպարանի գործունեությունը սկսել է «Սաղմոսարանի» հրատարակությամբ։ Այն, սակայն, ոչ միայն տպագրական բավարար որակ չի ունենում, այլև Արևելյան Հայաստանում հաջորդող տարիներին ծավալված իրադարձությունները անհնարին են դարձնում Աստվածաշնչի հրատարակությունը՝ արագացնելով նաև Սիմեոն հոգնատանջ կաթողիկոսի վախճանը՝ նրա տպագրական ծրագրերը ևս անավարտ թողնելով։

«Սաղմոսարանի» տպագրությունը 1787 թ. վիճակված էր իրականացնելու Սիմեոն կաթողիկոսի արժանավոր հաջորդ Ղուկաս Ա Կարնեցուն (կթղ. 1780-1799 թթ.)։

Այս, ինչպես նաև Ս. Էջմիածնի 1770-1790-ական թթ. հրատարակությունների էջերում, հիշատակարաններում և դիվանական վավերագրերում որոշակի նշմարներ և հիշատակություններ են պահպանվել, որոնք վերաբերում են «Սաղմոսարանի» 1771 թ. հրատարակությանը։ Այսպես Սիմեոն կաթողիկոսի «Ջամբռի» հիշատակարանում ասվում է. «Ի ՌՄԺԹ [1770] թուոջն մերում, յորում և ետ տպել նախապէս զՍաղմոս, զիւրակերտ Տաղարանս, և զԳիրքն Աղօթից Ջբօսարան կոչեցեալն, ի փորձել զամենայն պարագայս գործոյն, ի ՌՄՀ [1771] և ի ՌՄԻԱ [1772] թիւսն»[113]։

Ըստ այս վկայության՝ «Սաղմոսարանը» տպագրվել է անգամ ոչ թե 1771 թ., այլ 1770։ 1771 թ. տպագրվել է «Տաղարանը» և 1772 թ. «Ջբօսարան հոգեւոր» Աղոթագիրքը։

«Սաղմոսարանի»՝ Էջմիածնի առաջին հրատարակությունը լինելու մասին շատ ավելի կարևոր, անգամ անհերքելի փաստարկ է բերում Գ. Գրիգորյանը՝ վկայակոչելով Մատենադարանի «Կաթողիկոսական դիվանի» 7-րդ թղթապանակի հմր 3 վավերագիրը, որի մասին գրում է, թե այն «Էջմիածնի տպարանի, թղթի գործարանի և կազմատան ծախսերի և հաշիվների հաշվեմատյանն է, որը մինչ այժմ անհայտ մի շարք ուշագրավ տեղեկություններ է պարունակում»[114]։ Ինչպես նշում է հետազոտողը. «Վավերագրին կցված է նմանատիպ բովանդակությամբ ևս 15 թերթ, որոնցից 10-րդը մինչև 1780 թ. Մայր Աթոռի դպրատանը տրված ձեռագրերի և տպագիր գրքերի ցուցակն է»։ Նա հոդվածում բերում է 10ը թերթի

---

112 **Ռ. Իշխանյան,** Հայ գրքի պատմություն, հտ. Ա, Երևան, 1977, էջ 338-339:

113 **Սիմեոն** կաթողիկոս **Երևանցի,** Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 44:

114 **Գրիգորյան Գ.,** Հայաստանի առաջին տպարանի վաղ հրատարակությունների մասին ճշգրտումներ, «Բանբեր Մատենադարանի», հմր. 22, 2015, էջ 500:

լուսատիպ նմանահանությունը, որում ասվում է. «ԺԲ (12) հատ Սաղմոս՝ առաջին տիպն մեր։ Ե (5 հատ) Սաղմոս ևս՝ երկրորդ տիպն մեր»[115]։

Գ. Գրիգորյանը միանգամայն հիմնավորված ձևով գրում է. «Ելնելով վավերագրից՝ կարելի է ենթադրել, որ Մայր Աթոռում որոշ թվով օրինակներ այնուամենայնիվ պահպանվել էին՝ թեկուզ դպրատան աշակերտների ուսումնական կարիքները բավարարելու համար, ինչն էլ առիթ է տվել ուսումնասիրողներին և հենց Սիմեոն կաթողիկոսին քանիցս հիշատակել Սաղմոսարանի մասին»[116]։

Գ. Գրիգորյանը բերում է ևս մեկ փաստարկ, որն օգնում է ամբողջացնել Ս. Էջմիածնի տպարանի հրատարակությունների ցանկը և տպագրությունների հաջորդականությունը։ Այս հարցին կանդրադառնանք «Տաղարանի» առաջին հրատարակության առիթով։

Սիմէոն Երեւանցի, «Զբօսարան հոգեւոր», 1772 թ. (184 էջ)

Սիմեոն կաթողիկոսի հեղինակած Աղոթագիրքն է, որի մասին առաջին հիշատակությունը գտնում ենք 1774-1775 թթ. տպագրված «Տօնացոյց»-ում, ուր ասվում է, որ «Սաղմոսարանից» հետո տպագրվում է հիշյալ Աղոթագիրքը, որը թեև նախորդ հրատարակությունից ավելի հաջող էր տպագրական առումով, սակայն «Տօնացոյցի» համեմատ բավականին պակասություններ ուներ[117]։

Եփրեմ վարդապետի (ապա Եփրեմ Ա Զորագեղցի՝ կթղ. 1809-1830 թթ.) 1779 թ. ընդօրինակած կաթողիկոսական Մաշտոցի հիշատակարանում ասվում է. «Եւ ի սոյն նորոգ տպագրատանս, թող զայլ գիրս՝ տպեցոյց նախ զփոքրիկ գիրք մի Աղօթից՝ իւր արարեալ, կոչեցեալ Զբօսարան հոգեւոր»[118]։ Այստեղ այնքան էլ պարզ չէ, թե ինչ է նշանակում «թող զայլ գիրս»՝ չհաշված մինչ այդ տպագրված մյուս գրքե՞րը, թե՞ մինչև մյուս գրքերի տպագրվելը։ Ամեն դեպքում որպես առաջին լիարժեք տպագրված գործ, «Զբոսարանն» է հիշվում։

Այս հրատարակությունից պահպանվել է ընդամենը մի քանի օրինակ, որը Օրմանյանին հիմք է տվել ենթադրելու, թե կաթողիկոսը, նկատի ունենալով նաև վերջինիս տպագրական որակը, միտումնավոր վերացրել է տպագրված օրինակները[119]։

Նման ենթադրությունը, թերևս, այնքան էլ ճիշտ չէ, որովհետև Սիմեոն

---

115 Նույն տեղում, էջ 501:

116 Նույն տեղում:

117 Նույն տեղում:

118 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Թ, խմբ. Գ. Տէր-Վարդանեան, Երևան, 2016, էջ 1144:

119 **Մաղաքիա արքեպս. Օրմանյան,** Ազգապատում, Ս. Էջմիածին, 2001, §2124, էջ 3583:

կաթողիկոսը ոչ միայն «Տոնացույցում» է գրում, որ այն ավելի լավ տպագրություն է «Սաղմոսարանի» համեմատ, այլև Զաքիկյանցին ուղղված նամակում ասում է, որ մեկ օրինակ ուղարկում է որպես տպարանի առաջին հրատարակություն[120]։

Ռ. Իշխանյանը «Զբոսարանի» մասին գրում է. «Հայաստանում տպագրված առաջին գիրքը՝ «Զբօսարան հոգեւոր»-ը, փոքր չափսի է (7,5 x 10,5 սմ), 180 էջից բաղկացած։ Տպագրությունը պարզունակ է, շարվածքն անկանոն, թեև միանգամայն ընթեռնելի։ Պատկերներն անհրաժեշտ պարզությամբ չեն դրոշմված։ Կաշեպատ կազմը գեղեցիկ զարդեր ունի, որոնք գրքի արտաքինը հաճելի են դարձնում»[121]։

Կարելի է ենթադրել, որ Օրմանյանը չի տեսել այս հրատարակությունը՝ վերջինիս սակավագյուտ լինելու պատճառով, և ենթադրել է, որ հիշյալ գրքի տպաքանակը ևս չի տարածվել։

Օրմանյանի ասածից մի փոքր տարբերվող կարծիք է հայտնել Գ. Լևոնյանը. «Ըստ երևույթին նույնպես անհաջող գործ է համարվել, և մի քանի տասնյակ օրինակ ձրի բաժանվելով՝ մնացածը ոչնչացված է»[122]։

Սիմեոն կաթողիկոսն իր հեղինակած Աղոթագրքի տպաքանակը եթե թույլ չտար տարածելու, ապա նա այն նորից կվերահրատարակեր՝ որպես իր ստեղծագործությունը, ինչպես որ վարվել է 1772 թ. տպագրված և գրեթե չպահպանված «Տաղարանի» դեպքում, որը վերահրատարակել է 1777 թ.։

«Զբոսարանը» նորից չտպագրելը, ինչպես նաև Զաքիկյանցին ուղարկելը հիմք են տալիս ենթադրելու, որ գրքի տպաքանակը տարածվել է, պարզապես այն փոքր է եղել։ Անհրաժեշտ է նաև հաշվի առնել հետևյալ հանգամանքը։ Հնատիպ հրատարակություններից ավելի շատ մեզ են հասել սուրբգրային, ծիսական և որոշակիորեն կանոնացված ու նվիրականացված գրքերը, որոնք հատուկ պահվել են վանական հաստատությունների գրադարաններում։ «Զբոսարանը», այնինչ, թեև կաթողիկոսի գրածն էր, սակայն դիտվել է որպես անհատական հեղինակային ժողովածու։

Ինչ վերաբերում է գրքի բովանդակությանը, ապա այն «Տաղարանի» և «Պարտավճարի» հետ միասին կարելի է համարել էջմիածնապաշտ և հայրենապաշտ ու Հայոց աշխարհում հայ ժողովրդի ազգահավաքմանը իր ողջ կյանքը նվիրաբերած կաթողիկոսի գործունեության գրական անդրադարձը, ուր իրար միահյուսված են հանդես գալիս հոգևորն ու ազգայինը։

Տիտղոսաթերթին ամբողջական խորագիրն այսպես է ներկայացված՝ «Գիրք աղօթից. Որ կոչի Զբօսարան հոգեւոր»։ Կաթողիկոսը բնորոշվում է որպես «վշտակիր»։ Նա իրեն այդպես է անվանում, քանի որ հայ ժողովրդի՝ տարբեր երկրներ ցրվելով՝ ամայացել էր Հայոց աշխարհը։

---

120 Դիւան հայոց պատմութեան, հտ. Գ, էջ ՃԿԳ:

121 **Ռ. Իշխանյան**, Հայ գիրքը-1512-1920, Երևան, 1981, էջ 94:

122 **Գ. Լևոնյան,** Հայ գիրքը և տպագրության արվեստը, էջ 149-150:



«Զբօսարան հոգևորի» (Ս. Էջմիածին, 1772 թ.) Սիմեոն կաթողիկոսի առաջաբանի սկիզբը



. ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «ԶԲՕՍԱՐԱՆ ՀՈԳԵՒՈՐ» ԳՐՔԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

Ցավոք, գրքի տիտղոսաթերթից սկսած՝ արտացոլվել է նաև ժամանակի դավանաբանական պայքարը։ Ինչպես որ կաթոլիկության դարձած տարբեր հայեր իրենց հրատարակությունների տիտղոսաթերթերին գրում էին, որ իրենք ուղղափառ և ոչ հերձվածող հայերի համար են գրել, այնպես էլ այստեղ է ասվում, որ գիրքն ուղղված է «Լուսաւորչակրօնից անձանց»։

Գրքի առաջաբանում, կարևորելով աղոթքի դերը և ունեցած զորությունը, կաթողիկոսը գրում է, որ Հին և Նոր Կտակարաններում բոլոր հրաշքները և մեծագործությունները կատարվել են աղոթքի շնորհիվ։

Ասում է, որ աղոթքի դերն ավելի է կարևորվում իր ապրած ժամանակում, որի համար ինքը՝ որպես հայ ժողովրդի անարժան տեսուչ, փոքրիկ մի տետրակով հրատարակում է այս աղոթքները՝ որպես մի նոր օրհնություն Ս. էջմիածնից, որոնք ուրախությամբ պետք է ընդունել երեք պատճառով։

Առաջին՝ գրքի բովանդակությունից առավել կարևորում է տպագրությունը։ Նկատի ունենալով, որ այն Ս. էջմիածնի տպարանի անդրանիկ տպագրությունն է, անվանում է «ամլածին»՝ «իբր աւետեաց և սքանչելեօք զաւակ հոգեւոր ծնողացս ձերոց ըստ տպագրութեան նորոյ»[123]։ Նման բնորոշմամբ նկատի ունի, որ տպագրությունը Եվրոպայում, այդ թվում և հայկական կենտրոններում երկար ժամանակ էր, որ տարածվել էր, իսկ Ս. էջմիածինը ամուլ էր այդ բարիքից, և ահա սա նրա տպագրական առաջին ծնունդն է։

Երկրորդ՝ օգտակար է գրքի տպագրությունը։ Այստեղ ոչ թե անհամեստաբար նկատի ունի գրական արժանիքները, այլ հոգևոր-գաղափարական ուղղվածությունը, կոչը՝ համախմբվելու Ս. էջմիածնի շուրջը, հեռու մնալու դավանափոխ հայերի որոգայթներից, ինչպես նաև հետևելու աստվածային պատվիրաններին։

Գաղափարական այս ուղղվածությունը և ժամանակի կրոնաեկեղեցական պայքարը նկատի ունենալով՝ գրում է, որ կապարը պատերազմի ժամանակ ավելի մեծ հարգ ունի, քան ոսկին։ Այսինքն՝ այդ պայքարում միջնադարյան հեղինակների գործերից առավել կարևոր են ժամանակի թելադրանքով գրվածները։

Երրորդ՝ փոքրադիր է և պարզ ոճով է գրված, որով ընթերցողները այն հեշտությամբ կարող էին պահել իրենց մոտ և կարդալով՝ նույն հեշտությամբ հասկանային ասվածը։ Գրքի կարճ և մատչելի աղոթքներից կազմված լինելը նկատի ունենալով՝ գրում է, որ ծույլերը և տրտնջացողները, կարդալով այն, չեն կարող ասել, թե բարդ է ու երկար։

Գրքարվեստը

Գիրքն սկսվում է Սուրբ Երրորդությանը նվիրված աղոթքով, որին կից էջում հրեշտակաց դասով շրջապատված Ս. Երրորդությունը ներկայացնող փորագրանկարն է։

123 Գիրք աղօթից, Ս. Էջմիածին, 1772, էջ 21:

ՍՈՒՐԲ ԵՐԵՄԻԱՅԻՆ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՒՅՑԸ
«Հրատարակության վերջաբան»

Հայ գրատպության ավանդույթով և հատկապես Ամստերդամի հայկական տպագրության օրինակով, սկսած Ս. Էջմիածնի մեզ հասած առաջին այս հրատարակությունից, յուրաքանչյուր փորագրապատկեր ոչ միայն համապատասխանում է այդ կամ հաջորդող էջի բովանդակությանը, այլև տվյալ պատկերի հոգևոր խորհուրդն է մեկնաբանվում նկարի ներքո բերված չափածո մի քանի տողերով: Այստեղ ասվում է.

Երրորդութիւն և մի Աստուած,
Հեշտալուր Տէր և ողորմած,
Լուր ծառայիդ հառաչանաց,
Որ ողբալով առ Քեզ դիմեաց[124]:

Բերված չորս տողերից առաջինում Սիմեոն կաթողիկոսը տալիս է Սուրբ Երրորդության բնորոշումը՝ մեկ անբաժանելի լինելը: Երկրորդ տողում աստվածությունն անվանում է ողորմած և հեշտալուր, որ լսում է իրեն դիմողներին: Հեշտալուր բնորոշումը պայմանավորված էր այս հրատարակության «Աղոթագիրք» լինելով:

Վերջին երկու տողերում, որպես գրքում տեղ գտած աղոթքների հեղինակ, դիմում է Աստծուն, որ լսի իր ողբագին հառաչանքները:

«Սաղմոսարանի» Ոսկան Վարդապետի Ամստերդամի 1660-61 թթ. հրատարակության Սուրբ Երրորդության պատկերի մակագրության մեկտողյա բնորոշման մեջ ևս ընդգծվում է Սուրբ Երրորդության մեկ լինելը.

Երեք անձն միոյ Աստուածութեան[125]:

Սուրբ Էջմիածնի տպարանից մեզ հասած առաջին այս հրատարակությունը արդեն ունի մի քանի տառատեսակներ, ինչպես նաև հայ ձեռագրային զարդանկարչությունից եկող զարդատառեր:

Ձեռագիր մատյաններից տպագիր գրքին փոխանցված ավանդներով այս և հաջորդող հրատարակությունների բնագրային միավորները իրարից բաժանվում են ճակատազարդերով և վերջնազարդերով:

Սկսվող ստեղծագործություններին արտահայտչականություն են հաղորդում ուղղանկյունների մեջ տարբեր զարդերի զուգորդմամբ բերված սկզբնատողերը:

Գիրքը նաև ունի կանոնավոր շարվածք, թեև տողերը երբեմն ուղղագիծ չեն, և միջտողային հեռավորությունը մի շարք դեպքերում հավասարաչափ պահված չէ:

Այնուհետև իրար են հաջորդում ժամագրքային բնույթի մի քանի անհատական և հասարակաց, առավոտյան և երեկոյան ժամերին ասելու աղոթքներ:

---

124 Նույն տեղում, էջ 26:

125 Սաղմոս Դաւթի մարգարէի, որ եւ Սաղմոսարան յորջորջի, Ամստերդամ, 1661-62, էջ 733:

«Հրատարակ հոգեւորի» էջերից

Սիմեոն կաթողիկոսն աշխատել է «Աղօթագիրքը» առավելագույնս հարմարեցնել եկեղեցական ծիսակատարություններին՝ աղոթքներին հաղորդելով նաև տոնացուցային բնույթ, գրելով այնպիսի աղոթքներ, որոնք վերաբերում են եկեղեցական տարբեր տոների, ինչպես «Աղօթք առ ամենասուրբ Աստուածածինն Մարիամ» (էջ 105-113), «Աղօթք առ ամենայն սուրբսն Աստուծոյ» (էջ 129-134), Հրեշտակապետաց նվիրված՝ «Աղօթք առ երկնային Զինուորութիւնսն» (էջ 135-138), «Աղօթք առ Սուրբ Խաչն Փրկչական» (էջ 139-156):

Աղոթագրքի ազգային-եկեղեցական ուղղվածությունը խտացված է հետևյալ երեք աղոթքներում՝ «Աղօթք ողբերգականք վասն հասարակ ազգիս և եկեղեցեացս հայոց» (էջ 69-84), «Շնորհակալութիւնք առ Աստուած վասն յատուկ բարերարութեանցն, որք առ ազգս հայոց և խնդրուածք դարձեալ, զի և ևս ողորմեսցի, և բարերարեսցէ» (էջ 85-104), «Աղօթք և հառաչանք առ երջանիկ սուրբսն Աստուծոյ, և առ յատուկ լուսաւորիչսն և երախտաւորսն ազգիս հայոց» (էջ 114-128):

Թախանձագին գրում է «վասն ողորմելոյ և անտիրացելոյ ազգիս մերոյ»: Հոգևոր խորքով և հայրենասիրական ջերմ շնչով ասում է. «Բա՛ց Տէր զաչս Քո և տե՛ս զողորմելութիւն մեր, տե՛ս զփոքրիկ հօտըս Քո, թէ որպէս է ցրուեալ և տարագրեեցեալ ընդ ամենայն երկիր և մատնեալ ի ձեռս օտար տէրանց և թշնամեաց, զրկեալք ի սեպուհ բնակութեանց և ի հայրենեաց իւրեանց»[126]:

Հիսուսի «Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ» (Ղուկ. ԺԲ 32) խոսքերի ազգային վերիմաստավորմամբ՝ Նարեկացին տաղերից մեկում Հիսուսին հայցում է տեր կանգնել Իր փոքրիկ հոտին՝ հայ ժողովրդին.

Յիշեա՛, յիշեա՛, ը՛, մի՛ մոռանար,
Սէր խոստացար անսուտ բանիւ,
Ընդ մեզ լինել վաւուրս կենաց
Մինչ ի կատարած երկրի[127]:

Ազգային նույն վերիմաստավորմամբ է գրում նաև Սիմեոն կաթողիկոսը: Ժամանակի ընդհանուր վիճակն այսպես է ներկայացնում. «Հասարակ ժողովուրդք մեր գրաւեալք ի ներքոյ ծանր լծոյ և հարկի այլազգեաց»[128]:

Հաջորդ աղոթքում Աստծուց խնդրում է Իր խնամքի տակ պահել հայ ազգի մնացորդացին: Թվարկում է հայ ժողովրդի համար Աստծու կատարած առանձնակի բարերարությունները՝ խնդրելով չմոռանալ այդ ամենը և ապավեն լինել այն ժողովրդին, ում շնորհվեցին դրանք:

Առաջինը հիշում է Ս. էջմիածինը, որը որպես մի պայծառ արեգակ ծագեցրեց Արարատյան դաշտում[129]:

---

126 Զբօսարան հոգեւոր, էջ 70-71:

127 **Գրիգոր Նարեկացի**, Տաղեր և գանձեր, աշխտ. Ա. Քյոշկերյանի, Երևան, 1981, էջ 110:

128 Զբօսարան հոգեւոր, էջ 72:

129 Նույն տեղում, էջ 86:

Ասում է, որ թեև բոլոր ժողովուրդներն ունեն իրենց եկեղեցու հիմնադիրը, սակայն չկա որևէ մեկը, ով ունենա Գրիգոր Լուսավորչի նման այդքան փորձություններով անցած առաջնորդ։

Նաև ուրիշ ժողովուրդների անմիջաբար Աստծուց չեն տրվել գրերը։

Վերջում հայցում է, որ Հայոց աշխարհից վերանան բոլոր ցավերն ու հիվանդությունները։

Անհրաժեշտ է նշել, որ Աստծո՝ հայ ժողովրդին տրված առանձնաշնորհումների առաջին ամբողջական թվարկումը գտնում ենք Գրիգոր Տաթևացու «Գիրք Հարցմանց» գործում, որտեղ թվարկվում են նման տասը առանձնաշնորհումներ, որոնցից երկրորդը հիշվում է Լուսավորչի տեսիլով Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կառուցումը[130]։

Թվարկումների այս շարքը իր բարձրակետին էր հասնելու Ղազար Ա Ջահկեցու (կթդ. 1737-1751 թթ.) «Դրախտ ցանկալի» հանրագիտակ երկի «Յաղագս յատկութեան հայոց պարգևեալ յաստուածապետականէն ազգիս հայոց» բաժնում, որի սկզբում ասվում է. «Այսոքիկ են պարգևք բարիք և շնորհք երկնայինք, որ միայնում մեզ շնորհեցաւ և ոչ ամենայն ազգաց»[131]։

Ինչպես որ կաթոլիկ եկեղեցու քարոզչական նպատակով հայերեն տպագրված գրքերի վերջում դրվում էր կաթողիկե դավանության հանգանակը՝ կաթողիկե եկեղեցուն դարձողների համար, այնպես էլ այս գրքի վերջում Սիմեոն կաթողիկոսը նման մի հանգանակ է դնում Հայոց եկեղեցու հետևորդների համար, որն ասելով՝ նրանք հաստատվելու էին իրենց հավատքի և դավանանքի մեջ։ Այն ուներ հետևյալ խորագիրը՝ «Դաւանութիւն ճշմարիտ և Ուղղափառ հաւատոյ՝ Սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց և իմ Շարադրողիս իսկ»[132]։

Գրքի ազգային-հոգևոր բարձրակետը «Արի Աստուած հարցն մերոց» սկսվածքով նշանավոր ստեղծագործությունն է, որի համար բանաստեղծության խորագրի հրահանգում ասվում է, որ այն պետք է կատարել Ս. Պատարագի «Տէ՛ր, ողորմեա՛»-ից հետո[133]։

Հիշատակարանը սկսվում է կրկնակի փառաբանությամբ. նախ՝ որ հիմնվեց տպարանը, և երկրորդ՝ որ տպագրվեց այս Աղոթագիրքը։ Տպարանի հիմնադրմանը վերաբերող տողերը հիշեցնում են տպարանի կառուցման արձանագրությունը, ուր ասվում է, որ Ս. Գրիգորի անվան տպարանը կառուցեց Սիմեոն հայրապետը և տպագրեց այս գիրքը։

Ինչպես որ Սիմեոն կաթողիկոսը խոստացել էր հնդկահայ բարերարին, թե՛ այս և թե՛ հաջորդող բոլոր հրատարակությունների հիշատակարանների վերջում հիշում է Ջաքիկյանց գերդաստանին։

---

130 **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 555:

131 Գիրք Աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 670:

132 Ջբօսարան հոգեւոր, էջ 156:

133 Նույն տեղում, էջ 182:

Հիշատակարանի փառաբանական հատվածից հետո ներկայացնում է ժամանակի ծանր վիճակը՝ նկատի ունենալով վրաց Հերակլ երկրորդի՝ Երևանի խանից հարկապահանջությամբ քաղաքը պաշարելը, որից տուժում են Արարատյան դաշտի և շրջակայքի հայկական բնակավայրերը։

Գրում է, որ այս իրավիճակում հիշում է Հակոբոս առաքյալի խոսքերը, թե հավատով աղոթելը կփրկի աղոթքն ասողին (Հմմտ. Յակ. Ե 15)։ Ուստի տպագրում է հիշյալ Աղոթագիրքը։ Ներողություն է խնդրում տպագրական որակի համար, թե տպարանն իր սարքավորումներով նոր է, նաև տպարանում աշխատողները ծանոթ չեն տպագրական գործին։

Սիմէոն Երեւանցի, «Տաղարան», 1772 թ.

«Սաղմոսարանի» նման այս հրատարակությունից դարձյալ որևէ օրինակ չի պահպանվել։ Ենթադրվում է, որ տպաքանակը չի տարածվել տպագրական որակի պատճառով։ Զարպհանալյանը գրում է. «Կերևնայ թէ անարուեստ և անհարթ տպագրութեանն համար մասնաւոր դիտմամբ անհետ ըրած են»[134]։

Օրմանյանը ևս գրում է, որ ինչպես «Ջբօսարան հոգեւոր»-ի, այնպես այս մեկի տպաքանակը ևս վերացրել են[135]։

Սիմեոն կաթողիկոսը, «Տոնացույցում» գրելով «Սաղմոսարանի» և «Ջբոսարանի» մասին, որպես տպագրական առումով ավելի վատ հրատարակություններ, որևէ ձևով չի հիշում «Տոնացույցից» առաջ տպագրված «Տաղարանը»։ Վերջինս երկրորդ անգամ տպագրվել է 1777 թ., որի տիտղոսաթերթում ասվում է. «Այժմ ևս տպեցաւ կրկին՝ ի սպառիլ առաջնոյ տպեցելոյն»։ Այստեղ հստակորեն ասվում է, որ առաջին հրատարակության սպառվելուց հետո այժմ նորից է տպագրվում։ Դժվար է ասել՝ առաջին հրատարակությունն իսկապես սպառվե՞լ է, թե՞ չի տարածվել։ Ամեն դեպքում, պատահական չէ, որ հենց առաջին երեք հրատարակություններն են տպագրական առումով ոչ հաջող եղել, և նրանցից միայն «Ջբոսարանն» է, որ պահպանվել է մի քանի օրինակով։

Տպարանի 1771 թվականից գործելն են հաստատում Վարդեն Դը Վիրնեյի վերը հիշված նամակի այն տողերը, որոնցում ասվում է, թե Զաքիկյանցը իր միջոցներով էջմիածնում տպարան է հիմնել, որտեղից նա «արդէն առաջին անգամ տպագրուած երկու գիրք ընդունած է, զորս այնտեղ բնակող Ընդհանրական պատրիարքը ղրկած է իրեն»[136]։

Եթե նկատի ունենանք, որ նամակը գրվել է 1772 թ. հունվարի 15-ին, ապա նշանակում է, որ Վիրնեյը վստահաբար նկատի ունի Ս. Էջմիածնի

---

134 **Հ. Գ. Զարբհանալեան**, Պատմութիւն հայկական տպագրութեան, էջ 191:

135 **Մաղաքիա արքեպս. Օրմանյան**, Ազգապատում, հտ. Գ, §2124, Ս. Էջմիածին, 2001, էջ 3583:

136 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Ի, էջ 351:

առաջին երեք հրատարակություններից երկուսը՝ «Սաղմոսարանը» և 1772 թ. տպագրված «Ջբոսարան հոգևոր» և կամ «Տաղարան» գրքերից մեկը:

Գ. Գրիգորյանը գտնում է, որ էջմիածնի տպարանի գործունեության առաջին տարիներին «Տաղարանը» երկիցս է տպագրվել. «Ամենայն հավանականությամբ «Ջբոսարանի» տպագրությունից հետո՝ 1773 թ., Մայր Աթոռի տպարանում լույս է տեսել Տաղարանի երկրորդ՝ առավել հաջող հրատարակությունը»: Որպես ասվածի հաստատում նա վկայակոչում է Սիմեոն կաթողիկոսի՝ տպարանի բարերար Գրիգոր Միքայելյանին ուղղված նամակի հետևյալ տողը. «Իսկ յայսմ թուովն [1773 թ.՝ Գ. Գ.] նոյն Տաղարանն, զոր յառաջ տպեալ էաք, այժմ ևս վերստին տպել ետուք վասն բարւոք փորձառութեան գործարանին»[137]:

Սիմեոն կաթողիկոսը հնդկահայ բարերարին ոչ միայն հաղորդում է այս գրքի տպագրության մասին, այլև ուղարկում է երկու օրինակ. «Ահա երկու հատ ևս ի նմանէ եղաք ի մէջ թղթոյս և յղեցաք վասն սիրելւոյդ՝ առ ի տեսնել և ուրախանալ քեզ այդու ևս, զի ահա տիպն դորին փոքր ինչ լաւագոյն է, քան Աղօթից գրոյ տիպն, որ ահա այդպէս օր ըստ օրէ լաւապես հաստատի տպարանն և յաջողմամբ Աստուծոյ» կտպագրվի «Տոնացույցը»[138]:

«Աղոթագիրքը» կամ «Ջբոսարանը» տպագրվել է 1772 թ. և էջմիածնի տպարանից մեզ հասած առաջին տպագիր գիրքն է: Ըստ Սիմեոն կաթողիկոսի, Գրիգոր Միքայելյանին ուղղած նամակի՝ «Տաղարանի» երկրորդ հրատարակությունը, ի տարբերություն առաջինի, արդեն տպագրական բարվոք որակ է ունեցել, որից երկու օրինակ ուղարկել է հնդկահայ բարերարին: Կաթողիկոսը նրան նաև ծանուցում է, որ հաջորդը տպագրելու է «Տոնացույցը», որի հրատարակությունն իրականանում է 1774-75 թթ.: Բերված փաստերի համադրումից երևում է, որ «Տոնացույցի» 1774-75 թթ. տպագրությանը նախորդել են հետևյալ չորս հրատարակությունները.

1. «Սաղմոսարան» (կամ սաղմոսներ)

2. «Տաղարան»

3. «Ջբօսարան» (1772 թ.)

4. «Տաղարան» (1773 թ.)[139]:

Նաև կա մի անուղղակի փաստարկ, որով «Տաղարանի» առաջին հրատարակությունը կարող ենք իրականացված համարել անգամ 1769 թ.: Ս. էջմիածին եկած Մարկոս տպագրիչի մասին, որին արդեն հիշեցինք, Ա. Հարությունյանը բերում է «Կաթողիկոսական դիվանի» 1769 թ. մի վկայություն, որում ասվում է, թե նա վանքից ստացել է «Ա (5 զո[զուռուշ]) չուխայ, որ էր սրբազանինն, որ տաղարանն տպեաց փետրվարի 3-ին»[140]:

---

137 «Բանբեր Մատենադարանի», հմր. 22, էջ 503, տես նաև Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Գ, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, հրտ. Գիւտ քհն. Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ ՃԿԳ:

138 «Բանբեր Մատենադարանի», հմր. 22, էջ 503, տես նաև Դիւան, հտ. Գ, էջ ՃԿԳ:

139 «Բանբեր Մատենադարանի», հմր. 22, էջ 504:

140 **Հարությունյան Ա.,** Վաղարշապատ, վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 181:

«Տոնացոյց», հտ. 1-2, 1774-75 թթ. (564 էջ)

«Տոնացույցը» Հայոց եկեղեցու ծիսական ամենահին ժողովածուներից է, որը, համաձայն եկեղեցական ավանդության, կազմել և կանոնավորել է Սահակ Պարթև հայրապետը: «Տոնացույց» այնուհետև տարբեր նոր տոներ են ներմուծվել հաջորդող դարերի ընթացքում: Տոնացույցում ընդգրկված են մինչև 12-րդ դար հասնող իրադարձություններին և սրբերին նվիրված տոները: Բացառություն են կազմում Հովհան Որոտնեցուն, Գրիգոր Տաթևացուն և Մովսես Տաթևացուն նվիրված տոները:

Որպես եկեղեցական օրացույց, որով կատարվում են եկեղեցական ամենօրյա տոները՝ դարերի ընթացքում այն բազմաթիվ ընդօրինակություններ է ունեցել: Գրչագրային տարբերություններից և աղճատումներից բացի ամենատարբեր փոփոխություններ են կատարվել՝ պայմանավորված նոր տոների հավելմամբ, եկեղեցական կենտրոնների՝ տոների կատարման իրենց տեղային ավանդույթներով, տոմարական հաշվումների տարբերությամբ և, վերջապես, ամենակարևորը՝ շարժական տոների հաշվարկի հետ կապված բարդություններով: Անհրաժեշտ էր «Տոնացույցի» մի նոր կարգավորում կատարել և այն տարածել տպագիր օրինակներով, որպեսզի ձեռագրային տարաբնույթ ընդօրինակություններով վերստին շփոթ չստեղծվեր: «Տոնացույցի» նոր կարգավորումը կարևորվում էր հատկապես հետևյալ երկու պատճառներով:

Առաջին՝ նախորդ դարերի ընթացքում հայկական նոր գաղթավայրեր էին ձևավորվել, ինչպես նաև աշխուժացել էր նախորդների գործունեությունը: Միաժամանակ մեծ թիվ էին կազմում եվրոպական քաղաքներով երթևեկող հայ ուխտավորները, ճանապարհորդները և վաճառականները, որոնց անհրաժեշտ էր կարգավորյալ «Տոնացույց»՝ եկեղեցական տոները եվրոպական միջավայրում ճիշտ հաշվելու, հատկապես շարժական տոներն ամեն տարի ճիշտ որոշելու համար: Սա այնքան կարևոր հարց էր, որ մինչև Սիմեոն Ա Երևանցու կատարած կարգավորումը նախորդող շրջանի գործնական նպատակով տպագրված տարաբնույթ ժողովածուներում միշտ դրվում էին տոմարական հաշվումների հրահանգներ և աղյուսակներ, ինչպես նաև հայկական և հռոմեական տոմարների համաձայնեցման աղյուսակներ:

Երկրորդը ժամանակի եկեղեցադավանական պայքարն էր, որում որոշակի անհանդուրժող դիրք էր գրավել նաև Սիմեոն կաթողիկոսը՝ մտահոգված հայկական միջավայրում կաթոլիկության տարածման հետզհետե մեծ ծավալներ ընդունելով:

Մխիթարյանները սկսել էին հրատարակել տպագրական առումով բարձրորակ օրացույցներ, որոնք նաև հնարավորություն էին ընձեռում

ճիշտ հաշվել շարժական տոների օրերը: Մխիթարյանների այս հրատարակություններում, սակայն, տոների օրերը որոշվում էին ըստ կաթոլիկ եկեղեցու «Տոնացույցի», ինչպես նաև նշվում էին մի շարք տոներ, որոնք կատարում էր կաթոլիկ եկեղեցին, և դրանք չկային Հայոց եկեղեցու «Տոնացույցում»: Ահա այս պատճառով, ժամանակի անհանդուրժող ոգով, Սիմեոն կաթողիկոսը Մխիթարյանների հրատարակած Տոնացույցները այս հրատարակության առաջաբանում անվանում է «Թունացոյց»[141]:

Սիմեոն կաթողիկոսի կատարած կարգավորությունների և շարժական տոների մինչ այդ եղած ետևառաջության ստեղծած շփոթը ուղղելու և տոմարական հաստատուն վիճակի մեջ դնելու մասին Գյուտ քհն. Աղանյանցը գրում է. «Այս ամեն անյարմարութիւնները վերացնելու համար նախ և առաջ նա Տօնացոյցը երկու մասի բաժանեց, որոնցից երկրորդը 532 տարուայ շրջանով բաժանուած Հայոց 36 տառերի վերա (տարեգիրների վերայ), որպէս ղեկավար և ուղեցոյց առաջին հատորի: Այդ տառերից ամեն մէկը կառավարում է մի ամբողջ տարի: Երկրորդ հատորը մի համառօտ ցուցակ է, որ ցոյց է տալիս, թէ իւրաքանչիւր տարի տօները, միջոց ուտիքները, պահքերը և այլն, ինչ կարգով են միմեանց յաջորդում. իսկ առաջին հատորը երկրորդի բացատրութիւնն է: Նա պարունակում է բոլոր տօները իրանց երգեցմունքներով և բոլոր արարողութիւնների մանրամասնութիւններով: Այդ Տօնացույցով տօներն այնպէս են իւրաքանչիւր տարի միմեանց յաջորդում, որ մի որևէ տարի մի տօն միշտ միևնոյն օրը կը կատարուի ամենուրեք առանց վրիպելու»[142]:

Տիտղոսաթերթի սկզբում բերելով «Տոնացույցի» ձեռագրերից եկող կանոնական խորագիրը, որ այն սահմանել և կարգավորել է Սահակ Պարթևը, այնուհետև ասում է. «Արդէն վերստին նորոգմամբ ի յերկուս հատորս բաժանեցեալ»:

Գիրքը, սակայն, մեկ ընդհանուր տիտղոսաթերթ և մինչև ավարտը հասնող աճող էջակալություն ունի: Երկու հատորների բաժանումը ավելի շատ վերաբերում է գրքի կառուցվածքին: Առաջին հատորը կարգավորված և խմբագրված «Տոնացույցն» է, իսկ երկրորդ հատորը մի ուղեցույց է, որում նշված է, թե տոների օրերը ինչպես պետք է որոշել ըստ տարբեր տարիների: Այս պատճառով երկրորդ հատորի տիտղոսաթերթին գրված է. «Որ է քանօն և կառավարիչ առաջնոյ հատորին»:

Գրատպության, և հատկապես հայկական տպագրության պատմության, ինչպես նաև ձեռագիր բնագրի ու տպագիր օրինակի հարաբերակցության ուսումնասիրության առումով առանձնակի կարևորություն ունի գտնել այն ձեռագրերը, որոնցից իրականացվել են տպագիր հրատարակությունները:

---

141 Տօնացոյց, 1774-75, էջ 15:

142 Դիւան հայոց պատմութեան, հտ. Գ, էջ ՃԿԹ-ՃՀ:

Մեր որոնումների ընթացքում կարողացանք գտնել նման չորս հրատարակությունների՝ «Տոնացույցի» երկրորդ հատորի, «Տաղարանի» 1777 թ. հրատարակության, Սիմեոն կաթողիկոսի «Մաղթանք» (Գիրք Աղօթից) անվանվող գործի (Նոր Նախիջևան, 1794 թ.) և Հովսեպիոսի «Պատմութեան» համար օրինակ ծառայած ձեռագրերը։

«Տոնացույցի» երկրորդ հատորի կարծես պատճենը լինի Երևանի Մատենադարանի հմր. 2340 ձեռագիրը։ Այն բառացիորեն համընկնում է ոչ միայն բնագրային առումով, այլև տողերի բաժանման և շարադրանքի էջերում բաշխվածությամբ[143]։

Կարելի է կատարել նաև հակառակ ենթադրությունը, որ ձեռագիրն է նույնությամբ ընդօրինակված տպագրից, ինչպես որ հաճախ է հանդիպում հնատիպ գրքերի դեպքում։ Նման ենթադրությունը, սակայն, այնքան էլ հավանական չէ հետևյալ պատճառներով։ Նախ նման ընդօրինակությունները հաճախադեպ չեն 1770-ական թվականներից հետո, երբ տպագրվել էր «Տոնացույցը»։

Երկրորդ՝ այդպես վարվում էին ավելի հազվագյուտ գրքերի դեպքում, այնինչ Սիմեոն կաթողիկոսը ինքն էր տարածում «Տոնացույցի» օրինակները՝ պատվիրելով դրանցով առաջնորդվել եկեղեցական տոների կատարման ժամանակ։

Երրորդ՝ 1774-75 թթ. տպագրված գրքից ընդօրինակված ձեռագիրը հավանական չէ, որ ընդօրինակման տեղը և ժամանակը մատնանշող հիշատակարան չունենար։ «Տոնացույցի» երկրորդ հատորը էջ առ էջ ներկայացնող հմր. 2340 ձեռագիրը, որը ունի նաև տպագրի ողջ հիշատակարանը, կարող ենք ենթադրել, որ ձեռագրի ընդօրինակության հիշատակարան՝ տեղի և գրության ժամանակի մատնանշմամբ չունի այն պատճառով, որ ոչ թե ընդօրինակություն է տպագրից, այլ՝ հակառակը՝ Սիմեոն կաթողիկոսի «Տոնացույցի» երկրորդ հատորի այն մաքրագիր օրինակն է, որից իրականացվել է տպագրությունը։ Հակառակ դեպքում գրչի որևէ հիշատակարան կամ հիշատակագրություն կլիներ, թե տպագիր «Տոնացույցից» արտագրվեց այս ձեռագիրը։

Ամեն դեպքում ձեռագրի և տպագրի համեմատությունը՝ներառյալ երկուսի նույն հիշատակարանը, վկայում է, որ ձեռագիր օրինակը հատուկ գրվել է, որպեզի դրանից իրականացվի տպագրի հրատարակությունը։

«Տոնացույցի» երկրորդ հատորը, ի դեպ, առանձին հրատարակվել է նաև Ս. Պետերբուրգում 1786 թ.։ Այս հրատարակությունը ևս բնագրային առումով և գրքարվեստի տեսանկյունից դարձյալ նույնական է «Տոնացույցի» ձեռագրի երկրորդ հատորի՝ Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 2340 ձեռագրի հետ, բացառությամբ հիշատակարանի։

---

143 Տես Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Է, խմբ. **Գ. Տէր-Վարդանեանի**, Երևան, 2012, էջ 2017-2019:

Նման ընդհանրությունը այնքան էլ հավանական չէ, որ կարող է պայմանավորված լինի Պետերբուրգի հրատարակության հմր. 2340 ձեռագրից շարված լինելով: Առավել հավանական է, որ այն շարվել է էջմիածնի 1774-75 թթ. հրատարակության երկրորդ հատորից:

Առաջին հատորի տիտղոսաթերթը ոչ թե գրքի ընդհանուր տիտղոսաթերթի դարձերեսն է, այլ դրված է ծավալուն «Առաջաբանից» հետո՝ «Տոնացույցի» սկզբում, որով մեկ անգամ ևս ընդգծվում է, որ սա մեկ գիրք է՝ կազմված երկու մասից:

Առաջաբանում տարբեր սրբերի վերաբերող վկայակոչումներով Սիմեոն կաթողիկոսը ցույց է տալիս սրբերի բարեխոսության կարևորությունը և ըստ այդմ՝ նրանց տոները կատարելու անհրաժեշտությունը:

Վերջաբանում ևս արծարծվում են այս հարցերը: Դարձյալ կոչ է արվում չհետևել հայերեն տպագրված այլ Օրացույցների: Ընդ որում, Սիմեոն կաթողիկոսը նշում է, որ հակառակությունը ոչ թե քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ է, այլ Հայոց եկեղեցուց հեռացած հայերի: Ժամանակի բանակռիվներին բնորոշ ոճով նրանց համեմատում է այն ցեցերի հետ, ովքեր, սնվելով զգեստից, ծակում են այդ զգեստը, և կամ փայտից ելած փայտոջիլների հետ, որոնք փայտն են մաշում:

Դավանական նույն այս պայքարով էր պայմանավորված նաև Հովհաննես Որոտնեցուն, Գրիգոր Տաթևացուն և Մովսես Գ Տաթևացուն (կթղ. 1629-1632 թթ.) Հայոց եկեղեցու սրբերի շարքը դասելը, որը թեև առաջ բերեց Կ. Պոլսի հայ կաթոլիկների հակազդեցությունը, և 1786 թ. սեպտեմբերի 3-ից մի որոշ ժամանակ արգելվեց այս «Տոնացույցի» կիրառությունն այնտեղ[144], սակայն ժամանակի ընթացքում լարվածությունն անցավ, և «Տոնացույցի» նոր խմբագրությունը՝ որպես Սիմեոնյան «Տոնացոյց», ընդունվեց Հայոց եկեղեցում:

Անհրաժեշտ է նշել, որ Սիմեոնի «Տոնացույցի»՝ Կ. Պոլսում միառժամանակ արգելվելը միայն տեղի հայ կաթոլիկ համայնքի դժգոհությամբ չէր պայմանավորված, այլև Ղուկաս Ա Կարնեցու ընտրությունից հետո Կ. Պոլսի Հայոց պատրիարքության և Ս. էջմիածնի միջև առաջ եկած լարվածությամբ: Կ. Պոլսի պատրիարք Զաքարիան ևս հավակնություններ ուներ կաթողիկոս ընտրվելու: Նրան ասել էին, թե Սիմեոնի կողմնակիցներն էին նպաստել Ղուկասի կաթողիկոս դառնալուն: Կարնեցու՝ անմիջապես Սիմեոնի վախճանվելուց հետո ընտրվելը, առանց Կ. Պոլսի Հայոց պատրիարքության կարծիքը հարցնելու, Զաքարիան և իր համախոհները համարում են պատրիարքարանի իրավունքների անտեսում:

«Տոնացույցի» հանդեպ եղած ոչ միանշանակ վերաբերմունքի պատճառով՝ պատրիարքը վերջինիս կիրառությունը 1780-ական թվականների առաջին կեսին արգելում է Կ. Պոլսում: Ինչպես գրում է Մսեր Մսերյանցը.

144 Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, Մանր Մատենագիրք, ԺԵ-ԺԹ դդ., աշխտ. Գիւտ քհնյ. Աղանեանցի, Թիֆլիս, 1912, էջ 556-557:

«Զաքարիայ՝ չան եդ խափանել զգործածութիւն Սիմէօնեան Տոնացուցին՝ որ այն ինչ հրատարակեալն էր, և վերըստին զհին Տօնացոյցն ի տիպ տուեալ՝ տարածեաց ընդ ամենայն տեղիս»[145]*:*

Տեսնելով Հայոց եկեղեցուն սպառնացող երկպառակութեան վտանգը՝ Ղուկաս կաթողիկոսը Մայր Տաճարում կաթողիկոսական գահին չի նստում, եպիսկոպոս չի ձեռնադրում և չի կիրառում կաթողիկոսականի իշխանութեանը բնորոշ իրավասութիւնները՝ իրեն պահելով որպես կաթողիկոսական տեղապահ: Միաժամանակ Զաքարիա պատրիարքին գրում է, որ նա գա և կաթողիկոս դառնա: Տեսնելով կարնեցու հանդարտ և խոհեմ ընթացքը՝ հակառակորդները զինաթափվում են և ընդունում նրա կաթողիկոս ընտրվելը[146]*: Առաջ եկած համաձայնութիւնից հետո «Տոնացուցի» հետ կապված արգելքը ևս վերացվում է. «Զաքարիայ՝ զիջաւ ի կրիցն, և ի բաց եդեալ զառաջին զհակառակութիւնսն՝ ընկալաւ զկաթողիկոսութիւնն Ղուկասու՝ հրամայելով յիշատակել զանուն նորա յեկեղեցիս, և ետ հանել զհրովարտակ ի Դրանէ, և զՍիմէօնեան Տօնացոյցն ևս թոյլ ետ ի կիր արկանել»*[147]*:*

«Զբոսարանի» և «Տոնացուցի» հիշատակարանների համեմատութիւնից երևում է, որ վերջինիս հրատարակութեանը Սիմեոն կաթողիկոսը առանձնակի խնամքով է պատրաստվել, և սկսած տառատեսակներից ու շարվածքից մինչև գեղարվեստական ձևավորումը՝ այն էականորեն տարբերվում է Ս. էջմիածնի նախորդ երեք հրատարակութիւններից:

Խմբագրված «Տոնացուցը», կապվելով կաթողիկոսի անվան հետ, տպագրական առումով ևս պետք է բարձրացներ նրա հեղինակութիւնը և չէր կարող անշուք կամ անարվեստ մի հրատարակութիւն լինել:

Եփրեմ վարդապետի հիշատակարանում Սիմեոն կաթողիկոսի կազմած նոր «Տոնացուցի» մասին ասվում է. «Պարզաբանեաց եւ զհին տօմարն հայոց, եւ զնոր եւ անշարժ տօմար եւս արար հայոց»[148]*: Հատուկ ընդգծվում է, որ «Տոնացուցը» տպագրվել է բարձր որակով. «Եւ զերկուս հատորսն ի միասին յոյժ գեղեցկապէս տպել ետ եւ տարածել ընդ ամենայն ազգս մեր»*[149]*:*

«Տոնացուցի» առավել բարձրարվեստ ձևավորումը պայմանավորված էր նաև հայ ձեռագրային ավանդույթով: Միսական գրքերից յուրաքանչյուրը, այդ թվում և «Տոնացուցը», ուներ իր գրութեան ու ձևավորման

---

145 **Մսեր Մագիստրոս Մսերյանց,** Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, Մոսկվա, 1876, էջ 8:

146 Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, աշխտ. Գիւտ քհնյ. Աղանեանցի, Թիֆլիս, 1898, էջ ԼԸ:

147 **Մսեր Մագիստրոս Մսերյանց**, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, էջ 9:

148 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Թ, էջ 1142:

149 Նույն տեղում, էջ 1144:

կանոնացված սկզբունքները, ուր գեղարվեստական հարդարումը նաև իմաստատարբերակիչ դեր ուներ՝ պայմանավորված տվյալ ժողովածուի ընդհանուր կառուցվածքով և թեմատիկ բաժանմամբ։

Մաշտոցի անվան Մատենադարանի Տոնացույցների նկարագրությունների համար որպես հղվող ձեռագրեր են նշվում հմր. 435 ձեռագիրը, որը «Ատենի ժամագիրք» է՝ գրված 1686 թ. Նորագավիթում[150], և հմր. 2441 ձեռագիրը, որը «Տոնացույց» է՝ գրված 1678 թ. Տաթևում[151]։

Երկրորդ ձեռագրում Տիրամորը նվիրված տոները քանի որ ի մի են խմբավորված և բերված «Տոնացույցի» սկզբում, իսկ Սիմեոն կաթողիկոսի հրատարակած «Տոնացույցում» տոները բերված են ըստ տարեկան ընթացքի, ուստի 1774-75 թթ. հրատարակությունը կհամեմատենք հմր. 435 ձեռագրի հետ։

Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 435 ձեռագրի «Տոնացույցում» տարեկան տոնական ընթացքն ունի 16 մեծ բաժանումներ, որոնց ներքո գտնվող տոները իմաստային ընդհանրություն և տոնման ժամանակի մի-մի փոխկապակցված խմբեր են կազմում։ Նման կազմությունը գրքարվեստի տեսանկյունից ևս համապատասխան բաժանումներ է թելադրել ձեռագիր և տպագիր Տոնացույցներին։

Համեմատությունից առաջ նշենք, որ տոների տարեկան ընթացքը, ըստ էության, մի շրջան է, որտեղ յուրաքանչյուր կետ կարող է դիտվել թե՛ որպես վերջ և թե՛ որպես սկիզբ։ Հետևաբար, Ս. Ծննդյան կամ Աստվածահայտնության Ճրագալույցի գիշերը, որը հունվարի հինգի երեկոյան է կատարվում, միաժամանակ կարող է դիտվել թե՛ որպես տարվա սկիզբ, որն ազդարարում է հունվարի վեցի տարեկան տոների սկիզբը՝ Ս. Ծննդյամբ, և թե՛ որպես վերջ՝ որպես անցնող տոնական տարվա երեկո, որին հաջորդում է եկեղեցական տոնական տարվա տարեսկզբի հունվարի վեցը։ Հունվարի հինգի Ճրագալույցը կա՛մ տարվա սկիզբ, կա՛մ վերջ է ներկայացված տարբեր ձեռագիր և տպագիր Տոնացույցներում։

«Տոնացույցի»՝ Աբգար Դպիրի 1568 թ. Նոր Ջուղայի 1642 թ. հրատարակություններում և հմր. 435 ձեռագրում հունվարի հինգի Ճրագալույցը սկզբում է, իսկ Սիմեոն Երևանցու մոտ՝ եզրափակում է տարեկան տոների շարքը (էջ 315)։

Սուրբ Ծնունդը, ազդարարելով տոների տարեկան ընթացքի սկիզբը, ինչպես նաև պայմանավորված իր հոգևոր խորհրդով, առանձնակի շքեղ ձևավորում ունի։ Այս հրատարակության մեջ ևս տոնին նախորդում է Ս. Ծննդյան պատկերը, ապա կիսախորանի ներքո և առաջին տողի թռչնագիր ու զարդագիր և երկրորդ ու երրորդ տողերի երկաթագիր տառերով

150 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Բ, Երեւան, 2004, էջ 651-660:

151 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ը, Երեւան, 2013, էջ 111-116:

սկսվում է տոնի կանոնը: Ամբողջ էջի լուսանցքի երկայնքով տարածվում է մի գեղեցիկ լուսանցազարդ:

Տոնացուցային բաժանմամբ տոների երկրորդ մեծ խումբն սկսվում է Տյառնընդառաջով, որի սկզբում ևս առանձին պատկեր է և կից էջի ճակատազարդի ներքո բերվում է տոնի կանոնը՝ եկեղեցու մանրակերտի լուսանցային պատկերով:

Բուն Բարեկենդանով սկսվող երրորդ մեծ բաժանումը ներկայացված է ճակատազարդի ներքո, և կանոնի սկզբնատառը թռչնագիր է՝ կից լուսանցազարդով:

Տոնին վերաբերող նկար չկա, որովհետև Բարեկենդանը թեմատիկ առումով ուղիղ ձևով որևէ պատկերի հետ չի կապվում, այլ ազդարարում է Մեծ Պահքի սկսվելը, որը պսակվելու էր Ս. Հարության:

Ինչպես կտեսնենք, «Շարակնոցի» Ս. էջմիածնի 1789 թ. հրատարակության մեջ Բուն Բարեկենդանին կից դրված է Ադամին ու Եվային դրախտում պատկերող նկարը, քանի որ Բուն Բարեկենդանը խորհրդանշում է նախածնողների դրախտային երջանիկ կյանքը:

Շարժական տոմարը ձեռագրերում և տպագրերում տոմարական անշարժ դրության ներկայացնելիս միշտ բարդություններ են առաջանում իրենց կայուն օրն ունեցող տոների դեպքում, որոնցից առավել դժվարություն է ներկայացնում Տյառընդառաջի՝ փետրվարի 14-ին, և Ավետման՝ ապրիլի 7-ին շարժական տոների շարքում տեղադրման հարցը՝ կապված Զատկի շարժականության հետ: Զատիկը եթե շուտ է սկսվում, ապա Բուն Բարեկենդանը Տյառընդառաջից առաջ է կատարվում, իսկ եթե ուշ՝ հետո: Նույնը վերաբերում է Ավետման տոնին: Զատիկը եթե շուտ է լինում, ապա Ս. Հարության տոնը նախորդում է Ավետմանը, իսկ եթե ուշ, ապա հաջորդում է, ուստի միշտ խնդրահարույց է եղել նրա տեղադրման հարցը: Հաշվի առնելով, որ Մեծի Պահոց շրջանը տրտմալից շրջան է, հարմար է նկատվել այս տոները ձեռագիր և տպագիր Տոնացույցներում տոմարական անշարժ դրությամբ բերելիս Մեծ Պահքից դուրս դնել՝ Տյառնընդառաջը՝ Բարեկենդանից առաջ, իսկ Ավետումը՝ Զատկից հետո: Նույն ձևով է նաև «Տոնացույցի» Ս. էջմիածնի հրատարակության մեջ, ուր Տյառնընդառաջը նախորդում է Բուն Բարեկենդանին[152], ինչպես նաև հմր. 435 ձեռագրում[153]:

Սիմեոն կաթողիկոսի կարգավորած «Տոնացույցում», ասացինք, որ Տիրամորը նվիրված տոները ոչ թե խմբավորված են սկզբում, այլ բերված են ըստ տոնաշարում իրենց գրված տեղի: Ավետումը քանի որ հաստատուն տոն էր և նշվում էր ապրիլի 7-ին, ուստի տոմարական շարժական համակարգում այն բերվում էր Ս. Հարության տոնից հետո, որպեսզի ոչ

---

152 Տօնացոյց, 1774-75, էջ 45:

153 Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց, հտ. Բ, էջ 655:

թե պահքի, այլ Ս. Հարության ցնծության շրջանում ներկայացվի, թեև տարբեր տարիներին այն, ըստ շարժական տոմարի, կատարվում է Պահոց շրջանում։

Նախորդող դեպքերում տոների նկարները բերվում էին գրքի զույգ թվահամարներով էջերում, որպեսզի կից կենտ էջերից սկսվեր տվյալ տոնի բնագիրը։ Ավետման դեպքում այն կենտ էջում է (էջ 123), որով տոնը և տոնի կանոնի սկիզբը իրար կից էջերում չեն։

Դժվար է ասել, Սիմեոն կաթողիկոսը այսպես է վարվել, որովհետև նախորդ տոնաշարքի շարվածքը ավարտվել է 122 էջում, թե շարվածքն է հատուկ այդտեղ ավարտել, որպեսզի 124-125 էջերում, ինչպես մյուս մեծ տոնաշարային միավորների դեպքում, չլինի պատկերով և կից կանոնով Ավետման տոնը, որը նման համարժեքություն չուներ։

Միջնադարյան տոնացուցային բնույթի ժողովածուներում Բարեկենդանից մինչև Ս. Հարությունն ընկած շրջանի համար բերվում էին ևս երկու՝ Ղազարոսի Հարությունը և Մուտքը Երուսաղեմ՝ Ծաղկազարդը ներկայացնող պատկերները։

Բուն Բարեկենդանից հետո տոնացուցային հաջորդ՝ չորրորդ մեծ բաժանումը հմր. 435 ձեռագրում և 1774-75 թթ. Տոնացույցում վերաբերում է Երուսաղեմ մուտքին, իսկ Ղազարոսի Հարության տոնը բերված է Մեծ պահքի շաբաթների շարքում՝ նախորդելով Ծաղկազարդին, ուստի «Տոնացույցի» այս հրատարակությունում հաջորդ մեծ բաժանումը Ծաղկազարդի տոնն է այս թեմայի պատկերով, ապա ճակատազարդում, ուր ներկայացված է «Գառն պատարագեալ»՝ երկու կողմերում գտնվող հրեշտակներով, բերվում է տոնի կանոնը՝ կից լուսանցարզարդով։

Ս. Հարությունը ոչ միայն Տոնացույցի հինգերորդ մեծ բաժանումն է ներկայացնում, այլև տոների տարեկան ընթացքը բաժանում է երկու մեծ խմբի՝ Ս. Ծննդյան և Ս. Հարության։ Այս պատճառով նախ Ս. Հարության պատկերն է, ապա հաջորդող էջում գեղեցիկ կիսախորանի ներքո Ս. Ծննդյան տոնի կանոնի նման թռչնագիր և երկաթագիր տողերով սկսվում է տոնի կանոնը, իսկ լուսանցքում, ինչպես և Ս. Ծննդյան դեպքում, էջի ողջ երկայնքով բուսական գեղեցիկ զարդ է։

Ս. Հարությանը հաջորդող կիրակին անվանվում է Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ, որովհետև այդ օրն Ավետարանների Ս. Հարության տոնի նույն ընթերցվածներն են կատարվում։ Ավետման տոնը կարող էր ընկնել Նոր Կիրակիից առաջ կամ հետո, ուստի ձեռագիր և տպագիր Տոնացույցներում այս երկու տոները մեկը մյուսից առաջ կամ հետո էին դրվում։ Հմր. 435 ձեռագրում նախ Նոր Կիրակին է, ապա՝ Ավետումը, իսկ Սիմեոն կաթողիկոսի Տոնացույցում նախ Ավետումն է, ապա՝ Նոր Կիրակին։ Խաչատուր Կեսարացու Նոր Ջուղայի «Ատենի ժամագրքում» նախ Նոր Կիրակին է, հետո՝ Ավետումը։

Առանձին պատկերով է ներկայացվում նաև Համբարձման տոնը: Հաջորդ էջին ճակատազարդի ներքո թռչնագիր սկզբնատառով սկսվող կանոնն է բուսական լուսանցազարդի հետ միասին:

Նման կառուցվածքն ունի նաև իններորդ բաժանումը ներկայացնող Հոգեգալուստը:

Հոգեգալստից հետո հմր. 435 ձեռագրում՝ որպես հաջորդ մեծ բաժանում, նշված է Պայծառակերպությունը: Էջմիածնապաշտ Սիմեոն կաթողիկոսը մինչև Պայծառակերպությունը, սակայն, բաժանումների շարքում դնում է նախ Գրիգոր Լուսավորչի՝ Վիրապից ելնելու տոնը՝ առանձին փորագրանկարով, և հաջորդ օրը կատարվող Ս. Էջմիածնի տոնը, որը 1774 թ. Տոնացույցում ունի հետևյալ խորագիրը՝ «Երկրորդ կիրակէ զկնի Հոգւոյ Գալստեանն: Տօն է կաթուղիկէ եկեղեցւոյ Սրբոյն Էջմիածնի, զոր կարգեաց Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր, յելանելն ի վիրապէն» (էջ 185):

Գրիգոր Լուսավորչի կանոնին կից բերված է Տրդատի՝ ձեռամբ Ս. Գրիգորի մկրտության տեսարանը: Ազգային եկեղեցու պանծացման ձգտմամբ Սիմեոն կաթողիկոսը ճակատազարդի ներքո, դարձյալ թռչնագիր սկզբնատառով և կից լուսանցային բուսազարդով է ներկայացրել նաև Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտի տոնը (էջ 194):

Պայծառակերպությունը՝ որպես տաղավար տոն, ձևավորված է Ս. Ծննդյան և Ս. Հարության տոների նման՝ ճակատազարդի փոխարեն ունենալով կիսախորան, ինչպես նաև թռչնագիր և երկաթագիր սկզբնատողեր և էջի ողջ երկայնքով ձգվող լուսանցային բուսազարդ:

Էջմիածնապաշտ կաթողիկոսը Ս. Էջմիածնի հիմնարկման նկարով, ճակատազարդով, լուսանցազարդով և թռչնագիր սկզբնատառով ներկայացրել է Վերափոխման տոնին շաբաթ օրը նախորդող Ս. Էջմիածնի տոնը (էջ 225):

Վերափոխման տոնը, որը ամենատարածված և սիրելի տոներից է, երբ կատարվել է նաև խաղողի օրհնությունը՝ Խաղողօրհնեքը, որպես տաղավար տոն՝ ձևավորված է Ս. Ծննդյան, Ս. Հարության և Պայծառակերպության տոների նման:

Տիրամոր ծննդյան օրը շարժական տոն չէ և կատարվում է սեպտեմբերի 8-ին: Հմր. 435 ձեռագիրը և Սիմեոն կաթողիկոսի «Տոնացույցն» այն ներկայացնում են մեծ գլխաբաժանումների շարքում: 1642 թ. հրատարակությունում բաժանումը թեև թռչնազարդով չէ, սակայն, ընդգծված մեծ երկաթագրով է սկսվում:

Խաչվերացը ևս ներկայացվում է մյուս տաղավար տոների ձևավորմամբ: Տոնը, սակայն, բերված է ոչ թե կիսախորանի, այլ ճակատազարդի ներքո:

Խաչվերացի տոնը, նվիրված լինելով Խաչափայտի գերեդարձին, թեմատիկ համարժեք պատկեր չունի: Ձեռագրերում սովորաբար կա՛մ խաչ է պատկերվում և կա՛մ էլ Խաչելության ու Բարեխոսության տեսարանները:

«Տոնացույցի» այս հրատարակության մեջ խաչվերացի տոնին կից բերված է խաչելության բավականին հարուստ պատկերագրություն ունեցող նկար։

Ճակատազարդերով, թռչնագիր սկզբնատառերով և կից լուսանցազարդերով նկատելիորեն ընդգծված են Տիրամոր՝ երեք տարեկանում տաճարին ընծայման, Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների ու Տիրամոր հղացման տոները։

Տիրամոր Վերափոխումից հետո, որպես մեծ բաժանում, բերված են խաչի տոները, ընդ որում, իրար ժամանակային բավականին մոտ ընթացքով։

Հմր. 435 ձեռագիրը և Սիմեոն կաթողիկոսի «Տոնացույցը» Վարագա խաչը ևս դնում են մեծ բաժանումների շարքում, սակայն ավելի համեստ ճակատազարդով բաժանման ներքո։

Նոր Ջուղայի Տոնացույցում երկաթագրով բաժանմամբ որոշակիորեն ընդգծված է Հրեշտակապետաց տոնը։ Այն ընդգծված է նաև Սիմեոն կաթողիկոսի «Տոնացույցում», ուր լուսանցապատկերով ներկայացված է Միքայել հրեշտակապետը ձեռքի նիզակով վիշապին խոցելիս։

Տոնաշարը այս հրատարակության մեջ, ինչպես ասացինք, եզրափակվում է Ս. Ծննդյան ճրագալույցով, որը բերված է մեծ ճակատազարդի ներքո և ունի լուսանցային մեծ զարդանախշ։

Գրքարվեստը

Եկեղեցական տարեկան տոների կատարման կանոնները ներկայացնող «Տոնացույց», «Ճաշոց» և «Շարակնոց» ժողովածուների կառուցվածքը և ներքին բաժանումը պայմանավորված էր եկեղեցական տոների՝ մի շարք խմբերի բաժանված լինելով, ուր տվյալ խմբի առաջին կամ գլխավոր տոնին վերաբերող մասն սկսվում էր կից մանրանկարներով, իսկ բնագրի սկիզբը բերվում էր գեղեցիկ ձևավորված կիսախորանի կամ ճակատազարդի ներքո։

Ի տարբերություն նախորդող շրջանի տպագիր մյուս Տոնացույցների՝ Ս. էջմիածնի 1774 թ. հրատարակությունը ևս մի էական ընդհանրություն ունի ձեռագիր Տոնացույցների հետ։ «Տոնացույցը» և «Շարակնոցը» տպագրելիս այն տեղերում, ուր, ըստ այդ ժողովածուների ձևավորված կանոնի, տվյալ տոնի հետ կապված մանրանկար կար, հայ տպագրիչները նույն այդ թեմայով եվրոպական համապատասխան փորագրանկար էին դնում, քանի որ եվրոպացի փորագրանկարիչներին հայկական մանրանկարների պատկերները պատրաստել տալու պատվերները թե՛ շատ թանկ կլինեին և թե՛ այն երկար ժամանակ կպահանջեր։

էջմիածնի տպարանի յուրահատկությունը այն էր, որ փորագրանկարներն այստեղ Մայր Աթոռի միաբաններն էին պատրաստում, և ոչ թե վերցվում էին եվրոպացի վարպետների փորագրանկարների տպատախտակների կրկնօրինակները՝ դրանց վերատին փորմամբ։

Ս. Էջմիածնում կար հաջորդ կարևոր յուրահատկությունը։ Գաղթաշխարհի հայ տպագիչները երբեմն անգամ իրենց տպագրելիք երկի ձեռագրի հաջող ընդօրինակությամբ բնագիրը չունեին, ուր մնաց թե՝ համապատասխան մանրանկարը։ Այնինչ Ս. Էջմիածինը հայ ձեռագրային գլխավոր պահոցներից էր՝ իր հարուստ հավաքածուով։ Ս. Էջմիածնի միաբանները նաև առավել էին կապված հայ ձեռագրային ավանդներին, ուստի այստեղի հրատարակությունների պատկերներում առավել, քան հայկական տպագրության որևէ այլ կենտրոնում, փորագրանկարները մոտ են հայ միջնադարյան մանրանկարներին։

Փորագրանկարների և մանրանկարների միջև կարող էին լինել երեք տեսակի ընդհանրություններ.

առաջին՝ կոմպոզիցիոն-պատկերագրական,

երկրորդ՝ առաջինի հետ սերտորեն կապված խորհրդաբանական-սիմվոլիկ,

երրորդ՝ ոճային, երբ տպագիր պատկերների գծագրումը կհիշեցներ մանրանկարներին բնորոշ յուրահատկությունները։

Երեք այս հատկանիշներից Ս. Էջմիածնի փորագրանկարներում բոլորից քիչ է արտահայտված ոճական նմանությունը, որովհետև սկսած 16-17-րդ դարերից՝ հայկական սրբանկարչության և ժամանակի եվրոպական գեղարվեստական մտածողության ազդեցությամբ՝ հայկական մանրանկարչությունն ինքն է աստիճանաբար մոտենում դասական գեղանկարչությանը։ Ս. Էջմիածնի փորագրիչ վարպետները տարածվող գրատպության պայմաններում, բնականաբար, պետք է զարգացնեին այս միտումը և ոչ թե ընթանային ետադարձ ճանապարհով ու պատճեներին անցյալի մանրանկարչական ձևերը։

Չհետևելով արտաքին ընդօրինակմանը՝ նրանք, սակայն, հարազատ են մնացել միջնադարյան մանրանկարչության ընդունված պատկերագրությանը և խորհրդաբանությանը, որով հայ արվեստի դրոշմն են հաղորդում Ս. Էջմիածնում տպագրվող գրքերին, այնինչ եվրոպական կենտրոնների հայ տպագրիչները լավագույն դեպքում կարող էին ընտրել միայն թեմատիկ ընդհանրությամբ համապատասխան նկարներ՝ հայկական ոճավորումն ստեղծելով ձեռագրից արտանկարված զարդապատկերների և զարդագրերի փորագրմամբ։

Թեմատիկ-պատկերագրական առումով հայ մանրանկարչության ավանդների հետ անհամապատասխանությունն առավել նկատելի էր Ամստերդամի հայկական հրատարակություններում։ Քանի որ Հոլանդիան բողոքական երկիր էր, տեղի վարպետների՝ Հին և Նոր Կտակարանների թեմաներով պատկերներում բացակայում էր ավանդական եկեղեցիներում ընդունված պատկերագրությունը, որը հիմնված էր քրիստոնեական խորհրդաբանության և եկեղեցական սրբազան ավանդության վրա։ Ոսկան վարդապետ Երևանցու՝ Ամստերդամում տպագրած

Ս. ԾՆՈՒՆԴ

«Տնաացոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ.

գրքերում ուղղակիորեն պատկերված է Աստվածաշնչի այս կամ այն պատմության սյուժեն՝ առանց այդ դրվագը Հին և Նոր կտակարանների խորհրդաբանական զուգահեռի մեջ դիտարկելու, քանի որ այդ պատկերների հեղինակները հոլանդացի վարպետներ էին։

Այս բացը լրացվում էր Հռոմի և Վենետիկի հայկական հրատարակություններում, որովհետև Իտալիան դասական կաթոլիկության երկիր էր՝ իր առավել ցայտուն արտահայտված խորհրդաբանությամբ և վերջինիս վրա հիմնված պատկերագրությամբ։ Այստեղ էլ մի շարք դեպքերում ի հայտ էին գալիս պատկերագրական անհամապատասխանություններ, որոնք պայմանավորված էին կաթոլիկ եկեղեցու ծիսական ավանդույթով կամ դավանական տարբերություններով։

Էջմիածնի հրատարակությունների մի շարք փորագրանկարներ գեղարվեստական նոր ձևերի մեջ հարազատորեն վերարտադրում են միջնադարյան հայ մանրանկարչության պատկերագրական կառուցվածքի հիմնական գծերը։

«Տոնացույցի» 1774 թ. հրատարակությունն ունի 13 փորագրանկար՝ աստվածաշնչային և Ս. Էջմիածնի հետ կապված թեմաներով։

Այժմ «Տոնացույցի» Սիմեոն կաթողիկոսի հրատարակության մեջ տեղ գտած պատկերները համեմատենք նույն թեմաներով միջնադարյան մանրանկարների հետ։

Սիմեոն կաթողիկոսի հրատարակության պատկերների խորհրդաբանական սիմվոլիկ նշանակությունն առավել է ընդգծվում նրանց երկտող չափածո մակագրություններով, որոնք վեր են հանում տվյալ տոնի և աստվածաշնչային դրվագի հոգևոր խորհուրդը։

Սուրբ Ծնունդ

Եկեղեցական օրացույցով առաջինը Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնն է, ուստի առաջին փորագրանկարը վերաբերում է Ս. Ծննդյանը։ Այն հարազատորեն վերարտադրում է միջնադարյան կանոնիկ պատկերագրությունը։ Պատկերի վերին ձախ կողմում քարայրի վրա հանգչող աստղն է, որը խորհրդանշում է երկնքի և երկրի միախառնումը Քրիստոսի ծննդյամբ, և որ Հիսուս միաժամանակ և երկրի վրա է և երկնքում[154]։

Ընդունված կարգով՝ երեք մոգերից առաջինը սպիտակամորուս է, երկրորդը՝ սևամորուս, և երրորդը՝ անմորուս, ինչը խորհրդանշում է, թե մարդկության երեք տարիքները խոնարհվեցին նորածին Մանկան առջև։

Երեք մոգերի դիմագծերից երևում է, որ նրանք երեք տարբեր ժողովուրդների են պատկանում։ Անգամ թագերի ձևերն են տարբեր, որը խորհրդանշում է, թե Մանկան առջև խոնարհվեցին Նոյի երեք որդիներից

154 Տես **Մաթևոսյան Կ., Ավետիսյան Ա.**, Ավետարանական պատկերներ, Երևան, 1993, էջ 22:

սերված ժողովուրդները, որոնք ժամանակի ըմբռնմամբ ներկայացնում էին Աֆրիկան, Ասիան ու Եվրոպան[155]: Ավագ՝ սպիտակամորուս մոգը, ի նշան խոնարհության, գլխաբաց է՝ թագը գետնին դրած:

Երեք մոգերի թիկունքում, նկարի ետնախորքում, թույլ արտահայտված ուրվագծմամբ պատկերված է պատկերագրական առումով հազվադեպ հանդիպող չորրորդ մոգը: Այս մասին կգրենք «Ժամագրքի» Ս. Ծննդյան նկարին վերաբերող հատվածում:

Տիրամայրը նստած է գահը խորհրդանշող պատվանդանին և որոշակիորեն գեղչկական տարազավորմամբ է, որը բնորոշ է 18-րդ դարի հայ գեղանկարչությանը և սրբանկարչությանը: Պատկերի այս հատվածը կարելի է համարել Սուրենյանցի «Տիրամայրը Մանկան հետ» գործի նախօրինակներից մեկը:

Մոգերի երկրպագությանը կից պատկերված է հովիվների ընծայումը: Մոգերի երկրպագության հետևողությամբ՝ եկեղեցական ավանդությամբ ասվում է, որ հովիվները ևս բերեցին իրենց ընծաները նորածին Մանկանը, որի համար մանրանկարներում հանդիպում է ոչխարներ և գառներ գրկած հովիվների տարբերակը: Եփրեմ Ասորին գրում է, որ հովիվները «մատուցին զպատարագն իւրեանց՝ զգառն իբրև քահանայի, և զկաթն իբրև ստնդեցւոյ, և զփառսն իբրև Աստուծոյ»[156]:

Նույն ձևով այստեղ մոգերի կողքին պատկերված են գառները որպես ընծա բերած երկու հովիվները:

Մանրանկարների ստորին մասում՝ քարայրի հակառակ ձախ կողմում, պատկերվում է նստած Հովսեփը: Նրա մեկուսի վիճակով մանրանկարիչները շեշտում են, որ Հովսեփը չէ Հիսուսի հայրը[157]:

Կոմպոզիցիոն թեև մի փոքր այլ կառուցվածքով, սակայն այստեղ ևս որոշակիորեն արտահայտվել է Հովսեփի մեկուսի դիրքը:

Բեթղեհեմյան այրը «Տոնացույցի» պատկերում ներկայացված է որպես սենյակ, սակայն պահպանված է քարայրի վերին մասում հրեշտակային օրհներգությունը ներկայացնող դրվագը:

Յուրաքանչյուր պատկերի ներքո գտնվող մակագրությամբ տվյալ տոնի խորհրդին համահունչ մի խնդրանք է ուղղվում Փրկչին: «Տոնացույցը» քանի որ սկսվում է Ս. Ծննդյան տոնով, ուստի հայցվում է, որ Քրիստոս ողորմի Սուրբ Ծնունդը տոնողներին:

Որ ի Կուսէն այսօր ծընար Փրկիչ մարդկան,
Արդ ողորմեա մեզ տօնողացս Քոյ Սուրբ Ծննդեան[158]:

---

155 Այս մասին տես Թանգարան հայկական հին և նոր թարգմանութեան, Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, հտ. Բ, Վենետիկ, 1898, էջ 42-43: Տես նաև **Майкапар А.**, Новый Завет в искусстве, Москва, 1998, стр. 84-87.

156 Հմմտ. **Սրբոյն Եփրեմի** Մատենագրութիւնք, հտ. Դ, Վենետիկ, 1836, էջ 30:

157 Ս. Ծննդյան պատկերագրության մասին տես **A. Grabar**, Christian iconography, New Jersy, 1968, էջ 130:

158 Տօնացոյց, հտ. 1-2, էջ 24:

Տյառնընդառաջ

Տյառնընդառաջի պատկերը հարազատորեն է ներկայացնում և՛ ավետարանական պատմությունը, և՛ Սիմեոն ծերունու հոգեվիճակը: Սիմեոն ծերունուն Սուրբ Հոգուց հրահանգված էր այնքան ապրել, մինչև կտեսներ Տիրոջ Օծյալին: Մանուկ Հիսուսին ծնողները երբ տաճար են բերում, Սիմեոնը գրկում է Մանկանը, օրհնում Աստծուն և ասում. «Այժմ, ով Տեր, խաղաղությամբ արձակիր Քո ծառային ըստ Քո խոսքի, որովհետև աչքերս տեսան փրկությունը Քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս որ կլինի հայտնություն հեթանոսների համար և փառք Իսրայելի Քո ժողովրդի համար» (Ղուկ. Բ 29-32):

Փորագրանկարում աջ անկյունում Տիրամայրը և Հովսեփն են: Հոգնաբեկ Սիմեոն ծերունին, Մանկանը գրկած, ավետարանական տողերին համահունչ կեցվածք և դեմքի արտահայտություն ունի: Նկարի ներքո գրված է.

Ով լցուցիչ փափագանաց Սուրբ ծերունւոյն
Լից և փիղձս իմ վոր միշտ ունիմ Քո Սուրբ տեսոյն [159]:

Բանաստեղծական զուգահեռով այն միտքն է հայտնվում, որ Քրիստոս ինչպես Սիմեոն ծերունու իղձը կատարեց, և նա տեսավ Մանկանը, այնպես և Փրկչին տեսնելու մեր իղձը թող կատարի:

Նկարին կից հաջորդ էջում Տյառնընդառաջի եկեղեցական կանոնն է: Ի տարբերություն միջնադարյան մյուս հեղինակների, ովքեր հիշատակում են եկեղեցական տոների անվանումների ժողովրդական համարժեքները, ինչպես, օրինակ, «Տրնդես» կամ «Ծառզարդար»՝ Սիմեոն կաթողիկոսը միայն գրաբարյան եկեղեցական ձևերն է բերում, որը ևս բացատրվում է ժամանակի եկեղեցադավանական պայքարով: Առաջաբանում քննադատելով Մխիթարյանների հրատարակած «Տոնացույցը»՝ ասում է, որ Ս. Ծնունդը, Ս. Հարությունը, Ավետումը և մի շարք այլ տոներ «դնեն գլխագրով և իսկական անուամբ», երբ ըստ իրենց Տոնացույցով նշելու օրվա են բերում: Նույն այս տոները և մի շարք այլ տոներ, որոնք բնորոշ են Հայոց եկեղեցուն, երբ բերում են ըստ հայ եկեղեցական Օրացույցի, «դնեն աննշան, վայր ի վերոյ և փոքր գրով»: Երբեմն զանց են առնում և ընդհանրապես չեն նշանակում, իսկ եթե դնում են, ապա «ծաղրական անուամբ և կատակելով, որպէս զտէրընտասն, զարզարդարն [Ծաղկազարդ կամ Ծառզարդար] և զայլս այսպիսիս»[160]:

Ս. Ծնունդը և Ս. Հարությունը, ինչպես նաև նրանց հետ ժամանակային կապակցության մեջ գտնվող տոները տարբեր օրերի էին նշվում՝ ըստ հայկական և հռոմեական տոմարների:

---

159 Նույն տեղում, էջ 44:

160 Նույն տեղում, էջ 15:

Տյառնընդառաջ

«Տօնացոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ.

Ս. Ծնունդը ավանդական մյուս եկեղեցիները կատարում են դեկտեմբերի 25-ին: Ըստ այսմ և Քառասնօրյա Գալուստն՝ Տյառնընդառաջն են կատարում փետրվարի 2-ին, կամ Ավետումն ապրիլի 7-ի փոխարեն՝ մարտի 25-ին, որպեսզի այդքան օր շուտ լրանային Տիրամոր հղության օրերը:

Սիմեոն կաթողիկոսը քննադատում է Մխիթարյանների Օրացույցը, քանի որ այնտեղ նույն Տյառնընդառաջը ըստ Հռոմեական եկեղեցու տոնելու օրվա ներքո բերված էր մեծ տառերով, իսկ ըստ Հայոց եկեղեցու տոնելու օրվա՝ փետրվարի 14-ի ներքո՝ փոքր տառերով, և որպես տոնի անվանում գրված էր «Տէրընտասն»:

Ներսես Շնորհալին 12-րդ դարում, ի պատասխան բյուզանդական մեղադրանքների, ոչ թե ժխտում էր մի շարք տոների ժողովրդական արարողությունների և անվանումների առկայությունը, այլ ասում էր, որ դրանք ռամիկների կողմից են այդպես կատարվում և անվանվում[161]: Նույն ձևով և Սիմեոն կաթողիկոսն է գրում. «Զորս ի յոմանց պարզամիտ գեօղականաց մերոց առեալ ի հասարակ ազգըս մեր վերաբերեալ գրեն անամօթաբար»[162]: Նման մեկնաբանությամբ՝ որոշ պարզամիտ գյուղացիների արածը նրանք վերագրում են ողջ ժողովրդին:

Կաթողիկոսի այս բուռն հակազդեցությամբ է պայմանավորված տոների անվանումները մեծ և զարդագիր տառատեսակներով և առանց ժողովրդական անվանումների ներկայացնելը:

Այս պատճառով Տյառնընդառաջի տոնի անվանումը հետևյալ ձևով է բերում. «Կանօն Քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի տաճարն»: «Տեառնընդառաջ» բառը որպեսզի որևէ ձևով չկապվի Տրնդեզի հետ, կաթողիկոսն այն ներկայացնում է բառակազմորեն երեք մասի տրոհված՝ «Տն[Տեառն] ը[ընդ] առաջ»:

Տոնի կանոնի լուսանցքում պատկերված է եկեղեցու մանրակերտը՝ ներսի խորանով, որը խորհրդանշում է ընծայումը Աստծու Սեղանին:

*Տոնի ժողովրդական արարողության հետ կապված՝ նկատի ունենալով եկեղեցում վառվող կանթեղները, որպես հրահանգ ասվում է. «Եւ լուցեն զհուրն»: Այսինքն՝ կանթեղները ձեթ են լցնում և վառում: Անգամ վառված կանթեղներից լույսի ու կրակի՝ տուն տանելու մասին որևէ ակնարկ չկա: Ինչ վերաբերում է այդ օրը վառվող կրակի՝ ժողովրդական արարողություններին, ապա գրում է. «**Խոտելի է շրջիլն զհրովն**, որ ի տգիտաց է ներմուծեալ»[163]: Եկեղեցական այժմյան Օրացույցում թողնված է միայն ընդգծված մասը, որով պարզապես մերժելի է համարվում կրակի վրայով թռչելը՝ առանց որևէ բացասական բնորոշման:*

---

161 **Ներսես Շնորհալի,** Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխտ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 139-146:

162 Տօնացոյց, հտ. 1-2, էջ 15:

163 Նույն տեղում, էջ 46:

Մուտքն Երուսաղեմ

Ծաղկազարդի կանոնի կողքին «Մուտքն Երուսաղեմ» մանրանկարն է, ուր ևս ավետարանական պատմությունը ներկայացվում է քրիստոնեական խորհրդաբանության շրջանակում։

Քրիստոսի մուտքը Երուսաղեմ նկարագրում են բոլոր չորս ավետարանիչները։ Մատթեոսի ավետարանում ասվում է, որ երբ Հիսուս, ավանակին նստած, Երուսաղեմ էր մտնում, «...բազում ժողովուրդ իրենց զգեստները փռեցին ճանապարհի վրա, իսկ ուրիշները ծառերից ճյուղեր էին կտրում և փռում ճանապարհի վրա։ Առաջից և հետևից գնացող ժողովրդի բազմությունը աղաղակում էր ու ասում. «...Օրհնյալ է նա, որ գալիս է Տիրոջ անունով, Օրհնություն բարձունքներում» (Մատթ. ԻԱ 9)։

Հիսուսի առջև իրենց հանդերձները նետելու բացատրությունում ասվում է, թե այն խորհրդանշում է մեղքերի ծածկույթից մերկանալը և դրանք Տիրոջ ոտքերի առջև նետելը, որ տրորելով անցնի, այսինքն՝ ջնջի այդ մեղքերը։ Իսկ ինչ վերաբերում է Հիսուսի ոտքերի առջև ոստեր նետելուն, այն էլ մի առանձնահատուկ խորհուրդ ունի։ Հին աշխարհում դալար շիվերով տոնախմբություններ էին կատարում միայն ամենանշանակալից հանդեսների ժամանակ[164]։

Ջնայած Իրեն մատուցված ժողովրդական պատիվներին՝ Հիսուս Երուսաղեմ մտավ ավանակին նստած՝ որպես խոնարհության և համեստության նշան և այն պատճառով, որ կատարվեն Փրկչի գալստյան մասին Զաքարիա մարգարեի (Զաք. Թ 9) խոսքերը.

Կանչիր ցնծությամբ, դուստրդ Երուսաղեմի,
Ահա գալիս է քո թագավորը քեզ մոտ,
Քո արդար, փրկագործ ու խոնարհ թագավորը՝
Հեծած էշի, էշի քուռակի վրա...

«Տոնացույցի» 1774 թ. հրատարակության մեջ, նույն այս համաբանությամբ, պատկերված է ավանակին նստած և դեպ Երուսաղեմ ընթացող Քրիստոս։ Փրկչի ձախ կողմում ծերերն են, և աջում՝ պատանիները, ովքեր Տիրոջ ճանապարհին նետում են ոստեր և հանդերձներ։ Ընդունված պատկերագրությամբ՝ ավանակը պատկերվում է ոտքը ընդգծված ձևով կիսով չափ վեր բարձրացրած, որը շարժման զգացողությունն է հաղորդում նկարին։ Նաև ցույց է տալիս, որ ավանակն անցնում է՝ կոխկռտելով նետված հանդերձները, որով Քրիստոս Երուսաղեմի ճանապարհին ջնջում է մարդկային մեղքերի հնացյալ ձորձերը։

Հեռվում՝ ծառի վրա, երևում է կարճահասակ Զակքեոսը։

Նկարի մակագրությունում տոնի հոգևոր խորհուրդը մարդկային առաքինությունների հետ զուգահեռի մեջ է դիտվում.

---

164 Տես **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 490։

ՍՈՒՏՔԻ ԵՐՈՒՍԱՂԵՄ

«Տնաացոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ

Արդ որ նստար ի յաւանակ խոնարհութեամբ,
Նիստ հանապազ ի հոգիս մեր ողորմութեամբ[165]:

Սիմեոն կաթողիկոսը տոնը ներկայացնում է «Կանոն գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւանակաւ յԵրուսաղէմ» խորագրի ներքո, որից անմիջապես հետո բերված է ժողովրդական անվանման կանոնացված տարբերակը՝ «Ծաղկազարդ»՝ առանց ժողովրդական հայկական հավատալիքների վրա հիմնված բարբառային ձևերի, ինչպես մեր եկեղեցու հայրերն են ասում՝ առանց ծեքծեքումների:

Տոնի խորհրդին համահունչ՝ լուսանցքում պատկերված է ճյուղավորումներով և տերևներով զարդարված ծաղկած մի թուփ, որը հիշեցնում է այս տոնին հայկական եկեղեցիներ բերվող զարդարված ծառը:

Ս. Հարություն

Ս. Հարության նկարը կատարված է 17-18-րդ դարերում այս պատկերին բնորոշ ձևով, ուր լուսածիրում հարուցյալ Փրկիչն է, ներքևում՝ թափուր գերեզմանը՝ շրջված կափարիչով և քնած ու ապշության մեջ գտնվող պահապաններով: Նկարն ունի հետևյալ երկտողը.

Որ ինքնիշխան կամաւ մեռեալ, այսօր յարեար,
Յարո ի կեանս զորս արեամբ Քով իսկ ըստացար[166]:

Ընդգծվում է Քրիստոսի ինքնիշխան կամքով խաչափայտի վրա հոգին ավանդելը, որ դա տեղի չունեցավ մահվան և խաչ հանելու դատավճռի արդյունքում, այլ Քրիստոս մահը կրեց կամավորաբար՝ Իր արյամբ մեղքից գնելով մարդկային կյանքերը: Երկրորդ տողի մեջ ուստի ասվում է, որ Քո Հարությամբ հարություն տուր Քո արյամբ փրկագնվածներին:

Ավետումն

Ավետման տոնին վերաբերող նկարը ակնհայտորեն կատարված է ժամանակի արևմտաեվրոպական պատկերների հետևողությամբ:

Վերևում՝ աստվածային երկնքում, Հայր Աստված է՝ տիեզերքի իշխանության խորհրդանիշ գունդը ձեռքում: Սուրբ Հոգին աղավնակերպ իջնում է Մարիամի վրա: Ամենասրբուհի կույսը ոչ թե Երուսաղեմի տաճարի վարագույրը գործելու համար անհրաժեշտ թելն է մանում իլիկով[167], այլ ըստ եվրոպական ավանդույթի՝ գրական մոտ է: Համաձայն եկեղեցական ավանդության՝ Ս. Կույսը երբ ընթերցում էր Եսայու մարգարեության՝ կույսի հղանալու մասին տողերը (Եսայի, է 14) և զարմանում, թե ինչպես կարող է նման բան պատահել, այդ ժամանակ է, որ հայտնվում է Գաբրիել հրեշտակը և ավետում հղացման մասին[168]: Նկարի մակագրությունում ասվում է.

---

165 Տօնացոյց, 1774-1775,էջ 76:

166 Նույն տեղում, էջ 110:

167 Տես Майкапар А., Новый завет в искусстве, стр. 37.

168 Նույն տեղում, էջ 38:

ԱՎԵՏՈՒՄՆ
«Տնաացոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ

Խոստովանիմ ըզքեզ ըստոյգ Աստուածածին,
Զի ծնօղ եղեր հանուրց էից ըստեղծողին[169]:

Այն միտքն է ընդգծվում, որ Մարիամը՝ որպես Աստվածածին, եղավ մայրը բոլոր էակների Ստեղծողի:

Համբարձումն

Այս հրատարակության Համբարձման նկարը միջանկյալ տեղ է գրավում ավանդական և նոր շրջանի եվրոպական պատկերագրության միջև, թեև պահպանված են միջնադարյան խորհրդաբանական ըմբռնումները:

Նկարի վերին կենտրոնական մասում հարուցյալ Հիսուսն է լուսածիրի մեջ՝ շրջապատված աստվածային փառաբանությամբ համբառնացող Փրկչին երկինք ուղեկցող հրեշտակաց դասերով:

Նկարի ներքևի շրջանակի ողջ երկայնքով բուսականությունն է տարածվում, իսկ կենտրոնում մի թուփ է՝ երկու ծաղիկներով, ինչպես որ Ս. Հարության և Համբարձման միջնադարյան պատկերներում երկիրը ծաղկած և բուսաբեր է պատկերվում՝ խորհրդանշելով Քրիստոսի հարության կյանքի նորոգությունը երկրի վրա:

Կենտրոնում գտնվող հրեշտակների երկու կողմերում առաքյալների երկու դասերն են՝ Պետրոս և Պողոս առաքյալների գլխավորությամբ:

Նկարի մակագրությունում ասվում է.

Որ համբարձար փառօք առ Հայր, Յորմէ ելեր,
Համբարձ և զքոյսս յուխտեալ տեղիդ որպէս գրեցեր[170]:

Քրիստոսին ուղղված այս տողերում ասվում է, որ համբարձվեցիր Հոր մոտ, որտեղից ելեր էիր, համբարձիր և Քեզ մոտ՝ Քեզ ապավինողներին:

Համբարձման այս նկարը վերցված է «Սաղմոսարանի» (1660-61 թթ.) Ամստերդամի հրատարակությունից (էջ 386):

Համբարձման «Տոնացույցի» նկարում, սակայն, կա եկեղեցադավանական մի էական տարբերություն: Ոսկան վարդապետի հոլանդական վարպետներից վերցրած փորագրապատկերները կրում են բողոքականության շեշտված կնիքը, և թույլ է արտահայտված եկեղեցական ավանդույթը: Եկեղեցական սրբազան ավանդության վրա հիմնված միջնադարյան կանոնական պատկերագրությամբ Համբարձման տեսարանում ներկա է նաև Տիրամայրը: Գերակշռում է պատկերագրական այն ձևը, ուր կենտրոնում Տիրամայրն է, իսկ առաքյալների երկու խմբերը գլխավորում են Պետրոս և Պողոս առաքյալները:

Համբարձման՝ Ոսկանի օգտագործած պատկերներում կենտրոնում գտնվող Տիրամոր փոխարեն զույգ հրեշտակներ են: «Տոնացույցի» Ս. Էջմիածնի հրատարակության մեջ պատկերը մասամբ վերախմբագրվել է:

169 Տօնացոյց, 1774-75, էջ 123:

170 Նույն տեղում, էջ 155:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

«Շարակնոց» Ամստերդամ, 1664-65 թթ.

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

«Տնաացոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ.

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ
«Տօնացոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ.

Մասամբ, որովհետև Տիրամայրը ոչ թե կենտրոնում է, այլ առաքյալների աջ կողմում գտնվող խմբում։

Նկարի նման վերախմբագրումը ցույց է տալիս Սիմեոն կաթողիկոսի և Ս. Էջմիածնի վարպետների նախանձախնդրությունը եկեղեցական ավանդույթի և Տիրամոր հարգության հանդեպ։

Հոգեգալուստ

Հոգեգալստյան տոնին վերաբերող պատկերը լիովին նոր շրջանի եվրոպական ոճով է, առանց որևէ խորհրդաբանության։ Այն «Գործք Առաքելոցի» տողերի պատկերային համարժեքն է, ուր Վերնատունը ներկայացնող սրահում հավաքված են աշակերտները՝ Պողոս և Պետրոս առաքյալների գլխավորությամբ, իսկ կենտրոնում Տիրամայրն է։

Նկարի վերին կենտրոնական մասում աղավնակերպ Սուրբ Հոգին է թևածում և բոցեղեն լեզվակներով իջնում ներկաների վրա։

Մակագրությունում ասվում է.

Որ վառաքեալսըն գետօրէն ոռոգեցեր,
Հեղ և այսօր վշիթ մի շնորհացդ ի հոգիս մեր[171]։

Անհրաժեշտ է նշել, որ թե՛ «Տոնացույցի» և թե՛ հաջորդող ծիսական մյուս ժողովածուների մակագրություններում տվյալ տոնի խորհուրդը որպես շարունակական մի ընթացք է ներկայացվում, որը ամեն անգամ տարածվում է այդ տոնը տոնողների վրա։

Նույն ձևով այստեղ է ասվում, որ ինչպես Սուրբ Հոգու հրեղեն շիթով ոռոգեցիր՝ պատեցիր առաքյալներին, այնպես և Քո շնորհներից մի շիթ այսօր հեղիր մեզ վրա։

Ս. Գրիգոր Լուսավորչի՝ Վիրապից ելնելու տոնը

«Ելն ի վիրապէն» տոնի սկզբում դրված է Տրդատի մկրտության նկարը, քանի որ վիրապից ելնելուն հաջորդեց Հայոց դարձը։

Տրդատն, ընդունված պատկերագրությամբ, թագն ու գայիսոնը ի նշան խոնարհության գետնին դրած, խոնարհվել է Ս. Գրիգորի առջև։ Խոսրովիդուխտ արքայաքույրը որպես առաքինի կույս է պատկերված, իսկ Աշխեն թագուհին՝ կանացի գեղեցկությամբ։

Նկարում իրար միահյուսված են երկնային մկրտությունը՝ Սուրբ Հոգու շնորհաբաշխ զորությամբ և Լուսավորչի հեղած Սրբալույս Մյուռոնով։ Այն խորհրդաբանական ըմբռնումն է արտահայտվել, որ մկրտության ժամանակ Ս. Մյուռոնով դրոշմվողները նաև Սուրբ Հոգու շնորհն են ստանում։

Նկարի մակագրությունում ժամանակի դավանական վեճերին համահունչ՝ նկատի ունենալով օտար քարոզիչներին, ասվում է.

---

171 Նույն տեղում, էջ 166։

ՏՐԴԱՏԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ. «ՏՕՆԱՑՈՑՑԻ «ԵԼՆ Ի ՎԻՐԱՊԷՆ» ԿԱՆՈՆԻ ՍԿԻԶԲԸ
«Տօնացոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ.

Ով սուրբ Գրիգոր Լուսաւորիչ տանըս Հայոց,
Դու պահպանեա ըզիօտ քո ի պէսպէս գայլոց[172]:

Այս պատկերի մի տարբերակն է Սուչավայի Հայոց վանքում (Ռումինիա) դարձյալ 18-րդ դ. ստեղծված սրբանկարը, որը այժմ պահվում է Ս. Էջմիածնում: Երկու պատկերների ակնհայտ նմանությունը վկայում է ձևավորված ընդհանուր պատկերագրության մասին:

Պայծառակերպություն

Վարդավառի տոնը ներկայացվում է Պայծառակերպության փորագրանկարով, ուր ևս ավետարանական պատմությունը պատկերված է քրիստոնեական խորհրդաբանության շրջանակում:

Ավետարանում ասվում է, որ Հիսուս, Իր հետ վերցնելով Պետրոս, Հակոբոս և Հովհաննես առաքյալներին, նրանց հետ մի բարձր լեռ է ելնում և պայծառակերպվում աշակերտների առջև (Մատթ. ԺԷ 1-13, Մարկ. Թ 1-12, Ղուկ. Թ 28-36): Մարկոս ավետարանիչը գրում է, որ Հիսուսի դեմքը լուսավորվում է արեգակի նման, և Նրա հանդերձները սպիտակ են դառնում լույսի պես:

Այդ ժամանակ առաքյալներին երևում են Մովսեսն ու Եղիան, ովքեր խոսում էին Հիսուսի հետ: Լուսավոր մի ամպ գալիս և հովանի է լինում Հիսուսի, Եղիայի ու Մովսեսի վրա, և ամպից հնչող ձայնն ասում է. «Դա է Իմ սիրելի Որդին, որին հավանեցի: Դրան լսեցեք» (Մատթ. ԺԷ 6, Մարկ. Թ 9, Ղուկ. Թ 35):

Հնչած այս ձայնից աշակերտները խիստ վախենում են և գետնին ընկնում:

Այս փորագրանկարում ևս, վերին կենտրոնական մասում, որը խորհրդանշում է լեռան գագաթը, կանգնած է Քրիստոս՝ աջ ձեռքը պարզած օրհնության դիրքով: Փրկչի երկու կողմերում Մովսեսն ու Եղիան են: Մովսեսի ձեռքին Տասնաբանյայի տախտակն է[173]:

Ներքևում երեք առաքյալներն են: Տերունական թեմաներով մանրանկարներին բնորոշ խորհրդաբանությամբ՝ նրանք ներկայացնում են մարդու տարիքային երեք խմբերը՝ համապատասխան հուզականությամբ և բնավորության հատկանիշներով:

Անմորուս պատանի Հովհաննեսը հուզական արտահայտությամբ դեմքը շփոթահար շրջել է կատարված հրաշքից: Մյուս կողմում կիսով չափ խոնարհված և կիսաշփոթահար սևամորուս Հակոբոսն է, իսկ կենտրոնում առավել փորձառու, տարեց և սպիտակամորուս Պետրոսն է, ով փորձում է հասու լինել տեղի ունեցածի խորհրդին[174]:

---

172 Նույն տեղում, էջ 184:

173 Նույն տեղում, էջ 206:

174 Տես **Վ. Դևրիկյան,** Պայծառակերպությունը և Վարդավառի տոնը, Երևան, 2008, էջ 37-45 :

ՊԱՏՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Տնաացոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ.

Մանրանկարներում Քրիստոսից ճառագայթող լույսը ներկայացվում է ոսկեդեղինով: Փորագրանկարում գունապատկերը քանի որ պետք է արտահայտվեր սևի և սպիտակի հարաբերակցությամբ, ուստի նկարիչը գտել է համապատասխան լուծումներ: Քրիստոսից ճառագող լույսը ներկայացվում է Փրկչի շուրջը գծված սպիտակ ձվածիրով (մանդորլա), որի ներսում Քրիստոսի լուսապսակը կազմող ճառագայթներն են տարածվում:

Նկարի մակագրությունում ասվում է.

Որ ընտրելոդ այսօր ցուցեր ըզփառս Քո,
Ի հանդերձեալն և մեզ ցուցցես վերեսըս Քո[175]:

Քրիստոսի Տնօրինությունների, որպես գալիքում մեզ համար կատարվելիք իրադարձությունների ըմբռնմամբ, Փրկչին ուղղված տողերում ասվում է, որ ինչպես Քո ընտրյալներին՝ երեք առաքյալներին, ցույց տվեցիր Քո փառքը, այնպես և հանդերձյալ կյանքում այն մեզ ցույց տուր:

Կանոնի սկզբի «Վարդավառ» բառը բերված է զարդագիր շքեղ ձևավորմամբ: Թե՛ այս և թե՛ մյուս կանոնների առաջին էջերում տվյալ տոնի եկեղեցական և ժողովրդական կանոնացված անվանումներն են, սկսվածքը և հաջորդող շարադրանքը, որոնք բերված են մինչև հինգ տեսակի տառաձևերով, այդ թվում՝ զարդագիր ու գլխագիր:

«Կանոն Սրբոյ Շողակաթին՝ այսինքն Սրբոյ Էջմիածնի»

Ս. Էջմիածնի տոնը կատարվում է Տիրամոր Վերափոխմանը նախորդող շաբաթ օրը: Քանի որ այն ևս Տոնացույցի մեծ բաժանման մեջ չի մտնում, ուստի, ինչպես Ավետման դեպքում, նկար-կանոն հարաբերակցությամբ առանձին բացվածքով չի ներկայացվում: Դրված է կենտ էջում, որպեսզի կանոնի հետ մի ամբողջություն չկազմի, ինչպես որ ընդունված է մեծ բաժանումների դեպքում, այլ սկսվող կանոնը գնա էջի դարձերես:

Ս. Էջմիածնին նվիրված ստեղծագործությունների գրական պատկերներն իրենց համարժեք արտացոլումն են գտել Ս. Էջմիածինը ներկայացնող արվեստի գործերում, և հակառակը՝ Ս. Էջմիածինը պատկերող այդ գործերը գրական ներշնչանքի աղբյուր են դարձել տարբեր հեղինակների համար: Միջնադարագիտության մեջ այժմ ընդունված է այն մոտեցումը, որ գրականության և արվեստի պատմությունը պետք է դիտարկել մի ամբողջության մեջ՝ որպես տարբեր նշանների՝ թեմաների համաժամանակյա զարգացումը և արտահայտումը գեղարվեստական համարժեք արտահայտչամիջոցներով:

Գրիգոր Լուսավորչի չարչարանքները ներկայացնող պատկերների կենտրոնում եթե Տրդատի և արքայական ընտանիքի մկրտության տեսարանն է լինում, ապա Ս. Էջմիածնին նվիրված պատկերներում Մայր Տաճարն է, որի հիմնարկումը Միածնի էջքով Ս. Գրիգորին է ցույց տալիս հրեշտակը:

175 Տնաացոյց, 1774-1775, Ս. Էջմիածին, էջ 206:

Պայմանավորված պատկերային այս հորինվածքով՝ Ս. էջմիածնի հիմնարկումը ներկայացնող նկարները եռամաս կառուցվածք ունեն: Վերևում՝ կիսաշրջանի մեջ, Հայր Աստված է: Կիսաշրջանից սկսվում և Մայր Տաճարի գմբեթին հպվող ոսկե կռանի հարվածով վար է խոյանում, իջնում Աստծո Միածին Որդին՝ կիսաշրջանով ու տաճարով իրար կապելով երկինքն ու երկիրը: Նման մեկնաբանման համար, ըստ երևույթին, հիմք է ծառայել ազգային վերիմաստավորումը ընդհանուր քրիստոնեական այն ըմբռնման, թե Քրիստոսի՝ Բեթղեհեմի այրում ծնվելով՝ երկինքը երկիր իջավ, և երկիրը երկինք բարձրացավ: Ի դեպ, հիշենք, որ մեր գրականության մեջ Ս. էջմիածինը անվանվում է նաև Հայոց Բեթղեհեմ:

Ներքևում հրեշտակը Ս. Գրիգորին ցույց է տալիս տաճարի հիմնարկումը:

Ս. էջմիածնի՝ Միածնի էջքով և երկնային լույսի գծագրմամբ ձևավորվելու մասին դեռևս 7-րդ դարում Սահակ Գ Զորափորեցի շարականագիր հայրապետը (կթղ. 677-703 թթ.) գրում է.

Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ Նմա:

Շարականագիր մեր մյուս հայրապետը՝ Ներսես Դ Շնորհալին (կթղ.՝ 1166-1173 թթ.), կես հազարամյակ անց Վաղարշապատի կաթողիկեն վերստին անվանում է լույսի շողերով ձևավորված.

Հայաստանեայցդ եկեղեցի,
Յորում կաթեաց շողն երկնային[176]:

Լույսով ձևավորվելու և Քրիստոսի էջքի այս երկու ըմբռնումների միահյուսմամբ Աբրահամ Աստապատեցին ասում է.

Ցնծայ լուսով նկարեալ, նկարեալ,
Ի Քրիստոսէ հիմնարկեալ[177]:

Սուրբ էջմիածնի լուսանկար՝ երկնային լույսով նկարված լինելու ընդհանրացած այս ըմբռնումն էջմիածինը ներկայացնող պատկերներում, անկախ նրանից՝ դրանք կլինեն մանրանկարներ, կերպարվեստի գործեր թե անգամ մետաղյա դրվագազարդումներ և հյուսածո գործվածք ու հատկապես վարագույրներ, մեծ վարպետությամբ պատկերվել է հետևյալ ձևով: Երկնքի կիսաշրջանից, որը խորհրդանշում է լուսավորչի տեսիլքում երկնային հաստատության դռների բացվելը, աստվածության փառքի ճաճանչները վայր իջնելով հասնում և դիպչում են տաճարին՝ խորհրդանշելով, որ լույսի այդ շողերով է ձևավորվել Ս. էջմիածինը:

Մայր տաճարը հաճախ պատկերվում է լուսեղեն կամարի մեջ, որը վերևում պսակվում է խաչով: Այս պատկերի գրական սկզբնաղբյուրը Լուսավորչի տեսիլն է, ուր ներկայացվում է հրեղեն սյունը՝ ամպե խոյակով և լուսեղեն խաչով:

---

176 **Ներսես Շնորհալի**, Ողբ Եդեսիոյ, աշխտ. Մ. Մկրտչյանի, Երևան, 1973, էջ 31:

177 Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում, աշխտ. Հ. Քյոսեյանի և Վ. Դևրիկյանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 271:

Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ Լուսավորչի տեսիլի «Եւ մի ահաւոր տեսիլ մարդոյ բարձր և ահեղ ...և ի ձեռինն Իւրում ունն մի մեծ ոսկի..... և Ինքն սլացեալ խոյացեալ գայր՝ ըստ նմանութեան արագաթև արծուոյ»[178] խոսքերի հետևողությամբ՝ Միածնի էջքը պատկերվում է վար խոյանալիս և կիսաթեք դիրքով կռանով հարվածելիս: Այն պատկերող հեղինակները փորձում էին առավելագույնս արտահայտիչ ներկայացնել Միածնի ոչ թե պարզապես էջքը, այլ վար խոյանալը և ոսկե կռանով ուժգնապես հարվածելը: Նույն ձևով և միջնադարյան հեղինակներն են տարբեր արտահայտչամիջոցներով ներկայացնում էջքի և հարվածի այս ահավոր ահագնությունը: 14-րդ դարի հեղինակ Առաքել Սյունեցին գրում է.

Էհար ուժգին վերկիր սաստկագին
Ոսկի ուռամբն ի մէջ տաճարին[179]:

Բաղդասար Դպիրն էլ նկարագրությանը ներքին դինամիզմ է հաղորդում.

Ահեղ գոչմամբ ուռն ի ձեռին
Իջեալ Որդին Յօր Միածին,
Բախէր վերկիր հարմամբ ուժգին[180]:

Աբրահամ Աստապատեցին Իջման Սուրբ Սեղանը, ուր ոսկե մուրճով հարվածեց Միածինը, անվանում է տաճարի սիրտը.

Ի քեզ ունիս հրաշալի
Իջման տեղին Քրիստոսի[181]:

Արվեստի գրեթե բոլոր գործերում ուստի զանգակատան և տաճարի մուտքի բաց դռան միջից պատկերվում է Իջման Սեղանը՝ որպես մանրակերտ մի կաթողիկե՝ եկեղեցի՝ եկեղեցու մեջ:

Առանձնակի պատկերավորությամբ է ներկայացվում նաև հրեշտակի կողմից Լուսավորչին տեսիլի ցույց տալը: Հրեշտակը շփոթահար Լուսավորչի ուշադրությունը սևեռում է երկնային էջքի վրա՝ ուղղակիորեն խթելով Սուրբ Գրիգորի կողը: Այն իր համարժեք արտացոլումն է գտել միջնադարյան բանաստեղծությունում, և էջմիածնին նվիրված արվեստի գործերում հատուկ շեշտվում է այս պահը:

Առաքել Սյունեցին գրում է, որ Լուսավորիչը, իջնող Միածնին տեսնելով, ուշաթափ ընկնում է.

Այր լուսաւոր տեսիլն ահագին
Յանկարծակի վնա վարհուրեցին:
Եւ յահագին տեսլենէ նորին

---

178 **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, աշխտ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 414:

179 Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում, էջ 138:

180 Նույն տեղում, էջ 216:

181 Նույն տեղում, էջ 273:

Ուշաթափեալ անկաւ ի գետնին[182]:

Սիմեոն Ա Երևանցու հրատարակություններից «Տօնացոյց» (1774-75 թթ.), «Կարգ թաղման կարգաւորաց» (1777 թ.), «Պարտավճար» (1779 թ.) և «Շարակնոց» (1789 թ.) գրքերում տեղ գտած Ս. էջմիածնին նվիրված պատկերները լավագույն օրինակն են արվեստի և գրական ստեղծագործությունների միասնության ու միմյանց փոխլրացման՝ խորհրդանշելով էջմիածնականության՝ որպես հայ ժողովրդի ազգակենտրոնության և ազգահավաքման այն գաղափարը, որն իր բարձրակետին էր հասնելու հենց Սիմեոն կաթողիկոսի ազգային-եկեղեցական գործունեությունում և հոգևոր-գրական ստեղծագործություններում:

Այս պատկերներից Ս. էջմիածնի հիմնարկումը ներկայացնող նկարը երեք անգամ է փորագրվել՝ տարբեր չափերով, և գտնվում է «Տօնացոյց»-ում՝ 1774-75 թթ. (էջ 225), «Պարտավճարում»՝ 1779-1784 թթ. (էջ 170) և «Շարակնոցում»՝ 1789 թ. (էջ 525):

Փորագրանկարիչը, ցանկանալով կենտրոնում պատկերել Ս. էջմիածինը և միաժամանակ ներկայացնել էջմիածնի հիմնարկման տեսարանի բոլոր դրվագները, Մայր Տաճարն այնպես է գծագրել, որ այն զբաղեցնում է նկարի ուղիղ կեսը՝ աջ մասը, իսկ ձախ մասում՝ վերևում, Սուրբ Երրորդությունն է, ուր հրեշտակների բազմությամբ ուղեկցվող Միածնի էջքը մուրճի հարվածի ուղղությամբ հանգում է Մայր Տաճարի գմբեթին:

Հրեշտակների բազմությունը լուսե կամարով է պատում Սուրբ Երրորդությունը:

Ներքևում հրեշտակը Ս. Գրիգորին ցույց է տալիս Միածնի էջքով կերպավորված Ս. էջմիածինը: Հրեշտակի հայացքն ուղղված է Ս. Գրիգորին և պատկերում է նրան դիմելը և տեսիլը բացատրելը, իսկ ձեռքն ուղղված է դեպ Քրիստոս: Հրեշտակի այս կեցվածքն այնքան ընդհանրացած է, որ բոլոր պատկերներում, անկախ նրանից՝ դա ձեռագիր կլինի թե խորանի վարագույր, սրբանկար կամ մետաղյա առարկա, հրեշտակը պատկերվում է հայացքը հառած լուսավորչին, իսկ ձեռքը՝ Քրիստոսին ուղղած, որը խորհրդանշում է, թե Միածինն է երկնային ճարտարապետը Սուրբ էջմիածնի Մայր Տաճարի:

Պատկերագրական այս ձևն ունեցող նկարներում տաճարի մյուս կողմում ներկայացվում է արքայական ընտանիքը՝ Տրդատի գլխավորությամբ: Պայմանավորված այն հանգամանքով, որ նկարի մյուս կեսին Մայր Տաճարն է, ուստի Տրդատը և նրան հետևող հայոց ավագանին հրեշտակի ու Ս. Գրիգորի ոչ թե դիմացն են, այլ նրանցից ներքև:

Հայ պատմագրության ձևավորված ավանդույթով այստեղ ևս Աշխեն թագուհին պատկերված է թագուհու գեղեցկությամբ, իսկ խոսրովդուխտ արքայադուստրը որպես բարեպաշտ կույս՝ համեստ և խոնարհ դիմագծերով:

---

182 Նույն տեղում, էջ 136:

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒՄԸ
«Տնաացոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ.

ՏԻՐԱՄՈՐ ԹԱԳԱԴՐՈՒՄԸ
«Շարակնոց», Ամստերդամ, 1664-65 թթ.

Նկարի երկտող մակագրությունում, որի հեղինակը, ամենայն հավանականությամբ, Սիմեոն Երևանցին է, ասվում է.

Սա է յոր Էջ Միածինն Հօր լուսով փառաց
Եւ յօրինեաց հայոց յատուկ մայր պարծանաց[183]:

Հպարտությամբ շեշտվում է, որ Միածնի էջքով տաճարը հատուկ հիմնվեց որպես հայ ժողովրդի պարծանքի մայր՝ աղբյուր:

Այս նկարը Տրդատի մկրտության տեսարանի մի տարբերակն է, և Արածանիի փոխարեն Ս. Էջմիածինն է պատկերված. Շողակաթի տոնին կից եղող մանրանկարը հարազատորեն պետք է վերարտադրեր օրվա

183 Տնաացոյց, 1774-75 թթ., էջ 225:

տոնը: Մանրանկարում վարպետ մի զուգորդմամբ Արածանիի մկրտության տեսարանը ներկայացվել է Շողակաթի տեսիլի շրջանակում:

Ինչպես որ Վերափոխմանը նախորդող Ս. Էջմիածնի կամ Շողակաթի տոնին «Տոնացույցում» բերված է Ս. Աստվածածնին նվիրված Ս. Էջմիածնի Մայր Տաճարի նկարը, այնպես և «Շարակնոցի»՝ Ոսկան Վարդապետի հրատարակության Շողակաթի կանոնում բերված է Տիրամոր թագադրման նկարը, որը ուղղակիորեն կապվում է Վերափոխման տոնի հետ[184]:

Տիրամոր Վերափոխումը

Տիրամոր Վերափոխման նկարը թեև նոր շրջանի եվրոպական ոճավորմամբ է, սակայն լիովին խարսխված է միջնադարյան պատկերագրության վրա:

Կենտրոնում հանդարտ ննջող Տիրամայրն է, ում գլխավերևում Քրիստոս է, Ով Իր ձեռքերում ընդունում է Տիրամոր հոգին սպիտակ մանկան տեսքով: Ժողովրդական ըմբռնմամբ՝ մարդկային մեղքերն են, որ սևացնում և ծերացնում են մարդկային հոգին, որից իր ողջ կյանքում զերծ մնաց Տիրամայրը:

Ամենասրբուհի կույսի երկու կողմերում դարձյալ աշակերտների երկու դասերն են՝ բուրվառներով խնկարկող Պողոս և Պետրոս առաքյալների գլխավորությամբ:

Նկարի մակագրությունում ասվում է.

Որ բազմեցար արքայուհիդ ընդ արքայիդ,
Յիշեա և ըզմեզ ըզկատարողս Քոյ տօնիդ[185]:

Տիրամոր՝ որպես արքայուհու՝ Քրիստոս արքայի մոտ բազմելու մասին խոսելով՝ այդ տողերի հեղինակը նկատի ունի Տիրամոր քրիստոնեական եկեղեցու գլխավոր բարեխոսը լինելը, իսկ երկրորդ տնում ասվում է, որ Տիրամայրը իր բարեխոսությունը տարածի Վերափոխման տոնը կատարողների վրա:

Խաչելություն

Խաչվերացի տոնն անվանվում է «կանոն վերացման Սրբոյ խաչին»: Կից փորագրանկարում, սակայն, խաչի գերեդարձի փոխարեն պատկերված է Խաչելությունը, որին միահյուսված են Բարեխոսության և Մարիամյանք անվանվող պատկերների դրվագները՝ հայկական ու արևմտաեվրոպական ավանդույթների համադրմամբ: Հատկապես այստեղ է, որ արտահայտվել է փորագրիչի կամ նրա համար պատկերի կոմպոզիցիոն կառուցվածքը գծագրող հոգևորականի միջնադարյան խորհրդաբանության և պատկերագրության փայլուն իմացությունը:

---

184 Շարակնոց, Ամստերդամ, 1664-65, էջ 469:

185 Տօնացոյց, հտ. 1-2, էջ 228:

ՏԻՐԱՄՈՐ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ
«Տնաւացոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ.

Կենտրոնում խաչյալ Քրիստոսն է: Աջ և ձախ կողմերում՝ ավելի փոքր խաչերի վրա, երկու ավազակներն են[186]:

Խաչելության առավել տանջալից ձևը համարվում էր գամերով խաչելը, որի կողքին տարածված էր նաև խաչվողների ձեռքերը և ոտքերը խաչին պարանով կապելը: Ընդգծելու համար Քրիստոսի՝ հանուն մարդկության կրած չարչարանքները՝ խաչյալ Փրկչի կողքին մյուս երկու ավազակները պատկերվում են խաչափայտի վրա ոչ թե գամված, այլ պարանով կապված[187]:

Քանի որ փորագրանկարը հայ վարպետների կողմից է պատրաստված, ուստի ի տարբերություն Եվրոպայի հայկական տպագրություննեերի՝ Խաչելության փորագրանկարների՝ Քրիստոսի գլխավերևում ոչ թե լատիներեն, այլ հայերեն է գրված «ՅՆՒՀ», որը նշանակում է «Յիսուս Նազովրեցի թագաւոր հրէից» (Հովհ. ԺԹ 19), ինչպես որ պատվիրեց գրել Պիղատոսը խաչափայտի վրա:

Խաչի ներքևում գանգ և ոսկոր է պատկերված, քանի որ համաձայն եկեղեցական ավանդության՝ Ադամը թաղված էր Գողգոթայի բարձունքում, և Քրիստոս, խաչափայտը ելնելով, Իր փրկչարար արյամբ սրբեց նախահոր, որով և՝ մարդկության մեղքերը[188]:

Այստեղ պատկերված է նաև Տիրամոր բարեխոսությունը խաչյալ Որդուց մարդկության փրկության համար:

Հովհաննես ավետարանիչը գրում է. «Իսկ Հիսուսի խաչի մոտ կանգնած էին նրա մայրը և նրա մորաքույրը՝ Կղեոպասի կին Մարիամը և Մարիամ Մագդաղինացին» (Հովհ. ԺԹ 25): Այս խոսքերի հետևողությամբ՝ Խաչելության, ինչպես նաև Ս. Հարության պատկերներում Տիրամոր հետ պատկերվում են նաև մյուս երկու Մարիամները: Նրանք երեքով միասին հավաքաբար անվանվում են «Մարիամեանք»[189]:

Խաչափայտի ներքո պատկերված է Մարիամյանց ողբը: Քրիստոսի կողը նիզակով խոցող զինվորը, եվրոպական նկարչության ազդեցությամբ, ձիավոր է:

Փորագրանկարիչը, վարպետորեն օգտագործելով տպագրական հնարավորությունների շրջանակում սևի և սպիտակի համադրությունը, գիշերվա խավարն արտահայտել է սև ուրվագծերով, որոնց մեջ խաչափայտի վերին մասն առնված է սպիտակ գծագրման մեջ՝ որպես խաչից լույսի ճառագումը՝ խաչելության գիշերվա անհուն խավարի մեջ: Նույն ձևով ուրվագծվում են արևը և լուսինը, որոնք ունեն հետևյալ խորհրդաբանական նշանակությունը: Ըստ Ս. Ավգուստինոսի մեկնաբանության՝ լուսինը

---

186 Նույն տեղում, էջ 248:

187 Տես Майкапар А., Новый Завет в искусстве, Москва, 1998, стр. 254-255.

188 Նույն տեղում, стр. 256-258.

189 Նույն տեղում:

ԽԱՉԿԵՂԱՑՈՒ. Խաչկեղացի կանոնի սկիզբը
«Տնաւցոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ.

խորհրդանշում է Հին կտակարանը, իսկ արևը՝ Նոր կտակարանը: Ինչպես որ լուսինը իր լույսը ստանում է արեգակից, այնպես և Օրենքը (Հին Կտակարանը) ստուգաբանվում է Ավետարանով (Նոր Կտակարանով): Այն նաև խորհրդանշում է, որ խաչի վրա Քրիստոսի մահին հաղթելը ընդգրկեց ողջ տիեզերքը, և որ Քրիստոս է տիեզերքի ճշմարիտ իշխողը[190]:

Նկարի մակագրությունում ասվում է.

Որ պատուական արեամբըդ Քով զմեզ գընեցեր,
Արդ մի իսպառ ըզգինս արեանդ ի բաց մերժեցեր[191]:

Այն միտքն է ընդգծվում, որ Քրիստոս իր արյամբ փրկագնեց մարդկությանը, և որ մենք ևս արժանանանք փրկչական այդ արյանը:

Միջնադարյան նկարազարդ տոնացուցային ժողովածուներում ընդունված էր տոնի թեմայի պատկերն արտահայտել մանրանկարին կից սկսվող կանոնի վերևում գտնվող ճակատազարդի մեջ, ուստի Խաչվերացի կանոնի վերևում գտնվող ճակատազարդի մեջ պատկերված է Տիրամայրը՝ խաչափայտը ուսած՝ ուսին կրող Մանկան հետ:

Պատկերային նման ձևը գալիս է եկեղեցական այն ավանդությունից, համաձայն որի՝ նոր քայլել սկսող Հիսուսի ստվերը գետնին խաչ էր գծագրում, որին նայելով՝ Տիրամայրը լուռ արտասվում էր: Այստեղ ևս Տիրամայրը տխուր հայացքով նայում է Մանկանը[192]:

Նույն այս պատճառով «Շարակնոցի»՝ Ոսկան վարդապետի՝ Ամստերդամի 1664-65 թթ. հրատարակության մեջ Խաչվերացի կանոնի սկզբում պատկերված է Տիրամայրը Մանկան հետ: Մանուկ Հիսուսի ձեռքին Գողգոթայի խաչափայտն է Տիրամոր տխուր հայացքի ներքո: Նկարին կից մակագրության մեջ ընդգծվում է այն միտքը, որ Հիսուս մանկությունից խաչը ուսաբարձ կրեց որպես մեզ տրված հաղթության նշան.

Խաչ կենարարին յառաջ գուշակեալ,
և ի մանկութենէ վնոյն յուս բարձեալ,
մեզ հաւատացելոցս յաղթանակ տուեալ
և մարտկոց ընդդէմ թշնամեաց ցուցեալ[193]:

Լուսանցային մանրանկարներ են հիշեցնում մի շարք տոների լուսանցային փորագրապատկերները, ինչպես, օրինակ, Հրեշտակապետաց տոնի Միքայել հրեշտակապետի լուսանցանկարը՝ մեղքի և չարության խորհրդանիշ վիշապին խոցելիս[194]:

---

190 Նույն տեղում, стр. 261:
191 Տնաացոյց, 1774-1775, էջ 248:
192 Նույն տեղում, էջ 249:
193 Շարակնոց, Ամստերդամ, 1664-1665, էջ 487:
194 Նույն տեղում, էջ 284:



Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԿԱՆՈՆԻ ՍԿԻԶԲԸ
«Տօնացոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ.

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԿԱՆՈՆԸ
«Շարակնոց» Ամստերդամ, 1664-65 թթ.

Երկրորդ հատորում, ըստ հայ միջնադարյան տոմարական ավանդույթի, Հայոց Այբուբենի 36 տառերը ներկայացնող 36 կիսախորանների ներքո բացատրվում է, թե ըստ Տարեգրի ամեն տառի ինչպես տոնել շարժական տոները տարբեր տարիներին։

Սուրբ Էջմիածինը Արարատի և Արագածի հետ

Տոնացույցի, որպես երկու հատորները կապող օղակ, երկրորդ հատորի սկզբում դրված է Սուրբ Էջմիածինը Արարատի և Արագածի համապատկերում ներկայացնող մի նկար, որն, ինչպես ասացինք, մի տարբերակն է էջմիածնում պատրաստված թղթի ջրանիշի։

Այս փորագրանկարը պատրաստվել է 1772 թ., ինչպես որ արաբական թվանշաններով և հայկական տառերով նշված է նկարի ներքևի աջ և ձախ անկյուններում։

*Ինչպես ասացինք, երկու շրջանակների մեջ ընդգծված **ՍԿ**-ն նշանակում է Սիմեոն կաթողիկոս, իսկ **ԳՄ**-ն՝ Գրիգոր Միքայելյան, ով հնդկահայ մեծահարուստ Գրիգոր Ջաքիկյան-Միքայելյանն է, ում միջոցներով Սիմեոն հայրապետը կառուցեց Ս. էջմիածնի տպարանը և թղթի գործարանը։*

Տեսանք, որ նման նշումներ են ունեցել նաև Մայր Աթոռի թղթի գործարանում պատրաստված ջրանշանը կամ լուսադրոշմը, որը էջմիածնում պատրաստված թղթի թերթերից հարազատորեն վերարտադրել է Գյուտ ավագ քահանա Աղանյանցը։

*Քանի որ ջրանշանում զարդագիր փակագրով գրված է՝ **Սուրբ Էջմիածին**, կողքը՝ **Սիմեոն կաթողիկոս**, կենտրոնում՝ **թվին ՌՄԻԵ**։ Այն հայկական թվականության 1225 թվականն է, որին գումարելով 551՝ ստանում ենք փրկչական 1776 թվականը՝ թղթի պատրաստման տարին, իսկ ներքևի **ԳՄ**-ն նշանակում է Գրիգոր Միքայելյան։*

Այս լուսադրոշմը վերածվում է մի յուրօրինակ հիշատակարանի, ուր ասվում է, որ Սուրբ Էջմիածնում Սիմեոն կաթողիկոսի ջանքերով և Գրիգոր Միքայելյանի միջոցներով 1776 թվականին պատրաստվեց տպարանի համար նախատեսված թուղթը։

Նկարի շրջանակում հայկական տառանիշներով և արաբական թվահամարներով նշված է 1772 թ., որը ցույց է տալիս, որ նախ այս պատկերն է փորագրվել, ապա վերջինիցս արտածվել է ջրանշանի հիշատակարանաբնույթ մակագրությունը։

Ասացինք, որ էջմիածնի այս շրջանի հրատարակությունների փորագրանկարների մի զգալի մասի հեղինակը Հարություն սրկ. էջմիածնեցին է։

Ներկայացվող փորագրանկարում, որը գտնվում է «Տոնացույց» (էջ 328), «Կարգ թաղման կարգաւորաց» (էջ 2) և «Պարտավճար» (էջ 290) գրքերում, պատկերն ուղեկցվում է Սիմեոն կաթողիկոսի բանաստեղծության տողերով, որոնք թե՛ շրջանակում են պատկերը և թե՛ գտնվում են պատկերի ներսում, ուր թեմատիկ չորս դրվագներից յուրաքանչյուրին կից բերված է բանաստեղծական մեկ տուն։

Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ԱՐԱԳԱԾԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ
«Տնաացոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ.

«ՏՈՆԱՑՈՒՅՑԻ» ՏՈՆԵՐԻ, ԸՍՏ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՏԱՌԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

«Տօնացոյց», Ս. Էջմիածին, 1774-75 թթ.

Նկարի շրջանակի չորս կողմերում մեկական տողերով ներկայացվում է բանաստեղծության առաջին տունը.

Հռչակեալ դաշտ Արարատեան,
Հին և Նոր բարեաց գանձարան,
Տանըս Հայոց յատուկ նշան,
Ուրոյն և պարծանաց արձան:

Առաջին տողում ներբողվում է «հռչակեալ» դաշտն Արարատյան, երկրորդ տողում անվանելով այն «Հին և Նոր» բարյաց զույգ գանձարան՝ Սիմեոն կաթողիկոսը նկատի ունի Հին և Նոր Կտակարանները, որոնց պարգևած զույգ բարիքները՝ Նոյյան տապանը և Նոր Ուխտի եկեղեցին՝ ի դեմս Ս. Էջմիածնի, Արարատյան դաշտը՝ որպես մի գանձարան, կրում է իրենում: Երրորդ տողում ասվում է, որ այդ զույգ գանձերը տրվել են որպես Հայոց տան հանդեպ հատուկ սիրո նշան, որոնք վերջին տողում արդեն անվանվում են պարծանքի արձան:

Պատկերի վերին մասի ձախ անկյունում Արագած լեռն է՝ վրան անպարան կախված լուսավորչի կանթեղով, և այս դրվագի ներքո բերված են Սիմեոն կաթողիկոսի բանաստեղծության հաջորդ երկու տողերը.

Լեառն Արագած՝ տուն սրբութեանց,
Լուսաւորեալ լուսով անանց:

Այս ավանդության գրական առաջին սկզբնաղբյուրը 13-րդ դարի հեղինակ Վարդան Վարդապետի «Աշխարհացույցն» է: Ստորև կներկայացնենք վերջինիս՝ Ս. Գրիգորին ու լուսավորչի կանթեղին նվիրված հատվածը՝ մեր կողմից աշխարհաբար բառացի փոխադրությամբ. «Մեծասքանչ լեռն Արագած, որ ստորոտից մինչև լեռան կատարը օր ու կեսվա ճանապարհ է, և նրա գագաթը չորս մասի է բաժանվում՝ մեծամեծ լեռների և նրանց միջև հարթահատակ հովտաձև գոգ և լեռների չորս ծայրերը իրար հանդեպ խաչանման են: Ասում են, թե լեռներն այն օրհնված և օծված են տերունական նշանով, Սուրբ լուսավորչի շնորհաբաշխ աջով՝ ի փառս խաչյալ Քրիստոսի: Եվ հովտի մեջ գտնվում է քարածերպ մի այր: Այս այրում կառուցված է փոքր տաճար, խորան և կախված է կանթեղ՝ առանց պարանի և ջրի փոխարեն արտասուքով լցված և երկնային հրով վառված և մինչև այսօր անշիջանելի է և այսպես կմնա մինչև Քրիստոսի գալուստն ի Դատաստան, և այս կանթեղը բազում արժանավորներ տեսել են և տեսնում են այդ հրաշքը ի փառս Քրիստոսի»[195]:

Փորագրանկարն ասես հայելային արտացոլումը լինի Վարդան վարդապետի տողերի, ուր Արագածը գծագրված է եռամաս, իսկ չորրորդ մասը գտնվում է պատկերի թիկունքում և մտովի վերականգնվում է չորրորդ

195 Հմմտ. Աշխարհացոյց **Վարդանայ վարդապետի**, աշխատասիրութեամբ Հ. Պէրպէրեանի, Փարիզ, 1960, էջ 26:

գագաթը: Նրա լեռնային գծագրման վերին մասում հստակորեն պատկերված է հարթահատակ հովտաձև գոգը, իսկ վերևում էլ անպարան կախված է լուսավորչի կանթեղը՝ երկնքի ու Արագածի միջև: Այս պատկերը հիշեցնում է նաև Թումանյանի նշանավոր տողերը.

Կախ է ընկած առանց պարան
Արագածի կատարին,
Ու սեղանից հսկայական
Լույս է տալիս աշխարհին:

Նկարում Արագածի կողքին Արարատն է՝ Նոյյան տապանով, և բերված են բանաստեղծության հաջորդ երկու տողերը.

Այս է Մասիս մեծ լեռն այն,
Առ որ հանգեաւ Նոյեան տապան:

Այստեղ, փաստորեն, պատկերված է միայն Մեծ Մասիսը, որի վրա դադար առավ Նոյյան տապանը: Փորագրանկարը թեև ստեղծվել է Հայաստանում՝ Ս. Էջմիածնում՝ հենց Արարատի դիմաց, սակայն միջնադարից եկող խորհրդաբանական մի ըմբռնմամբ և վերջինիս վրա հիմնված պատկերագրությամբ, ինչպես եվրոպական արվեստում, այնպես էլ այստեղ, Մասիսի իրական գծագրման փոխարեն այն կոնաձև է ներկայացված, որը ևս վկայում է միջնադարյան պատկերագրության վրա գրական-այլաբանական ըմբռնումների և ավանդությունների ունեցած մեծ ազդեցության մասին:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Ս. Էջմիածնից Արարատը որոշակիորեն կոնաձև է երևացել ճանապարհորդներին: Ազգությամբ գերմանացի, ռուս դիվանագետ Ֆրեյգանը, 1812 թ. Թավրիզ գնալիս ճանապարհին լինելով Ս. Էջմիածնում, գրում է. «Վանքի տեսարանը գեղեցիկ է ամեն կողմից, բայց ավելի ուշագրավ է Արարատի կողմը, ուր լերան կոնաձև երկու կատարներն են երևում, որոնք տարբեր բարձրություն ունեն»[196]:

Փորագրանկարի գծերի շարժման ուղղությամբ արտահայտվել են նաև Արագածի և Արարատի հետ կապված հետևյալ ըմբռնումները: Արագածը համարվում է հազար ակն՝ հազար աղբյուր ունեցող, և ըստ այդմ՝ Արագածը գծագրող գծերը ներքև են իջնում, որը խորհրդանշում է աղբյուրների վար հոսելը: Ջրի պարգևած կենդանությունն ու բուսաբերությունն են ներկայացնում Արագածի ստորոտին պատկերված բույսերն ու ծաղիկները:

Արարատի գծերի շարժման ընթացքը, սակայն, արդեն վեր է ուղղված, ինչպես որ Արարատն է ներկայացվում վեր խոյացող քարեղեն մի զանգված, որի վրա հանգավ Նոյյան տապանը:

Փորագրանկարի կենտրոնում Ս. Էջմիածինն է, որը գծագրվում է հրեշտակների դասով շրջապատված Միածնի էջքով և ոսկի մուրճի հարվածով:

196 **Հովհ. Հակոբյան**, Ուղեգրություններ, հտ. Զ, էջ 404:

Միածնի էջքի սլացքը ներկայացված է գծերի շարժմամբ, որոնք Միածնի երկու կողմերից գալիս և հանգչում են Մայր Տաճարի գմբեթի խաչին:

Ներքևում՝ տաճարի մոտ, հրեշտակը Ս. Գրիգորին ներկայացնում է այս հրաշալի տեսիլի մեկնությունը՝ բացատրությունը:

Միածնի էջքը ներկայացնող երկու գծաշերտերին զուգահեռ բերված են բանաստեղծության հաջորդ երկու տողերը.

Աստ էջ փառօք Յօր Միածինն
Յատկապէս յայց հայոց ազգին:

Երկրորդ տողով այն միտքն է ընդգծվում, որ Միածինն Իր էջքով առանձնակի, հատուկ կերպով իջավ Հայոց ազգի համար:

Եվ վերջապես, բանաստեղծության ողջ իմաստը խտացված է էջմիածի Մայր Տաճարի ներքո առանձին մի շրջանակի մեջ առնված հետևյալ տողերում.

Այս է կերտեալն ի Միածնէն
Երկրորդ տապանն լուսեղէն:

Վերջին տողով պարզ է դառնում և առաջին տան «Հին և Նոր բարեաց գանձարան» տողը, որը նշանակում է՝ Արարատի գագաթին է գտնվում Հին Ուխտի Նոյյան տապանը, իսկ Արարատյան դաշտում՝ Նոր Ուխտի եկեղեցին:

Բանաստեղծական այս տողը խարսխված է Հին և Նոր Կտակարանների խորհրդանշական այն զուգահեռի վրա, որով Հին Ուխտի Նոյյան տապանը, ուր մարդկությունը փրկվեց ջրհեղեղից, Նոր Ուխտում դարձավ եկեղեցին, որտեղ մարդկությունը փրկվում է մեղքերի ջրհեղեղից:

Ս. էջմիածինը քանի որ գտնվում է տապանակիր Արարատի դիմաց, ուստի հայ մատենագրությունում այն միտքն է շեշտվում, որ Արարատին իջած Նոյյան տապանը Արարատյան դաշտում դարձավ Ս. էջմիածնի Մայր Տաճարը՝ որպես փրկության տապանը հայ ժողովրդի:

«Պարտավճարում» փորագրանկարից դուրս բանաստեղծությունը ունի ևս մեկ տուն, ուր ասվում է.

Տաճար լուսակերտ, յարկ ապաւինի,
Յատկագոյն պարծանք Արամեան ազգի:
Ժողովեա՛ առ քեզ վմանկունս քո,
Որք ի քէն մեկնեալ կան այժմ արտաքոյ[197]:

Որպես բանաստեղծական ամփոփում, մեկ անգամ ևս ընդգծվում է, որ Ս. էջմիածինն է Արամյան ազգի՝ հայ ժողովրդի պարծանքը, որի շուրջը պետք է ժողովվեն նրանից հեռացած իր զավակները:

Այս փորագրանկարը տեղ է գտել նաև «Կարգ թաղման կարգաւորաց» (1777 թ.), «Պարտավճար» (1779-1783 թթ.) գրքերում:

197 **Սիմեոն Ա Երևանցի,** Պարտավճար, էջ 291:

Սիմեոն կաթողիկոսի փորագրանկար բանաստեղծությունը, որ էջմիածնաշունչ հայրապետի զգացումներով չէր պայմանավորված միայն, այլև ներկայացնում էր հայության ընդհանրացած ըմբռնումների գրական-պատկերային արտահայտությունը, երևում է այդ փորագրանկարի առավել ընդգրկուն մի տարբերակը ներկայացնող և Ս. էջմիածնի ձեռագրատանը պահվող գունավոր նկարից (1836 թ.)։

Փորագրանկարի գունավոր հիշյալ տարբերակը ունի նույն պատկերագրական կառուցվածքը, որի պատկերային դրվագների դիմաց բերված են Սիմեոն կաթողիկոսի բանաստեղծության համապատասխան տները։ Պատկերի կենտրոնում Ս. էջմիածինն է, որի ներքո գրված են Սիմեոն կաթողիկոսի՝ «Այս է կերտեալն ի Միածնէն երկրորդ տապան լուսեղէն» խոսքերը։

Վերևում Սուրբ Երրորդությունն է։

Միածնի էջքը, սակայն, ներկայացված է ոչ թե վար սլանալով, մուրճով գմբեթին հարվածելով, այլ վեր բարձրացրած մուրճից Սուրբ Երրորդությունը խորհրդանշող եռաշիթ հրեղեն ճառագայթների իջնելով և տաճարի սալահատակը անցնելով՝ ներքևում գտնվող մեհյանը ավերելով։ Վերջինս ներկայացված է անտիկ ոճավորմամբ՝ այուների բեկորներով և աստվածուհու փշրված արձանի գլխով, որոնք ավերակների է վերածել ոսկե մուրճից մինչև այստեղ հասնող եռաշիթ ճառագայթը։

Սիմեոնյան Տոնացույցի կանոնականացումը

Սիմեոն Ա. Երևանցին «Տոնացույցի» առաջաբանում և վերջաբանում կաթողիկոսական հեղինակությամբ պատվիրում է, որ այդուհետև եկեղեցական տոները կատարեն ըստ այս «Տոնացույցի»։ Նրա խոսքերը եկեղեցական-կանոնական հրահանգ են հիշեցնում։ Ջբավարարվելով այդ պատվերով՝ նա Մայր Աթոռի նվիրակների և առաջնորդների միջոցով «Տոնացույցն» անվճար ուղարկում է եկեղեցական տարբեր թեմեր՝ կից առանձին կոնդակներ գրելով այդ թեմերի եկեղեցիների առաջնորդների և հոգևորականների համար։

Կաթողիկոսը, թերևս, կարող էր մեկ կոնդակ տպագրել, սակայն փոխարենը դիմել է տարբեր տեղեր ձեռագիր կոնդակներ ուղարկելու աշխատատար ու ծախսատար եղանակին հավանաբար այն պատճառով, որ հոգևոր ազդեցությունն ավելի մեծ լինի։ Նաև տպարանում հնարավոր կլիներ տպագրել միայն ընդհանուր կոնդակ՝ ուղղված բոլոր եկեղեցիներին ու հոգևորականներին, այնինչ այս դեպքում խոսքը մասնավորեցվում և ավելի ազդու էր դառնում։

Կաթողիկոսական դիվանում բազմաթիվ վկայություններ կան «Տոնացույցը» կից կոնդակներով թեմերը և տարբեր եկեղեցիների, անգամ տարբեր անհատներին ուղարկելու մասին։

Աստրախանի նվիրակ և առաջնորդ Հովսեփ վարդապետ Արղությանին

1775 թ. նոր տպագրված «Տոնացույցի» 12 օրինակ է ուղարկում, որպեսզի Ռուսահայոց թեմի եկեղեցիներին մեկական օրինակ տա և «զՏօնացուցի կոնդակն յեկեղեցիսն ընթերցեալ, ծանուցմամբ պատուիրեսցէ ամենեցուն, զի այսուհետև զնոր Տօնացոյցն ի գործ ածիցեն»[198]: Հետևաբար «Տոնացույցին» կից կոնդակ է եղել, որն ընթերցվել է եկեղեցիներում, և պատվիրվել, որ այսուհետև նոր «Տոնացույցը» կիրառեն:

Նույն 1775 թ. մեկ այլ վավերագրում ասվում է. «Որովհետև Սրբ. Վեհն. յամենայն երկիր զնորատիպ Տօնացոյցս յղէր, վասն որոյ և ի Հնդիկս ևս յղեաց: Թէ վասն եկեղեցեաց այնց կողմանցն և թէ վասն յատուկ անձանց ոմանց»[199]: Այստեղ հստակորեն ասվում է, որ «Տոնացույցի» օրինակներին կից կոնդակներ են գրվում՝ «զպատուիրական կոնդակս և զթուղթս գրեաց յայն կողմունսն»:

Բաղդադ ուղարկված «Տոնացույցին» կից «եւ զկոնդակն ևս ընթեռնուլ տացէ յեկեղեցւոջն»[200]: Նույն ձևով է վարվում նաև Կալկաթա և Զիչրա քաղաքների դեպքում[201]: Այս ամենը նպաստում է նոր «Տոնացույցի» տարածմանը և ընդունմանը:

«Կարգ թաղման կարգաւորաց», 1777 թ. (160 էջ)

«Տոնացույցի» ամբողջական կարգավորումից հետո Սիմեոն կաթողիկոսը, ամենայն հավանականությամբ, ձեռնամուխ է եղել Մեծ Մաշտոցի կանոնների խմբագրմանը:

Քահանայական Մաշտոցը, որը նաև «Ձեռաց» է անվանվում, քանի որ քահանայի ձեռքի գիրքն է ամենօրյա ծիսական արարողություններում, ինչպես նաև քահանան ձեռքին պահած է կատարում եկեղեցական արարողությունները, ունեցել է մի քանի հրատարակություններ՝ սկսած Աբգար Դպիրից և Ոսկան Երևանցուց:

Հակոբ Դ Ջուղայեցու (կթդ. 1655-1680 թթ.)՝ Ոսկան վարդապետին ուղղված նամակից տեղեկանում ենք, որ կաթողիկոսը նրան է ուղարկել մեծ, այսինքն՝ կաթողիկոսական, եպիսկոպոսական և քահանայական բոլոր կանոնները պարունակող Մաշտոց, որպեսզի համապատասխան խմբագրությամբ Ոսկանը հրատարակեր Մարսելում, սակայն մինչ ձեռագրի նրան հասնելը հայ տպագրության մեծ երախտավորը վախճանվում է[202]:

Սիմեոն կաթողիկոսը Ս. Էջմիածնում հրատարակում է միայն մի՝ հոգևորականների թաղման կարգի կանոնը: Հոգևորականները քանի որ

198 Դիւան հայոց պատմութեան, հտ. Ը, էջ 398:

199 Նույն տեղում, էջ 411:

200 Նույն տեղում:

201 Նույն տեղում, էջ 413:

202 **Կարապետ եպս. Ամատունի,** Ոսկան վարդապետ Երևանցի և իր ժամանակը, Ս. Ղազար,1975, էջ 242-245:

եկեղեցական կարգ՝ աստիճան ունեն, անվանվում են «կարգավորներ»: Ըստ այմ և Մաշտոցի՝ հոգևորականների թաղման կարգն է անվանվում «կարգ թաղման կարգաւորաց»: Տիտղոսաթերթում նույն խորագրի ներքո բերելով կանոնի անվանումը՝ Սիմեոն կաթողիկոսը գրում է, որ կանոնը վերցրել է բուն, այսինքն՝ հիմնական, ամբողջական Մեծ Մաշտոցից և հրատարակել խիստ զգուշությամբ խմբագրելուց և սրբագրելուց հետո:

Հնարավոր այն հարցին, թե ինչո՞ւ է հատկապես այս կանոնը հրատարակել, անդրադառնում է տիտղոսաթերթից սկսած, ուր ասվում է, թե հիշյալ կանոնը առաջ «կարի դժուարութեամբ և տաժանմամբ առնէին»:

Գրքի վերջաբան հիշատակարանում Սիմեոն կաթողիկոսը ասում է, որ վաղուց նպատակ է ունեցել խմբագրել Մեծ Մաշտոցը, որում բազմաթիվ աղճատումներ և սխալներ են տեղ գտել: Այս նպատակով ի մի է հավաքել Մաշտոցների մի շարք օրինակներ և համեմատել իրար հետ: Կատարած բնագրագիտական քննության և համեմատության համար գրում է, թե այնտեղ, ուր հնարավոր էր ուղղել՝ ուղղել է, ուր որ ավելորդ էր, այսինքն՝ հետագայի հավելումն էր, կրճատել է, իսկ ուր որ պակասող տեղեր կային՝ հետագա ընդօրինակողների կատարած կրճատումների պատճառով, վերականգնել է պակասող հատվածները, իսկ որտեղ որ իմաստն է խաթարվել, սրբագրել և ուղղել է բնագիրը: Ասում է, թե այս սխալները տեղ էին գտել ոչ միայն ձեռագիր, այլև տպագիր Մաշտոցներում:

«Տոնացույցի» առաջաբանում Սիմեոն կաթողիկոսը բավականին խստությամբ էր գրում Մխիթարյանների կատարած փոփոխությունների մասին, սակայն իր իսկ կատարած փոփոխությունները բուռն հակազդեցություն առաջ բերեցին պոլսահայ միջավայրում:

Ըստ երևույթին զգուշանալով այս հանգամանքից՝ Մաշտոցի դեպքում կաթողիկոսն արդեն ոչ թե ասում է, որ միտումնավոր փոփոխություններ են կատարվել՝ համաձայն լատին ծեսի, այլ մեղքը գցում է գրիչների վրա, ինչպես որ Ոսկան Երևանցին ու Մխիթար Աբբահայրն էին տարբեր առիթներով գրում, թե ոչ հմուտ գրիչների պատճառով ձեռագրերն աղճատվել են:

Սիմեոն կաթողիկոսի խոսքերից երևում է, որ տարբեր ձեռագրերի համադրմամբ՝ նա համեմատական մի բնագիր է պատրաստել, որը, ցավոք, կա՛մ հայտնի չէ, կա՛մ մենք չկարողացանք գտնել Մատենադարանի ձեռագրերում: Գրում է, որ այս կանոնի տպագրությունից հետո, եթե Տերը կամենա, մյուս կանոնները ևս տպագրելու է: Հետևաբար տպագրության համար ուղղված բնագիրը պատրաստ է եղել:

Ինչպես կտեսնենք, Մայր Մաշտոցի հրատարակության ծրագիր ունեցել է նաև հաջորդ կաթողիկոսը՝ Ղուկաս Ա Կարնեցին:

Այնուհետև պատասխանելով հնարավոր այն հարցին, թե «այժմ վասն է՞ր միայն ըզքահանայաթաղին կանոն եառաք տպել»[203], ասում է, որ այն

[203] Կարգ թաղման կարգաւորաց, Ս. Էջմիածին, 1779, էջ 158:



ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂԻ ԿԱՆՈՆԻ ԷՋԵՐԻՑ
«Կարգ թաղման կարգաւորաց», Ս. Էջմիածին. 1777 թ.

առավել քան մյուս կանոնները աղճատված և խանգարված էր: Ըստ նրա՝ այս կանոնը սակավագյուտ էր դարձել, իր իսկ բնորոշմամբ՝ «հազուագիւտ էր եղեալ այժմոյս: Վասն որոյ աճապարեցաք նախապէս զսոյն տպեցուցանել»[204]:

«Աճապարել» բառն այստեղ, թերևս, վեր է հանում անձնական բնույթի հոգեբանական մի իրողություն ևս: Հիշյալ կանոնի տպագրությունից երկու տարի անց կաթողիկոսը վախճանվել է: Ըստ երևույթին՝ նա կանխազգացել էր իր սպասվող վախճանը և ցանկացել, որ հուղարկավորությունը, ապա և վերջինիս հետ կապված ժամանակային մյուս արարողությունները՝ յոթ, քառասունք և այլն, կատարվեին այս «Մաշտոցով»:

Ասում է, որ նոր տպագրվածը կարելի է համեմատել հին օրինակների հետ և տեսնել՝ որքան ուղղումներ են կատարված սուրբգրային ընթերցվածներում և աղոթքներում: Իր իսկ բնորոշմամբ՝ հանել է ավելորդ և նորամույծ հատվածները և դրել հին օրինակների խորհրդավոր և զորավոր աղոթքները՝ «ըստ հնոց շաւղաց»: Գրում է, թե այս ուղղումներից հետո տալիս է այն ի վայելումն համայն եկեղեցական պաշտոնյաներին՝ «լուսաւորչակրօն և միաբնադաւան օրհնեալ ազգիս հայոց»: Կաթողիկոսը ոչ միայն շեշտում է հայերի լուսավորչական լինելը, այլև ի հակադրություն կաթոլիկների, ովքեր հույների հետ միասին «երկաբնակ» էին անվանվում, օգտագործում է մի նոր բառ՝ «միաբնադաւան»:

Գրքի հիշատակարանի սկզբում ևս ասվում է, թե կաթողիկոսը ողջ Մեծ Մաշտոցն է խմբագրել, որը հետագայում տպագրելու են: Այս ծրագիրը մասամբ իրականացվում է Ղուկաս Ա կարնեցու կաթողիկոսության տարիներին:

Ինչպես մյուս հրատարակությունների հիշատակարաններում, այնպես և այստեղ խնդրում է հիշել Զաքիկյանց գերդաստանին: Այնուհետև թվարկվում են գրքի տպագրությունն իրականացնողների անունները:

Ինչ վերաբերում է տպագրության որակին, անհրաժեշտ է նշել, որ օգտագործված են մեծ թվով լուսանցազարդեր և զարդագիր տառեր, որն առավել ձեռագիր մատյաններին է բնորոշ: Նկատելի է, որ ամեն ջանք գործադրվել է, որ այս հրատարակությունը շքեղ մի ձեռագրի տպավորություն թողնի, թեև կանոնը թաղմանն է վերաբերում:

Նման ձգտումը թերևս կարելի է բացատրել Ս. Էջմիածնի՝ կաթողիկոսական կենտրոն լինելով: Կաթողիկոսական կենտրոններն ունեին իրենց շքեղ Մաշտոցները, հատկապես «կաթողիկոսական» անվանվող Մաշտոցները, ինչպես որ Կիլիկյան Հայաստանի Սսեցոց Մաշտոցը կամ Հայրապետական Աթոռի՝ Ս. Էջմիածնում վերահաստատվելուց հետո այստեղ 1461 թ. գրված կաթողիկոսական շքեղ Մաշտոցը, որն այժմ Երևանի Մատենադարանի հմր. 4997 ձեռագիրն է:

---

204 Նույն տեղում, էջ 159:

Կաթողիկոսական կենտրոնում տպագրված «Մաշտոցը», թեկուզև մեկ կանոն պարունակող, պետք է ունենար նույն շքեղությունը, առավել ևս, որ այդ կանոնի ընդարձակ խորագրում հիշվում էր նաև կաթողիկոսը, քանի որ տպագրվող կանոնը վերաբերում էր քահանաներին, եպիսկոպոսներին, վանական առաջնորդներին և կաթողիկոսին։

Կանոնի տարբեր դրվագներում տարբերակված մոտեցմամբ ասվում է, որ ննջեցյալը եթե կաթողիկոս է, ապա այսպես պետք է վարվել, և տրվում է ծիսական համապատասխան նկարագրությունը։

Էջմիածնականության գեղարվեստական բարձրակետը՝ «Տաղարան», 1777 թ. (40 էջ)

Ինչպես նշեցինք, սա «Տաղարանի» երկրորդ հրատարակությունն է, որի տպագրական որակն արդեն բավարարել է Սիմեոն կաթողիկոսին։ Նրա հրատարակություններն ունեն ընդարձակ առաջաբաններ, վերջաբաններ և հիշատակարաններ։ «Տաղարանը», սակայն, ունի միայն մեկ համառոտ հիշատակարան, որում, առանց անունները նշելու, ասվում է՝ հիշեցե՛ք տպարանը հիմնադրողներին և այնտեղ աշխատողներին։ Կաթողիկոսի՝ Զաքիկյանցին տված խոստման համաձայն, թե բոլոր հրատարակություններում կհիշատակի նրա անունը, հիշում է հնդկահայ բարերարին և նրա գերդաստանը։

Անհրաժեշտ է նշել, որ ինչպես Մխիթար Սեբաստացու, Ղազար Ա Ջահկեցու, այնպես էլ Սիմեոն կաթողիկոսի բանաստեղծությունները, մինչև նրանց «Տաղարաններում» տեղ գտնելը, տարածվել են ձեռագիր ժողովածուների բազմաթիվ ընդօրինակություններով, ինչը հեղինակներին մղել է դրանք հրատարակել ձեռագրերում տեղ գտած դասավորությամբ կամ հակառակը. ձեռագրերում այս տաղերին հանդիպում ենք գրեթե այն հաջորդականությամբ, որը գտնում ենք տպագիրներում։ Հետևաբար, որպես ժողովածուներ, դրանք ձևավորվել են արդեն ձեռագրային ընդօրինակություններով, ապա և տպագրվել։

Այս հանգամանքը տպագրական առումով ևս արտահայտվել է Տաղարաններում՝ տպագիր հրատարակություններին փոխանցելով ձեռագրերին բնորոշ մի քանի հատկանիշներ՝ սկսած վերնագիր-տողեր հարաբերակցությունից, տարբեր բառերի հապավմամբ և սղագրմամբ գրելուց մինչև տողերի հանգավոր վերջավորություններն անջատելով ու առանձին միագիծ վերևից ներքև գրելով, որով առավել ցայտուն է երևում հանգավորումը։

Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 9409 ձեռագիրը նույնությամբ համընկնում է Սիմեոն կաթողիկոսի «Տաղարանի» 1777 թ. հրատարակության հետ։



«ՏԱՂԱՐԱՆԻ» ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՍԿԻՉԲԸ

«Տաղարան», Ս. Էջմիածին, 1777 թ.

Տիտղոսաթերթի անգամ տողատումն է համապատասխանում տպագրի տիտղոսաթերթին: Ինչպես «Տոնացույցի» 1774-75 թթ. տպագիր երկրորդ հատորում, որի մասին արդեն գրել ենք, առաջ է գալիս նույն հարցը: Ձեռագիրն է ընդօրինակված տպագրից, թե ձեռագիրը խնամքով մաքրագրվել է Սիմեոն կաթողիկոսի «Տաղարանի» ձեռագիր որևէ օրինակից, որպեսզի դրանից կատարվի տպագրի շարվածքը: Ինչպես «Տոնացույցի» դեպքում, կարծում ենք, ձեռագիր «Տաղարանը» ծառայել է օրինակ շարվածքի համար և ոչ թե արտագրվել է տպագիր օրինակից:

Տպագիր տաղարանում կան հետևյալ երեք հավելումները, որոնք վերաբերում են տիտղոսաթերթում և հիշատակարանում տպագրության մանրամասների հետ կապված տեղեկություններին:

Առաջին՝ ձեռագրի տիտղոսաթերթում բացակայում է տպագրի այն նշումը, որում ասվում է, թե նորից է տպագրվում նախորդ հրատարակության օրինակների սպառվելուց հետո. «Ի սպառիլ առաջնոյ տպեցելոյն, ի թախանձանաց սիրատարփ խնդրողացն»:

Երկրորդ՝ տպագրի տիտղոսաթերթում գրքի տեղի նշումից հետո նաև հիշվում է տպարանը՝ «ի տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ»: Ձեռագրում վերջինս չկա: Այն ավելացվել է տպագրության ժամանակ: Ձեռագիրը եթե տպագրից արտագրվեր, ապա ընդօրինակողը որևէ պատճառ չէր ունենա գրության տեղը եղող էջմիածինը նշելուց հետո չհիշատակելու տպարանի մասին:

Երրորդ՝ ձեռագրի վերջում գտնվող հիշատակարանում բերված են տպարանի բարերար Գրիգոր Զաքիկյանին վերաբերող տողերը, փոխարենը, սակայն, բացակայում է նախորդող «Յիշեսջիք ի Քրիստոս զհաստատօղն տպարանիս, և զամենայն աշխատօղսն ի սմա» նախադասությունը, որը ևս վստահաբար ավելացվել է «Տաղարանի» տպագրության ժամանակ:

Ձեռագրի անգամ գեղարվեստական հարդարումն է արտահայտվել տպագրում: Այսպես, ձեռագրում մի շարք բանաստեղծությունների սկզբնատառերը ընդգծված են, որոնք տպագրում վերցված են քառակուսու մեջ և պատված նախշերով:

«Տաղարանում» բանաստեղծությունները համարակալված են հայկական թվահամարներով: Ձեռագրերում Ա-ն և մյուս բանաստեղծությունների համարները ներկայացնող տառերը լուսանցքներում են, տպագրում՝ բանաստեղծության վերևում:

Ձեռագրի բանաստեղծությունները իրենց բնագրով և բանաստեղծությունների հերթականությամբ լիովին համապատասխանում են տպագրի միավորներին:

«Տաղարանը» կարելի է համարել «Ջրոսարանի» բանաստեղծական տարբերակը: Այն թեմաները և հարցերը, որոնք որպես աղոթք են ասվում «Ջրոսարանում», այստեղ արտահայտված են բանաստեղծական ձևի մեջ: Ինչպես Աղոթագրքում, այնպես էլ այստեղ կրոնականն ու հա-

մաքրիստոնեականը զուգահեռ են ընթանում ազգային-եկեղեցականին։

«Ջբոսարանն» սկսվում էր Սուրբ Երրորդությանը նվիրված աղոթքով, իսկ «Տաղարանը»՝ Սուրբ Ծննդյանը։ Ինչպես որ «Ջբոսարանի» առաջին աղոթքին համահունչ ձևով գիրքն սկսվում էր Սուրբ Երրորդությունը ներկայացնող փորագրանկարով, այնպես էլ «Տաղարանը»՝ Սուրբ Ծննդյանը նվիրված։ Այս փորագրանկարը տարբերվում է «Տոնացույցի» սկզբում գտնվող Ս. Ծննդյան փորագրանկարից, որը վկայում է Ս. Էջմիածնի տպարանի նկարների՝ անգամ միևնույն թեմայի շրջանակում ունեցած բազմազանության մասին, ինչպես նաև տպարանի աշխատակիցների ձգտումը՝ շարունակ կատարելագործելու և նոր ձևով ներկայացնելու միևնույն թեմայով պատկերները։

Փորագրանկարի կենտրոնում՝ հարդով պատված մսուրի սնարին, դրված է լուսապսակե ճաճանչներով պատված Մանուկը։ Տիրամայրը խոնարհվել է դեպ Նա՝ բացելով խանձարուրը։

Այս պատկերը թեև ավելի պարզ կառուցվածք ունի, փոխարենը մանրանկարային ոճավորումն ավելի նկատելի է. չկան երեք մոգերը, վերին մասի հրեշտակները և Բեթղեհեմյան աստղը։

Ընծայաբերումը ներկայացված է հովիվներից մեկի բերած գառով։ Պատկերված են նաև Ս. Ծննդյան նկարներին մաս կազմող եզն ու ավանակը։ Սիմեոն կաթողիկոսի հրատարակած «Տոնացույցում» այս կենդանիները չկան, որովհետև Մանուկը Տիրամոր գրկին է, իսկ այստեղ դրված է մսուրի սնարին, որի դեպքում պատկերվում են եզն ու ավանակը՝ համաձայն ավետարանական մեկնությունների հետևյալ ըմբռնման։

Մսուրն ու խանձարուրը նաև զոհաբերության խորհուրդն ունեն։ Համաձայն միջնադարյան մեկնությունների՝ մսուրը միաժամանակ զոհասեղան է, ուր դրված է բանական զոհը՝ Քրիստոս, և գերեզման է ու դժոխք, որի կապանքները իր Ծննդյամբ, Խաչելությամբ ու մահվամբ՝ իբրև պատանք կրեց և քանդեց Քրիստոս։ Ահա այս պատճառով էլ մանրանկարներում այն խանձարուրը, որով պատված է Քրիստոս, ավելի շատ պատանք է հիշեցնում[205]։

Մսուրում Հիսուսի մոտ պատկերվում են նաև եզ և ավանակ։ Թեև Ավետարանում նրանց մասին որևէ հիշատակություն չկա, սակայն համաձայն ավանդության՝ վերջիններիս շունչը ծառայել է նորածին Մանկանը տաքացնելու համար[206]։ Միաժամանակ, այս կենդանիներով այլաբանորեն ակնարկվում են Եսայու մարգարեության հետևյալ տողերը. «Եզն իր Տիրոջն է ճանաչում և էշը՝ իր Տիրոջ մսուրը» (Եսայի, Ա 3)։

Ս. Ծննդյան նկարի երկտող չափածոյում շեշտվում է Տիրամոր գլխավոր բարեխոսը լինելը իր Միածին Որդու առջև.

205 Այս մասին տե՛ս **Կ. Մաթևոսյան, Ա. Ավետյան**, Ավետարանական պատկերներ, Երևան, 1993, էջ 23:

206 Նույն տեղում, էջ 22:

Ս. ԾՆՈՒՆԴ
«Տաղարան», Ս. Էջմիածին, 1777 թ.

Աստուածածին Մայր Քրիստոսի,
Ընդ մեր մաղթեա՛ Քո Միածնի:

«Տաղարանի» չափածո ստեղծագործությունները շարունակում են միջնադարյան շարականերգության ու տաղերգության ավանդները՝ ցայտուն ձևով արտահայտվելով առաջին բանաստեղծության առաջին տողից. «Խորհուրդ մեծ յայտնեցաւ այսօր աշխարհի»: Վերջինս հիշեցնում է Ս. Ծննդյան շարականների հետևյալ տողերը.

Խորհուրդ մեծ և սքանչելի,
Որ յայսմ աւուր յայտնեցաւ[207]:

Ս. Ծննդյան շարականներում պատկերի հակադրության կամ անպարագրելիության վրա էր կառուցվում բանաստեղծական տողը, թե երկնքի և երկրի անբավելին այրում ծնվեց և կամ աստվածային փառքից իջավ մարդկային կացարանը[208]:Նույն ձևով այստեղ է ասվում.

Որ յերկինըս յաթոռ անմատոյց բազմի,
Այսօր ի մըսուր անբանից դրնի (Էջ 3)***:***

Տիրամորը նվիրված տաղը հիշեցնում է անառակի՝ առ Հայրն ուղղված խոսքերը՝ որպես ապավինում գթասրտությանը և ծնողական ներմանը:

Հիսուսին ուղղված բանաստեղծությունում, միջնադարյան ընդունված այլաբանությամբ, մեղքը որպես հիվանդություն է ներկայացնում և դիմում Փրկչին, որ բժշկի մեղքով հիվանդ իր հոգին:

«Զբոսարանի» նման, այստեղ ևս առանձին խումբ են կազմում Ս. Էջմիածնին նվիրված գործերը:

Սիմեոն կաթողիկոսի «Տաղարանում» Ս. Էջմիածնին նվիրված առաջին բանաստեղծությունն է «Առ Սուրբ Էջմիածինն ասացեալ ի հեռուստ վայրէ», որը «Տաղարանի» չորրորդ բանաստեղծությունն է[209]: Այստեղ իրապես կենդանիորեն զգացվում է Մայր Աթոռից հեռու լինելը, ինչպես նաև հարազատորեն փոխանցվում են գաղթաշխարհի հայության զգացումները: Սիմեոնը, մինչև կաթողիկոս դառնալը, երկար տարիներ նվիրակ է եղել տարբեր քաղաքներում՝ Զմյուռնիայից մինչև Հնդկաստան, և կարելի է ենթադրել, որ նվիրակության վայրերից որևէ մեկում է գրել այն:

Նրա՝ Ս. Էջմիածնին նվիրված բանաստեղծությունները ոչ միայն գեղարվեստական ձևերի և պատկերավորման, այլև հարցադրումների առումով շարունակությունն ու զարգացումն են միջնադարյան համաբնույթ ստեղծագործությունների և ստուգաբանվում են վերջիններիս հետ համեմատության շրջանակում:

Հայ միջնադարյան գրականության մեջ Ս. Էջմիածնի մասին հիշատա-

---

207 Ձայնքաղ շարական, Վաղարշապատ, 1888, էջ 22:

208 Նույն տեղում:

209 Տաղարան, Ս. Էջմիածին, 1777, էջ 7:

կություն պարունակող չափածո ստեղծագործությունների շարքն սկսվում է Եդեսիայի գրավման առիթով Ներսես Շնորհալու գրած ողբով: Եդեսիան ներկայացվում է որպես սգավոր մի այրի, որը դիմառնական եղանակով դիմում է քրիստոնյա աշխարհի հոգևոր կենտրոններին՝ սգակից և ողբակից լինելու իրեն: Վաղարշապատի կաթողիկեի համար ասվում է.

Ո՞ւր է աթոռ հայրապետի,
Կամ քահանայք ի Սուրբ բեմբի[210]:

Շնորհալին նաև ողբում է քաղաքական իշխանությունից ամայացած Արարատյան աշխարհի համար.

Ո՞ւր են գահոյք թագաւորի
Վաղարշապատ Քո քաղաքի,
Կամ նախարարքն ոՒր արքայի
Արարատեանդ գաւառի:

Սյունիքի գահերեց իշխանների ժառանգ և Սյունյաց աթոռի միտրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի՝ 13-րդ դարի վերջին գրված ողբը գրական այս ձևի մեջ արդեն Արարատյան աշխարհում որպես ազգահավաքման կոչ է հնչում.

Ո՞ւր էք, որդիքդ իմ սրբածին,
Եկայք առ մայրս ձեր նախկին,
Որպէս օրէնն է վաւակին՝
Տանել խնամ ծեր ծնողին[211]:

Օրբելյանի ստեղծագործությունում եթե էջմիածինն է ողբում իր զավակների՝ իրենից հեռու լինելու համար, ապա Սիմեոն կաթողիկոսի բանաստեղծությունում արդեն «ի տարանջատ վայրէս» զավակներն են ողբում իրենց հոգևոր ծնողից հեռու լինելու համար.

Շնորհածնի ծնողիդ իմոյ՝
Աստուածակերտ Սուրբ տեղւոյդ,
Յորմէ հայցեմ հեծեծանօք,
Զիս մի՛ մերժեր ի սիրոյդ, ի գըթոյդ[212]:

18-րդ դարում աղաղակող մի հակասություն էր ստեղծվել հայ բնաշխարհում և գաղթաշխարհում գտնվողների միջև՝ կեցության վիճակի տարբերությունների պատճառով: Գաղթաշխարհի հայությունը տնտեսական նոր նվաճումների էր հասնում, իսկ Արարատյան աշխարհում, պայմանավորված Իրանի շահական կենտրոնական իշխանության որոշակի թուլացմամբ, ավելի մեծ ծավալներ էին ընդունում կեղեքումներն

210 **Ներսես Շնորհալի**, Ողբ Եդեսիոյ, աշխտ. Մ. Մկրտչյանի, Երևան, 1973, էջ 32:

211 **Խաչատուր Կեչառեցի**, աշխտ. Ա. Դոլուխանյանի, Երևան, 1988, էջ 126:

212 **Սիմեոն Ա Երևանցի**, Տաղարան, Ս. Էջմիածին, 1777, էջ 7:

ու անիշխանությունը՝ էլ ավելի ծանրացնելով հայ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակը։

Որպես նվիրակ՝ տեսնելով Եվրոպայի հայկական առևտրական տների հաջողությունները և հնդկահայության հեքիաթային հարստությունները՝ Սիմեոն կաթողիկոսն այն միտքն է ընդգծում, որ հայրենիքի դժվարությունները նախընտրելի են պանդխտության բարեկեցությունից։ Որպես տարագիր՝ ողբում է, որ հեռու է մեծագույն հարստությունից՝ հայրենիքից և Ս. Էջմիածնից.

Նոցա ասեմ ես երանի՝
Որք կան բավմեալ ի ծոց քոյ,
Յորոց յետինն է լաւ քան վիս,
Որ եմ ի քէն արտաքոյ, արտաքոյ: (Էջ 9)

Այս միտքը գնալով ավելի ընդգծված է դառնում 19-րդ դարի հայ գրականության մեջ։

Հաջորդ՝ «Դարձեալ առ Սուրբ Էջմիածին ներբողեան հանդերձ խնդրուածովք» բանաստեղծության մեջ Ս. Էջմիածնին՝ որպես իր պահապան մոր, դիմում է հայաշխարհը։ Տրտմության սաղմոսների հետևողությամբ գրում է, որ ինչպես բաբելական գերության մեջ գտնվող հրեաներն էին ասում, թե «Տե՛ր, քեզ ապավինեցինք, և մեր թշնամիները մեզ տիրեցին, և մեզ նեղողները անարգանքով ասացին, թե ուր է Ձեր Տեր Աստվածը» (Համմտ. Սաղ., ԺԲ 5)։ Նույն ձևով ինքն է դիմում Ս. Էջմիածնին, որ փրկի անիրավ նեղիչների ձեռքից[213]։

Այս բանաստեղծությունն իր կառուցվածքով և Ս. Էջմիածնի՝ որպես առ Աստված հայության ապավենի ըմբռնմամբ կարող է համարվել Տրտմության սաղմոսների հոգևոր-գեղարվեստական մի գեղեցիկ հարաստացություն՝ հին և նոր գրականությունների սահմանագծին։

Նույն այս հոգեվիճակն ենք գտնում նաև «Նորին առ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր» բանաստեղծության մեջ։ «Գրիգոր» բառը ծագել է հունարեն «արթուն» բառից, որն իր հերթին ունի հրեշտակ՝ «զուարթուն» իմաստը։ Գրիգոր բառի «արթուն» և «զվարթուն» իմաստների զուգորդմամբ՝ բանաստեղծության սկզբում ասվում է.

Արի Լուսաւորիչ մեր,
Բաւ է արդ որքան ննջեցեր:
Զարթիր զուարթուն անուն,
Մինչև յերրոր նընջես դու ի քուն: (Էջ 11)

Ինչպես որ Ընդհանրական եկեղեցին Քրիստոսի հարսն է անվանվում, այնպես էլ այստեղ Հայոց եկեղեցին՝ Ս. Գրիգորի «մաքուր թագուհին»։

Շարունակելով Շնորհալուց և Օրբելյանից եկող սգավոր այրու պատկերը՝ Սիմեոն կաթողիկոսը Ս. Էջմիածինը կրկնակիորեն սգացող այրի է համարում՝ իր վիճակի և հայ ժողովրդի համար։

213 Սիմեոն Կաթողիկոս, Տաղարան փոքրիկ, Ս. Էջմիածին, 1777, էջ 10:

Ս. Էջմիածնին և հայ ժողովրդին վերաբերող հայցվածները ցանկանալով նաև եկեղեցական արարողությամբ արտահայտել՝ «Տաղարանի» վերջին երկու ստեղծագործությունները կաթողիկոսը, համապատասխան ծիսական հրահանգով, եկեղեցական ժամակարգության ձևի մեջ է դրել։

«Ջբոսարանի» վերջին աղոթքը նվիրված էր Սուրբ Երրորդությանը, որի վերջում անցում էր կատարվում Հայոց եկեղեցու դավանությանը։ «Տաղարանի» վերջին ստեղծագործությունը ևս վերնագրված է «Դաւանութիւն և մաղթանք առ Սուրբ Երրորդութիւնն»։ Ասվում է, որ Ս. Էջմիածնում այն կիրակի օրերին կատարվում է առավոտյան ժամերգությունից հետո դպրատանը՝ դպիրների կողմից։

Իր տաղերին եկեղեցական առավել կանոնականություն և շունչ հաղորդելու համար, ինչպես որ Մխիթար Աբբահայրն էր գրում, թե տաղերից ո՛ր մեկն ի՛նչ շարականի եղանակով ասեն, այնպես և Սիմեոն կաթողիկոսն է գրում, որ այս տաղն ասեն «ըստ եղանակի Նորաստեղծեալին»։ Տաղարանի բոլոր տաղերը համարակալված են հայկական տառերի թվահամարներով, և գրքի վերջում ըստ այդ թվահամարների նշվում է, թե ո՛ր տաղը որ բանաստեղծության եղանակով պետք է ասել։

«Հավատամքի» բանաստեղծական վերաշարադրանքից հետո դարձյալ անցում է կատարում Տիրոջ փոքրիկ հոտին՝ հայ ժողովրդին։ Այրու՝ Շնորհալուց եկող պատկերի հետևողությամբ գրում է.

Որպէս այրի մենացեալ կայ,

Զեռն ի ծնօտի նստեալ ողբայ: **(Էջ 37)**

Ս. Էջմիածնի՝ որպես ձեռքը ծնոտին դրած ողբացող այրու կերպարը 19-րդ դարում իր պատկերային մարմնավորումն էր ստանալու ավերակների վրա նույն կեցվածքով նստած Մայր Հայաստանի նշանավոր նկարում։ Հայաստանը որպես մենավոր այրի ներկայացնելու ավանդույթի մասին Թադէոս քհն. Սոգինյանցի պոեմի օրինակով[214] է. Ջրբաշյանը գրում է. «Այստեղ կիրառվում է դեռ վաղ միջնադարից հայտնի դիմառնության հնարանքը, հայրենիքի պատկերը կենդանանում է, ձեռք բերում որդեկորույս մոր գծեր, և պոեմի հրապարակախոսական բովանդակությունը դրվում է գեղարվեստական տպավորիչ ձևի մեջ։ «Մայր Հայաստանը» պատմում է իր լքված վիճակի մասին, հիշատակում իր որդիներին՝ ցրված աշխարհի տարբեր մասերում, աղքատության մեջ, ձուլվելու և ազգային դեմքը կորցնելու անմիջական վտանգի տակ, իսկ ինքը՝ որդեկորույս և անօգնական, տագնապով և վշտով լի»[215]։

Նույն այս պատկերին այնուհետև դիմում է նաև Մկրտիչ Ա. Խրիմյանը «Հրաւիրակ Արարատեան» գործում[216]։

214 **Թադէոս քհնյ. Սօգինեանց,** Տետրակ, որ կոչի ողբ Հայաստանեայց, Մադրաս, 1791, էջ 11-12:

215 **Է. Ջրբաշյան,** Դիդակտիկ պոեմները հայ գրականության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1968, հմր. 1, էջ 64:

216 Տես **Վ. Դևրիկյան**, Վասպուրականի արծիվը հայ գրականության անդաստանում,

Զևավորվող նոր շրջանի հայ դասական բանաստեղծության մեջ առաջինը Սիմեոն Երևանցին է, որ դիմում է հիշյալ պատկերին՝ այն ներկայացնելով Ս. էջմիածնի միջոցով։

Սիմեոն կաթողիկոսը հրահանգում է նաև, որ եկեղեցիներում «Տէր ողորմեա»-ից հետո երգվի իր գրած «Արի Աստուած» սկսվածքով ստեղծագործությունը, որը լցված է հոգևոր խոր շնչով և հայ ժողովրդի համար առ Աստված ուղղված աղաչական խնդրանքով։ Վերջինիս յուրաքանչյուր տունը ավարտվում է «Տէր ողորմեա» կրկներգով։

էջմիածնի տպարանը նման հետևողականությամբ վերածվում է էջմիածնականության գաղափարի առավել ուժգին տարածման միջոցի։ Այս գաղափարը տարբեր ժանրերի ժողովածուներով ներկայացվում է տարբեր գրքերով և ասելիքին համահունչ գեղարվեստական ձևավորմամբ։

Սիմէօն Երեւանցի, «Պարտավճար», 1779-1783 թթ. (383 էջ)

Ս. էջմիածնի՝ որպես հայ ժողովրդի հոգևոր կենտրոնի ու ամենախնամ ծնողի, որին որդիական սիրով պետք է կապված լինի ամեն հայ, գաղափարն աղոթական ու բանաստեղծական ձևերի մեջ հուզականորեն ու գեղարվեստականորեն ներկայացնելուց հետո Սիմեոն կաթողիկոսը ասվածի պատմաեկեղեցական ու դավանական հիմնավորումն է տալիս «Պարտավճարում»։

Երանաշնորհ հայրապետին վիճակված չէր տեսնելու գրքի տպագրության ավարտը։ Տպագրությունը 1783 թ. ավարտին է հասցնում Ղուկաս Ա կարնեցի կաթողիկոսը։

Նվիրված լինելով Հայոց եկեղեցու և դավանանքի պաշտպանությանը՝ «Պարտավճարը» կրում է ժամանակի դավանական անհանդուրժողականության և պայքարի կնիքը։ Գրքի տպագրության նպատակի մասին տիտղոսաթերթում ասվում է. «Ի հաստատութիւն ճշմարտութեան միաբնադաւան հաւատոյ Սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց, և ի յորդորումն ազգիս մերոյ՝ ի նոյնն մնալ անշեղապէս։ Եւ ի դատապարտութիւն ի մէնջ հեստեալ ուրացօղ չիք եպիսկոպոսաց և սուտ կարգաւորաց»։

Այստեղ ևս գտնում ենք «միաբնադաւան հաւատ» արտահայտությունը։ Նկատելի է, որ Սիմեոն կաթողիկոսը միշտ առանձնակի կրքով է գրում Հայոց եկեղեցուց անջատված «չիք» եպիսկոպոսների ու մյուս հոգևորականների մասին։ Կարելի է ենթադրել, որ այստեղ նկատի չունի Մխիթարյաններին, քանի որ Սեբաստացուն հաջորդած սերունդն արդեն Հայոց եկեղեցուց չէր գնացել դեպ Հռոմեական եկեղեցին, այլ միանգամից Ս. Ղազարի միաբանության անդամ էր դարձել։

Այս ժամանակահատվածում ոչ միայն կրոնական համոզումների պատճառով, այլև տարբեր շահախնդիր նկատառումներից ելնելով, ինչպես

Երևան, 2021, էջ 40-42:

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՒՍՁՅՈՒՆ
Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»,
Ամստերդամ, 1695, էջ 305

ՊԱՐՏԱԿԱՐԳ, Ս. Էջմիածին, 1779-1883 թթ.

նաև զեղծարարությունների և անբարո ընթացքի համար դատապարտվող մի շարք հոգևորականներ ընտրում էին հռոմեադավան դառնալու և Հռոմի միջոցով որոշակի դիրքի հասնելու ճանապարհը: Նրանց նկատի ունի Սիմեոն կաթողիկոսը՝ տիտղոսաթերթում տրված բնորոշմամբ:

Առաջաբանում բացատրվում է, թե ինչու է գիրքը «Պարտավճար» անվանել: Ասում է՝ այն իբրև կաթողիկոսի՝ իր հովված հոտի հանդեպ ունեցած պարտքի վճարն է՝ որպես հայ ժողովրդի տնտեսի և պաշտոնատար ծառայի: Նկատի ունի Տնտեսի ավետարանական առակը, որում Տերն Իր տնտեսին ասում է. «Տուր զհաշիւ տնտեսութեան քոյ» (Ղուկ. ԺԶ 2):

Այս գիրքը համարում է երկկողմանի պարտավճար: Մի կողմից այն իր՝ որպես կաթողիկոսի՝ հայ ժողովրդին հավատո պաշտամունքը և Ս. էջմիածնին կապված մնալու պարտավորությունները ներկայացնելու պարտքն է, որն ինքը վճարում է՝ դրանք այս գրքի միջոցով ներկայացնելով, մյուս կողմից՝ հայ ժողովուրդը պետք է վճարեր իր պարտքը՝ հետևելով գրքում շարադրվածին: Մաղթում է, որ երկու կողմերն էլ, իրենց պարտքը կատարելով, պարզերես գտնվեն Աստծու առջև տրվելիք հաշվետվության ժամանակ:

Դեռևս Ներսես Շնորհալին «Թուղթ ընդհանրական»-ում ասում էր, թե հայ ժողովրդի՝ ողջ աշխարհում ցրված լինելու և հայության տարբեր հատվածներին հասնելու դժվարության պատճառով ոչ թե անմիջաբար, այլ թղթով՝ նամակով է դիմում[217]: Նույն ձևով ինքն է գրում, թե չկարողանալով գնալ նրանց մոտ՝ փոխարենն այս գիրքն է ուղարկում, որում գրվածները թող ընդունեն այնպես, ինչպես իրեն կընդունեին:

Գրքի ուղղվածությունն արտահայտվել է նաև նրանում տեղ գտած երեք փորագրանկարներում: Առաջինը վերաբերում է Ս. Երրորդությանը, իսկ մյուս երկուսը նվիրված են Ս. էջմիածնին, որոնցից առաջինը Ս. էջմիածնի հիմնարկումն է Լուսավորչի տեսիլով (էջ 170), որն, ինչպես ասացինք, գտնվում է նաև «Տոնացույցում»: Երկրորդը Ս. էջմիածինը Արարատի և Արագածի հետ պատկերող նկարն է: Այն կա նաև «Տոնացոյց» և «Կարգ թաղման կարգաւորաց» գրքերում:

Ս. Երրորդությանը վերաբերող փորագրանկարը դրված է առաջին գլխի սկզբում: Չորս անկյուններում պատկերված են չորս ավետարանիչները՝ իրենց խորհրդանշաններով, իսկ կենտրոնում մի գծապատկեր է, որը քանիցս հանդիպում է նաև Ամստերդամի հրատարակություններում: Այն կազմված է եռանկյունուց, որի երեք անկյուններում երեք շրջանակներ են՝ յուրաքանչյուրում համապատասխանաբար գրված՝ Հայր, Որդի և Հոգի: Վերջինս կա Մովսես Խորենացու «Հայոց պատմության»՝ Վանանդեցիների 1695 թ. հրատարակության մեջ (էջ 309): Եռանկյունու գծերով իրար կապվող երեք շրջանակներն իրենց հերթին դեպի ներս գնացող

---

217 **Ներսես Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, աշխտ. Է.Մ. Բաղդասարյանի, Երևան, 1995, էջ 53-54:

գծերով կապվում են եռանկյունու կենտրոնում գտնվող շրջանակին, որի ներսում գրված է ԱՄ՝ Աստուած՝ խորհրդանշելով միասնական և անբաժանելի Սուրբ Երրորդությունը:

Քանի որ ողջ գիրքը նվիրված է Հայոց եկեղեցուն հավատարիմ մնալուն և դավանանքը պահելուն, ուստի ներքևի երկտող մակագրությունում ասվում է.

Ով եռանձնեայ մի էութիւն և մի Աստուած,
Ըզդաւանօղս անշեղ պահեա ի Քոց կամաց[218]:

Հայոց եկեղեցու դավանանքը հավաստելու համար վկայակոչումներ է կատարում Տիեզերական ժողովներից և Ընդհանրական եկեղեցու վարդապետներից: Կաթողիկոսների թվարկման ժամանակ ներկայացնում է նաև Հայոց եկեղեցու պատմությունը և դավանական հարցերի վերաբերյալ եղած դիրքորոշումները:

Սիմեոն կաթողիկոսը բերում է մի շարք ձեռագիր վավերագրերի պատճեններ, որոնք տպագիր շարվածքով ներկայացնելը որոշակի դժվարություն և վարպետություն էր պահանջում, և դա ձեռագրային արվեստին ու տպագրությանը հմուտ վարպետները կարող էին կատարել, ինչպես օրինակ՝ ձեռնադրված եպիսկոպոսներին կաթողիկոսի կողմից տրվող վկայականի արտապատկերումը: Կաթողիկոսական վավերագրերում կաթողիկոս բառի վրա գծագրվում էր խաչով պսակվող գմբեթ, որը գրքում հարազատորեն է վերարտադրվել:

Ս. Էջմիածնին և հայ ժողովրդի ազգահավաքմանը նվիրված բուն ասելիքը խտացված է երկրորդ գրքի վեցերորդ՝ «Յորդորակ առ ազգս հայոց» գլխում[219]: Վերջինիս ծավալուն խորագրում ասվում է, որ հայ ժողովուրդը Ս. Գրիգորին և Ս. Էջմիածինը պետք է ճանաչի որպես իր հոգևոր ծնողը և լուսավորության պատճառը, որի համար նրանց պետք է հնազանդ լինի՝ որտեղ էլ գտնվի, և նրանց հավատն ու դավանանքը անփոփոխ պահի:

Այս գլուխը հատկապես ուղղված է աշխարհասփյուռ հայությանը: Յավով ասում է, որ մեր ժողովրդի՝ տարբեր երկրներում գտնվող բոլոր հատվածներում նվազել է գրքի և ուսման հանդեպ սերն ու հետաքրքրությունը, և այն ավելորդ են համարում: Մտահոգությամբ նշում է, որ նման մոտեցումը հետին թշվառության կարող է հանգեցնել:

Կրթություն չստանալն է համարում հայերի մեջ լուսերականության և կաթոլիկության տարածման պատճառներից մեկը: Նույնը վերաբերում է նաև հայ հոգևորականներին, ովքեր չեն կարողանում արժանի պատասխան տալ օտար քարոզիչներին: Ասում է, որ Հայոց աշխարհը կրթված մարդկանց մեծ պակասություն, իր իսկ բնորոշմամբ՝ «սով» ունի:

---

218 **Սիմէօն Ա Երեւանցի,** Պարտավճար, 1779-83, էջ 6:

219 Նույն տեղում, էջ 264:



ԿԱԹՈՂԻԿՈՍ ԲԱՌԸ ԳՄԲԵԹԱԶԵՎ ԳԾԱԳՐՄԱՄԲ
«Պարտավճար», Ս. Էջմիածին, 1779-1783 թթ.

Հայ դավանաբանական գրականության մեջ շարունակ շեշտվել է 12 առաքյալների համապատասխությունը, այսինքն՝ համահավասար լինելը հետևյալ պատճառով: Կաթոլիկ եկեղեցին, վկայակոչելով Պետրոս առաքյալի համար ասված Հիսուսի «Ձի դու ես վէմ» (Մատթ. ԺԶ 18) խոսքերը, Պետրոսին համարում էր առաքյալների մեջ նախապատիվ: Քանի որ Պետրոս առաքյալն է համարվում Հռոմի աթոռի հիմնադիրը, ըստ այսմ և Հռոմեական եկեղեցին գերագահ պետք է համարվեր մյուսներից:

Հայոց եկեղեցու հայրերի հետևողությամբ մերժելով այս տեսակետը՝ Սիմեոն կաթողիկոսը ևս ընդգծում է, որ Հայոց եկեղեցին նույնպես առաքելական է՝ Հայաստանում քարոզած Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներով:

Այնուհետև գրում է Ս. Գրիգորի կրած առանձնակի չարչարանքների մասին:

Ասածու՝ հայ ժողովրդի հանդեպ առանձնահատուկ սիրո արտահայտությունն է համարում Միածնի էջքը, որով և գծագրվեց ու կառուցվեց Ս. Էջմիածինը:

Սիմեոն կաթողիկոսը գրում է, որ մեր ժողովուրդը, ցրված և տարածված լինելով ողջ աշխարհում, ի տարբերություն շատ ազգերի, չունի թագավորություն: Ահա այս պատճառով հայերը ուր որ հանգիստ և ապահով տեղ են գտնում, այնտեղ են գնում: Եթե իրենց հաստատված տեղում որևէ խռովություն է ծագում, ապա մի այլ տեղ են գնում: Հոգևոր առումով, սակայն, Ասածու շնորհիվ մնացել է մի հենարան Հայոց աշխարհում և մի առաջնորդ, որը հենարան է բոլոր հայերի համար. «Այս տեղիս և յենարանս է Սուրբ Էջմիածին, որ է բնիկ երկիրս մեր և է ընդհանրածին և շնորհատու Մայր հոգևոր ամենայն եկեղեցեաց հայկականաց: Նոյնպէս և Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ հայրապետութիւն որ ի սմա հաստատեալ կայ, որ է գլուխ և ծայրագոյն քահանայապետ բոլորի ազգիս հայոց՝ և միացուցիչ պարանոց ընդ գլխոյն Քրիստոսի»[220]:

Որպես ընդհանրացում ասում է. «Այս Սուրբ Աթոռս և սորին հայրապետութիւնն է մնացեալ կապ, յենարան, հաւաքօղ և միացուցիչ գլուխ, բռնետղ և պահապան միութեան՝ ցանկացիր և հանրասփիւռ ազգիս հայոց. և յատուկ նշան և սեպուհ տեղի պարծանաց ի հայրենեաց մնացեալ»[221]:

Քանի որ «Պարտավճարի» տպագրությունն ավարտվել է Սիմեոն կաթողիկոսի վախճանվելուց հետո՝ Ղուկաս Ա կարնեցու հայրապետության շրջանում, ուստի պատմվում է Սիմեոն կաթողիկոսի վախճանվելու և Ղուկաս կաթողիկոսի կողմից գրքի տպագրությունն ավարտին հասցնելու մասին:

Սիմեոնի մահը կաթողիկոսի ժամանակակիցները և այս գրքի հիշատակարանի հեղինակը պայմանավորում են 1770-ական թվականների

220 Նույն տեղում, էջ 320:

221 Նույն տեղում, էջ 322:

երկրորդ կեսին Արևելյան Հայաստանը ալեկոծած հարձակումներով և ավերածություններով: Այս շրջանում Երևանի խանը հարկատու էր վրաց Հերակլ երկրորդ թագավորին: Քանի որ խանը հարկերը չի վճարում, Հերակլը հարձակվում է Երևանի վրա՝ ավերելով շրջակա գյուղերը և Վրաստան տանելով դրանց բնակիչներին: Անձնական մտերմություն ունենալով Հերակլի հետ՝ Սիմեոն կաթողիկոսը մինչ այդ մի քանի անգամ հարթում է Հերակլի և Երևանի խանի միջև առաջ եկած վեճերը: Որպեսզի վրաց թագավորը խանի դեմ ռազմական գործողություններ չսկսի, կաթողիկոսը նրան է նվիրում տպագրական մի մամուլ:

«Պարտավճարի» հիշատակարանում ասվում է, որ Սիմեոն կաթողիկոսը գրքի մաքրագիր օրինակը տալիս է տպագրության, սակայն չի հասցնում տպագրության ավարտը տեսնել: Նա վախճանվում է առաջին հատորի տպագրվելուց հետո՝ ծանր տանելով այս հակամարտության պատճառով երկրին հասցված ավերները: Հայոց Հայրապետը հիվանդանում ու անկողին է ընկնում 1779 թ. նոյեմբերին և վախճանվում 1780 թ. հուլիսի 26-ին՝ Վարդավառի կիրակիին: Զգալով մոտալուտ վախճանը՝ կանչում է միաբաններին և պատվիրում, որ հետևեն գրքի տպագրության ընթացքին, որպեսզի չասվի, թե «սկսաւ և ոչ կարաց կատարել» խոսքերը:

«Պարտավճարի» և Եփրեմ վարդապետի հիշատակարանների նմանությունն առավել ակնհայտ է երևում Սիմեոն կաթողիկոսի հիվանդանալուն և Հերակլի արշավանքներին վերաբերող հատվածում, որտեղ կաթողիկոսի հիվանդանալը պայմանավորվում է նաև հիշյալ արշավանքով[222]:

Կաթողիկոսի տապանաքարին՝ «Պարտավճարին» համահունչ ձևով փորագրված դամբանականի առ Աստված ուղղված տողերում, որոնցում արտացոլվել է նաև կաթողիկոսության շրջանում իր կրած դժվարությունները և դառնությունները, ասվում է, թե դու կարգվեցիր մշակելու Քո այգին[223].

Իսկ ես անուամբ այս պաշտօնի
Գըտայ ծառայ ամենայնի,
Եւ որպէս թէ վպարտաւոր մի
Փոխատուաց վիս մատնեցի,
Ոյց ետու եւ ծառայեցի,
Վարձն իմ վսուգ և վցաւ առի,
Այսու կենօք ողորմելի,
Ժամանակս իմ վընճարեցի.
Այժմ ամօթով կամ առաջի,
Ձի ծառայել Քեզ չկարացի:

---

222 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Թ, խմբ. Գ. Տէր-Վարդանեանի, էջ 1146-1147:

223 **Արտակ եպս. Սմբատյանց,** Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, էջ 43, տես նաև **Հարությունյան Ա.,** Վաղարշապատ. Վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 306:

Ղուկաս կաթողիկոսը, իր գահակալության առաջին տարիներին զբաղված լինելով այլ հոգսերով, չի կարողանում գրքի տպագրությունն ավարտին հասցնել, սակայն 1783 թ. պատվիրում է անհապաղ ավարտել գրքի մնացած մասի տպագրությունը, որն իրականացվում է «բազմաւ զգուշութեամբ և հարազատօրէն»[224]։

Կ. Պոլսի նվիրակ Իսահակ վարդապետին 1783 թ. սեպտեմբերի 22-ի նամակում գրում է «Պարտավճարի» լույս տեսնելու մասին, ընդ որում նշում է, որ մինչ այդ ևս նրան գրել է գրքի լույս տեսնելու մասին։ Այստեղ ասվում է. «Պարտավճար գրքի ելանելն ի տպէն և մեր կազմել տալն և յղելն առ քեզ»[225]։

1785 թ. մայիսին «Պարտավճարի» տպագրված օրինակներ է ուղարկում Հնդկաստան՝ կից նամակով գրելով, որ Սիմեոն հոգելույս հայրապետն է սկսել գրքի տպագրությունը, որն ավարտել է ինքը[226]։ Նույն ամսին նամակ է գրում նաև Արղությանցին՝ կից ուղարկելով երկու օրինակ «Պարտավճարից»[227]։

«Պարտավճարի» տպագրության ավարտով սկսվում է Ս. Էջմիածնի տպարանի՝ Ղուկաս Ա Կարնեցու գահակալության շրջանի գործունեությունը։

Ինչպես որ Սիմեոն կաթողիկոսի հրատարակությունների բարերար հիշվում էր տպարանի հիմնադիր հնդկահայ Գրիգոր Ջաքիկյանցը, այնպես էլ, սկսած «Պարտավճարից», որպես Ղուկաս կաթողիկոսի իրականացրած հրատարակությունների բարերար հիշվում են հնդկահայ մի քանի այլ մեծահարուստներ։ «Պարտավճարի» տպագրության ծախսերը հոգացել է Նոր Ջուղայից Հնդկաստան փոխադրված Խաչիկ Պողոսյանը։

---

224 Պարտավճար, 1779-83, էջ 380:

225 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին,Ղուկաս Ա Կարնեցի (1780-1785), հտ. Ա, աշխտ. Վ. Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 388:

226 Նույն տեղում, էջ 524:

227 Նույն տեղում, էջ 530:

ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ղուկաս Ա Կարնեցու (կթղ. 1780-1799 թթ.) հայրապետության տարիներին շարունակվում և ընդլայնվում է Մայր Աթոռի տպարանի գործունեությունը: Տպագրական փորձ ձեռք բերած միաբանները նոր աստիճանի են բարձրացնում նաև հրատարակվող գրքերի տպագրական որակը:

Կաթողիկոսը, բարելավելով տպարանի շենքային պայմանները, այն փոխադրում է միաբանական սեղանատանը կից շինությունը: Ինչպես գրում է Հովհաննես եպս. Շահխաթունյանցը. «Զի յառաջին խահանոցն, որպէս գրեցաք, փոխադրեցին զգործարանն տպագրութեան: Ի սեղանատանէ աստի մտանեն ի սեղանատունն ձմռան ընդ երկուս դրունս. իսկ ի միջոցս այսոցիկ երկուց շինուածոց՝ տպագրատան և սեղանատան, է սրահ կամարայարկ... և արձան չիշատակագրութեան ջերմեռանդ նուիրանացն և անուան նորա և ազգայնոցն դնի արտաքուստ ի կամարի մեծի դրանն՝ որ ընդ մէջ տպարանին և սեղանատան»[228]:

Կարնեցու կաթողիկոսության առաջին տարիներին շարունակում է աշխատել նաև թղթի գործարանը: Այս մասին Վ. Գրիգորյանը գրում է. «Ընտրվելուց անմիջապես հետո Ղուկաս Կարնեցին խնամքով հետևել է թղթի գործարանի աշխատանքներին: Վարպետները կանոնավոր կերպով վարձատրվել են, և գործը առաջ է տարվել: Նամակներից երևում է, որ նա տարբեր տեղերից հնոտիներ էր բերել տալիս թղթի գործարանի համար: Էջմիածնի վանքի ելից մատյաններից մեկում հատուկ տեղ էր հատկացված գործարանի վրա կատարված ծախսերը գրանցելու համար: «Աստուծով մտաք ի ՌՄԼ (1781) թիւն մեր և սկսաք գրել թղթատան խարճն և մասրաֆն, - կարդում ենք այնտեղ,- թղթաշէն Նիկողայոսի բոլոր տարւոյ վարձն ետու Ա (1) թուման ՁՌ (6000) դիան, ձեռամբ աթոռակալ Աւետիք վարդապետին»: Նույն չափ գումար (յուրաքանչյուրին 1 թուման 6000 դիան) տրվել է նաև թղթի գործարանում աշխատող մյուս անձանց՝ Հովակիմին և Սաղաթելին՝ դարձյալ Ավետիք վարդապետի ձեռքով: Կարելի է կարծել, որ վերջինիս վրա է դրված եղել գործարանին հսկելու պարտականությունը»[229]:

---

228 **Հովհաննես եպս. Շահխաթունյանց**, Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հտ. Ա, Էջմիածին, 1842, էջ 102:

229 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, Ղուկաս Ա Կարնեցի, գիրք առաջին, (1780-85), աշխտ. Վ. Գրիգորյանի, էջ 42:

Թուղթն ստացվել է նույն եղանակով՝ հին շորերից, որի համար շարունակվել է նաև շորահավաքությունը Մայր Աթոռի նվիրակների միջոցով: 1781 թ. հուլիսի 12-ին Ախլցխայի ժողովրդին ուղղված գրության մեջ ասվում է. «Եւ հնոտի շոր եւս, որ ինչ վասն թղթաշինութեան ժողովիցի՝ զայն ևս դա պարտի յղել աստ. և դուք սիրելիքդ մեր պարտիք յօժարութեամբ տալ զհնոտիս, որքան և կարիցէք, որ ձեզ չէ ինչ ծանրութիւն, իսկ թղթաշինութեան Սրբոյ աթոռոյս է մեծ ձեռնտուութիւն և ձեզ պատճառ բարեաց վարձուց ի Տեառնէ»[230]:

Նույն այս գրության մեջ կաթողիկոսը նաև շնորհակալություն է հայտնում մինչ այդ տրված նվերների համար, որոնց թվում հիշում է նաև «Ա (1) հակն, զոր յաղագս թղթաշինութեան»[231]:

Փաստերի համադրումը ցույց է տալիս, որ հիմնավորված չէ Մսեր Մսերյանցի այն պնդումը, թե կարնեցին «ձեռն էարկ քանդել զբազմածախ գործարանն թղթոյ... և ի կոփածոյ քարանց նորին շինել զլիճ ընդարձակ ի լուացումն գոմշոց յամարանի»[232]: Կարնեցու կաթողիկոսության շրջանին ժամանակով ավելի մոտ միաբաններից Հովհաննես եպս. Շահխաթունյանցը հստակորեն գրում է, որ թղթագործարանը, դուրս գտնվելով վանքի պարսպից, ավերվել է դեպ Արարատյան դաշտ կատարված ասպատակությունների ժամանակ[233]:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ե՞րբ է ավերվել գործարանը, Վ. Գրիգորյանը գտնում է, որ դա տեղի է ունեցել 1781-84 թթ. միջև՝ հետևյալ փաստարկմամբ: 1781 թ. սկզբին թղթի գործարանն աշխատել է և, ինչպես տեսանք, կաթողիկոսը տվել է թղթի պատրաստման վարպետ Նիկողայոսի և թղթագործարանի մյուս աշխատողների մեկ տարվա գումարը:

Միաժամանակ 1784 թ. գարնանը այն արդեն չի գործել, քանի որ այդ ժամանակ կարնեցուն Կ. Պոլսի նվիրակ Իսահակ վարդապետը գրում է, որ ցանկանում է դրամահավաքություն կատարել՝ գործարանը վերականգնելու համար: Հետևաբար այն արդեն չի գործել: Ի պատասխան՝ կաթողիկոսը գրում է. «Իսկ վասն թղթատանն, որ ցաւելով գրես, մի՞թէ մեք ոչ ցաւիմք, այլ ժամանակս ձեռնտու չէ, մանաւանդ՝ խղճալի Նիկողայոսն ևս վախճանեցաւ և նոյն արհեստին այլ գիտօղ ոչ գոյ»[234]:

Ժամանակները բարենպաստ չեն եղել, և կաթողիկոսը վախեցել է, որ գործարանը նորից կավերվի: Նաև թուղթ պատրաստելու եղանակը իմա-

---

230 Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, աշխտ. Գիւտ ավ. քհնյ. Աղանեանցի, Թիֆլիս, 1899, էջ 91:

231 Նույն տեղում, էջ 89:

232 **Մ. Մսերյանց,** Պատմութիւն կաթուղիկոսաց Էջմիածնի, Ի Սիմէօնէ մինչ ցՅովհաննէս Ը, 1763-1831, Մոսկվա, 1876, էջ 11-12:

233 **Հովհաննես եպս. Շահխաթունյանց**, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հտ. Ա, Էջմիածին, 1842, էջ 100:

234 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 42:

ցող Նիկողայոս վարպետը, ով 1781 թ. ողջ էր և հիշվում է ելից մատյանի գրության մեջ, արդեն վախճանվել էր։

«Պարտավճարի» տպագրությունն ավարտվել է 1783 թ.։ Վերջինիս մամուլները տպագրված են Ս. Էջմիածնի ջրանշանն ունեցող թղթով։ Այստեղից կարելի է ենթադրել, որ գրքի տպագրությունն ավարտվել է կա՛մ Սիմեոն կաթողիկոսի ժամանակվանից մնացած թղթով և կա՛մ տպագրվել է Ս. Էջմիածնում Ղուկաս Ա կարնեցու ժամանակ պատրաստված թղթով, առավել ևս, որ գոնե 1781 թ. սկզբին տպարանն աշխատել է, հետևաբար թուղթ է արտադրվել։

«Պարտավճարից» հետո առաջին գիրքը, որն սկսում է տպագրվել Կարնեցու օրոք, «Ատենի ժամագիրքն» է։ Այն ունի 426 էջ։ Վերջինիս տպագրվելու ժամանակ թղթի գործարանն այլևս չէր աշխատում։ 1785 թ. գրքի տպագրության ընթացքում Կ. Պոլսի Նվիրակ Իսահակ վարդապետին գրած նամակում կարնեցին ասում է, որ երբ տպագրել են «Տոնացույցի» երկրորդ հատորի երկրորդ մամուլը (տետրը), թուղթը վերջացել է։

«Ատենի ժամագիրքը» կազմված է «Սաղմոսարանից», «Ժամագրքից» և «Տոնացույցից», որը գտնվում է գրքի վերջում, և նրա երկրորդ մասը կամ երկրորդ հատորն սկսվում է 339 էջից։ Ըստ այդմ՝ երկրորդ հատորի երկրորդ մամուլն սկսվում է մոտավորապես 356 էջից։ Նշանակում է, որ գրքի մեծ մասը տպագրվել է դեռևս Էջմիածնում եղած թղթով, որից հետո կաթողիկոսը Կ. Պոլսի Նվիրակին գրել է, որ թուղթ ձեռք բերի և ուղարկի Էջմիածին[235]։

Իսահակ վարդապետին գրված հաջորդ նամակում կարնեցին ասում է, որ հնարավորինս շուտ ուղարկեն թուղթը. «Ատենի ժամագրքի թղթոյն աղագաւ, որ գրեալ էիր, թէ առնելոց եմ և ծովով յղելոց, յոյժ բարւոք լինի, թէ օր մի յառաջ յղեալ իցես, քանզի այնքան յամեցաւ, որ ի լրոյն մեք ևս տաղկացաք։ Աստուած տայ թուղթն հասանի և աւարտեալ զերծուցուք ի հոգոց սորին»[236]։ Ինչպես կտեսնենք, «Ատենի ժամագրքի» շարվածքը և տպագրությունը բավականին դժվարությամբ էին առաջ ընթանում, որի համար կաթողիկոսը շտապում էր օր առաջ տպագրված տեսնել այն։

Թղթի ձեռքբերման և ընդհանրապես տպագրական աշխատանքներն առաջ տանելու կաթողիկոսի ջանքերում արտացոլվել է նաև ժամանակի իրապես ողբերգական պատկերը, և թե այդ պայմաններում ինչպես են հայ գրատպության ջահը Սուրբ Էջմիածնում վառ պահել մեծագործ երկու հայրապետները։

Ե՛վ Սիմեոն, և՛ Ղուկաս կաթողիկոսների ժամանակ տպագրության բարերար հնդկահայ մեծահարուստները բողոքել են, երբ ձգձգվել է այս կամ այն գրքի տպագրությունը։ Նման դժգոհություններից մեկին ի պատասխան՝ Ղուկաս կաթողիկոսը ժամանակի իրականության և այդ պայ-

235 Նույն տեղում, էջ 518:

236 Նույն տեղում, էջ 522:

մաններում գործող տպարանի մասին գրում է. «Մտածեա՛ զորպիսութիւն ամենազուրկ երկրիս, յորում ոչինչ գտանի ի պիտոյից այսր գործոյ, և մինչ զմին հոգամք, միւսն ոչ լինի, և թէ զայն գտանեմք ի հեռուստ, այլն պակասին»[237] (Պատկերացրո՛ւ ամեն ինչից զուրկ երկրիս վիճակը, որում տպագրության գործի համար պիտանի ոչինչ չես կարող գտնել, և մինչև մեկն ենք հոգում, մյուսն է պակասում, և թե այն ենք գտնում հեռվից, մեկ ուրիշն է պակասում)։

Ապա ներկայացնում է թղթի և տպագրության հետ կապված դժվարությունները «Ատենի ժամագրքին» մաս կազմող երեք գրքերի տպագրության օրինակով։ Ասում է, թե մինչև «Սաղմոսարանն» ու «Ժամագիրքը» ավարտում են, մեծ չափի թուղթը վերջանում է, և շրջակա վայրերում չեն կարողանում լավ թուղթ գտնել, որպեսզի գնեն, և դիմում են Կ. Պոլսի նվիրակին, որ այնտեղից ուղարկի։ Թուղթը երբ հասնում է, տպագրական մեծ մամուլն (մեծ դազգահն)է խափանվում, և ստացված թղթի վրա փոքր մամուլով սկսում են տպագրել Հովսեպիոսի «Պատմությունը», մինչև մեծ մամուլը նորից նորոգում են։

Կաթողիկոսական դիվանի գրագրություններից երևում է, որ ճանապարհների անապահովությունը, ինչպես նաև տպագրության ընդլայնման և բարձրորակ գրքեր տպագրելու կաթողիկոսի ձգտումը հետզհետե դժվար իրագործելի են դարձել համապատասխան ծավալով և որակով թուղթ ձեռք բերելու պատճառով։ Ինչպես գրում է Վ. Գրիգորյանը. «Ղուկաս Կարնեցին ձգտում էր էջմիածնի վանքն ապահովել լավորակ թղթով, և հրատարակված գրքերը, ինչպես և նամակներն ու կոնդակները վկայում են, որ նա հաջողությամբ էր լուծել այդ խնդիրը։ Նամակների մեջ հաճախ է խոսվում թուղթ գնելու անհրաժեշտության մասին, և նա բծախնդիր կերպով էր տալիս այդօրինակ հանձնարարությունները և երբեմն էլ պահանջված թղթի նմուշներն ուղարկում էր հասցեատերերին»[238]։ Նաև իր վերաբերմունքն է արտահայտում ստացված թղթի որակի մասին։ Կ. Պոլսի նվիրակ Իսահակ վարդապետին 1783 թ. սեպտեմբերի 22-ին գրած նամակում ասում է. «զԺԲ (12) օզմայ [չափի միավոր] քեասիկ քեանար թուղթ և զԺ (10) դաստայ Ստամպօլու օրթայ թապղայ թուղթ էիր առեալ և մերայնոց իրօքն մէկ բեռն շինեալ և յղեալ ծովովն Պոնտոսի՝ ի հասանիլ Մինաս վարդապետին մերոյ ի Կարին»[239]։ Այստեղ նշվում է երկու տեսակի թղթի մասին, որոնք ոչ թե Միջերկրական ծովով Կ. Պոլիս, այլ Սև ծովով Կարին են ուղարկվել։ Կաթողիկոսը գրում է, որ հավանել է ուղարկված թուղթը։

Էջմիածինը նաև կաթողիկոսական և հայ գրչության կենտրոն էր, ուստի թուղթը, ընդ որում՝ լավորակ, անհրաժեշտ էր ոչ միայն տպագրութ-

237 Նույն տեղում, էջ 539։

238 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, Ղուկաս Ա Կարնեցի, գիրք երկրորդ, աշխտ. Վ. Գրիգորյանի, Երևան, 2003, էջ LXXIX։

239 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 388։

յան, այլև ձեռագրեր և կոնդակներ գրելու համար: Կարնեցին 1788 թ. մայիսին Կ. Պոլսի նվիրակ Մինաս վարդապետին գրում է, որ «միջակ թապաղա» (միջին մամուլաչափի) թուղթ առնի և ուղարկի Մայր Աթոռ «վասն ծաղկելոյ եւ գրելոյ»[240]: Իր ցանկացած թղթից կես մամուլ, որպես նմուշ, ուղարկում է նվիրակին՝ «յղեցաք վասն օրինակի»:

Այստեղ թուղթը նախ ծաղկելու՝ ձեռագիր և կոնդակ գրելու համար է նշում, և ապա՝ տպագրության, քանի որ ձեռագրերի համար թուղթն ամեն օր էր հարկավոր, իսկ այդ շրջանում գրքերը տպագրվում էին ավելի հազվադեպ: Ուղարկված նամակից երևում է նաև կաթողիկոսի քաջիմացությունը ժամանակի թղթի տեսակներին՝ թե՛ ողորկության և թե՛ հաստության առումով: Գրքերի և զարդագիր կոնդակների համար անհրաժեշտ էր սպիտակ և բարակ թուղթ, որպեսզի նաև գրքերն արհեստականորեն ավելի մեծածավալ ու ծանր չլինեին՝ դժվարացնելով դրանց փոխադրումը մինչև նավահանգիստներ և ապա Եվրոպա ու Հնդկաստան: Ջգուշացնում է, որ այն թղթերը, որոնք «իբրև կաշի հաստք են և դեղնաշորթ գունով, եւ կոկ, եւ դաստայքն ղուպուրակերպ ծալեալք», դրանցից չառնի, որովհետև դրանք «վատանիւթք են, և գրելոյ ամենեւին անձեռնտուք»: Հարկավոր էր գնել «որք բարակակողմն են և սպիտակք, և անծալք, յայնցանէ լիցի առեալդ», որը «հարկաւորապէս պիտոյանայ»[241]:

1790 թ. օգոստոսի 16-ին Մինաս վարդապետին գրած թղթում ցավով ասում է, որ Մայր Աթոռ հասնելու ճանապարհին ուղարկված թղթի մեծ մասը Բայազետի մոտ առվի մեջ է ընկել, որից «ապականեցաւ եւ անպէտ եղև»[242],ուստի «Շարակնոցի» շարունակությունը տպագրում են «անյարմար» թղթի վրա:

1791 թ. դեկտեմբերի 31-ին Շահամիր Շահամիրյանին ուղղված և արդեն հիշված գրության մեջ ևս պատմում է այս մասին: Ասում է, որ «Շարակնոցի» բոլոր օրինակների մեծ մասը «թանձր եղեն», այսինքն՝ հաստ թղթի վրա տպվեցին, որովհետև, երբ սկսում է տպագրությունը, բարակ թուղթը քիչ է լինում, և Մինաս վարդապետին գրում է, որ հակերով բարակ թուղթ ուղարկի, որոնք, սակայն, ջուրն են ընկնում՝ դառնալով տպագրության համար ոչ պիտանի, որը «մեծ ցաւ եղև մեզ, ապա հաստ թղթով տպագրեցաք զմնացորդն, բաց ի սակաւուց»[243]:

Կաթողիկոսը նաև հետամուտ է լինում տպագրական նոր սարքավորումների ձեռքբերմանը:

Տպագրության ընթացքի արագացմանը նպաստում է վրաց Հերակլ երկրորդի նվիրած տպագրական մեծ մամուլի տեղադրումը: 1784 թ.

---

240 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 370:

241 Նույն տեղում:

242 Նույն տեղում, էջ 551:

243 Նույն տեղում, էջ 683:

փետրվարի 15-ին կաթողիկոսը շնորհակալական թուղթ է գրում Թիֆլիս՝ այս սարքավորման վարպետ Բաղդասարի մորը՝ Լալիթարսին, որ նրա որդին եկել է Մայր Աթոռ և տեղադրել թագավորի տված տպագրական մամուլը. «Զի եկեալ նա յԱթոռս, զՀերակլ արքայի Վրաց ընծայեալ տպագրութեան դազկեահն յարմարապէս կառոյց ի տպարանի մերում»[244]:

1784 թ. մարտին գրված մի նամակում արդեն ասվում է, որ տպագրությունը կատարվում է «նորակերտ մեծ դազկեահոջն»[245]: Տպագրական մեծ մամուլի մասին գրում է նաև նույն թվականի նոյեմբերի 18-ի նամակում՝ ասելով, որ «Ատենի ժամագրքի» տպագրությունը երբ սկսում էին, դեռևս մեծ մամուլը չկար, որի համար «ի փոքր դազկեահոջ մերում կրկնապատիկ աշխատութեամբ տառապեցաք մինչև ցՍաղմոսի վերջն»[246]: Այստեղ ներկայացնում է նաև տպագրության ընթացքը: Տպագրական մեծ մամուլով մեկ մամուլ՝ տետրակ կամ «թապաղայ», որն ուներ 16 էջ, միանգամից տպագրում էր 8 թերթ կազմող թղթի երկու երեսները, որով մեկ մամուլ կազմող ողջ թուղթն էր տպագրում:

Տպագրական փոքր մամուլը, սակայն, 8 էջ էր տպագրում, ինչը, կաթողիկոսի բնորոշմամբ, տաժանելի էր: Այդ ժամանակ քանի որ չկար էլեկտրականությամբ աշխատող ավտոմատ մամուլ, այլ ձեռքի մամուլ էր, աշխատանքը բազմապատկվում էր: Ինչպես կաթողիկոսն էր ասում, այդ եղանակով մեկ գիրք տպագրելու համար 6 գրքի տպագրության աշխատանք էին կատարում:

16 էջ տպագրող տպագրական մամուլը Հերակլից են խնդրում, որը բերում են «ճարտար վարպետօք հանդերձ» և տեղադրում էջմիածնի տպարանում[247]:

Կաթողիկոսը գրում է, որ տպարանի համար անհրաժեշտ նյութերը տարբեր երկրներից են բերում, անգամ տպագրական ներկի (մրի) համար անհրաժեշտ փայտն են այլ տեղերից բերել տալիս[248]:

Տպագրական ներկը մեծ կարևորություն ուներ տպագրության որակի համար: Կարելի է ասել՝ տպագրական ներկն էր տպագրության դեմքը, եթե այն լավ չտպվեր թղթին, ապա կարժեզրկվեին լավ շարվածքն ու փորագրապատկերները:

Կաթողիկոսական դիվանի վավերագրերից երևում է, որ Ղուկաս կաթողիկոսի ժամանակ թուղթը եթե բերվել է դրսից, ապա տպագրական ներկը պատրաստվել է Մայր Աթոռում: Կաթողիկոսը 1787 թ. Կ. Պոլսի Մի-

---

244 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռգ. հմր. 2803, 1781-86 թթ., թերթ՝ 203ա, տես նաև Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Թ, խմբ. Գ. Տէր-Վարդանեան, Երևան, էջ 664:

245 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 407:

246 Նույն տեղում, էջ 481:

247 Նույն տեղում, էջ 481-482:

248 Նույն տեղում, էջ 482:

նաս նվիրակին, ի թիվս այլ իրերի, պատվիրում է գնել «գազանի» մորթի՝ «ի պէտս մրազարկութեան տպարանին»[249]: Հետևաբար տպագրության ներկը պատրաստել են թե՛ փայտից և թե՛ կենդանիների մորթուց:

Տպագրված մամուլներն այնուհետև «փռում էին», որպեսզի չորանան, և ներկը չտարածվի ու չմրոտի էջերը: 1788 թ. դեկտեմբերի 31-ին Արղությանցին գրած նամակում կաթողիկոսն ասում է. «Ձխորհրդատետրն ևս նորապէս տպագրեցաք, այլ դեռեւս տետերքն ոչ են ցամաքեցեալ, առ այն և ոչ են կազմեցեալք տակաւին»[250]: Տպագրված մամուլներն այս դեպքում ուշ են չորացել, որովհետև դեկտեմբերի վերջն է եղել:

Մեկ այլ թղթում՝ գրված 1791 թ., դարձյալ դեկտեմբերի 31-ին, արդեն «Շարակնոցի» համար նույն ձևով ասում է, թե այն շուտ է տպագրվել, սակայն տպագրության ներկը չի չորանում[251]:

Տպագրությունից հետո սկսվել են կազմարարական աշխատանքները, որոնք ևս բարձր վարպետությամբ են իրականացվել: Առանձին օրինակներ ավելի փառակազմ են եղել: Գրքերը, հատկապես կաթողիկոսի կողմից անվանապես ուղարկվածները, կաշեկազմ էին: Որպեսզի կաշին չծալվեր, կազմին հղկված հատուկ փայտ էին դնում, ապա այն պատում կաշվով: Կազմի այս փայտն անվանվում էր «կողացու տախտակ»: Կարսեցի Գևորգ աղային կաթողիկոսը 1790 թ. փետրվարին գրում է. «Այժմ խնդրեմք զԱՃ [100] հատ գրքի կողացու տախտակ»[252]: Ապրիլի 16-ին նույն Գևորգ աղային շնորհակալական նամակ է գրում «վասն կողացու Լե [35] տախտակացն»՝ ասելով, որ մյուսները ևս ուղարկի[253]:

Էջմիածնի տպարանում կազմված մի շարք գրքեր գտնվում են Մայր Աթոռի գրադարանում, Մաշտոցի անվան Մատենադարանում և Ազգային գրադարանում, որոնք նկատի ունենալով՝ Ռ. Իշխանյանը գրում է. «Այս թվականներին Էջմիածնում տպագրված գրքերն ունենում էին զարդանկար կաշեպատ կազմեր, որոնց մի մասը արվեստի իսկական գործեր են»[254]:

Բարձր վարպետություն էր պահանջում նաև գրքերի եզրերը ոսկե թերթերով պատելը, որն անվանվում էր «վարաղով զարդարեալ»[255]:

Տպագրության համար գործադրված ջանքերը տալիս են իրենց արդյունքը, և 1787 օգոստոսի 25-ին Շահամիր Շահամիրյանին ուղղված նամակում կաթողիկոսը գրում է. «Նաև տպարանն մեր անխափան ի բանի է»[256]:

---

249 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 309, 313:

250 Նույն տեղում, էջ 427:

251 Նույն տեղում, էջ 683:

252 Նույն տեղում, էջ 524:

253 Նույն տեղում, էջ 532:

254 **Ռ. Իշխանյան,** Հայ գիրքը 1512-1920 թթ., էջ 98:

255 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 462:

256 Նույն տեղում, էջ 276:

Նման դժվարություններով տպագրված գրքերը, բնականաբար, թանկ էին արժենալու։ Վ. Գրիգորյանը, հաշվելով ժամանակի դրամական միավորների՝ Արևելյան Հայաստանում ունեցած արժեքը և դրանք հարաբերելով գրքերի գների հետ, գրում է. «Գրքերը բավականին թանկ էին և մատչելի միայն ունևորներին։ Նրանց գինը հասնում էր մինչև 3 ղուռուշի (1 ղուռուշը հավասար էր 40 փարայի)՝ այն ժամանակվա համար զգալի մի գումար։ 1769 թ. տվյալներով մշակների օրավարձը 2 շահի էր (այսինքն 6,2 փարա), իսկ բեռնակիրներինը՝ 8 փարա։ Հետևապես մեկ «Տոնացույց» գնելու համար, որն արժեր 3 ղուռուշ, հասարակ մշակը պետք է աշխատեր ավելի քան 20 օր, իսկ բեռնակիրը՝ 15 օր»[257]։

Կաթողիկոսը ևս նշում է, որ դժվարությամբ տպագրվելու պատճառով գրքերը թանկ արժեն։ Ռուսահայոց թեմի առաջնորդ և նվիրակ Հովսեփ արքեպս. Արղությանցին ուղարկելով 22 «Ատենի ժամագիրք» և Հովսեպիոսի «Պատմություն» 20 օրինակ՝ այս գրքերի համար գրում է, որ դրանց ծախսը «ի վերայ մեր ծանր նստեալ, ըստ որում զամենայն պիտոյսն դժուարութեամբ առձեռն բերեմք, որպէս եւ դու գիտես, այլ ի տեղս էՌ (7000) դեանի զԱտենին տամք և ԳՌ (3000) դեանի զՅովսեպոս Պատմագիրքն»[258]։

Ինչքան դժվար էր տպագրության համար անհրաժեշտ թուղթը Մայր Աթոռ բերելը, նույնչափ դժվար էր և տպագրված գրքերի առաքումը կազմակերպելը՝ նվիրելու կամ վաճառելու համար։ Առաքումը ևս բարձրացնում էր գրքերի տպագրության ինքնարժեքը։ 1789 թ. փետրվարին գրած նամակում Բաղդադում Մայր Աթոռի ներկայացուցիչ պարոն Փանոսին գրում է, որ Բաղդադից Երևան եկած վաճառական Խանբաբյանցի միջոցով ուղարկում է 25 «Ատենի ժամագիրք», 20 «Խորհրդատետր», 20 «Սաղմոս» և Հովսեպիոսի «Պատմություն» 1 օրինակ։ Մայր Աթոռի ներկայացուցչին ասում է, որ գրքերը բերած վաճառականին տան փոխադրության ծախսը[259]։

Ուղարկված գրքերի մի մասը կաթողիկոսը նվիրում էր հատկապես եկեղեցիներին։ Բաղդադ ուղարկված գրքերից Կարնեցին պատվիրում է 1 օրինակ «Խորհրդատետր» տալ Բաղդադի եկեղեցուն, որպեսզի «բանեցնեն քահանայքն ի յիշատակ Սրբոյ Աթոռոյս»։

Գրքերն ուղարկվում էին կնքված հակերի և արկղերի մեջ դրված։ Մաքսատներում, սակայն, կնիքները պոկում էին, ուստի գրքերին կից մի ցուցակ էր ուղարկվում, որպեսզի հասցեագրված վայրերում իմանային՝ որ գրքից քանի օրինակ է առաքվել։ 1788 թ. հունվարին Կ. Պոլսի նվիրակ Մինաս վարդապետին գրում է կից ուղարկվող ցուցակի մասին. «Այլ մուղայէթ լէր մեծաւ հոգացողութեամբ, զի թէ արկղն գրեանց յայդր ի

257 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 41-42:

258 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 427:

259 Նույն տեղում, էջ 447:

մաքսարանին բանայցեն, գիրք չպակասիցի, քանզի իւրաքանչիւրքն պատուաւոր անձանց աղագաւ առաքին, եւ ի թուղթս նոցա գրեցեալք են, եւ թէ մի գուցէ պակաս լինիցի, ամօթ է առ բերելոց մեզ և նուիրակին: Վասն որոյ է զգուշութիւն գրելս»[260]:

Նույն այս գրության մեջ նշում է գրքերի առաքման երթուղին մինչև Հնդկաստան: Էջմիածնից գրքերը կարինի (Էրզրում) վրայով տարվում էին Կ. Պոլիս, որտեղից ծովային ճանապարհով՝ Բաղդադ, ապա Բասրայով՝ Հնդկաստան:

18-րդ դարի երրորդ քառորդում հայ-վրացական հարաբերությունների առանձին էջ են կազմում Ս. Էջմիածնի տպարանի հետ կապված դրվագները: Սիմեոն, ապա և Ղուկաս կաթողիկոսները վրաց թագավորին օգնում են արտաքին աշխարհի հետ կապված մի շարք հարցերում՝ Կ. Պոլսից մինչև Եվրոպա և Պարսկաստանից մինչև Հնդկաստան:

Քաջ գիտակցելով տպարանի կարևորությունը՝ Հերակլը ժամանակի չափանիշներով արդիական տպարան է հիմնում Թիֆլիսում՝ մեծապես օգտվելով Ղուկաս կարնեցու աջակցությունից: Կաթողիկոսի միջամտությամբ Թիֆլիս է գալիս պոլսահայ նշանավոր տպագրիչ Պողոս Արապյանը (1742-1835 թթ.), ով Ակն գավառի Ապուչեխ բնակավայրից էր: Նա հայերեն տպատառեր փորագրելու և ձուլելու նշանավոր վարպետ էր:

Վրաց Հերակլ Երկրորդի հետ 1780 թ. կնքված պայմանագրով իր աշակերտի հետ գալիս է Թիֆլիս և զբաղվում վրացական նոր տպարանի հիմնադրման աշխատանքներով: Վրաց թագավորը նրա հետ պայմանագիր է կնքում, որը վավերացվում է թագավորական կնիքով և երկու վկաների ստորագրություններով[261]: Պայմանագրի հայերեն տարբերակում ասվում է. «Անդ տպագրատուն իմն հաստատեալ զբոլոր տառս վրաց ի չէլիկ փորագրեալ, ապա ի պղինձ ֆօրմայ արարեալ և անտի յարճիճ թափեալ, զոր ինչ գիրք խնդրեսցեն՝ զտառս շարեալ լաւագոյն մրով ի թէսզեաղ կալեալ գիրք տպելոց եմ»[262]: Հետևաբար պարտավորվում է գծել և փորագրել վրացերեն տպատառերը, ապա պատրաստել դրանց պղնձյա կաղապարները և կապարյա տառեր ձուլել՝ ըստ այդ կաղապարների:

Պայմանագրից երևում է, որ նա մի քանի տեսակի տպագրական տառեր է պատրաստել, քանի որ ասվում է, թե ինչ գիրք ցանկանան՝ կտպագրի, այսինքն՝ տառատեսակները բազմաձև շարվածքների հնարավորություն են տալիս: Նաև՝ տպագրությունը կիրականացվի տպագրական լավագույն ներկով՝ մրով:

Պայմանագրում կար մի շատ կարևոր կետ, որը վերաբերում էր տպագրիչ վարպետի ստանձնած բարոյական հետևյալ պարտավորությանը.

260 Նույն տեղում, էջ 327:

261 **Ա. Ադամյան,** Վրաց Հերակլ Բ թագավորի և տպագրիչ Պողոս Հովհաննիսյանի պայմանագիրը, «Բանբեր Մատենադարանի», հմր. 3, Երևան, 1956, էջ 115-120:

262 Նույն տեղում, էջ 118:

«Եւ քանի աշակերտ, որ յանձնեսցեն ինձ, զբովանդակ արհեստն տպագրութեան, աննախանձ և առանց ինչ թագուցանելոյ ուսուցանել նոցա, մինչև առանձին զնոսին հմուտ տպագրիչ առնելոյ ջան դնելոց եմ, ըստ ընդունակութեան իւրեանց, բաց ի ծաղկագրաց և ի պատկերաց և ի կարմիր ներկով գլխագրաց և կամ ի խորագրաց, զի ես ոչ գիտեմ զփորագրութիւնս ծաղկագրաց և պատկերաց, և զխառնուածս կարմիր ներկին»[263]։

Համաձայն պայմանագրի հիշյալ կետի՝ Արապյանը ոչ միայն պարտավորվում է վրացական տպագրական տառեր պատրաստել, այլև որքան աշակերտ իրեն կհանձնեին, նրանց բոլորին սովորեցնել իր ողջ իմացածը՝ առանց նախանձելու, որ իր վարպետությունը փոխանցում է աշակերտներին։

Պայմանագիրն այնքան մանրակրկիտ է կազմված, որ ասվում է, թե բոլոր աշակերտների հետ պետք է շարունակի պարապել, մինչև նրանցից յուրաքանչյուրը տիրապետի այդ արհեստին իր կարողությունների չափով։ Նման մանրակրկիտությունը վկայում է, որ մինչ այդ Արապյանը պետք է որ աշակերտներ ունեցած լիներ Պոլսում՝ ձեռք բերելով մանկավարժական նրբություններ նման փորձ։

Միաժամանակ նշում է, որ ինքը զարդագրերի ու փորագրանկարների պատրաստման արվեստին չի տիրապետում։ Ինչպես տեսանք, մինչև 18-րդ դարի կեսերը գրատպության մեջ տարածված էր մի շարք դեպքերում տիտղոսաթերթին խորագիրը և շարվածքում տարբեր զարդատառերը կարմիրով տպագրելը, ինչն առանձնակի վարպետություն էր պահանջում, քանի որ էջի մնացյալ տառերը և փորագրությունները սև էին։ Նաև վառ և պայծառ կարմիր գույնի ներկ ստանալը պատրաստության հատուկ եղանակ էր պահանջում։ Ուստի այստեղ Արապյանը նշում է, որ ինքը չգիտի կարմիր գույնի պատրաստման բաղադրությունը։

Պայմանագիրը, ըստ երևույթին, այսպես մանրակրկիտ ձևով է պատրաստվել, որպեսզի հետագայում փոխադարձ պայմանավորվածությունների շուրջ որևէ վեճ կամ թյուրիմացություն չառաջանա։

Ոչ միայն տպագրական տառատեսակներն ու դրանց կաղապարները պատրաստելու, այլև աշակերտներին նույնը սովորեցնելու պարտավորությունը հիշեցնում է Ֆրանսիացի երկու վարպետների պահվածքը, երբ, ինչպես տեսանք, նրանք ամեն կերպ խուսափում էին Մայր Աթոռի միաբաններին սովորեցնել թուղթ պատրաստելու արվեստը։

Կաթողիկոսական դիվանում 1781 թ. դեկտեմբերի ներքո Արապյանի՝ Թիֆլիսի գործունեության մասին ասվում է. «Որ գնացեալ անդ վասն Վրաց տպագրատուն հաստատէր և զգիրս կերտէր»[264]։ Այս խոսքերից երևում է, որ Արապյանը վրացերեն տառատեսակներ է պատրաստել։

---

263 Նույն տեղում, էջ 118-119:

264 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 277:

Տպագրական տերմինների ձևավորման այս շրջանում տպագրիչի փոխարեն ասվում էր տպագիր: Արապյանը սարկավագական աստիճան է ունեցել, ուստի կաթողիկոսական դիվանի գրություններում նա երբեմն անվանվում է նաև «տպագիր տիրացու Պօղոսն»[265]: Առավել տարածված է, սակայն, «տպագիր Պօղոսն» ձևը:

Քանի որ Արապյանը 1774 թ. ևս եկել էր Թիֆլիս, կարելի է ենթադրել, որ այդ ժամանակ է նա ծանոթացել վրաց գրերին, քննարկել տպատառերի նմուշների ձևերը, կատարել դրանց գծագրումը, ապա օրինակներն իր հետ տարել Պոլիս՝ ամբողջացնելու: Այնտեղ սկսելով նախապատրաստական աշխատանքները՝ նորից եկել է Թիֆլիս և պայմանագրի կնքումից հետո ձեռնամուխ է եղել տառատեսակների կաղապարների պատրաստմանը:

Արապյանը կաթողիկոսին է դիմում պատրաստված կաղապարներով տառեր ձուլելու համար՝ «զանթիմոնախառն կապար» ուղարկելու խնդրանքով[266]:

Պատասխան նամակում կաթողիկոսը գրում է, որ թեև Մայր Աթոռին չի բավականացնում ունեցած կապարը, սակայն մի որոշակի քանակություն ուղարկում է Թիֆլիս, որպեսզի նոր պատրաստված կաղապարներում պոլսահայ տպագրիչը սկսի ձուլել տառատեսակները: Հետևաբար Թիֆլիսի նոր տպարանի տառատեսակները պատրաստ կարող էին լինել 1781 թ. դեկտեմբերի վերջից ոչ շուտ:

Առաջին հրատարակությունը լույս է տեսնում 1782 թ.: Այն 30 էջից բաղկացած գրքույկ է, որը նվիրված է նոր հիմնադրված տպարանին և ունի «Գովք նոր տպարանի» վերնագիրը:

1783 թ., դարձյալ Արապյանի ղեկավարությամբ, լույս է տեսնում 320 էջից բաղկացած «Կոնդակի» գիրքը, որը Մաշտոց ծխարանի՝ Վրաց եկեղեցու համարժեքն է:

1783 թ. փետրվարին Հերակլին գրած նամակում Կարնեցին շնորհավորում է «վասն նորակերտ տպագրատանն»՝ ասելով, որ ստացել է այնտեղ տպագրված առաջին գիրքը և տառատեսակը շատ է հավանել՝ «տեսանելով զպարզութիւն և զբարեձևութիւն գրոցն»[267]: Կարնեցին անգամ հայերեն է թարգմանել տվել այդ գրքույկը: Հետևաբար 1781-82 թթ. եղել են վրացական տպարանի հիմնադրման և գործարկման տարիները:

Ավարտելով աշխատանքները՝ Արապյանը 1784 թ. գալիս է՝ օգտակար լինելու նաև էջմիածնի տպարանին[268]:

Հայոց կաթողիկոսները քանի որ Կ. Պոլսի և Զմյուռնիայի իրենց նվիրակների միջոցով մշակել էին էջմիածին թուղթ հասցնելու միջոցներն ու

---

265 Նույն տեղում, էջ 413:

266 Նույն տեղում, էջ 272:

267 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռգ. հմր. 2803, թերթ՝ 74բ:

268 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 413:

ուղիները, ուստի Հերակլը կարնեցուց քանիցս խնդրում է այս կամ այն գումարի չափով թուղթ ուղարկել Թիֆլիս, քանի որ հսկայական ճանապարհ հաղթահարելուց հետո թուղթը եթե Ս. էջմիածին հասցվեր, ապա այնտեղից Թիֆլիս տեղափոխելն արդեն դժվար չէր լինի: Հատկանշական է, որ առաջին անգամ տպագրվելիք գրքերի համար անհրաժեշտ թուղթը ևս, որն արժեր 300 թուման, դարձյալ բերվել է կարնեցու միջոցով: Կաթողիկոսական դիվանում ասվում է, որ Հերակլը դիմել է կաթողիկոսին, որպեսզի նա Պոլիս գրի և այնտեղից «Գճ [300] թուման թուղթ առնուլ տուեալ՝ բերել տացէ վասն տպելի գրոց ի նոր տպարանի նորին»[269]:

Կարնեցին աջակցում է անգամ Ռուսաստանի վրացական տպարանին: Վրաց գահաժառանգ Գեորգին կաթողիկոսին դիմում է, որ նա ժողովարարութեան կոնդակ տա վրաց Աբրահամ քահանային, ով Ռուսաստան էր գնում այնտեղի վրացական տպարանի համար միջոցներ հայթայթելու:

Կարնեցին 1787 թ. մայիսի 29-ին Արղութեանցին ուղղված նամակով պատվիրում է աջակցել վրաց քահանային՝ հայկական միջավայրում ևս միջոցներ ժողովելու[270]: Նման կոնդակներն անվանում էին «ժողովարարական»:

«Պարտավճարը» տեսանք որ ներկայացնում էր տպարանի Սիմեոն կաթողիկոսից Ղուկաս Ա Կարնեցի անցումը: «Ժամագրքի» 1885 թ. հրատարակութեանը մասնակցել են թե՛ Սիմեոն Ա Երևանցու հայրապետութեան շրջանի և թե՛ նոր աշխատակիցներ: Առաջին անգամ հիշվում է Թադեոս Նորընծա վարդապետը, ով իրականացրել է գրքի շարվածքի տպագրութիւնը: Թադեոս վարդապետը նույն բնորոշմամբ՝ «որ սրբագրեաց զփորձան կապարեա գրոցն շարուածոց» հիշվում է նաև Հովսեպիոս Փլաբիոսի «Յաղագս պատերազմին հրէից» (տպ. 1787 թ.) գրքի հիշատակարանում: Թադեոս վարդապետը «Սաղմոսարանի» հիշատակարանում արդեն անվանվում է «ըզհոգեծին որդեակն սրբազան Վեհապետին»:

Ասացինք, որ Սիմեոն կաթողիկոսի հայրապետութեան շրջանից սկսած՝ փորագրանկարները պատրաստել է Հարութիւն սարկավագը: Այստեղ նա հիշվում է գրքում եղած բոլոր կարգի փորագրանկարների, այդ թվում և տառատեսակների հեղինակ. «Զկերտօղն նորայօրէն գրոցս, և պատկերաց, և խորանաց և համայն ծաղկանշից, զվարպետ Յարութիւն Վաղարշապատցի, հանդերձ իւր աշակերտ տիրացու Խաչատուրիւն»: Հարութիւն Վաղարշապատեցին և Խաչատուրը գրեթե նույն բնորոշմամբ հիշվում են նաև Հովսեպիոսի «Պատմութեան» մեջ: «Սաղմոսարանի» 1787 թ. հրատարակութիւնում պարզապես հիշվում են որպես վարպետ և աշակերտ:

Մաղաքիա Տիրացուն նախ հիշվում է «Պարտավճարում», ապա «Ժամագրքում»: Առաջինում եթե ասվում էր, որ նա Գրիգոր գրաշարի օգնա-

269 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռգ. 2803, թերթ՝ 151բ:

270 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 252-253:

կան էր, ապա այստեղ հանդես է գալիս որպես գրաշար՝ առաջին անգամ հիշվող Աղեքսանդր սարկավագի հետ: Մաղաքիան և Աղեքսանդրը հիշվում են նաև Հովսեպիոսի «Պատմության» և «Սաղմոսարանի» մեջ:

Գրիգոր մրազարկի փոխարեն «Սաղմոսարանում» հիշվում են Գեորգը և մեկ այլ Աղեքսանդր, որոնք նաև գրաճույլ են անվանվում: Նրանք հիշվում են նաև Հովսեպիոսի «Պատմության» հիշատակարանում:

Ղուկաս կաթողիկոսի հայրապետության շրջանը շատ ավելի աննպաստ ու դժվարին էր, քան Սիմեոն կաթողիկոսինը: Ժամանակի առկա անկայուն վիճակին գումարվում է նաև լեզգիների 1783 թ. ավերիչ արշավանքը, որը հասնում է մինչև Սևանի ավազանը:

Չնայած այս հանգամանքին՝ Կարնեցու հայրապետության տարիներին ոչ միայն շարունակվում, այլև տպագրական նոր աստիճանի է հասնում Ս. Էջմիածնի տպարանի գործունեությունը:

Սիմեոն կաթողիկոսի տպագրած գրքերը, բացառությամբ առաջինի՝ «Սաղմոսարանի», կա՛մ նրա հեղինակածն էին, կա՛մ նրա կազմածն ու խմբագրածը: Կարնեցու հեղինակած կամ խմբագրած որևէ գիրք չի տպագրվել, սակայն ինչպես երևում է վավերագրերից, նա գործուն մասնակցություն է ունեցել տպագրվելիք գրքերի ընտրությանը և հրատարակման պատրաստմանը: Կարնեցու հայրապետության շրջանում Ս. Էջմիածնի տպարանից լույս է տեսել 8 անուն գիրք, որոնցից «Պարտավճարի» հրատարակությունն սկսվել էր դեռևս Սիմեոն կաթողիկոսի կենդանության օրոք: «Ատենի ժամագրքի» մի մասը Սիմեոնի խմբագրած «Տոնացույցն» է, և վերջապես, «Տաղարանը» Սիմեոն կաթողիկոսի 1772 և 1777 թթ. տպագրած հիշյալ ժողովածուի վերահրատարակությունն է: Այս հանգամանքը ցույց է տալիս Կարնեցու՝ Ղուկաս կաթողիկոսի հոգևոր ժառանգորդը լինելը նաև գրահրատարակչության բնագավառում:

Ղուկաս կաթողիկոսի կողմից հրատարակված 7 գրքերից 5-ը եկեղեցածիսական են, ինչն ունի իր հոգևոր-նվիրապետական հիմնավորումը:

Ղազար Ա. Ջահկեցու, ապա և Սիմեոն ու Ղուկաս կաթողիկոսների կողմից հետևողականորեն այն միտքն էր ընդգծվում, որ Ս. Էջմիածինը հայ ժողովրդի լուսատու հոգևոր ծնողն է: Այս պայմաններում նախ անհրաժեշտ էր, որ Ս. Էջմիածնի լույսը բաշխվեր ոչ միայն հայրապետական կոնդակների, այլև Մայր Աթոռի հրատարակությունների միջոցով, որն իրականացրեց Սիմեոն կաթողիկոսը՝ շարունակ ընդգծելով լուսատու հոգևոր ծնողի հիշյալ գաղափարը, որի կարևոր արտահայտություններից մեկը պետք է դառնար եկեղեցական արարողությունների գրքերի հրատարակությունը: Ինչպես որ ծիսական հարցերը քննվում և կանոնացվում էին եկեղեցական կենտրոններում, այնպես էլ այդ ժողովածուների հրատարակությունը պետք է իրականացվեր այդտեղ:

Նույն ձևով պապական քարոզչությունը, կարևոր դեր վերապահելով Հռոմում հայերեն գրքերի տպագրությանը, առանձնակի նշանակություն

էր տալիս ծիսական գրքերի հրատարակությանը: Պատճառը միայն հայ ծեսի վերախմբագրումը չէր ըստ լատինականի: Խմբագրումները հաճախ այդքան էական տարբերություններ չէին պարունակում: Կարևորը հայկական ծիսական գրքերի՝ Հռոմում տպագրվելու հանգամանքն էր, որ այնտեղից են տարածվում հայկական արարողական գրքերը:

Նույն այս ըմբռնմամբ՝ պետք էր Ս. Էջմիածնից տարածել եկեղեցածիսական գրականությունը: Մինչ այդ հիշյալ գործն իրականացվում էր պոլսահայ տպարաններում, ինչը նպաստեց Կ. Պոլսի Հայոց պատրիարքության հեղինակության էլ ավելի բարձրացմանը հայ եկեղեցական կյանքում:

Ժամանակն էր, որ Ս. Էջմիածնի՝ որպես հայոց ընդհանրական կաթողիկոսական կենտրոնի ըմբռնումը հավաստվեր նաև հիշյալ ժողովածուների հրատարակությամբ: Այս հանգամանքով է բացատրվում տպագրական առումով այնպիսի բարդ և աշխատատար գրքերի հրատարակությունը, ինչպիսիք են «Ատենի ժամագիրքը» և «Շարակնոցը»:

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

«Ատենի ժամագիրք», 1785 թ. (426 էջ)

Ղուկաս կաթողիկոսը, հայ տպագրիչների ընդհանրացած սովորությամբ, թերևս ավելի ճիշտ կլիներ, որ առաջինը տպագրեր «Սաղմոսարանը», ինչպես փորձել էր վարվել նաև Սիմեոն կաթողիկոսը: Կարնեցին, սակայն, որոշում է դիմել ավելի համարձակ քայլի՝ միանգամից տպագրել «Ատենի ժամագիրքը», որը մեկտեղում էր «Սաղմոսարանը»՝ օրվա 9 ժամերի ժամակարգությունը պարունակող «Ժամագիրքը», և «Տոնացույցը»: Նման հրատարակությունը ոչ միայն ծավալուն, այլև մեծադիր թերթերով պետք է լիներ, որի համար անվանվել է «Ատենի ժամագիրք», քանի որ դրվել է եկեղեցու ատյանում՝ գրակալի վրա՝ բացված էջերով:

Տպագրությունների շարքն այս հրատարակությամբ սկսելը մի քանի բացատրություն ուներ: Առաջին՝ ցույց տալ, որ տպարանը Սիմեոն կաթողիկոսից հետո ոչ միայն շարունակում է գործել, այլև նոր աստիճանի էր բարձրացել: Երկրորդ՝ տպագրել Ս. Էջմիածնի հոգևոր-բարոյական իշխանությանը վայել մի գիրք՝ համապատասխան տպագրական վարպետությամբ: Երրորդ՝ «Ատենի ժամագրքի» տպագրությամբ Կարնեցին շարունակեց Սիմեոն կաթողիկոսի ջանքերը՝ եկեղեցիներում առաջնորդվելու «Տոնացույցի» նոր խմբագրությամբ:

Կարնեցին եթե ուղղակիորեն պնդեր, որ պետք է կիրառվի նոր «Տոնացույցը» և վերահրատարակեր այն, ապա հակազդեցությունը շատ ավելի մեծ կլիներ, այնինչ այսպես «Տոնացույցը» մաս է կազմում «Ատենի ժամագրքին»: Վերջինս ավելի ընդունելի կարող էր լինել հայ ձեռագրային ավանդների տպագիր համարժեք կիրառության դեպքում: Պոլսահայ ավանդապահ միջավայրում 18-րդ դարի երկրորդ կեսին դեռևս շարունակվում էր ձեռագրերի գրությունը:

Այս պատճառներն են պայմանավորել «Ատենի ժամագիրքը» ձեռագրային ավանդների հետևողությամբ հրատարակելը:

Էջմիածնի տպարանին վերաբերող ուսումնասիրություններում նշվում է, թե տպարանը Սիմեոն կաթողիկոսի վախճանվելուց մի քանի տարի հետո է սկսել գործել: Իրականում 1780-ական թվականների առաջին տարիները եղել են հիշյալ հրատարակությունը նախապատրաստելու և անհրաժեշտ փորագրությունները պատրաստելու տարիներ:

«Ժամագրքի» տիտղոսաթերթը

18-րդ դարում հրատարակված գրքերի հիշատակարաններում, այդ թվում և Մխիթարյանների, ինչպես նաև Սիմեոն կաթողիկոսի տպագրած գրքերում, ընդհանրացած ավանդույթով, տիտղոսաթերթին նշվում էր ժամանակի Ամենայն հայոց կաթողիկոսի անունը Հայոց եկեղեցու միասնականությունն առավել ընդգծելու համար Ղուկաս Ա կարնեցին հրատարակության տիտղոսաթերթին հիշում է նաև Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքներին՝ ասես փորձելով նրանց կողմից ևս կանոնացնել նոր «Տոնացույցը»: «Ժամագրքում» գտնվող երեք գրքերն ունեն աճող մեկ էջակալություն և մեկ ընդհանուր տիտղոսաթերթ, սակայն գրքերից յուրաքանչյուրը ունի իր առանձին տիտղոսաթերթը նույն պատկերով:

18-րդ դարի վերջին քառորդը նշանավորվեց ազգային ակնկալիքների և ազատագրական պայքարի հույսերի վերարծարծմամբ՝ Մշո Սուրբ Կարապետից մինչև Սուրբ Էջմիածին և մինչև Հնդկաստան՝ Հովսեփ Էմին և Մադրասյան խմբակի գործունեություն և հայ-վրացական զինակցության համատեղ ծրագրերի կազմում:

Ազատագրական ծրագրերն իրենց դրոշմն են թողել Ս. Էջմիածնում Ղուկաս Ա Կարնեցու հայրապետության շրջանում տպագրված «Ատենի ժամագրքի» (1785 թ.) և «Խորհրդատետրի» (1788 թ.) տիտղոսաթերթերի նկարների՝ Ս. Էջմիածնի հիմնարկեքը ներկայացնող նույն պատկերում:

Տիտղոսաթերթի կենտրոնական մասում պատկերված են Սուրբ Երրորդությունը և Տիրամայրը: Էջի երկու եզրագծերում Հայոց աշխարհի երկու առաքյալներն են՝ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները: Նրանցից ներքև երկուական շարքով Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցն են և Գյուտ Ա Արահեզացի (կթդ. 461-478 թթ.) և Հովհաննես Ա Մանդակունի (կթդ. 478-490 թթ.) հայրապետները, որոնց անվան հետ է կապվում հայոց Պատարագամատույցի ամբողջացումը:

Մաշտոցի գլխավերևում աստվածային Աչն է, որով, ինչպես նշում են մեր մատենագիրները, գրվեցին, գծագրվեցին Հայոց Այբուբենի գրերը: Հետաքրքիր է, որ գրված են միայն ձայնավորները, ինչը կարող է ունենալ երկու բացատրություն: Առաջին՝ քանի որ հնարավոր չէր ողջ Այբուբենը գրել պատկերի փոքր տարածությունում, միայն ձայնավորներն են ներկայացվել: Երկրորդ՝միայն ձայնավորների պատկերումը կապվում է այն ավանդության հետ, համաձայն որի Դանիելյան գրերն անգործածելի էին, որովհետև սեմական Այբուբենների նման ձայնավորներ չունեին, և Մաշտոցը, ստեղծելով յոթ ձայնավորների գրերը կենդանություն հաղորդեց մեռյալ գրերին[271]:

---

271 Այս մասին տես **Գ. Պողոսյան,** Դանիելյան գրերի հարցը միջնադարյան բնագիտական ըմբռնումների տեսանկյունից, «Էջմիածին», 2005, հմր. Զ, էջ 87-98, Է-Ը, էջ 110-125:

«ԺԱՄԱԳՐՔԻ» ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

«Ատենի ժամագիրք», Ս. Էջմիածին, 1785 թ.

«Ատենի Ժամագրքի» գրքարվեստը

«Սաղմոսարան»

«Սաղմոսարանի» տիտղոսաթերթի դարձերեսին Դավիթ մարգարեի մեծ փորագրանկարն է՝ տավիղը կողքին, աղոթական դիրքով ծնկած և հայացքը երկինք հառած: Աստվածային երկնքից, ուր գրված է աստվածանվյունը խորհրդանշող Է-ն, լույսի ճառագայթները տարածվում և հասնում են մարգարեի շուրթերին, որով ընդգծվում է, որ Դավիթն իր սաղմոսներն աստվածային ազդմամբ է ասել:

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒՄԸ
Ստեփանոս Օրբելյան, «Ողբ», Նոր Նախիջևան, 1790 թ.

Նման մեկնաբանություններում միշտ ընդգծվում է ձայնավորների յոթը լինելը՝ որպես աստվածային թվի արտահայտություն: Այս փորագրանկարում դարձյալ յոթ ձայնավորներ են, սակայն ու-ի փոխարեն օ-ն է, որը Հայոց Այբուբեն մուտք է գործել կիլիկյան շրջանում: Պատկերի հեղինակն, ըստ երևույթին, հետևել է այն ըմբռնմանը, որ ու-ն առանձին տառ չէ, այլ կազմված է գրային երկու մասնիկներից: Միաժամանակ որպեսզի ընդգծվի, որ Մաշտոցը հենց յոթ ձայնավորների գրերն է ստեղծել, ու-ի փոխարեն գրել է **o**[272]*:*

Նկարի կենտրոնական մասի ներքևում՝ գրքի տիտղոսաթերթային տվյալներից հետո, պատկերված է Ս. Էջմիածինը: Պատկերի տիտղոսաթերթային բնույթը և տեղի փոքրությունը պարտադրել են առավել սեղմ և ընդհանրացված ձևերի մեջ ներկայացնել պատկերագրական ընդունված կառուցվածքը:

Աստվածային երկնքի կիսաշրջանում պատկերվող Սուրբ Երրորդությունը Միածնի էջքով այստեղ ներկայացված է մուրճով հարվածող Աջով՝ շրջապատված էջքն ուղեկցող հրեշտակներով: Մայր Տաճարի կենտրոնական գմբեթի խաչը հասնում է մինչև երկնային կիսակամարը՝ խորհրդանշելով, որ Միածնի էջքով և Ս. Էջմիածնի հիմնարկմամբ երկինքն ու երկիրը մեկ անգամ ևս իրար կապվեցին, ինչպես Բեթղեհեմյան այրում:

Պատկերի ձախ կողմում հրեշտակը Լուսավորչին դարձյալ ցույց է տալիս Միածնի էջքը և բացատրում տեսիլը, իսկ աջ կողմում Լուսավորչի պես աղոթական կեցվածքով Տրդատն է:

Ս. Էջմիածնի ձևավորված ու կանոնացված պատկերագրությամբ Տրդատը մկրտվողի խոնարհությամբ ծնկած է լինում Լուսավորչի առջև՝ գետնին դրած թագավորական իշխանության երկու նշանակները՝ թագը և գայիսոնը: Այստեղ, սակայն, Ս. Գրիգորն ու Տրդատը պատկերված են համազոր՝ հայրապետական ու արքայական փառքով, խույրով ու թագով, և երկուսն էլ աղոթում և, ասես, ինչ-որ բան են հայցում:

Տրդատին ոչ թե խոնարհությամբ, այլ թագավորական փառքով պատկերելը պայմանավորված էր ժամանակի քաղաքական ակնկալիքներով, երբ օրակարգային էր Հայոց պետականության վերականգնման հարցը: Ուստի հայոց անցյալի փառքի կենդանի խորհրդանիշ Սուրբ Էջմիածնի առջև ծունկի են եկել և հայրապետական ու թագավորական մաղթանքի հայցով են դիմում հայոց քահանայապետն ու արքան: Պատկերագրական այս ձևը միանգամայն համահունչ է հայ միջնադարյան մատենագրության մեջ քանիցս արծարծված այն գաղափարին, որ Վաղարշապատում՝ հայոց թագավորների երբեմնի ոստանում և Միածնաէջ սրբավայրում, միաժամանակ պետք է լինեն հայոց թագավորական գահն ու պատրիարքական՝ կաթողիկոսական աթոռը: Այս ըմբռնումը, ինչպես ասացինք, իր

[272] Այս մասին տես **Շ. Դևրիկյան,** «Գրերի տրման տեսիլի պատկերագրությունը» հոդվածը «Հայ մատենագիրները Հայոց գրի և թարգմանչաց մասին» գրքում, Երևան, «Անկյունաքար» հրտ., 2019, էջ 48-49:

գաղափարա-գեղարվեստական խտացմանը հասավ Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի դիմաց Ս. Կաթողիկէին» նշանավոր ստեղծագործության հետևյալ տողերում.

Կանգնէ վաթոռ թագաւորին
Եւ զգաւազան Պատրիարքին[273]:

«Ժամագրքի» և «Խորհրդատետրի» այս պատկերը նկարային արտահայտությունն է հիշյալ տողերի՝ արդեն քաղաքական համապատասխան նոր իրավիճակում:

Ս. Էջմիածնի հիմնադրման տեսարանում Գրիգոր Լուսավորչի բարեխոսությունը Հայոց աշխարհի համար առավել ցայտուն ձևով է արտահայտված Ստեփաննոս Օրբելյանի «Ողբի»՝ Հովսեփ վրդ. (արքեպս.) Արղությանի՝ Նոր-Նախիջևանում 1790 թ. իրականացրած հրատարակության տիտղոսաթերթին հաջորդող նկարում: Այն այս մեկնաբանությամբ վերախմբագրված տարբերակն է Ս. Էջմիածնի հիմնարկման Մայր Աթոռի հրատարակություններում քանիցս հանդիպող պատկերի:

«Ատենի Ժամագրքի» կառուցվածքը

«Ատենի ժամագրքի» երեք գրքերը, ըստ էության, մի ամբողջություն էին կազմում, որով կատարվում էին եկեղեցու օրվա արարողությունները: «Ժամակարգությունը» ներկայացնում է օրվա ինը ժամերի աղոթքները, «Սաղմոսարանը»՝ այդ ժամերի ընթացքում կատարվող սաղմոսները, և վերջապես «Տոնացույցը»՝ օրվա տոնը, թե տվյալ օրվա ինը ժամերը ինչ տոների շրջանակում պետք է կատարվեն: Շարքը կամբողջանար, եթե նրանց հետ լիներ նաև «Շարակնոցը», քանի որ օրվա ինը ժամերն ունեն իրենց շարականները՝ պայմանավորված օրվա տոնով և այդ ժամի բնույթով, ինչպես ասենք՝ Արևագալի շարականները, որ կատարվում են արևագալի ժամին, և կամ ըստ «Տոնացույցի» Ապաշխարության շարականները, որոնք կատարվում են Մեծի Պահոց շրջանում: «Շարակնոցը», սակայն, իր ծավալով հավասար է այս երեք գրքերին միասին վերցված, ուստի այն միշտ տպագրվել է առանձին: Անգամ «Տոնացույցի» հետ միասին գրեթե չի հանդիպում ձեռագրերում, թեև սերտորեն կապված է օրվա տոների հետ, և «Շարակնոցի» կանոնների կարգավորումն իսկ կատարվում է ըստ «Տոնացույցի»:

Օրվա ինը ժամերը ներկայացնող ձեռագիր կամ տպագիր «Ժամագիրքը» անվանվում է Փոքր կամ «Ձեռաց ժամագիրք»: «Սաղմոսարանը», «Ժամագիրքը» և «Տոնացույցը» պարունակող ժողովածուն արդեն անվանվում է «Ատենի Ժամագիրք՝ մեծադիր, մեծ քառածալ, որուն սկիզբը կայ ամբողջ Սաղմոսը և վերջը Տօնացոյցը և մէջտեղը բուն ժամագիրքը»[274]:

Երեք գրքերը պարունակող ժողովածուն Ատենի կամ Ատյանի է ան-

---

273 Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում, կազմեցին Հ. Քյոսեյան, Վ. Դևրիկյան, Սուրբ Էջմիածին, 2003, էջ 129:

274 **Մաղաքիա** արքեպս. **Օրմանյան**, Ծիսական բառարան, էջ 162:

վանվում, որովհետև «բեմին մէջտեղը կը դրուի փոքր գրակալի վրայ, և անոր վրայէն կը կարդան՝ քահանան աղօթքները, սարկաւագը քարոզները և դպիրները՝ փոխերը»։ Օրմանյանը **Ատեան** *բառի բացատրության և Ատյանում դրվող «ժամագրքի» համար ասում է. «Ատեան բեմի՝ կիմանանք եկեղեցւոյ մէջտեղը, դասին մէջտեղը, բեմին մէջտեղը։ Նոյնպէս երբ կըսենք Ատեանի ժամագիրք, կամ Ատեանի Աւետարան, կիմանանք բեմին մէջտեղը դրուած ժամագիրքը, կամ դասին մէջտեղը կարդալու գործածուած Աւետարանը»*[275]*։*

«Ժամագրքի» Սաղմոսարանը

Այժմ «ժամագրքի» 1785 թ. հրատարակության «Սաղմոսարանը» համեմատենք Մատենադարանի հմր. 1642 ձեռագրի «Սաղմոսարանի» հետ։

Առաջին մեծ բաժանումն ընդգրկում է Դավթի Ա-ԺԷ սաղմոսները։ Այստեղ առաջին սաղմոսին նախորդում է մի շքեղ փորագրանկար, ապա նրբահյուս կիսախորանի ներքո սկսվում է առաջին սաղմոսը, որի առաջին տողը ամբողջապես թռչնագիր է, իսկ առաջին տառը՝ ե-ն, ներկայացնում է տավիղ նվագող Դավիթ սաղմոսերգուին։ Էջի ողջ երկայնքով տարածվում է լուսանցային բուսազարդ։

Երկրորդ բաժանումը, որն ընդգրկում է ԺՀ-ԼԵ սաղմոսները, բերված է գեղեցիկ կիսախորանի ներքո, որին կից լուսանցային բուսազարդ է, թեև ոչ նախորդի չափ մեծ։ Առաջին սաղմոսը եթե սկսվում էր «երանեալ է այր» խոսքերով, ապա երկրորդը՝ «Երկինք պատմեն» սկսվածքով։ Երկրորդ ե-ն ներկայացնում է Դավիթ Սաղմոսերգուի տավիղ նվագող մեկ այլ ինքնատիպ տարբերակ, երբ ե-ի ներքևի մասը պոչը թեքած ձուկ է, որի վերին հատվածում սազով նվագածու է պատկերված՝ հիշեցնելով ձեռագրերում ժողովրդական նվագարանների կատարողներին։

Մյուս մեծ բաժանումները ևս ավարտվում են վերջնազարդով, ապա ճակատազարդ, պատկերագիր սկզբնատառ և լուսանցային բուսազարդ ձևավորմամբ սկսվում է հաջորդ մեծ միավորը, որով այս հրատարակության «Սաղմոսարանը» հարազատորեն պահպանել է ձեռագիր սաղմոսարանների կառուցվածքային բոլոր ութ մեծ բաժանումները։

«Ժամագիրք»

«ժամագրքի» դեպքում ևս Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի նկարագրության համար որպես հղվող օրինակ ընտրված է Նորագավիթում 1668 թ. գրված հմր. 435 ձեռագիրը։

«Ատենի ժամագրքի» առաջին միավորը «Հրաժարիմք»-ն է։ Այսպես է անվանվում իր սկսվածքի՝ «Հրաժարիմք ի սատանայէ» խոսքերի համար։

Ձեռագիր ժամագրքերում և հատկապես հղվող հմր. 435 ձեռագրում

[275] Նույն տեղում, էջ 77:

առկա հաջորդ երեք միավորները՝ «Դաւանութիւն հաւատոյ», «Ձղջումն» և «Արձակումն», ևս հերթականությամբ բերված են Ս. էջմիածնի հրատարակության մեջ։

«Ատենի ժամագրքում» մինչև օրվա ժամերի ժամակագրությունն սկսելը թվարկվող հիշյալ չորս նյութերը դնելն ուներ իր ներքին տրամաբանությունը։

Օրվա հասարակաց՝ ընդհանուր, ընդհանրական աղոթքներից առաջ «Հրաժարիմք»-ը ներկայացնում էր մեղքերից հրաժարվելը, «Հավատո դավանությունը»՝ ճշմարիտ հավատո խոստովանությունը, «Ձղջումը»՝ մեղայի գալը կատարված մեղքերի համար, և «Արձակումը»՝ հաջորդող թողությունը։

Բուն ժամագիրքը նվիրված է օրվա ինը ժամերի ժամապաշտությունների։ Ժամերից յուրաքանչյուրը ոչ միայն ունի իր համառոտ անվանումը՝ Գիշերային, Առավոտյան, Արևագալի, Ճաշու երեք ժամերի, Երեկոյան, Խաղաղական և Հանգստյան, այլև նրանցից յուրաքանչյուրն ունի իր ընդարձակ խորագիրը, և այս դեպքում ևս ունենք բնագրային նույն ընդհանրությունը տպագրի և ձեռագրի միջև։

Գիշերային ժամը, որով և ողջ «Ժամագիրքը» սկսվում է մի շքեղ կիսախորանով (էջ 105), որի ներքո միանգամից բերված է Գիշերային ժամի առաջին աղոթքը՝ «Տէր եթէ զշրթունս իմ բանաս» սկսվածքով սաղմոսը։ Ընդգծված մասը գրված է թռչնագրով և զարդագրով՝ որպես առաջին տող, երկրորդ և երրորդ տողերը գրված են դեպ երկաթագիրը միտող գլխագրով, ապա սովորական տառերով շարունակվում է մնացյալ շարվածքը, որը կիսախորանի ներքո այդ էջում միասյուն է, իսկ հաջորդող էջերից՝ երկսյուն։ Նախորդող էջում Սուրբ Երրորդության պատկերն է, որին կանդրադառնանք ձևավորման բաժնում։

Գիշերային ժամակարգության մեջ առանձին բաժին են կազմում «Թագաւորք ապաշխարութեան» կոչվող աղոթքները, որի համար այդ աղոթքներն այստեղ բերված են ներքին բաժանմամբ՝ առանձին ճակատազարդի ներքո (էջ 133)։ Նույն ձևով ճակատազարդի ներքո է բերված և գիշերային Ալելուիաների շարքը (էջ 138)։

Ինչպես սաղմոսների գլխաբաժանումների դեպքում, այստեղ ևս օրվա մյուս ութ ժամերն սկսվում են ճակատազարդի ներքո ընդգծված զարդատառով և լուսանցային բուսազարդով։ Օրվա ժամերից յուրաքանչյուրի սկզբում «Ժամագրքի» երկսյուն էջերից մեկում, որն անմիջապես նախորդում է տվյալ ժամի կանոնին, բերված է մեկսյունյա փորագրանկար՝ վերջինիս բանաստեղծական մեկնությունը ներկայացնող մի քանի տող չափածոյի հետ միասին։

Նկարներից յուրաքանչյուրը խորհրդաբանորեն կապվում է օրվա տվյալ ժամի պարունակած խորհրդի և ուղղակիորեն այդ ժամի խորագրի հետ։ Արևագալի ժամի համար ասվում է. «Որ կատարի ի դէմս Հոգւոյն Սրբոյ։

Այլև ի դէմս Յարութեան Քրիստոսի և երևման աշակերտացն»: Նույն ձևով նախորդող էջի նկարում պատկերված է Քրիստոսի հարությունը:

Հաջորդ՝ գիշերային երրորդ ժամը կատարվում է «ի դէմս իջման Հոգւոյն», և նախորդում է Հոգեգալստյան պատկերը:

Իններորդ ժամը կատարվում է «ի դէմս Որդւոյն Աստուծոյ, այլև մահուանն և բանական Հոգւոյն աւանդմանն», և կանոնի վերևում բերված է խաչելության պատկերը:

Երեկոյան ժամի աղոթքը կատարվում է «ի դէմս Որդւոյն Աստուծոյ, որ էջ ի խաչէն և պատեալ պաստառակալաւ եդաւ ի Գերեզմանի», և կից բերված է խաչից իջեցումից հետո կատարվող պատանքման նկարը:

«Տօնացոյց»

«Ժամագիրքը» եզրափակվում է «Տոնացույցով»: Այն ըստ էության Սիմեոն Կաթողիկոսի հրատարակությունն է՝ դրված «Ժամագրքի» մեջ՝ սկսած առաջաբանից: Ունի տոների բաժանման Սիմեոնյան կարգավորումը՝ տոնաշարերի իրարից բաժանման նույն սկզբունքով, որոնց կանդրադառնանք «Ատենի ժամագրքի» ձևավորմանը նվիրված բաժնում:

Ի տարբերություն «Սաղմոսարանի» և «Ժամագրքի»՝ «Տոնացույցի» հրատարակությունն ավելի բարդ է բնագրային առումով: «Սաղմոսարանը», որպես սուրբգրային միավոր, ուներ իր կանոնացված բնագիրը: «Ժամագիրքը»՝ որպես եկեղեցական ժամապաշտության ժողովածու, դարձյալ կանոնացված բնագրով է հանդես գալիս 12-13-րդ դարերից: Տոնացույցը, սակայն, ոչ թե խմբագրություններ ուներ, այլ կենդանի օրգանիզմի նման շարունակ տարբեր փոփոխությունների էր ենթարկվում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դարերի ընթացքում ոչ միայն եկեղեցական տարբեր տոներ էին ավելացվում, այլև կատարվող մի շարք տոներ որոշակի փոփոխությունների էին ենթարկվում, կամ այլ տոների հետ միանում: Այսինքն՝ եկեղեցական կյանքի փոփոխությունները համապատասխան փոփոխություններ էին առաջ բերում եկեղեցական Տոնացույցում, որն էլ, բնականաբար, իր արձանագրումը պետք է գտներ ձեռագիր Տոնացույցներում:

Ընդ որում, անկախ տոնաշարի հետ կապված փոփոխություններից, կար երկու մոտեցում: Առաջին՝ Տոնացույցը ներկայացնել ըստ որոշակի թեմատիկ խմբավորումների, որով այս ժողովածուի սկզբում նախ բերվում էր Տիրամորը նվիրված տոների շարքը, ապա՝ նոր մնացյալ տոներն ըստ տարեկան տոնական ընթացքի՝ Ս. Ծննդից մինչև Ավագ տոները և հաջորդող Ս. Ծննդյան պահքն ընկած շրջանը: Երկրորդ դեպքում Տոնացույցը կազմվում էր ըստ օրացուցային ընթացքի՝ Ս. Ծննդից մինչև Ավագ տոները:

«ԱՂԱՄՈՍԱՐԱՆԻ» ՍԿԻԶԲԸ ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐԵԻ ՆԿԱՐՈՎ

«Լուեան ժամագիրք», Ս. Էջմիածին, 1785 թ

Նկարի ստորին մասում պատկերված են Դավթի կյանքի երկու նշանավոր դրվագները՝ Սամուել մարգարեի կողմից սրվակի յուղով օծվելը (Ա Թագ., ԺԶ 13) և պարսատիկով Գողիաթին հարվածելը (Ա Թագ., ԺԶ 48-49)։

Նկարը ունի վեց տող չափածո, որոնք բերված են ոչ թե իրար հաջորդող տողերով, այլ նկարի ստորին մասի երկայնքով երեքական շարքով և երկուական իրար կից տողերով։ Երկուական տողերից յուրաքանչյուրի վերևում տվյալ տողերին համապատասխանող տեսարանն է։ Առաջին երկու տողերում ասվում է.

Ի տեսողէն Դաւիթ ընտրեալ,
Իւղով շնորհս Հոգւոյն օծեալ։

Վերևում Սամուել մարգարեն սրվակի յուղով օծում է խոնարհությամբ ծնկած Դավթին, ում ձեռքում է հովվական գավազանը, որն այնուհետև դառնալու էր թագավորական։

Կենտրոնում գտնվող հաջորդ երկու տողերը վերաբերում են աստվածային ազդմամբ Դավթի սաղմոսների կանխասացություններին, որոնց համար նա անվանվում է մարգարե։ Այդ տողերի վերևում Աստվածային շնորհի ազդեցությամբ սաղմոսերգող Դավիթ թագավորն է։

Նկարի աջ անկյունում վերջին երկու տողերն են.

Որ և Տերամբ քաջալերեալ,
և զԳողիաթ պարսաքարեալ։

Այս տողերի վերևում ամբողջապես սպառազինյալ Գողիաթին հարվածող Դավիթն է։

Դավթի սաղմոսների սկզբնական առաջին էջն իր գեղարվեստական հարդարանքով կարող է մրցել ձեռագիր սաղմոսարանների համապատասխան էջի հետ։

Կիսախորանը և լուսանցազարդերը զարմացնում են իրենց նրբագեղությամբ, թե փորագրիչ վարպետն ինչպես է կարողացել վերարտադրել գրիչների նրբին գծագրումները։

Ձեռագրային զարդարվեստի հարազատ արտապատկերումներից բացի ինքնուրույն գեղարվեստական արժեք են ներկայացնում գլխազարդ տառերը։

Տէր-ը, հապավմամբ ընդունված կարգով, գրվում է ՏՐ, և երկու տառերը մի ամբողջություն են ընկալվում։ Գրքում կան պատկերագիր ՏՐ-ի մի քանի ձևեր։

Ստեղծագործական ինքնատիպ լուծումների հնարավորություն են տվել իրար զուգահեռ վեր ելնող կամ իջնող մասնիկներով տառերը, ինչպես Մ, Ս, Ո, որոնք պատկերվում են երկու հրեշտակների կամ դեմ հանդիման գտնվող երկու մարդկանց միջոցով։ Առավել բարդ և գեղեցիկ լուծմամբ՝ Ո-ի դեպքում տառի վերևում նաև աղավնակերպ Սուրբ Հոգին է։

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

«Ժամագիրք»՝ «Ատենի ժամագրքում», 1785 թ.

«Սաղմոսարանը», կազմված լինելով Դավթի 150 սաղմոսներից, որպես եկեղեցածիսական ժողովածու՝ ունի մի շարք հավելումներ և ներքին բաժանումներ: Ամեն բաժին սկսվում է որոշակի շքեղ ձևավորմամբ: Նույն օրինաչափությունը գտնում ենք նաև այստեղ, ինչպես օրինակ՝ ԼԶ (36-րդ) սաղմոսի սկզբում:

«Սաղմոսարանի» ավարտը նշող վերջնագարդում պատկերված է «Գառն պատարագեալ»: Պատկերագրական այս ձևի հիմքում ընկած են Հորդանանում մկրտության ժամանակ Հովհաննես Մկրտչի ասած «Ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի» (Յովհ. Ա. 29) խոսքերը: Խորհրդանշելով Քրիստոսին՝ Հայոց եկեղեցում «Պատարագյալ գառը» պատկերվում է դրոշով, որի վրա գրված են աշխարհի մեղքերը կրելու մասին ավետարանական հիշյալ խոսքերը: Խաչաբարձ գառը մաս է կազմել կաթողիկոսական խորհրդանշաններին: «Սաղմոսարանում» այն ներկայացված է ամպհովանու ներքո:

«Սաղմոսարանին» հաջորդող «Ժամակարգության» Գիշերային ժամի առաջին էջի կիսախորանում ևս գտնվում է այս պատկերի մեկ այլ տարբերակը: Ընդհանրապես այն հաճախ է հանդիպում կարնեցու կաթողիկոսության շրջանի՝ էջմիածնի հրատարակություններում: Կարելի է ենթադրել, որ կաթողիկոսական նշաններում հանդիպող «Գառն պատարագյալ»-ի հետևողությամբ եղել է էջմիածնի տպարանի տպարանային նշանը, կամ հանդես է գալիս որպես կաթողիկոսական վավերացման տպագրական յուրօրինակ կնիք:

«Ժամագիրք»

Ժամակարգության առաջին՝ Գիշերային ժամին կից Սուրբ Երրորդության մի շքեղ պատկեր է, որը, կարծում ենք, պայմանավորված է հետևյալ հանգամանքով: Եկեղեցական ժամերգության 9 ժամերը նվիրված են կամ, ինչպես «Ժամագրքում» է ասվում, կատարվում են «ի դէմս» Սուրբ Երրորդության անձերի՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու:

Պատկերի աստվածային երկնքի մասում և երկրային հատվածում պատկերված են երկու հրեշտակներ, որոնք խորհրդանշում են Աստծուն մարդկանց հետ փառաբանող հրեշտակներին: Այս մեկնաբանությամբ նկարի ներքևում գտնվող չափածո չորս տողերում ասվում է.

Սուրբ Երրորդութիւն անբաժանելի,
Որում վուարթունքն ընդ մարդկան ապգի,
Մի Աստուածութիւն խոստովանելի,
Տան օրհներգութեամբ վփառս անլռելի:

Գիշերային ժամի վերջում (էջ 146), առավոտյան ժամից առաջ բերված է «Երեք մանկունքն ի հնոցին» նկարը: Արքայական գահի կողքը կանգնած է նիզակը վեր պարզած զինվորը: Դիմացը՝ հնոցում՝ երեք մանուկներն են, և նրանց կենտրոնում՝ հրեշտակը:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
«Յիսուս Որդի», Ամստերդամ, 1660-61 թթ., էջ 387

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
«Ատենի ժամագիրք», Ս. Էջմիածին, 1785 թ.

Հնոցի ծուխը և կրակը մինչև երկինք են ելնում։ Աստվածաշնչի պատմության (Դան. Գ 46-51) հետևողությամբ նկարի ներքևում գտնվող 14 չափածո տողերի բանաստեղծական մեկնաբանմամբ՝ նկարը կապվում է թե՛ ավարտված գիշերային ժամի հետ և թե՛ սկսվող առավոտյան ժամերգության։

Գիշերային ժամը եզրափակող Ալելուիաներից վերջինում, որը բերված է մեկսյունյա նկարից վերև գտնվող շարադրանքի շարվածքում, ասվում է. «Վերինք, որպէս մոմ հալեսցին յերեսաց Տեառն»[276]։

Նույն ձևով աստվածային զորությամբ հնոցում հուրն է փոխարկվում «ի մեղմագոյն ցօղ երկնային»։ Երեք մանկանց բարեխոսությանը ապավինելով՝ ասվում է, որ ինչպես թագավորի հնոցի կրակը ցողի փոխվեց աստվածային զորությամբ, այնպես և մեր մեղքերից այրվելուց փրկիր մեզ.

Փրկեա և զմեզ Տէր ընդ նոսին,
յայրեցմանէ մեղաց ախտին։

Աստվածային ներողամտությունը համեմատվում է բաբելական հնոցն իջած ցողի հետ։ Վերջինս քանի որ առավոտյան էր իջնում, ուստի ասվում է, որ Քո ներողամտությունը որպես կյանքի ցող թող իջնի բացվող առավոտյան, ինչպես որ գիշերային ժամին էր հաջորդում առավոտյան ժամը։

Առավոտյան ժամի վերջում դրված Ս. Հարության պատկերը արդեն ուղղակիորեն կապվում է հաջորդ էջում սկսվող Արևագալի ժամերգության հետ, քանի որ այն կատարվում է «ի դէմս Հոգւոյն Սրբոյ, այլև ի դէմս Յարութեան Քրիստոսի և երևման աշակերտացն» (էջ 173)։

«Ատենի ժամագրքից» բացի այս պատկերը հանդիպում է էջմիածնի մի շարք այլ հրատարակություններում ևս։ Նկարի վերին կենտրոնական մասում հարուցյալ Փրկիչն է՝ շրջապատված հրեշտակաց դասով։ Ներքևում թափուր գերեզմանն է՝ այն հսկող զինվորներով, որոնց մի մասը ննջում է համաձայն ավետարանական պատմության։

Նկարի կենտրոնական ձախ մասում Գողգոթայի երեք խաչափայտերն են։ Ս. Հարության այս պատկերը, որ քանիցս հանդիպում է Ս. Էջմիածնի տարբեր հրատարակություններում, վերափորագրված է Ոսկան վարդապետի «Յիսուս Որդի» գրքում տեղ գտած նկարից։

Հարության պատկերը ևս ունի վեց տող չափածո, որի առաջին տողում այն միտքն է ընդգծվում, որ Քրիստոս կամավորաբար հոգին ավանդեց, ապա և փառքով հարություն առավ.

Որ ինքնիշխան կամաւ մեռեալ փառօք յարեար։

Չափածոյի վերջին երկու տողերը Ս. Հարության խորհուրդը կապակցում են սկսվող Արևագալի ժամերգության հետ։ Արևագալը բնորոշվում է որպես առավոտյան պայծառ լույս։ Ասվում է, որ մեր հոգիներում ևս ծագեցրու Ս. Հարության անճառելի լույսը.

---

[276] Ատենի ժամագիրք, Ս. Էջմիածին, 1785, էջ 146։

Եւս ի ծագել առաւօտեան լուսոյս պայծառ,
Ծագեա առ մեզ և փիմաստիցդ ըզլոյս անճառ:

Երրորդ ժամի ժամերգութիւնը կատարվում է «ի դէմս իջման Հօգւոյն Սրբոյ»: Ըստ այդմ և կից բերված է «Տոնացույցի» Հոգեգալստյան նկարի մի տարբերակը, որում, ինչպես ասացինք, խորհրդաբանութիւնը նվազագույնի է հասցված:

Հարազատորեն վերարտադրելով «Գործք Առաքելոցի» պատմութիւնը՝ նկարի վերին կենտրոնական մասում աղավնաձև Սուրբ Հոգուց վար են իջնում և տարածվում Սուրբ Հոգու հրեղեն լեզվակները: Վերնատան կենտրոնում Տիրամայրն է: Առաքյալների երկու շարքերը գլխավորում են Պողոս և Պետրոս առաքյալները: Հետաքրքիր է, որ Տիրամոր կողքին որոշակիորեն գեղջկական պատկերմամբ ևս մի կին կա, ով Տիրամոր հետ ներկայացնում է Վերնատանը գտնվող կանանց՝ Մարիամյանց:

Նկարին կից չափածոյում Սուրբ Հոգին անվանվում է կենդանարար, ով, համաձայն Որդու՝ առաքյալներին տված խոստման, աղավնակերպ իջավ Վերնատանը հրեղեն լեզուներով (Գործք., գլ. Բ 1-4):

Նկատի ունենալով սկսվող երրորդ ժամը՝ հայցվում է, որ մեզ վրա ևս իջնի Սուրբ Հոգին, ում զորութիւնը մենք ևս օրհնաբանենք Իրեն.

Զի օրհնաբան Քեզ անդադար,
Լիցուք այժմ և յաւէտաբար: (էջ 179)

Վեցերորդ ժամը քանի որ կատարվում է «ի դէմս» Հայր Աստծո և Որդի Աստծո, կանոնի վերևում պատկերված է Սուրբ Երրորդութիւնը Հոր, Որդու և Սուրբ Հոգու կենտրոնական պատկերներով (էջ 182):

Այս նկարի մեկ այլ տարբերակը, որի մասին արդեն գրել ենք, անհամեմատ անարվեստ ձևով գտնվում է Սիմեոն կաթողիկոսի «Աղոթագրքի» 1772թ. հրատարակութեան մեջ: «Ժամագրքում» նույն նկարն է, սակայն վերափորագրված շատ ավելի նուրբ և արտահայտիչ ձևով: «Ժամագրքում» այն չափածո տողեր չունի:

Իններորդ ժամը նվիրված է Քրիստոսի «մահուանն և բանական հոգւոյն աւանդմանն», որի համար բերված է Խաչելութեան տեսարանը եվրոպական «Մարիամեանք» պատկերագրական ձևով, ուր Խաչյալ Հիսուսի մի կողմում Տիրամայրն է, իսկ մյուսում Մարիամ Մագդաղենացին ու ևս Մարիամ անունով մի կին (էջ 186): Ինչպես գրում է Հովհաննես Ավետարանիչը. «Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն Նորա, եւ քոյր մօր Նորա, Մարիամ Կղէովպայ, եւ Մարիամ Մագդաղենացի» (Յովհ. ԺԹ 25):

Այս պատկերը ևս վերցված է «Յիսուս Որդու»՝ Ամստերդամի 1660-61 թթ. (էջ 455) հրատարակութեան նկարից: Խաչափայտի վերևում «ՅՆԲՀ» հապավման լատիներեն համարժեքն է: Ս. Էջմիածնի հրատարակութիւններում այն թեև վերափորագրված է, սակայն զարմանալիորեն պահված է հապավման լատիներեն տարբերակը: Այս նկարը ևս հանդիպում է Ս. Էջմիածնի տպարանի 18-րդ դարի հրատարակութիւններում:

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

«Ժամագիրք»՝ «Ատենի ժամագիրք», Ս. Էջմիածին, 1785 թ.

Երեկոյան ժամը կատարվում է «ի դէմս Որդւոյն Աստուծոյ, որ էջ ի խաչէն և պատեալ պաստառակալաւ եդաւ ի գերեզմանի»: Համահունչ այս ժամի խաչից իջեցման և պատանքման խորհրդին՝ ներկայացվում է խաչից իջեցման տեսարանը Երուսաղեմի և Գողգոթայի երեք խաչերի համապատկերին:

Կենտրոնում պատանման տեսարանն է և Տիրամոր ու մյուս հավաքվածների ողբը, իսկ ավելի հեռվում պատկերվում է Փրկչի «ի կոյս

ՍՈՒՐԲ ԵՐԵՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

«Ժամագիրք»՝ «Ատենի ժամագիրք», Ս. Էջմիածին, 1785 թ.

ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ

«Ժամագիրք»՝ «Ատենի ժամագիրք», Ս. Էջմիածին, 1785 թ.

գերեզման» դրվելը (էջ 202)։ Այն ևս վերափորագրված է «Յիսուս Որդի» չափածոյի 1660 թ. հրատարակությունից (էջ 384)։

Այս նկարի չափածոն ավելի ծավալուն է, ուր ցույց է տրվում, թե խաչելության ընթացքի յուրաքանչյուր դրվագ փրկչական ինչ խորհուրդ ունի Ադամի ու Եվայի մեղքի քավմամբ և մարդու առջև երկնքի ճանապարհի բացմամբ։

«Տոնացույց»

«Տոնացույցի» պատկերներից իր շքեղությամբ առանձնանում է Ս. Ծննդյան փորագրանկարը։ Այն, ինչպես Սիմեոն կաթողիկոսի հրատարակած «Տոնացույցում», լիովին հիմնված է ավանդական պատկերագրության վրա։ Վերևում՝ կենտրոնում, հրեշտակաց դասն է։ Ամպերում գտնվող հրեշտակներին երկրից բաժանող երիզաձև ժապավենին գրված են հրեշտակային օրհներգության «Փառք ի բարձունս Աստուծոյ և երկիր խաղաղութիւն» (Համմտ. Ղուկ. Բ 14) խոսքերը։ Վերին ձախ անկյունում Բեթղեհեմյան աստղն է։ Մյուս դրվագները ևս ներկայացված են ընդունված պատկերագրությամբ։ Երեք մոգերը մարդկության երեք հասակները և ավանդական ընկալմամբ մարդկային երեք մեծ ցեղային բաժանումների ենթարկվելն են ներկայացնում։

Նկարում արտահայտվել է առավել վաղ շրջանի պատկերագրությամբ հազվադեպ հանդիպող այն ձևը, երբ մոգերը ոչ թե երեքն են, այլ չորսը՝ համաձայն Դավթի սաղմոսների հետևյալ խոսքերի. «Թագաւորք Թարսոսի եւ կղզեաց պատարագս մատուցանեն նմա, թագաւորք Արաբայ եւ Սաբայ պատարագս բերցեն նմա» (Սաղմ. ՀԱ. 10-11)։

Ընդունված պատկերագրությամբ՝ Հովսեփ աստվածահայրը որոշակի մեկուսի դիրքով է, որը ցույց է տալիս, թե նա չէ Մանկան հայրը և զարմացած նայում է մոգերի երկրպագությանը։

Կա նաև հովիվների ընծայումը ժողովրդա-ազգագրական հետևյալ յուրահատկությամբ. ընծայվող գառը ոչ թե հովվի ձեռքին է, այլ մատաղացու գառան նման կապված ոտքերով և Քրիստոսի առջև դրված։

Նկարի չափածո երկտողում ասվում է.

Որ ի կուսէն այսօր ծընար Փրկիչ մարդկան,
Արդ ողորմեա մեզ տօնողացս Քոյ Սուրբ Ծննդեան (էջ 244):

«Ժամագրքի» այս հրատարակության մեջ «Տոնացույցի» տոներին կից Տերունական փորագրանկարները բաժանվում են երեք խմբի՝ տեքստային, որոնք մաս են կազմում շարվածքային այուներին՝ Ս. Հարության (էջ 272), ճակատազարդի ներսում՝ Հոգեգալստյան (էջ 290), Պայծառակերպության (էջ 301), Վերափոխման (էջ 307), Ս. Խաչի տոնի (էջ 313) և լուսանցազարդային՝ Հրեշտակապետաց տոնի (էջ 325), ինչպես որ էր նաև Սիմեոն կաթողիկոսի տպագրած «Տոնացույցում»։

ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ

«Ժամագիրք»՝ «Ատենի ժամագիրք», Ս. Էջմիածին, 1785 թ.



ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ

Յիսուս Որդի, Ամստերդամ, 1660-61 թթ.

ԻՋԵՑՈՒՄՆ ԽԱՉԻՑ
Յիսուս Որդի, Ամստերդամ, 1660-61 թթ.

ԻՋԵՑՈՒՄՆ ԽԱՉԻՑ
«Ժամագիրք»՝ «Ատենի ժամագիրք», Ս. Էջմիածին, 1785 թ.

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

«Տօնացոյց»՝ «Ատենի ժամագրքի» մեջ, Ս. Էջմիածին, 1785 թ.

Ս. Հարությյան տոնի հետ դրված է «ժամագրքի» նույն նկարը մի քիչ ավելի փոքր և ավելի նուրբ քանդակմամբ։

Գիրքը եզրափակվում է հավալուսնի պատկերով (էջ 409), որի ստորին մասում գտնվող արձանագրությունում գրված է փորագրիչ վարպետի անունը։

Տպարանում պատրաստված փորագրապատկերների, տպագրության տևական ընթացքի և դժվարությունների մասին կարևոր տեղեկություններ ենք գտնում գրքի հիշատակարանում և Կաթողիկոսական դիվանի վավերագրերում։ Հիշատակարանի սկզբում ասվում է. «Տպագրեցաք նորակերտ գրովք և տոկուն թղթովք, խորհրդաւոր պատկերօք և նրբաքանդակ խորանօք՝ կանոնօք և ծաղկամբք» (էջ 425)։

Գիրքը նոր տառատեսակով տպագրելու հիշատակարանային այս վկայությունը հաստատվում է լրացուցիչ մի շարք աղբյուրներով, որոնք արդեն հիշեցինք, ինչպես նաև հստակորեն երևում է գրքի շարվածքից։

Թուղթը «տոկուն» է անվանվում, որովհետև թղթի տեսակներ կային, որոնց վրա թանաքը կամ տպագրական ներկը դուրս էր գալիս թերթի հակառակ երեսին՝ անընթեռնելի դարձնելով էջերը։ Անորակ թուղթը նաև փշրվում էր։ Մեզ են հասել թղթի նման տեսակներով գրված բազմաթիվ ձեռագրեր, որի համար էր Ղուկաս կաթողիկոսը նվիրակներին հատուկ ասում, թե ինչ տեսակի թուղթ ուղարկեին։ Ուստի հիշատակարանում հպարտությամբ ասվում է, որ գիրքը տպագրվել է տոկուն, այսինքն՝ չփշրվող և թանաք չներծծող թղթով։

Փորագրանկարների համար տրված «խորհրդաւոր պատկերօք» բնորոշումը ցույց է տալիս, որ այդ պատկերները միայն թեմատիկ-այուժետային չեն, այլ ունեն միջնադարյան պատկերագրությանը բնորոշ այլաբանական-խորհրդաբանական նշանակություն։

Հիշատակարանում այնուհետև ներկայացվում են ժամանակի ծանր վիճակը և լեզգիների արշավանքը, թե այդ ամենն ինչպես ավերեց երկիրը, երբ ընդհանրապես ապրելու հույսն իսկ կորցրել էին, այնուամենայնիվ, կարողացան իրականացնել այս գրքի հրատարակությունը։

Հոգևոր ժառանգորդությունը պահպանելու սկզբունքով հիշատակարանների շարքում նախ ասվում է, որ հիշեն Սիմեոն կաթողիկոսին, ապա նույնը պատվիրվում է Ղուկաս Ա Կարնեցու համար։ Նման մոտեցմամբ նաև նախ հիշվում է տպարանի՝ Սիմեոն կաթողիկոսի շրջանի բարերար Գրիգոր Ջաքիկյանցը և ապա՝ այս գրքի բարերար Խաչիկ մահտեսի Պողոսյանը։

«Ատենի ժամագրքի» փորագրանկարների պատրաստման մասին Կարնեցին 1785 թ. սկզբին գրում է. «Եւ զմեծամեծ պատկերսն ևս քանդակեալ տամք ի վերայ պղնձոյ»[277]։

Հայ գրքի պատմությունն ուսումնասիրողները հատուկ նշում են, որ Կարնեցու հայրապետության շրջանում գրքերի տպագրության որակն

[277] Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 518:

ավելի է բարձրանում: Գ. Լևոնյանը գրում է. «Ղուկաս Ա կարնեցու հայ-րապետության առաջին իսկ տարիներին էջմիածնի տպարանը բարեշի-նության է ենթարկվում՝ տպագրական արդուզարդը ավելի կարգավորվում է շնորհիվ փորագրիչ վարպետ Հարությունի և աշակերտ Խաչատուրի»[278]:

«Ատենի ժամագրքի» տպագրության մասին Ռ. Իշխանյանը գրում է, որ այն «վկայում է էջմիածնում տպագրական արվեստի լուրջ առաջ-ընթացը: Այդ մեծադիր (21x 29 սմ, 426 երկսյուն էջ) գիրքը վարպետորեն է զարդարված, գեղեցիկ է անվանաթերթի նկարազարդ շրջանակը, նրբաճաշակ են ներսի զարդերը: Զևավորման հեղինակը Հարությունն էջ-միածնեցին է, որ շատ նկատելիորեն կատարելագործել է իր արվեստը»[279]:



ՀԱՎԱԼՈՒՍՆ

«Տօնացոյց»՝ «Ատենի ժամագրքում», Ս. Էջմիածին, 1785 թ.

278 **Գ. Լևոնյան,** Հայ գիրքը և տպագրության արվեստը, էջ 152:

279 **Ռ. Իշխանյան**, Հայ գիրքը 1512-1920 թթ., Երևան, 1981, էջ 96:

Ինչպես որ Սիմեոն կաթողիկոսն է «Տոնացույցը» հատուկ կոնդակով տարածում, այնպես և Ղուկաս կաթողիկոսն է «Ատենի ժամագիրքը» նմանաբնույթ կոնդակով տարածում: Ընդհանուր մի կոնդակի փոխարեն տեղային տարբեր կոնդակներ է գրում:

Հայ կյանքի գլխավոր կենտրոններից մեկը քանի որ Պոլիսն էր, որին մեծ դեր էր վերապահված կաթողիկոսական ընտրություններ հաստատման հարցում, ինչպես նաև ուժեղ հակազդեցություն կար Սիմեոն կաթողիկոսի «Տոնացույցի» հանդեպ, ուստի Կարնեցին ծավալուն հատուկ կոնդակ է ուղղում պոլսահայերին: Կոնդակի՝ «Ի մեծն Պօլիս վասն նորատիպ Ատենի ժամագրքին, տպեցելոյ ի սուրբ Աթոռոջն նորովն Տօնացուցիւ»[280] խորագրից իսկ երևում է, որ «Ատենի ժամագրքի» տպագրության հիմնական նպատակներից մեկը եղել է Սիմեոն կաթողիկոսի խմբագրած «Տոնացույցն» ընդունել տալը:

Հիշյալ կոնդակը նկատելի ընդհանրություններ ունի գրքի հիշատակարանի հետ: Սկսվում է առ Աստված ուղղված փառաբանությամբ, որ Մայր Աթոռում հնարավոր եղավ իրականացնել երկու կարևոր ձեռնարկում: Առաջինը Մայր Տաճարի ներքին նկարազարդումն էր, և երկրորդը՝ «Ատենի ժամագրքի» տպագրությունը: «Ժամագրքի» տպագրությունն անվանում է «նորապէս տպեցումն», որը չի նշանակում միայն նորից կամ նոր տպագրել, այլ ունի «նորովի տպել» իմաստը, որով նկատի ունի հին «Տոնացույցի» տեղը սիմեոնյանի տպագրելը:

Տպագրության երկու պատճառ է նշում: Առաջին՝ վաղուց տպված լինելով՝ «մաշեալ և պակասեալ գոլով»: Երկրորդ՝ «Ատենի ժամագիրքը» նոր Տոնացույցով տպագրված չկար: Ասում է, թե այս պատճառով բարեմիտ մարդիկ խնդրում են, որ նորից տպագրի «Ատենի ժամագիրքը»՝ նոր «Տոնացույցով»: Այստեղ հատուկ է ընտրված «բարեմիտ» բառը՝ ի հակադրություն նրանց, ովքեր ընդդիմանում էին վերջինիս կիրառմանը և հաստատմանը Հայոց եկեղեցում: Ասում է, թե ինքը, ի կատարումն նրանց խնդրանքի, տպագրել է տալիս «Ատենի ժամագիրքը»: Կոնդակի մեջ ավելի քան 10 անգամ գործածվում է «նոր Տօնացուցիւն մերով» արտահայտությունը:

Կոնդակում Կարնեցին թվարկում է նաև այն պատճառները, որոնք ձգձգեցին գրքի տպագրությունը: Նախ՝ տպագրության համար անհրաժեշտ նյութերի պակասությունը, որոնք ձեռք են բերել հեռավոր վայրերից, ապա վերջիններս Մայր Աթոռ հասցնելու դժվարություններն եղած անիշխանության պատճառով՝ «խառնակութիւնք կողմանցս յանտիրութենէ»՝ որպես բնորոշ օրինակ հիշելով լեզգիների արշավանքը:

Նոր տպագրված շքեղ հատորից մի քանի օրինակ ուղարկելով Պոլսի եկեղեցիներին՝ ասում է, թե այն որպես մի հոգևոր անուշահոտ ծաղիկ է ուղարկում նրանց՝ իրենց հոգևոր ծնող Սուրբ Էջմիածնից:

---

280 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 172:

Գրում է, թե ովքեր չեն ընդունի այն, Աստծու առջև պարտական և պատասխանատու կգտնվեն՝ «վասն տարաձայնութեան եւ երկպառակութեան եւ գայթակղութեան ազգի մերոյ»[281]: Հետևաբար ժամակարգության հարցը ոչ միայն եկեղեցական արարողությունների, այլև հայ ժողովրդի ազգային միասնականության վերաբերող հարց է համարում:

Պոլսահայ միջավայրում «Տոնացույցի»՝ Սիմեոնի խմբագրության դեմ պայքարը մի քանի խոր շերտեր ուներ, և չի կարելի միայն հայ կաթոլիկների հակազդեցությամբ և Զաքարիա պատրիարքի կաթողիկոսական հավակնություններով բացատրել:

Պոլսահայ ավանդապահ միջավայրում խորթ են թվում Սիմեոնի կատարած բարեփոխությունները և հայոց շարժական տոմարով պայմանավորված մի շարք շաբաթների տոների կանոնավորումները, նաև նոր տոների հավելումները: Այս փոփոխությունները և Սիմեոնի, ապա և Ղուկասի ջանքերը՝ կաթողիկոսական իշխանությամբ հաստատել տալ դրանք, ընկալվում են որպես էջմիածնի իշխանության և թելադրանքի փորձ պոլսահայության վրա:

«Ատենի ժամագրքի» տպագրմանը և ապա հայրապետական կոնդակով տարածելուն զուգընթաց՝ Կարնեցին պատվիրում է, որ Կ. Պոլսի եկեղեցիներում ընդունվի և կիրառվի Սիմեոնի կազմած «Տոնացույցը», քանի որ վերջինս եթե չընդունվեր, ապա չէր ընդունվի նաև «Ատենի ժամագիրքը», որում ևս տպագրվում էր նույն «Տոնացույցը»:

1784 թ. օգոստոսի 26-ին Հարություն ամիրային գրած նամակում կաթողիկոսը դիմում է նրան, որպեսզի հեղինակավոր այս ամիրան ևս միջնորդի՝ վերջ տալու նոր «Տոնացույցը» արգելելու և հնին անցնելու փորձերին[282]:

1784 թ. օգոստոսի 26-ին Պոլսի պատրիարքին գրում է, թե ոմանք «ոչ նոր Տօնացուցիւն վարին, այլ հնովն: Պատուէր և յորդորումն՝ խափանել զայն կամսն եւ բառնալ զտարաձայնութիւնն»[283]:

1785 թ. նորից Կ. Պոլիս գրած մի նամակում Կարնեցին ասում է, որ հակառակությունը և «Տոնացույցը» չընդունելու փորձերը չեն կարող ազդել իր վրա. «Ամենայն ձայնք հակառակորդաց ոչ թուին ականջաց մերոց»[284]:

Պոլսահայերը ոչ միայն չեն ընդունում նոր «Տոնացույցը», այլև ի հակադրություն արդեն տպագրված «Ատենի ժամագրքի»՝ նորից տպագրում են հին «Տոնացույցը»: Վիճաբանության և պառակտման տեղիք չտալու համար Կարնեցին 1787 թ. հունվարին երկու նամակ է գրում Կ. Պոլիս՝ պատրիարքին, հոգևոր դասին և ժողովրդին՝ ասելով, թե ով որով ցանկանում է, թող առաջնորդվի, միայն թե երկպառակություն չընկնի ժողովրդի մեջ:

281 Նույն տեղում, էջ 174:

282 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Թ, էջ 666:

283 Նույն տեղում, էջ 676:

284 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 518:

Այս շրջանում կատարված հրատարակությունների տիտղոսաթերթին, այդ թվում և էջմիածնի, ընդունված էր նշել տպագրության սկսման, իսկ հիշատակարանում՝ ավարտման ժամանակը: Օրինակ՝ «Քահանայաթաղի» տիտղոսաթերթին նշվում է, որ տպագրությունն սկսվել է 1777 թ., իսկ հիշատակարանում ասվում է, որ ավարտվել է 1778 թ.:

«Ժամագրքի» տիտղոսաթերթին, որքան էլ զարմանալի է, որևէ հիշատակություն չկա գրքի տպագրության թվականի մասին: Փոխարենը հիշատակարանում ասվում է, որ տպագրությունն ավարտվել է 1785 թ. դեկտեմբերի վերջին:

Տիտղոսաթերթին տպագրության սկսվելու թվականը Ղուկաս կաթողիկոսը և գրքի հրատարակության պատասխանատուները չեն նշել, ամենայն հավանականությամբ, այն մտավախությամբ, որ տպագրությունը կարող էր երկար տևել, ինչպես որ «Պարտավճարը» սկսվեց 1779 թ. և ավարտվեց 1783 թ.:

Գրքի տպագրության ձգձգման հնարավոր պատճառները, որոնք իրականացան, երեքն էին:

Առաջին՝ երկրի անկայուն վիճակը, որի բարձրակետը դարձավ լեզգիների արշավանքը:

Երկրորդ՝ Սիմեոն կաթողիկոսի «Տոնացույցի» դեմ ծավալված շարժումը, որի դեպքում չէր կարող կիրառվել նաև «Ատենի ժամագիրքը», քանի որ «Տոնացույցը» նրան մաս կազմող 3 գրքերից մեկն էր:

Երրորդ՝ զուտ տպագրական առումով ուղղակի սխրանք էր այդ պայմաններում նման շքեղ մեծադիր հրատարակության իրականացումը: Հայրապետական իշխանությանը վայել շքեղությամբ «Ժամագրքի» տպագրությունը կարող էր բավականին երկարել թե՛ տպագրության դժվարության համար և թե՛ տպագրության համար անհրաժեշտ նյութերի բացակայության պատճառով:

Տպագրության սկսվելու ժամանակի մասին գրքում թեև որևէ հիշատակություն չկա, կաթողիկոսական դիվանի վավերագրերից, սակայն, երևում է, որ այն սկսվել է 1783 թ.՝ անմիջապես հաջորդելով «Պարտավճարի» տպագրությանը:

Կ. Պոլսի Նվիրակ Իսահակ վարդապետին 1783 թ. գրած նամակում Կարնեցին ասում է. «Պարտավճար գրքի ելանելն ի տպէն և մեր կազմել տալն և յղելն առ քեզ և զԱտենւոյ սկսանիլն, յառաջ գրեցաք սիրելւոյդ»[285]: Վերջին արտահայտությունից երևում է, որ նա ավելի վաղ արդեն գրել է «Պարտավճարի» տպագրվելու և մամուլները գրքով կազմելու, ինչպես նաև «Ատենի ժամագրքի» տպագրության սկսվելու մասին: Հետևաբար վերջինս սկսել է տպագրվել 1783 թ. սեպտեմբերի 22-ից առաջ: Իսկ այս նամակի գրության պահին տպագրությունն արդեն հասել էր «Մի՛ նախանձիր» կանոնի «Ի ծափս հարէք» հատվածին:

---

285 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 388:

Նամակներում հաղորդված տեղեկությունները հնարավորություն են տալիս հետևելու տպագրության ընթացքին։

1784 թ. մարտին գրած նամակներից տեղեկանում ենք, որ «Ատենի ժամագրքի» առաջին գրքի՝ «Սաղմոսարանի» տպագրությունն ավարտվել է, և սկսվել է օրվա 9 ժամերի՝ «Ժամակարգության» տպագրությունը։ Գրում է, որ այն դանդաղ է ընթանում, որովհետև խազագիր են տպագրում, իսկ գրաշարն անվարժ է խազերը շարելուն. «Բայց զի խազ շարի ի ձայնաւորսն, գրաշարն անվարժ է, փոքր մի յամր և աշխատութեամբ յառաջ ընթանայ բանն»[286]։

1784 թ. մայիսի 29-ին գրքի տպագրության բարերար Խաչիկ Պողոսյանին գրում է, որ տպագրությունը հասել է «Ժամագրքի» Գիշերային ժամի կանոնի վերջին[287]։

1785 թ. մայիսին գրում է, որ մինչև այդ տարվա Զատիկը տպագրել են «Տոնացույցի» առաջին հատորը և երկրորդ հատորի առաջին երկու մամուլները[288]։ Հետևաբար տպագրությունը մոտենում էր ավարտին։

1785 թ. օգոստոսի 25-ի նամակում ասվում է, որ «Ատենի ժամագրքի» տպագրությունն ավարտվել է և գրքի մեկ օրինակ ուղարկում է Բասրա[289]։ Նույն օգոստոսին, սակայն, գրքի տպագրության բարերար Խաչիկ Պողոսյանին գրում է, թե երեք մամուլ է մնացել, որ տպագրությունն ավարտվի[290]։

Այս և հաջորդող ամիսներին գրված մի քանի այլ նամակներից երևում է, որ կաթողիկոսն առանձին օրինակներ շուտափույթ կազմել և ուղարկել է մի քանի բարերարների։

Տպագրված մամուլների ներկը չորանում և գիրքը վերջնականորեն կազմվում է 1786 թ. առաջին կեսին։ Մայիսին գրած մի քանի նամակներում արդեն նշվում է գրքի կազմման և առաքման մասին։ Մայիսի 8-ին Պոլիս գրած նամակում ասում է, որ Հնդկաստանի համար կազմել են 100 օրինակ և սպասում են հարմար ժամանակի, որ ուղարկեն [291]։

Կ. Պոլսի նվիրակ Իսահակ վարդապետին «Ատենի ժամագրքի» մասին եղած հարցմանն ի պատասխան գրում է. «... ահա կազմեն, յետ աւուրց յղելոց եմք ի դուրս գալն ի ձեռաց կազմչացն»[292]։

Նման դժվարությամբ և շքեղ փորագրանկարներով տպագրված և բարձրարվեստ կազմմամբ գիրքը պետք է բավականին թանկ արժենար։ Ինչպես գրում է Վ. Գրիգորյանը, էջմիածնում մեկ օրինակը վաճառվել է 7000 դիանով։ 10000 դիանը հավասար է եղել 1 թումանի, որով այն ժամանակ մի գոմեշ կարելի էր գնել[293]։

---

286 Նույն տեղում, էջ 407:
287 Նույն տեղում, էջ 425:
288 Նույն տեղում, էջ 518:
289 Նույն տեղում, էջ 537:
290 Նույն տեղում, էջ 539:
291 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 149:
292 Նույն տեղում, էջ 161:
293 Նույն տեղում,էջ LXX:

Գրքի տպագրությունը թեև բավականին թանկ է եղել, կաթողիկոսը, սակայն, բուն վարձատրությունից դուրս նաև տարբեր պարգևներ է տվել տպագրությունն իրականացնողներին և հատկապես փորագրիչ վարպետ Հարություն սարկավագին, ով, սկսած Սիմեոն կաթողիկոսի շրջանից, իր աշակերտ Խաչատուր սարկավագի հետ ավելի ու ավելի էր վարպետանում փորագրության արվեստի մեջ։

Վ. Գրիգորյանը վկայակոչում է վանքի ելից մատյանը, որում 1785 թ. ներքո ասվում է. «Տպագիր Յարութիւնին ետուք այս ինչ, մինչ պատկերն Դաւիթ մարգարէին նորապէս փորեալ տպեաց և ընծայեաց Վեհապետին, Բ (2) գազ և Ա (1) կարմիր ֆիլամանկ չուխայ, Դ (4) գազ ծիրանի շալ, Ա (1) թօփ ղուրնի և Ա (1) Պաղդատի մորթով ֆիլամանկ գլխակ, ի փետրվարի Ե (5)»[294]։

Գրառումից երևում է, որ հիշյալ նվերները տրվել են «Ատենի ժամագրքի» առաջին գրքի՝ «Սաղմոսարանի» սկզբում գտնվող Դավիթ մարգարեի փորագրանկարը պատրաստելու համար, երբ նա տպագրված պատկերը նվիրում է կաթողիկոսին։ Գրքի տպագրությունն ավարտվելուց հետո «նվերներ են տրվում և՛ Հարությունին, և՛ մյուս տպագրիչներին՝ տիրացու Խաչատուրին, Մաղաքիա գրաշարին, Գեորգ և Աղեքսանդր «տպչացն»[295]։

Ի տարբերություն Սիմեոն կաթողիկոսի՝ Կարնեցին Զաքիկյանցի նման մնայուն բարերար չուներ։ Հնդկահայ Խաչիկ Պողոսյանը թեև իր կարևոր ներդրումն է բերել տպարանի գործունեության շարունակմանը և մի քանի գրքերի հրատարակության, սակայն ոչ միայն Կարնեցու տպագրական բոլոր ձեռնարկումների աջակիցը չի եղել, այլև չի ունեցել Զաքիկյանցի կարողությունը։ Կարնեցին նրա հետ տևական բանակցությունների մեջ է եղել, որոշակի աշխատանք է տարել համոզելու, որ տրամադրի «Ատենի ժամագրքի» տպագրման անհրաժեշտ միջոցները։ Փորձել է հիմնավորել այս գրքի տպագրության կարևորությունը, որ այն կանմահացնի նաև բարերարի անունը։

1784 թ. մայիսի 29-ին վերջինիս ուղղված նամակում գրում է. «Ապա և դու, օրհնեցեալդ ի Տեառնէ, լաւապէս խորհելով զմեծավարձութիւն այսր գրքոյս, թէ յորքան տեղիս և յեկեղեցիս է սփռիլոց և զպատճառդ տպեցման իւրոյ օրհնութեամբ յիշատակեցուցանելոց, նաև մտածելով ևս զերկար միջոցաւ աշխատութիւնս մեր և զբազմութիւն ծախուցն, պարտիս առատ տրօք զօգնութիւն ինչ առնել սրբոյ Աթոռոյս՝ լուսատոյ ծնողիս քոյ, եթէ կամիս, և գրել մեզ, զի զյիշատակն սիրելւոյդ տպեցուսցուք ի յիշատակարանօջն»[296]։

Բարերարին փորձում է համոզել՝ տալու անհրաժեշտ գումարը՝ ասելով, թե «Ատենի ժամագիրքը» կարդացվելու է հայկական բոլոր եկեղեցինե-

294 Նույն տեղում, էջ LXXI:

295 Նույն տեղում:

296 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 426:

րում, որով և իր անունն է օրհնությամբ հիշատակվելու։ Հիշեցնում է նաև, թե որքան աշխատանք է կատարվել գրքի տպագրությունն իրականացնելու համար, ուստի և նա պետք է տար անհրաժեշտ գումարը՝ որպես օգնություն իր լուսատու ծնող Ս. էջմիածնին, որի համար Խաչիկ Պողոսյանի անունը կհիշատակվեր գրքի վերջում։

Նաև ասում է, որ եթե համաձայն է անհրաժեշտ գումարը տալ, ապա ստորագրի Իսահակ վարդապետի հետ ուղարկված պայմանագիրը։

Գրագրության ընթացքը ցույց է տալիս, որ կաթողիկոսը ոչ թե սպասել է անհրաժեշտ գումարը ստանալուն, որպեսզի սկսի տպագրությունը, այլ սկսել է՝ ակնկալելով, որ մինչև տպագրության ավարտը կստանա այն և բարերարի անունը կգրի հիշատակարանում։

Նույն թվականի նոյեմբերի 18-ի նամակից պարզվում է, որ Խաչիկ Պողոսյանը որոշել էր կաթողիկոսի ակնկալածից ավելի քիչ գումար՝ 1000 ղուռուշ տալ։ Կարնեցին նրան գրում է, որ եթե տեսներ, թե ինչ «տաժանմամբ» է տպագրվում գիրքը, 2000 տալը ևս քիչ կհամարեր[297]։ Կարնեցին ասում է, թե 1500-ը ևս բավական է, սակայն եթե ավելի քիչ տա, «ոչ վայել է մեզ առնուլ՝ ըստ այնմ, զի ոչինչ բերէ զօգուտ Տանս սրբոյ»[298]։

Միաժամանակ բարոյապես պարտավորեցնելով՝ ասում է, որ եթե անգամ ոչինչ ևս չտա, միևնույնն է անունը գրելու է որպես բարերարի։ Գրքի վերջում Խաչիկ Պողոսյանի և նրա գերդաստանի հիշատակը պանծացնող տողեր են գրված, որից կարելի է ենթադրել, որ ամեն դեպքում նա տվել է տպագրության համար անհրաժեշտ գումարը։

Վարված գրագրությունից կարելի է ենթադրել, որ գրքի տպագրության ավարտը, ապա կազմելը ձգձգվել է, որովհետև կաթողիկոսը փորձել է ճշտել՝ արդյոք հնդկահայ մեծահարուստը տալո՞ւ է այդ գումարը, թե՞ ոչ, որպեսզի հիշատակարանում նրա անունը գրի կամ ոչ։ Այս պատճառով է, որ գրքի մի քանի օրինակներ, տպագրությունը դեռևս չավարտած, ուղարկել է Հնդկաստան և սպասել պատասխանի։

Գրքի մամուլների կազմման առումով ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ տպագրության ավարտման հիշատակարանը մաս չի կազմում վերջին մամուլին. այն տպագրված առանձին թերթ է և մի շարք դեպքերում ամրացված է գրքի կազմի երկրորդ փեղկի ներսի երեսին, ինչը ևս ցույց է տալիս, որ այն տպաքանակի տպագրվելուց հետո է առանձին թերթերով տպվել, երբ հնդկահայ Պողոսյանը կա՛մ խոստացել է գումարը տալ և կա՛մ տվել է։

297 Նույն տեղում, էջ 482:

298 Նույն տեղում:

Յովսեպոս Փլաբիոս, «Գիրք Պատմութեանց Յովսէպոսի Եբրայեցւոյ արարեալ յաղագս պատերազմին Հրէից ընդ Հռովմայեցիս», Ս. Էջմիածին, 1787 թ. (496 էջ)

Ս. Էջմիածնի մյուս հրատարակությունների ընդհանուր տրամաբանությունից թվում է, թե դուրս է այս գիրքը: Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսներն առաջնահերթ կարևորություն էին տալիս Հայոց եկեղեցու ծիսական գրքերի հրատարակությանը, և դրանցից դուրս տպագրվել են միայն Սիմեոն կաթողիկոսի հեղինակած և Ս. Էջմիածնի պանծացմանը նվիրված «Զբոսարան հոգևոր», «Տաղարան» և «Պարտավճար» գործերը:

Կաթողիկոսական դիվանի վավերագրերից երևում է, որ Ղուկաս կաթողիկոսը սկզբնապես խուսափել է տպագրել այս գործը՝ պատրվակ բերելով թարգմանության հաջող չլինելը կամ Մայր Աթոռում թարգմանության ամբողջական և հաջող օրինակներ չունենալը, այն դեպքում, երբ հենց Էջմիածնում էր գտնվում թարգմանչի ինքնագիր օրինակը: Զարմանալի է նաև, որ հնդկահայ բարերար Խաչիկ Պողոսյանը, ով որոշակի դժվարությամբ հատկացրեց «Ատենի ժամագրքի» տպագրության համար անհրաժեշտ գումարը, շռայլորեն տալիս է այս գրքի տպագրության ծախսը՝ խնդրելով և պնդելով, որ այն Ս. Էջմիածնում տպագրվի:

Ինչո՞վ էր պայմանավորված կաթողիկոսի խուսափելը և բարերարի՝ այս գիրքն անպայման տպագրված տեսնելու ցանկությունը: Այն ճիշտ հասկանալու համար նախ պետք է հաշվի առնել, թե երբ և ինչ նկատառումով է հայերեն թարգմանվել Հովսեպիոս Փլաբիոսի կամ Եբրայեցու հիշյալ գործը, որը վերաբերում է հրեաների ապստամբությանը Հռոմեական կայսրության դեմ:

Ինչպես կտեսնենք, թեև կար հին թարգմանությունը, Ստեփանոս Լեհացին, սակայն, այն նորից սկսել է թարգմանել Փիլիպոս Ա Աղբակեցու կաթողիկոսության տարիներին և ավարտել հայ ազատագրության գաղափարի արծարծման դրոշակակիրներից Հակոբ Դ Ջուղայեցու կաթողիկոսության տարիներին: Գրքի թարգմանության ժամանակը համընկնում է հայ-հռոմեական աշխուժացած բանակցությունների շրջանին, որոնք ինչպես նախորդ բանակցությունները, նպատակ ունեին հասնելու Հռոմի աջակցությամբ Հայաստանի ազատագրման դիմաց կատարվելիք դավանական զիջումներին: Հերթական անգամ քաղաքական ակնկալիքների ի դերև ելնելուց հետո թարգմանությունը մոռացության է մատնվում:

Հովսեպիոսի այս գործը նվիրված էր Հռոմեական կայսրության դեմ 1-2-րդ դարերում հրեա ժողովրդի մղած անհավասար և հերոսական ապստամբությանը: Հայերեն թարգմանելու ենթատեքստն էր հայ ժողովրդին ներշնչել այն միտքը, որ նա ևս կարող է ապստամբություն բարձրացնել և ձգտել նվաճել իր անկախությունը:

Պատահական չէ, որ գրքի տպագրության հարցն արծարծվում է 1780-ական թվականներին և այն էլ՝ Հնդկաստանում բնակվող ազգային գործչի կողմից: Այստեղ վստահաբար ակնհայտ է Մադրասի ազատագրական խմբակի գաղափարների ազդեցությունը: «Նոր տետրակի» և «Որոգայթ փառաց»-ի օրինակով տեսնում ենք, որ դրանք, նպատակամիտված լինելով Հայաստանի անցյալի փառքի ոգեկոչմանը և ստեղծվելիք հայկական պետության պետական կարգին, առաջ բերեցին Սիմեոն կաթողիկոսի բուռն հակազդեցությունը: Հայոց հայրապետի՝ Շահամիր Շահամիրյանին գրած նամակի գլխավոր իմաստն այն էր, որ Մադրասում գտնվողները չգիտեն Հայաստանի իրական վիճակը և չեն պատկերացնում, որ հնարավոր չէ տիրող բռնակալության պայմաններում հասնել հայոց պետականության վերականգնմանը որևէ ապստամբության կամ զինական դաշինքի միջոցով: Սիմեոն կաթողիկոսը Շահամիրյանին գրում էր, որ զգուշանա վտանգավոր գրքեր տպագրելուց, որ «կործանիչ էր ազգիս խղճալոյ»[299]:

Իր զգուշավոր կեցվածքով, ժողովրդին չհաշվարկված փորձություններ տանելու փոխարեն Արևելյան Հայաստանի վերաշինմանը նվիրված ձեռնարկներով նույն քաղաքականության կողմնակիցն էր Ղուկաս Կարնեցին: Շահամիրյանին նա գրում է, որ անողորմ թշնամիների ձեռքում են գտնվում և անգամ հավատարմությամբ ծառայելով՝ նրանց կողմից ողորմածության չեն արժանանում, ուր մնաց, թե ապստամբություն փորձեն բարձրացնել, որը նույնիսկ չեն կարող իրականացնել: Շարունակելով խոսքը՝ ի պատասխան Շահամիրյանի այն հանդիմանության, թե ձեզ հաճո է այլազգիներին ծառայելը և չեք սիրում ազատությունը, կաթողիկոսը գրում է, որ եթե նա լիներ Հայաստանի տարբեր կողմերում, նոր կհասկանար ժողովրդի անօգնական վիճակը և իշխողների բռնության աստիճանը[300]:

Այս պայմաններում Հովսեպիոսի գործի թարգմանության տպագրումը պետք է պատմագաղափարական հիմնավորում ծառայեր այն ըմբռնման համար, որ հայ ժողովուրդը ևս պետք է ձգտի նվաճել իր ազատությունը համընդհանուր ապստամբությամբ: Կարնեցին, լավ հասկանալով, որ հիշյալ գործի տպագրությունը ծառայելու է Մադրասյան խմբակի ըմբռնումների հիմնավորմանը, ինչպես նաև ցանկանալով հայ ծիսական մատյանները հաջորդաբար հրատարակել, ամեն կերպ խուսափում էր այս գրքի տպագրությունից, սակայն ի վերջո տեղի է տալիս՝ ըստ երևույթին չցանկանալով վշտացնել հնդկահայ բարերարին, ինչպես նաև նկատի ունենալով, որ այն ուղղակիորեն Հայաստանին չի վերաբերում, և պարսկական ու օսմանյան իշխանություններին կատարված մատնություններ դեպքում որևէ մեղադրանք չի կարող սպառնալ Ս. էջմիածնին:

Հովսեպիոսի գործի հրատարակությամբ սկզբնավորվում է պատմա-

299 Դիւան հայոց պատմութեան, գիրք Ը, էջ 573:

300 Դիւան հայոց պատմութեան, հտ. Ա-Բ, էջ 17-18:

կան այլաբանության միջոցով հայ ժողովրդի ազատագրության խնդիրներին և ժամանակի քաղաքական վիճակին արձագանքելը։

Պատմական այլաբանությանը դիմելը իր գեղարվեստական-գաղափարական բարձրակետին էր հասնելու մեկ դար անց՝ Րաֆֆու «Սամվելում», երբ Բեռլինի կոնգրեսից և Սան Ստեֆանոյից հետո տարված զուգահեռով «նենգավոր Բյուզանդիոն» ասելով՝ գրողը նկատի էր ունենալու եվրոպական պետություններն ու Ռուսաստանը։

Վերն ասվածի հիմնավորումները և գրքի տպագրության ընթացքը այժմ ներկայացնենք ըստ Կաթողիկոսական դիվանի վավերագրերի և թարգմանության տպագրության հիշատակարանի։

Քանի որ Կարնեցին հակված չի եղել այս թարգմանությունը տպագրելու Խաչիկ Պողոսյանի առաջարկին, 1784 թ. նոյեմբերին նրան ուղղված նամակում խուսափողական պատասխան է տալիս։ Այն տպագրելը նպատակահարմար չի համարում հայերեն թարգմանության հետ կապված խնդիրների պատճառով։ Ասում է, թե կան երկու տարբեր թարգմանություններ, որոնք իրար չեն համապատասխանում։ Նաև իրար հետ համեմատելով՝ ամբողջական բնագիր կազմելու համար անհրաժեշտ թվով ձեռագրեր չկային։ Ժամանակը ևս նպաստավոր չի համարում հայերեն թարգմանության բնագրի կազմման համար, որը բավականին աշխատատար էր լինելու. «Զունիմք զանդորր ժամանակ և զհանգիստ կեանս։ Վասն որոյ այն գրքոյ տպագրութիւնն ներկայիս բան չէ»[301]։ Չի ասում, թե այժմ հնարավոր չէ գիրք տպագրել, այլ որ ա՛յս գիրքը հնարավոր չէ տպագրել։ Գտնում է, որ «Ատենի ժամագրքի» տպագրությունն ավարտելուց հետո հարկավոր է տպագրել մի քանի «թեթև գրեանս, որք յոյժ հարկաւորք են»։ Չի նշում, սակայն, թե որոնք են այդ անհրաժեշտ գրքերը։ Նաև ասում է, որ դրանցից հետո Աստված եթե հաջողի, պետք է «Ճաշոցը» տպագրել։ Վերջինիս տպագրության անհրաժեշտության մասին գրելը ևս ցույց է տալիս, որ Կարնեցու նպատակն էր Հայոց եկեղեցու ծիսական գրքերի հրատարակությունը։

Հովսեպիոսի գործի տպագրության մասին 1785 թ. փետրվարին ավելի մեղմ է գրում։ Այս նոր նամակում արդեն հարմար չհամարելով Փարպեցու «Հայոց պատմությունը» ըստ մեկ ձեռագրի տպագրելը և վկայակոչելով Հովսեպիոսի «Պատմությունը»՝ գրում է. «Քանզի եթէ զՅովսեփոսի թարգմանչի ձեռագիրն ունիմք և զբ (2)-ս ևս այլ և դեռևս այսքան զգուշանամք, ապա այսու միակ սխալ օրինակաւ զիա՞րդ համարձակիմք զայն գիրք տպել»[302]։

1785 թ. օգոստոսի 31-ին Կ. Պոլսի Նվիրակ Իսահակ վարդապետին Կարնեցու գրած նամակից տեղեկանում ենք, որ հնդկահայ բարերարը 2500 ղուռուշ է ուղարկել «Ատենի ժամագրքի» և Հովսեպիոսի Պատմութ-

301 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 482:

302 Նույն տեղում, էջ 519:

յան տպագրության համար։ «Ատենի ժամագրքի» մասին գրելիս տեսանք, որ Կարնեցին նրան ասում էր, թե «ժամագրքի» տպագրության համար հարկավոր է 1500 ղուռուշ։ Հետևաբար մյուս 1000-ը Հովսեպիոսի թարգմանության համար է։ Մյուս դեպքերում Կարնեցին եթե ինքն էր տպագրության համար անհրաժեշտ գումարը խնդրում, ապա այս դեպքում նա գրեթե դիմադրելով է վերցնում այն՝ տեսնելով, որ չի կարող խուսափել տպագրությունից, ստիպված համաձայնում է։

Խաչիկ Պողոսյանը նաև թարգմանության մի «յոյժ սխալաշատ» օրինակ է ուղարկում տպագրելու համար։ Կարնեցու գրածից, սակայն, տեղեկանում ենք, որ նա նախընտրում է «տպել ի մեր ունեցեալ սրբագիր օրինակէն, որ թարգմանչի և նորին աշակերտի ձեռագիրն է»[303]։ Կարնեցին նկատի ունի Ստեփանոս Լեհացու ինքնագրի և Լեհացու աշակերտ Հովհաննես Կարճավանցու կողմից ընդօրինակված ձեռագիրը, որից կատարել է տպագրությունը, և որի հիշատակարանը որպես նախագաղափար հիշատակարան բերված է գրքի վերջում։ Լեհացու ինքնագիր օրինակը, պահվելով Մայր Աթոռում, այժմ Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 1909 ձեռագիրն է, որը թարգմանչի՝ Ստեփանոս Լեհացու ինքնագիր օրինակն է՝ գրված 1660 թ.[304]։ Հնդկահայոց նվիրակ եփրեմ վարդապետին (ապագա Ամենայն հայոց կաթողիկոս Եփրեմ Ա Ջորագեղցի) 1787 թ. փետրվարին գրում է, որ գրքի տպագրությունն ավարտվել է և «զկնի սակաւ միջոցի յղելոց եմք քեզ»[305]։

Նույն թվականի օգոստոսի 25-ին Շահամիր Շահամիրյանին ուղղված նամակում դարձյալ գրում է, որ գիրքը նոր է լույս տեսել։ Ասում է, որ «Պարտավճարից» և «Ատենի ժամագրքից» հետո «զՅովսեպոս պատմագիրքն ևս տպագրեալ աւարտեցաք, և տուեալ եմք ի կազմել»[306]։ Հետևաբար 1787 թ. օգոստոսին տպաքանակը դեռևս կազմված չէր։

Տպագրության հանգամանքների մասին մանրամասն գրված է գրքի վերջում գտնվող թարգմանության նախագաղափար, ապա և՝ տպագրության հիշատակարաններում։

Լեհացու թարգմանությունը նրա գիտությամբ ընդօրինակել է իր աշակերտ Հովհաննեսը, ով եղել է Մեղրու Կարճավան գյուղից, որի համար անվանվել է Կարճավանցի։ Նա Հովսեպիոսի «Պատմության» ընդօրինակության վերջում գրված հիշատակարանում ասում է, որ վանական իր եղբայրների հետ Լեհացուն խնդրել են թարգմանել այս գործը։ Թարգմանությունից հետո Լեհացին իր միջոցներով ընդօրինակել է տվել թարգմանությունը և տարածել։ Հիշատակարանում Կարճավանեցին գրում է, որ

303 Նույն տեղում, էջ 539:

304 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Զ, խմբ. Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2012, էջ 489-492:

305 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 217:

306 Նույն տեղում, էջ 276:

այս մեկ օրինակը Լեհացու ձեռքով գրվածն է, որն ինքը պահել է իր մոտ: Ասում է, որ այս ձեռագրի գրությունն ավարտվել է 1660 թ.՝ Հակոբ Դ Ջուղայեցու կաթողիկոսության շրջանում:

Ձեռագրից իրականացված տպագրության ժամանակ վերջում տպագրվել է նաև այս հիշատակարանը[307], ինչպես նաև Ստեփանոս Լեհացու թարգմանության հիշատակարանը[308]: Գրքի տիտղոսաթերթում ևս ասվում է, որ տպագրվում է թարգմանության ինքնագրից՝ «տպագրութեամբ ի լոյս ածեցեալ ի ստոյգ ձեռագրէ նոյնոյ թարգմանչին»:

Որ Լեհացու հիշատակարանը մաս է կազմել այն ձեռագրին, որից իրականացվել է տպագրությունը, երևում է հետևյալ հանգամանքից: Լեհացին, Հովսեպիոսի «Պատմությունն» անվանելով «յոյժ պիտանի և օգտակար ուսումնասիրացն», այնուհետև խնդրում է՝ թե ովքեր կընդօրինակեն այս ձեռագիրը, ընդօրինակեն նաև իր գրած հիշատակարանը:

Վերջինս բառացիորեն համընկնում է Հովսեպիոսի «Պատմութիւն հրէից» գործի՝ Ստեփանոս Լեհացու հայերեն թարգմանության ինքնագիր օրինակի հիշատակարանին[309]:

Ձեռագրերում գրիչի կամ թարգմանչի հիշատակարանը, որը կից էր լինում այն ձեռագրին, որից հետո մեկ այլ ձեռագիր էր ընդօրինակվում, նոր ձեռագրում ընդօրինակված հին հիշատակարանն անվանվում էր «նախագաղափար հիշատակարան»: Այսպիսին է նաև Լեհացու թարգմանության հիշատակարանը, քանի որ այն արտատպվել է Լեհացու ձեռագրից և տպագրի վերջում անվանվում է «Յիշատակարան թարգմանողի Պատմութեանս Յովսէպոսի Եբրայեցւոյ»:

Գիրքն ավարտվում է տպագրության հիշատակարանով: Ասվում է, որ Հովսեպոսի «Պատմությունը» թարգմանվել է շատ ավելի վաղ, ապա եղած օրինակները ոչնչացվել են Լենկ-Թեմուրի արշավանքի ժամանակ: Մինչ այդ հին թարգմանությունը հիշատակել են մեր եկեղեցու հայրերը, այդ թվում և՝ Գրիգոր Տաթևացին:

Գրքի տպագրության հանգամանքների հետ կապված ասվում է, թե Խաչիկ Պողոսյանն է խնդրել Ղուկաս կաթողիկոսին, որ տպագրի այն, և տվել է տպագրության համար անհրաժեշտ միջոցները: Գրքի տպագրման պատմությունն այստեղ այնպես է ներկայացնում, որպես թե Ղուկաս կաթողիկոսը, տեսնելով, որ եղած օրինակները սխալաշատ են, որոշում է տպագրել այն օրինակից, որը «նոյն ինքն իլովացի տէր Ստեփաննոս վարդապետն իւր ձեռամբն էր գրեալ, որ և նոյնն եղեալ կայր ի գրատանն Սրբոյ Աթոռոյս էջմիածնի» (էջ 495): Այս հիշատակությունը նաև մի կար-

---

307 **Յովսեպոս Փլաբիոս,** Պատմութիւնք յաղագս պատերազմին հրէից ընդ հռովմայեցիս, Ս. Էջմիածին, 1787, էջ 491:

308 Նույն տեղում, էջ 488-489:

309 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Զ, խմբ. Գ. Տէր-Վարդանեանի, էջ 490-491:

ևոր փաստ է 18-րդ դարի երրորդ քառորդում Ս. էջմիածնի ձեռագրատան գործելու մասին։

Հիշատակարանում այնուհետև նշվում է, որ ձեռագրից տպագրել են՝ որևէ բան չավելացնելով կամ չպակասեցնելով, ինչպես նաև՝ չփոխելով։ Միաժամանակ ասվում է, որ մի շարք դեպքերում հոլովման և խոնարհման ձևերն ուղղվել են ըստ այլ ձեռագրերի։

Այնուհետև հաջորդում է հիշատակությունների շարքը, և դարձյալ հիշվում են նախ՝ Սիմեոն, ապա և՝ Ղուկաս կաթողիկոսները։

Հիշվում է բնագիրը հրատարակության պատրաստած Մինաս արքեպիսկոպոսը։ Նրա կատարած բնագրագիտական աշխատանքը այսպես է ներկայացվում. «Որ հարազատօրէն ընթերցեալ զհեղինակն գրքոյս, զխառն տեղիս գրուածոցն պարզեաց, և ի յերկարութիւնս տանցն, զիւրաքանչիւր բանս գլխագրով տնատեաց վերստին առ հարկաւորութեանն»։

Ինչ վերաբերում է գրքի տպագրությանը, ապա անգամ «Ատենի ժամագրքի» համեմատ՝ այն ավելի բարձր տպագրական որակ ունի։ «Ատենի ժամագրքի» հրատարակությանը տեղյակ չլինելով՝ Հ. Գ. Զարպհանալյանը գրում է, որ այս հրատարակության մեջ «թէ ըստ տառից և թէ ըստ թղթոյն, համեմատական շատ աւելի արուեստ և ընտրութիւն կը նկատուի, քան նոյն գործարանէն նախընթացաբար ընծայուածներուն մէջ»[310]։

Գ. Լևոնյանը, Հովսեփիոսի «Գիրք պատմութեանց»-ն անվանելով «ընտիր հրատարակություն», գրում է. «Երևում է, որ տպարանի բանվորները, գրաշար թե տպագրիչ, էջկապ թե մրազարկ, որակավորվել են շատ զգալի կերպով։ Իր արվեստի մեջ խոշոր առաջադիմություն է երևան բերել և փորագրիչ Հարությունը։

Գիրքը շարված է **gիցերո** *չափսի նոր տառերով՝ մոտ 500 ծաղկափակ երեսների մեջ, տպագրությունը՝ սպիտակ և բարակ թղթի վրա, կատարված է խնամքով և մաքուր։ Կազմը սրճագույն կաշիով և մեջքն էլ ոսկեգրությամբ և զարդերով»[311]։*

«Սաղմոսարան», 1787 թ. (418 էջ)

«Ատենի ժամագիրքը» թեև սկսվում էր «Սաղմոսարանով», սակայն կարնեցին վերստին տպագրում է այն, ըստ երևույթին, երկու պատճառով. առաջին՝ «Ատենի ժամագիրքը» շատ ավելի ծավալուն և թանկ էր, ու բոլորին չէ, որ կարող էր մատչելի լինել։ Երկրորդ՝ այն եկեղեցական արարողությունների գիրք էր՝ նախատեսված եկեղեցու գրակալին դնելու համար, իսկ «Սաղմոսարանը» միաժամանակ ուներ նաև ընթերցողների լայն շրջանակ, որի համար հայկական տպագրության տարբեր կենտրոններում այս գրքի շարունակական հրատարակություններն արագորեն սպառվում էին։

310 **Հ. Գ. Զարպհանալեան,** Պատմութիւն հայկական տպագրութեան, էջ 192-193:

311 **Գ. Լևոնյան,** Հայ գիրքը և տպագրության արվեստը, էջ 152:

Ինչպես թուղթը, այնպես էլ դրսում տպագրվող գրքերը շատ դժվար էր հասցնել Մայր Աթոռ և ընդհանրապես Արևելյան Հայաստան, ինչը պետք է իրականացվեր Կ. Պոլիս-Կարին-Կարս ճանապարհով։

Տեսանք, որ Սիմեոն կաթողիկոսի առաջին հրատարակությունը եղել է «Սաղմոսարանը»։ Կարնեցին ևս «Սաղմոսարան» է տպագրում՝ նկատի ունենալով, որ այն մեծ պահանջարկ կարող է ունենալ արևելահայ միջավայրում։

Գրքի տիտղոսաթերթին նշված է, որ տպագրվել է 1787 թ., իսկ հրատարակությունում ասվում է, որ տպագրությունն ավարտվել է նույն թվականի սեպտեմբերին։

Մինչ գրքի տպագրությունը վախճանվել էր Խաչիկ Պողոսյանը, և Կարնեցին հնդկահայ մեկ ուրիշ բարերար է գտնում՝ սուրաթաբնակ Հովհաննջան Հակոբյանին, ով գրքի հիշատակարանում անվանվում է «ծերունազարդ»։ Ասվում է, որ նրա «արդարավաստակ արդեամբքն տպագրեցաւ սուրբ գիրքս, առ ի լինիլ բարի յիշատակ նմին և իւրայնոցն»[312]։

Կաթողիկոսի՝ 1787 թ. դեկտեմբերի 30-ին նրան գրած նամակից, սակայն, երևում է, որ հնդկահայ բարերարը, ով նաև Մայր Աթոռի գործակալը կամ ներկայացուցիչն էր Սուրաթում, ոչ թե գրքի տպագրության գումարն է տվել, այլ կաթողիկոսը, ի երախտագիտություն Մայր Աթոռին արած բարերարության՝ նրա անունը «Սաղմոսարանի» հիշատակարանում գրել է որպես գրքի բարերարի։

Մինչ այդ նա Ղուկաս կաթողիկոսից հետաքրքրվել է, թե ինչպիսին է տպարանի վիճակը, ի պատասխան որի՝ Կարնեցին այս նամակում գրում է. «Զտպարանէն հարցեալ էիր եւ մեք գրեցաք, թէ ոչ է խափանեալ եւ Աստուծով քան զառաջինն ճոխ է եւ զգրեանս տպեմք եւ տպելոց եմք»[313]։

Լեզգիների ավերիչ արշավանքից թեև ընդամենը երկու տարի էր անցել, սակայն Կարնեցին լավատեսությամբ գրում է. «Իսկ զորպիսութիւն երկրիս եւ կողմանցս եւ սրբոյ Աթոռոյս այսպէս իմա, զի երկիրս մեր ի միջակ խաղաղութեան կայ եւ Սուրբ Աթոռս եւս ի պայծառութեան, եւ մեք կրկնապատիկ ծաղկեմք եւ հրաշատեսիլ պատկերօք զարդարեմք զսուրբ տաճարս»[314]։

«Միջակ խաղաղութիւն» ասելով՝ նկատի ունի համեմատական այն խաղաղությունը, երբ որևէ արշավանք և պատերազմ շրջակա երկրների միջև չկար։

Այս նամակում կաթողիկոսը ոչ թե ասում է՝ լույս է տեսել այն գիրքը, որի միջոցները դու ես տրամադրել, այլ գրում է, որ ի նշան նրա կատարած բարերարությունների՝ իր և իր հարազատների հիշատակին է տպագրել. «Իսկ և որովհետև զայդքան բարերարութիւն ցուցանես առ Սուրբ Աթոռս, մեք ևս կամելով շնորհ իմն բարութեան ցուցանել առ քեզ՝ ի մասնաւո-

312 Սաղմոսարան, Ս. Էջմիածին, 1787, էջ 417:

313 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 322:

314 Նույն տեղում, էջ 323:

րապէս հատուցումն երախտեացդ զՍաղմոսն, զոր տպագրէաք խոշոր եւ լաւ գրովք, զորմէ յառաջին թղթոջ մերում յիշեալ եմք, զայն քեզ՝ ազնիւ սիրելւոյդ և քոյայնոցն յիշատակ արարաք. գրելով ի յիշատակարանի նորին զանուանս քո և քոյոցդ»[315]:

Հետևաբար գրքի տպաքանակը եղել է 800 օրինակ, որը, եթե հաշվի առնենք ժամանակի պայմանները, բավականին մեծ թիվ էր: Այն խոսքերից, թե այդքան մարդ՝ հոգևորական և աշխարհական, սաղմոսելիս կհիշեն նրան, ցույց է տալիս, որ գրքերն իրապես նախատեսված են եղել նաև աշխարհականների համար:

1787 թ. էջմիածնում հրատարակված «Սաղմոսարանի» և «Շարակնոցի» (1789 թ.) տիտղոսաթերթի վերևում պատկերված է Ս. էջմիածնի Մայր Տաճարը: Ներսում, ուր Իջման Ս. Սեղանն է, պատկերված է Գառն Պատարագյալ՝ խորհրդանշելով Միածնի էջքը՝ շրջապատված աջ և ձախ կողմերից երկնքից մինչև տաճարը ձգվող հրեշտակների բազմությամբ:

Նկարի ստորին մասում, ձախ և աջ կողմերում, ամենայն հավանականությամբ պատկերված են Բարդուղիմեոս առաքյալը՝ Տիրամոր պատկերը ձեռքին, և Թադեոս առաքյալը՝ աստվածամուխ Ս. Գեղարդը պահած: Կենտրոնում՝ Սավուղ Թագավորի դիմաց, տավիղ նվագող Դավիթ մարգարեն է՝ Սաղմոսարանի հեղինակը:

«Սաղմոսարանում» օգտագործված են «Ատենի ժամագրքի» զարդատառերը: Վերջինս քանի որ կրկնակիորեն մեծ էր «Սաղմոսարանից», ուստի սաղմոսների սկզբում դրված պատկերագիր տառերը խախտում են շարվածքի համամասնությունը՝ նկատելիորեն մեծ լինելով էջերի տողերի տառերից:

Հակոբ Մեղապարտի տպագրական հնարավորությունները չէին կարող ներել, որ նա «Սաղմոսարանի» պես ծավալուն և բարդ հրատարակություն իրականացներ, թեև նրա համար ևս ասվում է, թե մի «Սաղմոսարան» է հրատարակել[316]:

Հաջորդ երկու հայ տպագրիչները՝ Աբգար դպիր Թոխատեցին և Հովհաննես Տերզնցին, տպագրել են «Սաղմոսարանը»: Լվովում հիմնված հայկական տպագրությունը ևս սկսվում է «Սաղմոսարանի» (1616 թ.) հրատարակությամբ: Նոր Ջուղայի հայկական տպարանի գործունեությունը նույնպես սկսվելու էր 1638 թ. «Սաղմոսարանի» հրատարակությամբ: Նույն ձևով էր վարվելու նաև Ոսկան վարդապետ Երևանցին:

«Սաղմոսարաններում», այդ թվում և այս, ընկած են եղել պատկերների թեմատիկ ընտրության և տեղադրման հետևյալ երկու սկզբունքները.

Առաջին՝ պատկերները տեղադրվել են ըստ սաղմոսների վերնագրերի:

Երկրորդ՝ հարմարեցվել են որևէ սաղմոսի կամ վերջինիս տներից մեկի

315 Նույն տեղում:

316 **Կ. Գաբիկյան**, Հայ բժշկութեան շուրջը, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1906, հմր. 2961, 2963:

իմաստին: Հետևաբար, սաղմոսների բնագրային իմաստն ու խորհրդաբանական նշանակությունն են թելադրել, թե որ պատկերը որտեղ պետք է դնել: Երրորդ՝ հետևել են «Սաղմոսարանների» ձևավորման եվրոպական ավանդույթին և նկարները տեղադրել են այնտեղ, ուր լատիներեն հրատարակության նույն տեղում համապատասխան փորագրանկարն է եղել:

«Սաղմոսարանն» ունի իր ներքին կառուցվածքային բաժանումը: Յուրաքանչյուր միավորի սկզբում մի զարդագիր է դրված, իսկ նախորդի վերջում՝ որևէ բաժանարար նշան: Ժամանակի հայ տպագրիչի համեստ հնարավորությունների շրջանակում հայ ձեռագրային այս ավանդույթին ևս լիովին հավատարիմ է մնացել Աբգար Դպիրը: Այնպես որ, թե՛ նրա և թե՛ հաջորդող հրատարակություններում Սաղմոսների էջերի լուսանցազարդերը, ճակատազարդերը և սկզբի զարդագրերը, գեղարվեստական հարդարանքին ու ձևավորմանը զուգահեռ, ունեն նաև իմաստատարբերակիչ հատկանիշ՝ պայմանավորված «Սաղմոսարանի» կառուցվածքով և Դավթի 150 Սաղմոսների ներքին բաժանմամբ:

Դասական սաղմոսարաններում ներդաշնակ ամբողջություն են կազմում Սաղմոսների բնագրերը և նրանց վերնագրային մեկնաբանությունները, որոնց համար նման Սաղմոսարանները անվանվել են նաև «Փոքր մեկնիչս սաղմոսաց»: Համաձայն այդ մեկնությունների խորհրդի՝ գետեղված են նույնիմաստ պատկերներ:

Սաղմոսների վերնագրերի մեկնաբանությունները հիմնականում վերաբերում են Նոր Կտակարանի հետ տարված զուգահեռներին՝ ըստ միջնադարյան խորհրդաբանական այն ըմբռնման, որ Դավթի Սաղմոսները ևս մարգարեական կանխասացություններ են, որոնք կատարվեցին Նոր Ուխտում, որի համար Դավիթ թագավորը ոչ միայն «Սաղմոսերգու», այլև մարգարե է անվանվում:

Տարբեր սաղմոսների խորագրերի մեկնաբանություններում հանդիպող «ի կատարած» խոսքերը նշանակում են, որ դրանք կատարվել են Քրիստոսի ծննդից հետո, որով հատուկ ընդգծվում է Դավթի սաղմոսների մարգարեական կանխասացություն լինելը:

Ինչպես «Ժամագրքի» կազմում գտնվող «Սաղմոսարանի» օրինակով ասացինք, վերջինիս նկարագրության համար Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերը հղվում են հմր. 1642 ձեռագիր «Սաղմոսարանին»: Այն համեմատելով 1787 թ. հրատարակության հետ՝ տեսնում ենք, որ տպագրում ամբողջապես պահված է ձեռագրի կառուցվածքը ըստ ներքին ութ մեծ բաժանումների և դրանք իրարից անջատող բաժանարար նշանների:

«Սաղմոսարանի» սկզբում դրված է Դավիթ մարգարեի նկարը, որը նաև սկիզբն է առաջին մեծ բաժանումն ընդգրկող Ա-ԺԷ սաղմոսների: Առաջին բաժանումն ավարտվում է հրեշտակի պատկերով վերջնազարդով(էջ 43):

Հաջորդող էջը սկսվում է Սուրբ Երրորդության պատկերով, ապա զար-

դահլյուս ճակատազարդով և կից լուսանցազարդով սկսվում է երկրորդ մեծ բաժանումը, որն ընդգրկում է ԺՀ-ԼԵ սաղմոսները։

Սուրբ Երրորդության պատկերի ներքո բերված է ԼԲ սաղմոսի չորրորդ տողը՝ որպես հիշատակություն և կանխասացություն Սուրբ Երրորդության մասին։

Բոլոր ութ բաժանումների սկզբում գտնվող պատկերների համար որպես մակագրություններ ընտրված են այն սաղմոսներից, որոնք գտնվում են տվյալ բաժանման միջակայքում։

Երրորդ բաժանումն ընդգրկում է ԼԶ-ԾԴ սաղմոսները։ ԼԶ սաղմոսին նախորդող էջում բերված է Ավետման նկարը ԽԴ սաղմոսի 11-րդ տողով.

Լուր դուստր և տես՝ խոնարհեցո կունկն քո,
Մոռա զժողովուրդ քո և զտուն հօր քո,
Զի ցանկացաւ թագաւոր գեղոց Քոյ[317]։

Այս տողերը որպես կանխասացություն են ընկալվել կապված Տիրամոր՝ Ավետման ժամանակ ասված խոսքերի, թե ինքը Տիրոջ աղախինն է, և դրվել են Ավետման տեսարանը ներկայացնող նկարի ներքո։

Չորրորդ բաժանումն ընդգրկում է ԾԵ-ՀԱ սաղմոսները։ ՀԱ սաղմոսի 10-11-րդ տողերում ասվում է.

Թագաւորք Թարսոսի և կղզեաց՝ պատարագս մատուսցեն նմա,
Թագաւորք արաբայ և Սաբայ պատարագս բերցեն նմա։

Ինչպես ասացինք, այս տողերը որպես կանխասացություն են մեկնաբանվել Քրիստոսի Ծննդյան և մոգերի երկրպագության համար, ուստի հիշյալ տողերի հետ բերված է Ս. Ծննդյան պատկերը (էջ 140)։

Հինգերորդ՝ ՀԲ-ՁԸ սաղմոսներն ընդգրկող բաժնի սկզբում դրված է Խաչելության նկարը և բերված է ՁԵ սաղմոսի ԺԳ տողը.

Մեծ եղև ի վերայ իմ ողորմութիւն Քո Տէր
Եւ փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց։

Այս տողերը ուղղակիորեն համարվում են կանխասացություն Քրիստոսի խաչելությամբ դժոխք իջնելու ու ավերելու մասին, և բերված է Խաչելության պատկերը (էջ 184)։

Վեցերորդ բաժանումն ընդգրկում է ՁԹ-ՃԵ սաղմոսները։ ՁԹ սաղմոսին նախորդող էջում (էջ 236) բերված է Ս. Հարության պատկերը՝ համահունչ ՃԱ սաղմոսի ԺԲ տողի.

Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիոնի,
Ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

Յոթերորդ բաժանումն ընդգրկում է ՃԶ-ՃԺԸ սաղմոսները և ընտրված

317 Սաղմոսարան, 1787, Ս. Էջմիածին, էջ 90։

է Համբարձման նկարը (էջ 280), որի ներքո՝ որպես Համբարձման կանխասացություն, բերված է ՃԷ սաղմոսի հինգերորդ տողը.

Բարձրեալ ես դու յերկինս Աստուած,
և յամենայն երկրի են փառք Քո:

Վերջին՝ ութերորդ բաժանումն ընդգրկում է ՃԺԹ-ՃԽ սաղմոսները, և ընտրված է Հոգեգալստյան պատկերը (էջ 326), քանի որ Վերնատանը Սուրբ Հոգու գալստյան կանխասացությունն է համարվում ՃԽԲ սաղմոսի հետևյալ տողը.

Հոգի Քո Սուրբ և բարի՝ առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Ձեռագիր և տպագիր այս երկու սաղմոսարանների համեմատությունը ցույց է տալիս, որ 1787 թ. հրատարակությունը պահել է «Սաղմոսարանի» ձեռագրերից եկող ութ բաժանումների ավանդույթը հետևյալ գրքային ձևավորմամբ՝ տվյալ բաժանման հոգևոր այլաբանությանը և կանխասացությանը համարժեք թեմատիկ նկար, կից էջում տվյալ բաժանման առաջին սաղմոսը ճակատազարդի ներքո զարդատառ սկզբնատառով և այդ էջի երկայնքով լուսանցազարդով: Տվյալ բաժանումն ավարտվում է բաժանարար որևէ նշանով և սկսվում է հաջորդ բաժանումը:

«Սաղմոսարանը» համարվում է Ավետարանի նախօրինակը և կանխասացությունը, որի համար տարածված էր նրանց միատեղ տպագրելը:

«Սաղմոսարանի» խորհրդաբանական նման ըմբռնումը հստակորեն արտահայտվել է նաև այս հրատարակության ութ պատկերների հաջորդական ընթացքով: Դավիթ մարգարեին և Սուրբ Երրորդությունը ներկայացնող նկարներից հետո հաջորդ վեց պատկերները՝ Ավետում, Ս. Ծնունդ, Խաչելություն, Ս. Հարություն, Համբարձում և Հոգեգալուստ, ներկայացնում են Տերունական պատկերաշարի գլխավոր տնօրինությունները և ընդգրկում են ավետարանական պատմությունը Ավետումից մինչև Համբարձում և «Գործք Առաքելոցի» հետ կապված Հոգեգալուստ:

Գրքարվեստը

Առաջին բաժանման սկզբում դրված է Դավիթ Սաղմոսերգուի նկարը: Կից էջում կիսախորանի ներքո բերված է Դավթի առաջին սաղմոսը՝ «Երանեալ է այր» սկսվածքով: Հայ զարդանկարչության լավագույն ավանդների հետևողությամբ առաջին տողն ամբողջովին թռչնագիր է. ասես թռչունների երամի սլացքով է սկսվում սաղմոսերգությունը, ապա հաջորդող երկու տողերը երկաթագիր են, և հետո հաջորդում է բուն շարվածքը:

Որոշակի տարբերություն կա Աստվածաշնչի «Սաղմոսաց գրքի» և «Սաղմոսարանի» միջև, որը, ներկայացնելով Դավթի սաղմոսները, միաժամանակ մաս է կազմում եկեղեցական ժողովածուներին, ուստի այստեղ ևս տեղ են գտել Դավթի սաղմոսներից դուրս գտնվող, անգամ Նոր Կտակարանի հետ կապված մի շարք միավորներ: Այս հանգամանքը պայմանավո-

րել է նաև «Սաղմոսարանի» ուրույն կառուցվածքը և ներքին բաժանումը: Ձեռագրային ընդունված ավանդույթով, ասացինք, որ «Սաղմոսարանը» բաժանվում է ութ մասի, որոնցից յուրաքանչյուրն էլ իր հերթին է բաժանվում մի քանի ենթամիավորների: Երևանի Մատենադարանի ձեռագրերի նկարագրություններում Սաղմոսարանների համար որպես հիմք ձեռագիր ընտրված է 1663 թ. գրված հմր. 1642 ձեռագիրը[318]: Թեև այն ևս գրվել է 17-րդ դարում, սակայն հիմնված է նախորդ դարերի ավանդույթի վրա:

Ձեռագրային ավանդույթով առանձնակի ձևավորման էր ենթարկվում սկսվող գործի առաջին էջը: Անգամ եթե մի ձեռագրում մի քանի երկեր կային, յուրաքանչյուրի առաջին էջն իր ձևավորմամբ նկատելիորեն տարբերվում էր մյուսներից: Մի շարք գործերում, հատկապես Ավետարանների ու Սաղմոսարանների դեպքում, այս ձևավորումն ուղեկցվում էր առաջին բառի ճոխ զարդագրությամբ: Ինչպես օրինակ Աբգարի «Սաղմոսարանում», որտեղ առաջին սաղմոսի սկզբում պատկերված է Դավիթ մարգարեն՝ բնության աստվածային ներդաշնակության համապատկերում, ապա էջի ձախ լուսանցքում գրված է Ա, որը նշանակում է առաջին սաղմոսը, և համանման ձևով թվերի հայոց գրային համարժեքով համարակալված են մնացյալ 149 սաղմոսները: Ա-ին կից գտնվող զարդագիրն ազդարարում է սկսվող Սաղմոսի առաջին տողը:

Հայ ձեռագրային ավանդույթից առաջին հայ տպագրիչներին և հնատիպ գրքին փոխանցված «Սաղմոսարանի» ձևավորման և կառուցվածքի նույն սկզբունքները հարազատորեն արտահայտվել են Ղուկաս Ա Կարնեցու 1787 թ. իրականացրած հրատարակության մեջ:

«Սաղմոսարանի» շարվածքը կանոնավոր է: Էջերը վերցված են զարդափակ շրջանակների մեջ: Թուղթը հասարակ է և որակով զիջում է Կարնեցու նախորդ երկու հրատարակությունների թղթին:

Ունի 8 փորագրանկար՝ գումարած տիտղոսաթերթը, որը կազմված է 4 պատկերներից և երկու սյուների վրա հիմնված կամարից, որի ներքո՝ կենտրոնում թողնված գրադաշտի մեջ, գրված են տիտղոսաթերթային տվյալները:

«Սաղմոսարանը» փոքր է «Ատենի ժամագրքից», ուստի այնտեղ չէին կարող տեղ գտնել վերջինիս պատկերները: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ պատկերման արտահայտչամիջոցներով, հատկապես կերպարների դիմագծերով, «Սաղմոսարանի» պատկերները նկատելիորեն տարբերվում են մյուս հրատարակություններում եղածներից: Այստեղ բավականին թույլ է արտահայտված քրիստոնեական խորհրդաբանությունը, և տեղ գտած նկարներն ավելի շատ հիշեցնում են ամստերդամյան հրատարակությունների բողոքական ուղղվածություն ունեցող նկարները:

318 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ե, էջ 733-736:

«Սաղմոսարան» և վիճակը Դավիթ մարգարեի պատկերով
«Սաղմոսարան», Ս. Էջմիածին, 1787 թ.

Գրքի սկզբում գտնվող Դավիթ մարգարեի պատկերի ձախ կողմի ներքևի անկյունում կա «ԱԲ» մակագրությունը: Հայ հնատիպ գրքի մատենագիտության հեղինակներն այն մեկնաբանել են որպես «փորագրողի անվան սկզբնատառեր»[319], ինչն այնքան հավանական չէ, քանի որ որևէ ձևով չի կապվում փորագրանկարների հեղինակ Հարություն սարկավագի անվան հետ: Վերջինիս է վերաբերվում 326-րդ էջի նկարի «ՅԱՈՒԹ» (Յարութիւն) հապավումը: «ԱԲ»-ն կարելի է կարդալ «Ձ[եռ]ա[մ]բ»:

Չափերի տարբերության պատճառով հնարավոր չէր դնել «Ատենի ժամագրքի»՝ Դավիթ մարգարեի շքեղ պատկերը, սակայն, թերևս, կարելի էր զետեղել նրա փոքր տարբերակը: Ոճական առումով ակնհայտ է, որ «Սաղմոսարանի» և «Ժամագրքի» պատկերները երկու տարբեր հեղինակների գործեր են, և առաջինը նկատելիորեն զիջում է նախորդին:

Հաջորդ՝ Ս. Երրորդության պատկերը (էջ 44), որը կատարված է այս ոճով, մինչ «Սաղմոսարանում» զետեղվելը տեղ էր գտել «Ատենի ժամագրքի» վեցերորդ կանոնի մոտ: Ասացինք, որ վերջինիս ավելի անարվեստ և պարզունակ նախօրինակը կարելի է համարել «Զբոսարան հոգևորի»՝ Ս. Երրորդությանը նվիրված աղոթքին կից բերված նկարը (էջ 26): «Ատենի ժամագրքի» Ս. Երրորդության պատկերը, իր շքեղությամբ և դասական ոճով, դարձյալ անհամեմատելի է այս երկուսի հետ:

«Սաղմոսարանի» Ավետման պատկերը նկատելիորեն նման է «Տոնացույցի» 1774-75 թթ. նկարին և գրեթե նույնն է «Շարակնոցի» նկարի հետ:

Նույն ոճն ունի և վստահաբար նույն վարպետի կողմից է կատարվել Ս. Ծննդյան պատկերը (էջ 140): Այն նկատելիորեն նման է 1774-75 թթ. «Տոնացույցի» պատկերին, բայց իր վարպետությամբ դարձյալ զիջում է վերջինիս:

Ակնհայտորեն արևմտյան պատկերներից է արտանկարված Խաչելության կամ ավելի ճիշտ՝ Բարեխոսության մի տարբերակը եղող «Մարիամյանց ողբը» նկարը (էջ 184), որը ևս տեղ է գտել «Ատենի ժամագրքում»՝ իններորդ ժամին կից:

Նույնը վերաբերում է Ս. Հարության (էջ 236) նկարին, որը «Ժամագրքում» բերված է Առաջին ժամին կից:

Համբարձման պատկերը (էջ 280) մի տարբերակն է «Տոնացույցի» 1774-75 թթ. հրատարակության նկարի (էջ 154), սակայն էական հետևյալ հավելմամբ: Ինչպես ասացինք, Ս. Էջմիածնի հրատարակություններում հանդիպող Համբարձման պատկերներում, համահունչ ավանդական եկեղեցիների և հայ եկեղեցական պատկերագրությանը, առաքյալների շարքում ավելացվել է Տիրամայրը: «Սաղմոսարանի» 1787 թ. հրատարակությունում այնինչ բերված է Համբարձման՝ Ոսկանյան Աստվածաշնչի մի տարբերակը:

«Սաղմոսարանի» 1787 թ. հրատարակության նկարում Տիրամոր բացակայությունը ցույց է տալիս, որ այս հրատարակության պատկերը

319 Հայ գիրքը 1512-1800 թվականներին, էջ 601:

ԱՎԵՏՈՒՄ
«Սաղմոսարան», Ս. Էջմիածին, 1787 թ.

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
«Սաղմոսարան», Ս. Էջմիածին, 1787 թ.

բերվել է դրսից, ապա վերափորագրվել է Մայր Աթոռի տպարանական միջավայրում։

Ասվածն առավել հիմնավոր է դառնում, եթե նկատի ունենանք, որ «Սաղմոսարանի» այս հրատարակության խաչելության և Ս. Հարության պատկերները ևս նախօրինակ պատկերներ են, որոնք Մայր Աթոռում հետագայում փոխարինվել են հիշյալ պատկերների նոր վերափորագրություններով։

Սկզբնական ձևի պահպանումը «Սաղմոսարանի» 1787 թ. հրատարակության մեջ ևս մեկ անգամ գալիս է վկայելու, որ այն իր գերակշիռ մասով վերահրատարակությունն է «Սաղմոսարանի» 1770-ական թվականների առաջին հնարավոր հրատարակության, երբ Համբարձման նկարի Ոսկանյան Աստվածաշնչից բերված տարբերակը պատկերային նոր խմբագրման չէր ենթարկվել։

Թեև նույն ոճով, սակայն մի փոքր ավելի բարձր կատարում ունի Հոգեգալստյան պատկերը (էջ 326), որը ևս, նախ գետեղվելով «Ատենի ժամագրքի» երրորդ ժամի կողքին, իր հերթին ոճական ընդհանրություն ունի «Աղոթագրքի» 1772 թ. հրատարակության սկզբի Սուրբ Երրորդության պատկերի հետ։ Այս նկարն է, որ ներքևում ունի «ՅԱՒԻԹ» հապավումը, հետևաբար այն անվերապահորեն Հարության սարկավագ փորագրիչն է։

«Սաղմոսարանի» նկարների ակնհայտ նմանությունը Սիմեոն կաթողիկոսի առաջին շրջանի հրատարակությունների պատկերներին հիմք է տալիս ենթադրելու, որ դրանք պատրաստված են եղել նրա կաթողիկոսության շրջանում։ «Սաղմոսարանը» կարնեցու հրատարակությունների շարքում չափերով ամենափոքրն է և իր հերթին համապատասխանում է Սիմեոնի հրատարակությունների չափերին, ուստի կարելի է ենթադրել, որ հիշյալ փորագրանկարները, պատրաստված լինելով այն ժամանակ, չեն կիրառվել ոչ այնքան բարձրարվեստ լինելու պատճառով։

Դավթի 150-րդ սաղմոսից հետո, որով ավարտվում է «Սաղմոսարանը», բերված են ևս մի շարք միավորներ, օրհնություննե՛ր՝ երից մանկանց, Տիրամո՛ր՝ «Մեծացուսցէ» սկսվածքով օրհնաբանությունը Ավետարանից, Հովհաննես Մկրտչի հո՛ր՝ Զաքարիայի, Սիմեոն Ծերունու և Մանասե թագավորի օրհնությունները, ապա Առաքել Սյունեցու «Գովասանութիւն սաղմոսաց», Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը ու ևս երկու աղոթք «Նարեկից»։

Վերը թվարկված միավորները քանի որ կատարվում էին ժամակարգության ընթացքում, ուստի հայ ձեռագրային ավանդույթով տեղ են գտել «Սաղմոսարանի» նաև տպագիր հրատարակություններում։ Շնորհալի հայրապետի աղոթքը 24 տուն ունի և նախատեսված է օրվա 24 ժամերից յուրաքանչյուրի համար, ինչպես որ ժամակարգությունում է օրը բաժանվում ինը ժամերի։ Նաև պետք է հաշվի առնել, որ այս միավորները խորհրդաբանորեն ևս կապվում են Դավթի և նրա սաղմոսների հետ։

Տիրամոր օրհնությունը դարձավ կատարումը «Բղխեցէ գաւազան յարմատոյն Յեսեայ» (Եսայի ԺԱ 1) խոսքերի, քանի որ Դավիթ մարգարեի, ում հայրն էր Հեսսեն, ճյուղագրությունը հասնում էր մինչև Քրիստոս, որով և հասնում է իր լրումին։

Գրքի վերջում կա տոմարական աղյուսակ, թե ինչպես հաշվել շարժական տոների օրերը տարբեր տարիներին։ Աղյուսակն սկսվում է 1787 թվականով և ավարտվում 1896-ով։ Եկեղեցական բազմամյա աղյուսակ-օրացույցների զետեղումը գրքերի վերջում առավել էր մեծացնում դրանց կիրառական նշանակությունը։

«Խորհրդատետր», 1788 թ. (35 էջ)

Դավանածիսական և եկեղեցական նվիրապետության առումով սկզբունքային կարևորություն էր ներկայացնում «Խորհրդատետրը», որի համար Հռոմը քանիցս այն տպագրեց համապատասխան խմբագրությամբ և շքեղ ձևավորմամբ։

Ս. Պատարագի մատուցման սկիհի մեջ գինի լցնելու և հոգևորականների հիշատակությունների շարքում Հայոց կաթողիկոսի անվան ի՛նչ ձևով հիշատակելու հատվածներում հստակ երևում է՝ տպագրությունը Հռոմո՞ւմ է իրականացվել, թե՞ Հայոց եկեղեցու հոգևորականների կողմից։ Պատահական չէ, որ Ոսկան վարդապետ Երևանցին, տպագրական առումով անհամեմատ բարդ «Շարակնոցը» և «Մաշտոցը» տպագրելով, չհրատարակեց շատ ավելի փոքրածավալ և պարզ «Խորհրդատետրը», քանի որ նախընտրում էր գտնել փոխադարձաբար ընդունելի միջին գիծ Հայոց եկեղեցու և հայ կաթողիկե համայնքի միջև։

Այս պայմաններում, եթե նկատի ունենանք 18-րդ դարի վերջին քառորդի հայ-հռոմեական եկեղեցական հարաբերությունների ընթացքը և Սիմեոն կաթողիկոսի այն անհաշտ դիրքը, որն արտահայտվեց հատկապես «Պարտավճարում», միանգամայն օրինաչափ էր, որ կարնեցին տպագրեց «Խորհրդատետրը»։ Ավելին, անգամ զարմանալի է, որ Սիմեոն կաթողիկոսի «Պարտավճարի» տպագրությունն ավարտելուց հետո միանգամից ձեռնամուխ չի լինում «Խորհրդատետրի» կամ «Պատարագամատույցի» տպագրությանը, այլ այն իրականացնում է շատ ավելի ծավալուն և տպագրական առումով անհամեմատ մեծ բարդություն ներկայացնող «Ատենի ժամագրքից» և Հովսեպիոսի «Պատմությունից» հետո։

«Տիտղոսաթերթին» նշված է, որ գիրքը տպագրվել է 1788 թ.։ Նույն ձևով հիշատակարանում ասվում է, որ տպագրությունն ավարտվել է 1788 թ. սեպտեմբերին։ Գրքի տպագրության մասին առաջին հիշատակությունը գտնում ենք 1787 թ. փետրվարին հնդկահայոց Նվիրակ Եփրեմ վարդապետին ուղղված նամակում, ուր ասվում է, թե ավարտվել է Հովսեպիո-

սի «Պատմութեան» տպագրութիւնը և «Խորհրդատետրն ևս ձեռնարկեալ եմք ահա ի տպել»[320]։ Այստեղ ավելի շատ տպագրելու մասին մտադրությունն է արտահայտված, քան թե ասվում է, որ տպագրությունն սկսվել է։

1788 թ. հունիսի 21-ին գրքի տպագրությունն ընթացքի մեջ է եղել, որովհետև դարձյալ Եփրեմ վարդապետին գրած նամակում ասում է, թե «Մաշտոցի» տպագրությունը չեն կարող սկսել, մինչև որ «զԽորհրդատետրն աւարտիցեմք, զոր ի ձեռին ունիմք»[321]։ Հիշատակարանում թեև նշված է, որ տպագրությունն ավարտվել է 1788 թ. սեպտեմբերի վերջին, սակայն նույն տարվա դեկտեմբերի 31-ին Ռուսահայոց թեմի առաջնորդ և նվիրակ Հովսեփ Արղությանցին ուղղված նամակում ասում է. «Զխորհրդատետրն ևս նորապէս տպագրեցաք», և որ մամուլները դեռևս չեն չորացել, որի պատճառով չեն սկսել կազմարարական աշխատանքները[322]։

Կարելի է ենթադրել, որ մատնանշված սեպտեմբերի վերջը ոչ թե տպագրությունը, այլ շարվածքն ավարտելու ժամանակն է, որից հետո ևս երկու ամիս տևել է տպագրությունը։

1783 թ. փետրվարին Շահամիր Շահամիրյանին գրած նամակում Կարնեցին «Խորհրդատետրը» հիշում է որպես տպագրված, որից մեկ օրինակ ուղարկում է հնդկահայ բարերարին[323]։

Հաջորդող ամիսների ընթացքում արդեն հիշատակություններ կան «Խորհրդատետրը» նվիրելու կամ վաճառքի համար տարբեր տեղեր ուղարկելու մասին, ինչպես օրինակ՝ 1789 թ. մայիսին 20 օրինակ Բասրա ուղարկելը[324]։

«Խորհրդատետրը» ուներ նոր բարերար, ով ևս Նոր Ջուղայում էր ծնվել և բնակվում էր Հնդկաստանում։ Դա Նոր Ջուղայի Երևանցիների թաղում ծնված Սեթ աղայի որդի Ավետն էր, ով ապրում էր Սուրաթում։ Գիրքը նա տպագրում է ի հիշատակ իրենց գերդաստանի։

Կաթողիկոսը տպված օրինակներից 1789 թ. փետրվարին ուղարկում է բարերարին։ Այս մասին հիշվում է Կաթողիկոսական դիվանում՝ «Թուղթ ի Սուրաթ առ ի Սէթ աղայի որդի պարոն Աւէտն»[325]։

Ինչպես որ Մաշտոցը քահանաների համար ամենօրյա արարողությունների ձեռքի՝ «Ձեռաց» գիրքն էր, այնպես և Խորհրդատետրը Ս. Պատարագի մատուցման համար անհրաժեշտ գիրքն էր։ Այս պատճառով հիշատակարանում ոչ թե ընդհանրապես ընթերցողներին, այլ քահանաներին ուղղված խոսքում է որպես խնդրանք ասվում, որ նրանք հիշեն Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսներին, տպարանի հիմնադիր Զաքիկյանցին,

320 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 217:

321 Նույն տեղում, էջ 374:

322 Նույն տեղում, էջ 427:

323 Նույն տեղում, էջ 441:

324 Նույն տեղում, էջ 462:

325 Նույն տեղում, էջ 441:

այս գրքի տպագրության բարերարին և տպագրությունն իրականացնողներին. «Խնդրի ի սրբազնագործ դասուցդ քահանայական, որք վայելէք զվայելչատիպ Սուրբ Պատարագամատոյցս»։

Այն, որ հիշատակարանի գրությանը մասնակցել է Ղուկաս Կարնեցին, երևում է 1789 թ. փետրվարին Բաղդադ ուղղված նամակից, ուր ասվում է, թե Բասրայի եկեղեցուն մի «խորհրդատետր» է տալիս, «զոր բանեցուցեն քահանայքն ի յիշատակ սրբոյ Աթոռոյս»[326]։ Ակնհայտ նմանություն կա Կարնեցու նամակի և «խորհրդատետրի» հիշատակարանի միջև։

«Խորհրդատետրը» ևս տպագրական բարձր որակ ունի՝ նոր զարդապատկերներով ու տպագրական տառերով, որոնք, ինչպես հիշատակարանում է ասվում, դարձյալ պատրաստել է Հարությյուն սարկավագ Վաղարշապատցին։ Վ. Գրիգորյանը գրում է, որ վանքի ծախսերի մատյաններից մեկում 1788 թ. փետրվարի 27-ի ներքո գրառում կա այս մասին։ Ասվում է, որ տպագրության նոր տառերի և կաթողիկոսի տապանաքարի մարմարե ծաղիկները քանդակելու համար նվերների է արժանացել Հարությյուն տպագրիչը. «Տպագիր Յարութիւնն մինչ խորհրդատետրի գիրն նոր շինեաց և սրբազան Վեհապետի մառմառ քարի ծաղիկն նկարեաց, որոյ ետուք Ա (1) կիսամաշ ֆիլամանկ չուխայ, որ էր մահտեսի Յակոբջանինն, Դ (4) գազ և կէս ֆռանկի շալ, Ա (1) գթակի երեսք՝ ֆիլամանկ և Ա (1) ղութնի»[327]։

Եթե չհաշվենք փորագիր մի քանի պատկերներից կազմված և Ս. էջմիածնի հետ կապված տիտղոսաթերթը, այս մատյանի անվանումն իսկ հուշում է, որ այն Ս. Պատարագի մատուցման տետրը՝ ձեռագիրն ու գիրքն է։ Նույն այս պատճառով, եկեղեցական ընդունված ավանդույթով, «խորհրդատետրը» պահվում էր եկեղեցում, քանի որ Ս. պատարագը եկեղեցում է մատուցվում։ Ավելին, այն դրվում է եկեղեցու Ս. Սեղանին վերաբերող մասում, քանի որ Ս. Պատարագը եկեղեցու բեմում՝ Ս. Սեղանի վրա է մատուցվում։ «Խորհրդատետրի» մասին Օրմանյանը գրում է. «Պատարագի Ս. Խորհուրդի ատեն քահանային ի ձայն կամ ի թիւ կարդալու աղօթքներուն գիրքն է, որ փոքրիկ գրակալով սեղանին ձախ եղջիւրին վրա կը դրուի, երեսը դէպի ժամարարը՝ կարդալու դիւրութեան համար։ Նոյն նպատակաւ խորհրդատետրերը միշտ խորագիր կըլլան։ «Պատարագամատոյց» ալ կը կոչուի այս գիրքը»[328]։

«Խորհրդատետրի»՝ գրքարվեստի տեսանկյունից բնորոշ հատկանիշներն են՝ մեծ չափեր ունենալը, որպեսզի գրակալին բացված դրվեր, և մեծ տառերով գրված կամ տպագրված լինելը՝ եկեղեցական արարողության ժամանակ հոգևորականի կողմից կանգնած ընթերցվելու համար։ Նման մեծ չափերը հնարավորություն են տվել մեծադիր էջերում գեղեցիկ ձևավորված խոշոր զարդագրեր և զարդանախշեր ունենալ՝ պատկերա-

326 Նույն տեղում, էջ 447:

327 Նույն տեղում, էջ LXXV:

328 **Մաղաքիա արքեպս. Օրմանյան,** Ծիսական բառարան, Անթիլիաս, 1957, էջ 139:

չին բազմազանությունը թողնելով եկեղեցական տոնաշարին համահունչ «Շարակնոցի»՝ իրար հաջորդող տոնային կանոններին։

Եկեղեցական կյանքում ամենից պահանջվածը ու շարունակաբար կիրառվողը «Խորհրդատետրը» կամ «Պատարագամատույցն» էր, որով կատարվում էր Ս. Պատարագի արարողությունը։ Հետևաբար այն հարկավոր էր եթե ոչ ամեն քահանայի, ապա գոնե ամեն եկեղեցու համար։

Այս հրատարակության յուրահատկությունը այն է, որ էջերը բերված են հայկական թվահամարներով։

Ձգեստավորման հատվածը հայ ձեռագրային ավանդույթով առանձին բաժին է և ունի «Օրէնք արկանելոյ սպաս եկեղեցւոյ» խորագիրը (էջ Բ)։ Ապա ներկայացվում են սաղավարտի, շապիկի, գոտու, բազպանի, ուրարի և նափորտի (շուրջառի) պարունակած հոգևոր-ծիսական խորհուրդները։

Ս. Պատարագի վերաբերման բաժնում, երբ հացը և գինին խորհրդաբար Քրիստոսի մարմնին և արյանն են փոխվում, ասվում են նաև Հիսուսի «Այս է մարմին իմ» և «Այս է արիւն իմ» (էջ ԻԱ) սկսվածքներով խոսքերը, որոնք հայ ձեռագրային ավանդույթով՝ գրվում էին կա՛մ այլ գրատեսակով և կա՛մ էլ՝ այլ գույնի տառերով։ Հիշյալ ավանդույթի հետևողությամբ՝ ընդհանրապես հայկական Պատարագամատույցներում այս խոսքերը գրվում են այլ տառատեսակի շարվածքով։ Ս. Էջմիածնի 1788 թ. հրատարակությունում այս խոսքերը բերվում են շարվածքից մեծ երկաթագիր գրերով (էջ ԻԱ)։

Ծիսական մատյանները քանի որ գրվում էին համապատասխան արարողությունների համար, ուր հիշվում էին կաթողիկոսը, թեմակալ առաջնորդը և ծիսակատար քահանան, իսկ ձեռնադրության, մկրտության և պսակի ու թաղման ժամանակ անվանապես հիշվում էին նրանք, ում համար կատարվում էր տվյալ ծեսը, ուստի ծիսական համապատասխան տեղում այդ անձերի անունները հիշատակելու համար տեղ էին թողնում և գրում «Այս անուն» (էջ ԻԴ), որպեսզի ասվեր եկեղեցական տվյալ պաշտոնն զբաղեցնող հոգևորականի անունը։

«Պատարագատետրում» հայ ձեռագրային ավանդների ու ծիսական ավանդույթի հետևողությամբ, քահանայի աղոթքները, սարկավագի քարոզները և սուրբգրային ընթերցվածները բերված են խոշոր տառերով, իսկ ծիսական հրահանգները մանրատառ են։

Հայ ձեռագրային մշակույթի ուրույն մի տեսակն են կազմում գրակալին դրվող նման ձեռագրերը։ Վերջիններիս հետ է կապվում անգամ Հովհաննես Երզնկացու անեծքով Անիի կործանվելու ավանդությունը։ Համաձայն այս ավանդության՝ անեցիները իրենց նյութական հարստությամբ այնքան էին հեռացել եկեղեցական կարգերը հարգելուց, որ հոգևորականներին ծաղրելու համար բարձրահասակ հոգևորականների առջև ցածր գրակալին էին դնում եկեղեցում պահվող «Խորհրդատետրը», որ նրանք ցած խոնարհվեին կարդալիս, իսկ կարճահասակների առջև բարձր գրակալ էին դնում, որ ոտքերի ծայրերին կանգնելով՝ մի կերպ հասնեին գրակա-

լին դրված գրքին: Այս հանգամանքն էլ դառնում է երզնկացու զայրույթի պատճառներից մեկը, երբ նա անիծում է քաղաքը և նրա բնակիչներին[329]:

«Խորհրդատետրի» Ս. էջմիածնի հրատարակության մեջ կա միայն մի փորագրանկար՝ Ս. Պատարագի խորհրդի հետ կապված, որը բոլոր տպագիր ու ձեռագիր «Խորհրդատետրերում» հանդիպող Խաչելության պատկերն է (էջ Դ):

Անհրաժեշտ է նաև նշել, որ «Խորհրդատետրում» սովորաբար երկու նկար է լինում՝ Խաչելության և Խորհրդավոր ընթրիքի, որ Խորհրդանշում է Ս. Հաղորդության խորհրդի հաստատումը: Ս. էջմիածնի այս հրատարակության մեջ կա միայն Խաչելության պատկերը:

Ձեռագիր Պատարագամատույցներում դրվում էր խաչյալ Քրիստոսի պատկերը՝ կողահոս արյամբ, որը հացի և գինու՝ Քրիստոսի մարմնի ու արյան փոխարկվելու խոսքերի պատկերային համարժեքն էր: Այս ավանդույթը անցել է և հայերեն տպագիր Պատարագամատույցներին, այդ թվում և այս հրատարակությանը:

Գրքում մեծ թիվ են կազմում զարդատառերը և զարդանախշերը՝ լուսանցային և տեքստային՝ ստեղծելով շքեղ ձևավորված ձեռագրի զգացողությունն ու պատրանքը:

Գրքի սկզբում գտնվող Խաչելության պատկերը, իր բարձր վարպետությամբ, անհամեմատելի է «Սաղմոսարանի» նույնաբնույթ պատկերի հետ:

Երկու պատկերներում խաչափայտի հորիզոնական մասից ներքև գտնվող հատվածում նկատելի են որոշակի ընդհանրություններ, որոնցից կարելի է եզրակացնել, որ երկու գրքերի նկարների փորագրման համար հիմք է ծառայել մի այլ նախօրինակ: «Խորհրդատետրի» պատկերը չի կարող գծված լինել «Սաղմոսարանի» նկարից, որովհետև «Խաչելությունն» ունի մի շարք դրվագներ, որոնք բացակայում են «Սաղմոսարանում», ուր պատկերի վերին մասը գրեթե դատարկ է, իսկ ներքևում միայն բարեխոսություն հայցողներն են:

Նախորդ շրջանի հրատարակությունների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ նկարը արտապատկերված է «Ճաշոցի» Վենետիկի 1686-88 թթ. հրատարակության Ավագ Ուրբաթի Խաչելության նկարից (էջ 354):

Երկու նկարներում էլ Քրիստոսի կողը գեղարդով խոցած Ղունկիանոսը, արևմտյան պատկերագրությամբ, ձիու վրա է՝ դեմքով առաջ, և խաչափայտի մոտից նրա հեռանալու պատրանքն է ստեղծվում նրան անհամեմատ փոքր պատկերելով: Նրան ձիու վրա նստած պատկերելը երկու նպատակ ուներ: Դրանով նախ ընդգծվում էր Խաչափայտի բարձրությունը, որ նույնիսկ երկար ձողի վրա գտնվող գեղարդով հնարավոր

[329] Տես **Աբրահամ** կաթողիկոսի **Կրետացւոյ** Պատմագրութիւն, Վաղարշապատ. 1872, էջ 109, Դիւան հայոց պատմութեան, աշխտ. Գիւտ քհնյ. Աղանեանց, գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 489-490, **Ղազար Ա Ջահկեցի,** Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 628-634, Տես նաև **Դևրիկյան Վ.,** Վասպուրականի արծիվը հայ գրականության անդաստանում, Երևան, 2021, էջ 66-67:

չէր խոցել նման բարձրության վրա գտնվող Խաչյալին։

Երկրորդ՝ Ղուկիանոսի հեռանալով Խաչափայտի ներքո մնում են միայն Մարիամյանք և Հովհաննես ավետարանիչը, որով այս պատկերը վերածվում է Բարեխոսության, ինչպես որ էր նաև «Սաղմոսարանում»։

Քրիստոս կրում է փշե պսակը և պատված է լուսապսակով։ Խաչափայտի վերին մասում գրված է «ՅՆԲՀ»։ Հիսուսին վերաբերվող նշանավոր այս հապավման հայերեն լինելը ցույց է տալիս, որ հայ հեղինակը նկարը վերափորագրել է, որի ընթացքում, ըստ երևույթին, կատարվել է նաև Հայոց եկեղեցու ծիսադավանական ըմբռնումների հետ կապված հետևյալ պատկերագրական վերախմբագրումը։

Հովհաննեսի Ավետարանում ասվում է, որ երբ զինվորը Քրիստոսի կողը խոցում է, ջուր և արյուն է ելնում (Յովհ. ԺԹ 34)։ Կաթոլիկ եկեղեցին քանի որ Ս. Պատարագը մատուցում է սկիհի գինուն ջուր խառնած, ուստի արևմտյան եկեղեցու խորհրդաբանությամբ ասվում է, որ ջրի և արյան բխումը խորհրդանշում է սկիհի ջուրը և գինին։ Հայոց եկեղեցին, սակայն, Ս. Պատարագը մատուցում է առանց գինուն ջուր խառնելու, ուստի հայկական եկեղեցական մեկնություններում ասվում է, որ ջուրը խորհրդանշում է Ս. Մկրտությունը, և արյունը՝ Ս. Հաղորդությունը։ Ըստ այմ՝ արևմտյան պատկերագրությունում կողից բխած ջուրն ու արյունը լցվում են սկիհի մեջ։ Հայկականում՝ բխող ջուրը լցվում է մկրտության ավազանը, իսկ արյունը՝ սկիհի մեջ։

Ավազանը ներքևում է պատկերվում, և ջուրն ընդգծված կերպով վերևից իջնում է ավազանի մեջ։ Փորագրանկարիչ Հարությունն սարկավագը եթե այդպես վարվեր, ապա կխախտվեր պատկերի կոմպոզիցիոն ողջ կառուցվածքը, ուստի նա սկիհի կողքին ավելացրել է մի գավաթ, որի մեջ է լցվում ջուրը։ Նման ձևով ընդգծվում է, որ գինու սկիհին ջուր չի խառնվում։

«Ճաշոցի» 1686-88 թթ. հրատարակությունը քանի որ իրականացվել է կաթոլիկ միջավայրում, այստեղ կողաբուխ արյունը և ջուրը լցվում են սկիհի մեջ և բացակայում է գավաթը։

Ներքևում գտնվող չափածոյում, նկարի խորհրդաբանական մեկնությանը համահունչ ձևով, որպես Բարեխոսության պատկերի՝ Քրիստոս անվանվում է պատարագ մատուցվող անմեղ գառ.

Քրիստոս գառն անմեղ՝ սիրովն որ առ մեզ, գա ի մահ խաչի,
Հօրն Իւր շնորհապեղ՝ առ հաշտիլ ընդ մեզ, պատարագ մատչի:

Կից էջում, որն սկսվում է պատարագիչ քահանայի զգեստավորումից առաջ ասվող առանձնական աղոթքով, վերևում՝ կիսախորանում, Բարեխոսության պատկերին և բանաստեղծական երկտողին ու քահանայի աղոթքին համախորհուրդ ձևով պատկերված է «Գառն պատարագեալ»։

Լուսանցքում գեղեցիկ լուսանցազարդ է, ուր զույգ շրջանակներում պատկերված են 12 առաքյալները, որոնց շարքը վերևում պսակվում է Քրիստոսով։

ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ

«Խորհրդատետր», Ս. Էջմիածին, 1788 թ.



ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ
«Ճաշոց», Վենետիկ, 1686-88 թթ., էջ 353

*Տոնական և զվարթ զգացողություն է ստեղծում «**Որ զգեցեալ ես զլոյս**» սկսվածքով աղոթքի ընդգծված կապակցությունը, որը ներկայացնում է մարդկային երգող մի տառախումբ։*

«ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ ԻՋՄԱՆ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆԻՆ»

Սուրբ էջմիածնի Մայր Տաճարի ճարտարապետական ընդհանուր հորինվածքն ու հոգևոր խորհուրդը տաճարի զանգակատան միջոցով են ներկայացված այս գրքի ԻԴ էջի լուսանցապատկերում։

Ս. էջմիածնի ընդունված պատկերագրությամբ տաճարի կերպավորվելը ներկայացվում է Սուրբ Երրորդության միջոցով. վերևում Հայրն ու աղավնաձև Սուրբ Հոգին են, իսկ դեպ գմբեթին է իջնում և հարվածում Միածինը, և կամ էլ Քրիստոս կանգնած է գմբեթի ներքո՝ Իջման սուրբ տեղիում, ուր իջավ և հարվածելով փշրեց սանդարամետի մեհյանը։

Նկարը թե ինչպես է ստուգաբանվում կից բնագրի հետ և ներդաշնակում վերջինիս պարունակած հոգևոր խորհրդին, բնորոշ ձևով երևում է այս պատկերի օրինակով, որը գտնվում է «Պատարագամատոյցի» այն էջում, ուր քահանան աղոթում է, որ հացն ու գինին փոխարկվեն Քրիստոսի կենդանարար մարմնի և արյան։ Խաչակնքելով Ս. Սեղանին դրված սկիհը՝քահանան նախ երեք անգամ ասում է՝ «Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի», և ապա դարձյալ երեք անգամ ասում է. «Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի»։ Այնուհետև միաանաբար երեք անգամ կրկնում է. «Որով զհացս և զգինիս օրհնեալ մարմին և արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, փոխարկելով Հոգւովդ Քով Սրբով»։

Աղոթքի բնագրի կողքին գտնվող լուսանցքում Ս. էջմիածնի տաճարը ներկայացվում է զանգակատան և վերջինիս բնորոշ զարդագոտու և նախշազարդերի միջոցով։

Աստվածային էջքով Հայր Աստված և Սուրբ Հոգին Հրեշտակապետաց խորանում են, իսկ Իջման Ս. Սեղանին Ս. Պատարագի Սկիհն է, որով Սուրբ Երրորդությունն ամբողջանում է Միածնի՝ Իր պատարագմամբ ներկա լինելով։

Սուրբ Հոգու՝ ուղիղ սկիհի վերևում գտնվելն էլ ծիսական առումով ցույց է տալիս, որ Սուրբ Հոգու միջոցով հացն ու գինին Քրիստոսի մարմնի ու արյան են փոխարկվում, ինչպես որ ասվում է քահանայի վերը հիշված աղոթքում։



Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՉԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ ԻՋՄԱՆ Ս. ՍԵՂԱՆՈՎ

«Խորհրդատետր», Ս. Էջմիածին, 1788 թ.

«Շարակնոց», 1789 թ. (895 էջ)

«Ատենի ժամագրքի» տպագրությունը եթե դժվարին էր մեծ ծավալի և թեմատիկ առումով երեք տարբեր գրքերից բաղկացած լինելու պատճառով, ապա «Շարակնոցի» տպագրության գլխավոր բարդությունը շարականների խազագրված լինելն էր, ինչպես նաև մի շարք տոների նվիրված կանոններին կից՝ այդ տոների թեմաներով պատկերներ ունենալու՝ ձեռագրերից եկող հայ գրքարվեստի ընդհանրացած կարգը։

Մի շարք նմանություններ կան «Շարակնոցի» Ոսկանյան և Ս. Էջմիածնի հրատարակությունների միջև։ Առաջին՝ երկուսն էլ ունեն մեծ թվով փորագրանկարներ։ Տպագրական առումով Շարակնոցի 1664 թ. հրատարակության գլխավոր արժեքը խազանշանների տպագրական ձևերի պատրաստումն էր, որն ավելի քան մեկ դար մնաց անգերազանցելի։

էջմիածնում դեռևս «Ատենի ժամագրքի» տպագրության համար հարկ է լինում պատրաստել խազերի նշանները: Հաջորդ դժվարությունը դրանց ճիշտ տեղադրումն էր շարականների տողերի համապատասխան բառերի վանկերի վրա:

Տիտղոսաթերթին նշված է, որ գիրքը տպագրվել է 1789 թ.: Հիշատակարանում ասվում է, որ այն տպագրվել է Հոհաննջան Հակոբյանի միջոցներով. «Քանզի՝ նորին բարեացապարտ անձին Յոհաննջան աղայի առատանուէր արդեամբքն և ծախիւքն տպագրեցաւ սուրբ Շարակնոցս, որպէս և ի սկզբան անդր նշանակեցեալ է»: Մաղթվում է, որ նա իր կատարած բարեգործությունների համար բազմապատիկը ստանա կենդանության օրոք և հանդերձյալ կյանքում:

Հոհաննջան Հակոբյանի համար «Սաղմոսարանի» հիշատակարանում ասվում էր, որ նա նաև այս գիրքն է իր միջոցներով տպագրել: Ինչպես տեսանք, սակայն, նա ոչ թե անմիջականորեն գրքի բարերարն է, այլ ի նշան Մայր Աթոռին կատարած բարերարությունների՝ Ղուկաս կաթողիկոսը գրել է նրա անունը «խորհրդատետրում»: Կարնեցու՝ Հակոբյանի հետ ունեցած գրագրությունից պարզ է դառնում, որ վերջինս ուղղակիորեն նաև այս գրքի բարերարը չէ, այլ կաթողիկոսը նրա անունը դարձյալ գրել է՝ ի նշան վերջինիս կատարած բարերարությունների:

«Շարակնոցի» տպագրության տարում՝ 1789 թ., Հնդկաստան Հոհաննջանին գրած նամակում կաթողիկոսը նախ շնորհակալություն է հայտնում նրա կատարած բարերարությունների համար: Հնդկահայ մեծահարուստը հեռավոր Հնդկաստանից պատվիրել և Մայր Տաճարի համար էջմիածին էր բերել տվել արծաթյա մի ջահ: Կաթողիկոսը նրան շնորհակալություն է հայտնում նաև «վասն երից անգամ յղեալ դրամից»[330]: Ասում է՝ Ս. էջմիածնի շրջակա վանքերում Սբ. Պատարագի ժամանակ կհիշատակվի նրա և նրա գերդաստանի անդամների անունները:

Գրում է, որ բարերարի ուղարկած դրամով նորոգելու է վանքի արևելյան կողմի խցերը, որոնց սկզբի մեծ դռան վրա փորագրում է նաև նվիրատվական արձանագրություն, որ նորոգվել են նրա միջոցներով: Արձանագրության՝ թղթի վրա կատարված պատճենը ուղարկում է բարերարին: Այս նամակից երևում է, որ Հոհաննջան Հակոբյանը ոչ թե այս կամ այն ձեռնարկման համար է դրամ ուղարկել, այլ պարբերաբար որոշակի քանակությամբ դրամ է ուղարկել, որով Ղուկաս կաթողիկոսը տարբեր կառուցումներ և ծրագրեր է իրականացրել և գրել, որ դրանք կատարվել են հնդկահայ բարերար Հոհաննջան աղայի միջոցներով: Նույնը վերաբերում է նաև այն գրքերի հրատարակությանը, որոնցում նշված է, որ դրանք տպագրվել են Հոհաննջանի միջոցներով:

«Սաղմոսարանից» հետո «Շարակնոցի», ապա և «Մաշտոցի» նույն ձևով տպագրելու մասին Կարնեցին այս նամակում գրում է. «Այլև կա-

330 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 432:

միմք աստ տպել տալ զՇարական և զբուն Մաշտոց, զորս մինչ Աստուած յաջողիցէ, զայնս քեզ և քոյայնոցն եմք յիշատակ առնելոց, անհոգ լեր»[331]: Կարնեցին նշում է, որ նրա տրամադրած միջոցներից գումար է հատկացնում այս երկու գրքերի տպագրության համար, և գրում է, որ դրանք տպագրվելու են ի հիշատակ նրա գերդաստանի:

«Շարակնոցի» տիտղոսաթերթին թեև նշված է 1789 թ., սակայն 1791 թ. դեկտեմբերի 31-ին, այսինքն՝ մոտ 3 տարի անց, Հոհաննջան Հակոբյանին ուղղված նամակում կաթողիկոսը գրում է. «Տպագրութիւն Շարակնոցին աւարտեցաւ վաղապէս, բայց վասն ոչ շուտով չորանալոյ մրոյն, անագան կազմեցաւ և յետ կազմելոյն ևս այլովք ծանր հոգւօք պաշարեցեալ մեր, ոչ ձեռնհաս եղաք շուտով յղել»[332]:

Այստեղ թեև ասվում է, որ տպագրությունն ավարտվել էր ավելի վաղ, և տպագրական ներկն էր ուշ չորացել, որի պատճառով հնարավոր չէր եղել շուտ կազմել, իսկ կազմելուց հետո այլ պատճառներով դարձյալ ձգձգվել էր ուղարկելը, սակայն թվարկված պատճառները չէին կարող այդքան ուշացնել գիրքն ուղարկելը: Գրքի լույս տեսնելը, ըստ երևույթին, ձգձգվել է պատկերազարդ և խազագրված տպագրելու պատճառով:

Սիմեոն կաթողիկոսի հրատարակությունը թե որքանով է համապատասխանում ձեռագրային ավանդույթին, երևում է այս տպագրության և «Շարակնոցի» 1328 թ. Դրազարկում գրված և այժմ Մաշտոցի անվան մատենադարանի հմր. 1576 ձեռագիրը եղող օրինակի համեմատությունից[333]:

«Շարակնոցում» և «Գանձարանում» յուրաքանչյուր տոնին նվիրված շարականների կամ գանձերի խումբը՝ իրենց ենթամիավորներով, կանոն էր կոչվում:

Հմր. 1576 շարականոցը ունի 96 կանոն, իսկ 1789 թ. հրատարակությունը՝ 132 կանոն: Ձեռագրի մինչև 88-րդ կանոնը ներառյալ համընկնում է տպագրի առաջին 131 կանոնների հետ:

Չնայած համընկնմանը՝ ձեռագիր և տպագիր կանոնների միջև եղած թվային նման մեծ տարբերությունը բացատրվում է հետևյալ հանգամանքով: Ձեռագրում մեծ կանոնները, ինչպես օրինակ, Մեծի Պահոց շրջանի երկրորդ կիրակին (թերթ 60ա-62ա), երրորդ կիրակին (թերթ 66ա-8ա) և մի շարք այլ կանոններ ունեն երեք կամ ավելի ենթամիավորներ, իսկ հմր. 82 կանոնը՝ «Կանովն Սրբոց հայրապետացն», ունի 21 ենթամիավոր կամ ենթականոն: 1789 թ. տպագիր «Շարակնոցում» թեև պահպանված է ձեռագրի հետ տոնային և բնագրային ընթացքը, սակայն տպագրում ձեռագրի մի շարք ենթամիավորներ առանձին կանոնահամարներ են ստացել, որի պատճառով ձեռագրերի առաջին 88 կանոնների դիմաց տպա-

331 Նույն տեղում:

332 Նույն տեղում, էջ 683:

333 Տես Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ե., կազմեց Օ. Եգանեան, Երևան, 2009, էջ 527-550:

գիրն ունի 131 կանոն: Անգամ կանոնաբաժանման խախտման դեպքում 1789 թ. տպագրությունը իրականացնողները այդ հարցում որոշակիորեն հավատարիմ են մնացել ձեռագրային ավանդույթին:

Միսաւոնական մյուս ժողովածուների նման ձեռագիր «Շարակնոցում» ևս ազգային եկեղեցական նշանակալից տոներին կից կանոններն ունեն տվյալ թեմայով տոնի պատկերներ, իսկ մյուս կանոններն սկսվում էին «Կանովն» բառով, և բերվում էր տվյալ տոնի կանոնի անվանումը ընդհանուր շարվածքից տարբերվող տառատեսակով և գույնով: 1789 թ. հրատարակությունում ևս յուրաքանչյուր նոր կանոնի խորագիրը բերված է առանձին տառատեսակով, և կից Հայոց Այբուբենի թվահամարով գրված են կանոնների իրար հաջորդող համարները: Տպագրում այն կանոնները, որոնք համընկնում են ձեռագրի ենթականոններին, չեն նշվում առանձին խորագրերով, այլ լուսանցքում բերվում է միայն նրանց կանոնի թվահամարը, որը պատված է լինում լուսանցազարդով:

Շնորհիվ նման ձևավորման՝ ընդհանուր կանոնահամարների շարքում տարբերվում են այն կանոնների խորագրերը, որոնք ձեռագրերում որպես ենթականոն են ներկայացված:

Ձեռագիր «Շարակնոցը» շարունակվում է 89-րդ կանոնից և հասնում մինչև 96-րդ կանոնը: Այս կանոնները նվիրված են սրբոց տոներին և ծիսական տարբեր արարողություններին: Դրանց բոլորի փոխարեն տպագիրը ունի միայն մեկ՝ «Արևելք գերարփին» սկսվածքով կանոնը:

Տպագրում այնուհետև գալիս է «Քաղուածք օրհնութեանց տօնից Տէրունականաց» ցանկը, որն, ըստ էության, գրքում տեղ գտած շարականների ցանկն է[334]:

Ապա հաջորդում են ծիսական տարբեր հրահանգներ, թե որ տոնին ինչ շարական և ինչպես պետք է կատարել:

Գրքարվեստը

«Շարակնոցի» Ս. էջմիածնի 1789 թ. հրատարակության փորագրանկարներում ավանդական պատկերագրությունը ներկայացվում է 18-րդ դարի գեղարվեստական նոր ձևերին և արտահայտչամիջոցներին համահունչ:

Հիշատակարանից տեղեկանում ենք, որ «Շարակնոցի» տառատեսակները, փորագրանկարները և մնացյալ զարդապատկերները դարձյալ պատրաստել է Հարություն սարկավագ Վաղարշապատցին:

«Ընծայումն ի տաճար»

«Շարակնոցն» սկսվում է Տիրամոր ծննդյան, երեք տարեկանում տաճարին ընծայման և Ս. Ծննդյան ավետման երեք կանոններով, ապա հաջորդող կանոններն արդեն զուգահեռ են ընթանում եկեղեցական Տոնա-

334 Շարակնոց, Ս. Էջմիածին, 1789, էջ 855:

ցույցի այն խմբագրությանը, որում Տիրամորը նվիրված տոները բերվում են ըստ «Տոնացույցի» ընթացքի և ոչ թե Սուրբ Ծնունդից առաջ:

Տիրամոր ծննդյան կանոնին կից բերված փորագրանկարը բավականին հետաքրքիր լուծում ունի: Համաձայն եկեղեցական սրբազան ավանդության՝ Տիրամայրը ծնվեց, երբ ամենասրբուհի կույսի ծնողներն արդեն հասել էին առաջացած տարիքի և զավակներ չունեին: Կաթոլիկ եկեղեցին հրաշափառ է համարում նաև Տիրամոր ծնունդը: Հայ եկեղեցին թեև նման բացարձակացման չի հասել դավանական իր ձևակերպումներով, սակայն դարձյալ նշվում է, որ առանձնակի հրաշք էր Մարիամի ծնվելը, երբ նրա ծնողներն արդեն տարեց էին: Տիրամոր ծննդյանը նվիրված ճառեր, ներբողներ, քարոզներ և չափածո բազմաթիվ ստեղծագործություններ կան հայ միջնադարյան գրականության մեջ: Տիրամոր ծննդյան թեման, սակայն, շատ քիչ է հանդիպում հայ միջնադարյան մանրանկարչության մեջ: Եղած պատկերներն ավելի շատ վերաբերում են ուշ միջնադարին և որոշակիորեն եվրոպական արվեստի ազդեցությունն են կրում:

Ի տարբերություն Ս. Ծննդյան կամ, ասենք, Տյառնընդառաջի ու Հորդանանում մկրտության՝ Տիրամոր ծննդյան պատմությունը որոշակի արտահայտվող մեկ դրվագ չունի, ավելի շատ պատկերվում են Հովակիմն ու Աննան՝ տարեց հասակում: «Շարակնոցում» ևս ընդգծված է նրանց առաջացած տարիքի հասած լինելը: Աստվածային ազդմամբ Տիրամոր ծնվելն արտահայտվել է բավականին ինքնատիպ ձևով: Տիրամոր ծննդյան համար կանխասացություն համարվող այն խոսքերի հետևողությամբ, թե կբխի գավազան Հեսսեի արմատից (Եսայի ԺԱ 1), այստեղ Հովակիմի և Աննայի սրտերից ճյուղավորվող արմատներով երկու ծաղկյալ գավազան-ճյուղեր են ելնում և միահյուսվում իրար, որոնց ներսում պատկերված է Տիրամայրը:

Արմատից բխող շառավղի խորհրդաբանական ըմբռնումն արտահայտվել է նկարի ներքևում գտնվող չափածո քառատողում.

Ի Յովակիմայ և ի յԱննայէ՝
Յարմատոց բարեաց Յակոբեան տոհմէ
Չքնաղ շառաւիղ Մարիամ բղխէ,
Որ զԱրքայն կենաց մեզ պտղաբերէ[335]:

Տիրամոր Ծննդյան կանոնի՝ «Շարակնոցի» այս հրատարակության պատկերը հիշեցնում է Ս. Էջմիածնում 1725-1730 թթ. Հակոբ և Հարություն Հովնաթանյանների կողմից նկարազարդված և այժմ Մաշտոցի անվան մատենադարանում պահվող հմր. 1533 ձեռագրի 39ա էջում գտնվող «Ծառ Ծննդեան Աստուածածնի» մանրանկարը: Վերջինս բերված է Նավասարդի ԻԹ-ի (29-ի) ներքո գտնվող «Տաւն է ծննդեան Սուրբ Կուսին Մարիամու» տոնին կից, որի «Յազգատոհմէն Իսրայելի եւ ի ցեղէն Յուդայ էր Յովակիմ»

335 Շարակնոց, Ս. Էջմիածին, 1789, էջ 6:



«ԿԱՆՈՆ ԾՆՈՂԱՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՆԻ»
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

սկսվածքով պատմությունը համապատասխանում է «Շարակնոցի» հիշյալ կանոնին[336]*:*

336 Տես Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ե, կազմեց Օ. Եգանեան, էջ 374-375:

Ընծայման պատկերը միաժամանակ ոճային առումով բավականին ընդհանրություններ ունի «Ճաշոցի» Կ. Պոլսի 1712-14 թթ. հրատարակության Ավետման նկարի հետ (էջ 22)։

Տպագիր հրատարակության վարպետը Տիրամոր պատկերով երկու ճյուղավորված գավազանների ներսում պատկերային նախօրինակ է վստահաբար ունեցել Ս. Էջմիածնում 1720-ական թթ. կեսերին նկարազարդված այս ձեռագիրը։

Ընծայման պատկերը միաժամանակ ոճային առումով բավականին ընդհանրություններ ունի «Ճաշոցի» Կ. Պոլսի 1712-14 թթ. հրատարակության Ավետման նկարի հետ (էջ 22)։

Տիրամոր ծննդյան շարակնոցային կանոնն սկսվում է շքեղ և պատկերազարդ կիսախորանի ներքո։ Ողջ էջի ձևավորման մեջ իշխում է ծաղկման, որով և պտղաբերման գաղափարը։ Կիսախորանի վերին մասում Տիրամայրն է՝ Մանուկը գրկին։ Երկու կողմերում գտնվում են գալարափողով երկու հրեշտակներ, ովքեր ազդարարում են Տիրամոր ծնունդը։

«Շարակնոցի» այս կանոնի շքեղ ձևավորումը պայմանավորված էր հետևյալ երեք հանգամանքներով։

Առաջին՝ գտնվում է գրքի սկզբում, որով և մուտքի հատուկ ձևավորում պետք է ունենար։

Երկրորդ՝ միջնադարյան խորհրդաբանական ըմբռնմամբ՝ Տիրամոր ծնվելը զուգահեռի մեջ է դիտվում եկեղեցու հիմնարկեքի հետ, քանի որ Տիրամայրը՝ որպես խորան, իրենում կրեց Քրիստոսին։ Տիրամոր ծնունդը, ուստի, հիմնարկեքն է այն խորանի, որն իրենում կրելու էր մարդկության Փրկչին։

Երրորդ՝ այս տոնին ավելի շուք հաղորդեց Սիմեոն Երևանցին՝ իր կարգավորած «Տոնացույցում», ուստի այս շրջանում Սիմեոնյան Տոնացույցի հեղինակությունն ավելի բարձրացնելու համար «Շարակնոցի» տոների հատկապես այն կանոնները պետք է որոշակի հանդիսավորությամբ ներկայացվեին, որոնք կապված էին Սիմեոն կաթողիկոսի կատարած փոփոխությունների հետ։ Հետևաբար գրքարվեստում իսկ արձագանք են գտել ժամանակի ազգային-եկեղեցական կյանքի տարբեր դրսևորումները։

Ավետում

Հաջորդ փորագրանկարը վերաբերում է Ավետման կանոնին։ Հայ միջնադարյան մանրանկարչությունը հարուստ է Ավետումը ներկայացնող պատկերներով։ Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ Ավետման տոնը ևս որոշակի կանոնակարգման է ենթարկել Սիմեոն կաթողիկոսը։

«Շարակնոցում» տեղ գտած պատկերն ավելի շատ կատարված է արևմտյան պատկերագրության հետևողությամբ։ Հայկական կանոնի մեկնաբանությամբ՝ Տիրամայրը պատկերվում է իլիկը ձեռքին՝ համաձայն

Ձեռամ Մարիամ՝ յողջոյն ձրեշտակին,
քանզի ես ի քեզ՝ Ս. սուրբ ծոփին.
կապեալ զընարեալդ՝ ի յերկին երկին,
ելիր բնակարան՝ ծոր անեզ Հանին։

ԱՎԵՏՈՒՄ
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

եկեղեցական ավանդության, որում ասվում է, թե Ավետման պահին Տիրամայրը մանում էր Երուսաղեմի տաճարի վարագույրի համար անհրաժեշտ կտորի թելը: Արևմտյան պատկերագրությամբ, սակայն, Տիրամայրը պատկերվում է գրակալի մոտ՝ ըստ այն ավանդության, որ այդ պահին նա կարդում էր Եսայու մարգարեության՝ Քրիստոսի ծննդյան կանխասացության այն տողերը, թե ահա կույսը կհղանա և կծնի որդի (Եսայի է 14): Կարդալու պահին այս խոսքերն իրականանում են հրեշտակի տված ավետմամբ[337]:

Շարակնոցի Ս. Էջմիածնի հրատարակության մեջ հրեշտակի ձեռքին դրախտի բրաբիոն ծաղիկն է, որը խորհրդանշում է, թե Քրիստոսի ծննդյամբ մարդկության համար բացվեցին դրախտի փակ դռները[338]:

Ավետման այս տեսարանում կոմպոզիցիոն վարպետ կառուցվածքով պատկերված է նաև Սուրբ Երրորդությունը՝ պատկերի վերին մասում լույսերի մեջ գտնվող Հայր Աստված, լույսի ներքև տարածվող տարածության մեջ՝ Մարիամի վրա հանգչող Սուրբ Հոգին՝ խորհրդանշելով Սուրբ Հոգով հղացումը, և լույսը հասնում է մինչև Ամանասրբուհի կույսը, ով, իրենում կրելով մարդեղացյալ Փրկչին, լրացնում է Սուրբ Երրորդությունը:

Այն ըմբռնման հետևողությամբ, որ Տիրամոր ծնունդը եղավ եկեղեցու հիմնարկեքը, Ավետման համար ասվում է.

Ցնծա Մարիամ յողջոյն հրեշտակին,
Քանզի էջ ի քեզ Աստուած Սուրբ Հոգին,
Կապմելով վընտրեալդ ի յերկրի երկին,
Լինիլ բնակարան Յօր անեղ Բանին[339]:

Տիրամայրը Մանկան հետ

Ավետմանը հաջորդում է Ճրագալույցի երեկոյի կանոնը: Այն, վերաբերելով Ս. Ծննդյանը, միաժամանակ թեմատիկ հատակ որևէ դրվագի հետ չի կապվում, ուստի կանոնին կից ներկայացվում է Տիրամայրը՝ Մանկան հետ՝ դարձյալ եվրոպական ազդեցությամբ, քանի որ Տիրամայրը կանգնած է, իսկ հայկական ավանդույթում պատկերվում է գահին նստած: Պատկերի շրջանակի ներքևի կենտրոնական մասում գրված է ԱՐ, որը, թերևս, փորագրիչ Յարութիւնի Արութիւն ձևի համառոտ տարբերակն է:

Պատկերին համահունչ ձևով, ուր Տիրամայրը գորովագութ գրկել է Մանկանը, հղացմամբ իրենում՝ որպես խորանում, ապա և ծնվելուց հետո գրկում պահելու գաղափարն արտահայտվել է նկարի չափածո մակագրության հետևյալ տողում.

Բանին անբաւի՝ մաքուր գրկարան:

---

337 Տես **Майкапар А.,** Новый Завет в искусстве, стр. 37-38.

338 Նույն տեղում, էջ 39:

339 Շարակնոց, Ս. Էջմիածին, 1789, էջ 20:

ՏԻՐԱՄԱՅՐԸ ՄԱՆԿԱՆ ՀԵՏ
«Շարակնոց», Ամստերդամ, 1664-65 թթ.

ՏԻՐԱՄԱՅՐԸ ՄԱՆԿԱՆ ՀԵՏ
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

Սկսվող կանոնի ճակատազարդը, ուր պատկերված է Տիրամայրը խաչն ուսած Մանկան հետ, վերցված է նախորդ հրատարակություններից, որի մասին արդեն գրել ենք։

Այս կանոնի վերջում պատկերված է հավալուսնը՝ ձագերին կերակրելիս։ Հավալուսնը (պելիկան) խորհրդանշում է Քրիստոսին, քանի որ ասվում է, թե նա ձագերին կերակրում է կտցով իր կողին բացած վերքից հանված արյամբ, ինչպես որ Քրիստոսի կողահոս արյունն է Ս. Հաղորդության բաժակը հեղվում որպես գինի[340]։ Փորագրանկարում պատկերված է այն պահը, երբ հավալուսնը կտուցով բացում է կողը, իսկ երեք ձագերը կտուցները բացած, վեր են պահել՝ կերակրվելու համար կենդանարար արյամբ։

Նկարի ստորին մասի շրջանակում գրված մակագրության մեջ ակնհայտորեն երևում է «հաւալուսն» բառը, իսկ նրա երկու կողմերում գտնվող փակագրերը այնքան էլ հստակ չեն, և մենք փորձել ենք այն վերծանել հետևյալ ձևով. «Զ[եռ]ամբ. Հաւալուսն. Յ[արու]թիւն»։ Նման ընթերցման դեպքում այն կմեկնաբանվի հետևյալ ձևով. հավալուսնի պատկերը քանդակվել է ձեռամբ Հարություն սարկավագի, ով գրքի փորագրանկարների հեղինակն է։

Սուրբ Ծնունդ

Հաջորդ՝ Ս. Ծննդյան առաջին օրվա կանոնի փորագրանկարը (էջ 34) մի տարբերակն է նախորդ հրատարակություններում և հատկապես «Տոնացույցում» քանիցս հանդիպող այս տեսարանի, որում հարազատորեն արտահայտված է միջնադարյան պատկերագրությունն ըստ քրիստոնեական խորհրդաբանության։

Նկարի չափածո մակագրության մեջ բանաստեղծական պատկերավորությամբ և պարզությամբ արտահայտվել է երրորդաբանական այն ըմբռնումը, որ նախահակընդդեմ Հորից ծնվածը մարդեղացավ՝ ծնվելով Սուրբ Կույսից։

Վերջին երկու տողերում բանաստեղծորեն վերարտադրվել է նկարի պատկերը հրեշտակային փառաբանությամբ և մոգերի ու հովիվների երկրպագությամբ.

Զոր փառաբանեն հրեշտակք ի յերկնէ
Եւ մոգքն ընդ հովիւսն պատուեն ի յերկրէ։

Հորդանանում մկրտությունը

Հորդանանում մկրտությունը ավանդական պատկերագրության հետևողությամբ է կատարված, սակայն մի քանի էական դրվագներ չկան

340 Տես **Майкапар А.,** Новый Завет в искусстве, стр. 263.

Ս. ԾՆՈՒՆԴ

Ս. Էջմիածին, 1789 թ.

կամ որոշակիորեն փոխված են: Բացակայում են գետի խորքում գտնվող և «Հորդանանի իշխան» անվանվող ծերունին, որը ներկայացնում է պարտված սատանային, և փրկագնված հոգիները խորհրդանշող ձկները[341]:

Հորդանանում մկրտության տեսարանը ժամանակի ընթացքում որոշակիորեն ազդվել և համապատասխանեցվել է մկրտության կամ ժողովրդի կողմից «կնունք» անվանվող տեսարանին: Այս պատճառով Հիսուսին Հորդանան գետում սպասավորելու համար գտնվող հրեշտակը կամ հրեշտակները ձեռքներին ունեն սրբիչ, ինչպես որ մկրտության ավազանից հանվող երեխային նախ սրբիչի մեջ են փաթաթում: Այս սրբիչներն իրենց ոճավորմամբ անգամ ազգագրական ուսումնասիրությունների նյութ կարող են լինել: Այստեղ հրեշտակը սրբիչի փոխարեն ձեռքում հոգևորականի հանդերձ է պահել, ինչը, ըստ երևույթին, խորհրդանշում է Հիսուսի մկրտությանը հաջորդող քարոզության սկզբնավորումը:

Մկրտության տեսարանում ափին ծառ է պատկերվում՝ բնին կացին խփված՝ համաձայն Հովհաննես Մկրտչի «Կացինն ահա ծառի արմատին է դրված» (Մտթ. Գ 10) խոսքերի: Հիշյալ դրվագի իմաստային մթագնմամբ՝ այստեղ միայն ծառն է պատկերված: Դժվար թե Հարություն սարկավագը կամ պատկերի կոմպոզիցիոն կառուցվածքը գծագրողը չիմանային այս դրվագի խորհրդաբանական նշանակությունը: Ըստ երևույթին՝ մտավախություն են ունեցել, որ ընթերցողները կարող է այն չիմանային, և նրանց տարօրինակ թվար, թե մկրտության տեսարանում ինչ գործ ունի կացինը: Միաժամանակ, որպեսզի պատկերային այս մոտիվը դուրս չմնար, ծառը պատկերվել է առանց կացնի:

Նկարի մակագրության առաջին տողում մկրտության խորհուրդը և Քրիստոսի խոնարհությունը, որը, ի դեպ, հստակորեն արտահայտված է նաև նկարում, ձևակերպված է այսպես.

Տէրն ի ծառայէն ի գետ մկրտի:

Տիրամորը տրված բնորոշումները

Ս. Ծննդյան Ութօրեքի վերջում գտնվող նկարի կենտրոնում Տիրամայրն է՝ Մանկան հետ՝ գահին, իսկ շուրջբոլորը՝ 12 շրջանակների մեջ, համապատասխան մակագրությամբ ներկայացված են Տիրամորը վերաբերող բնորոշումները, այդ թվում և Հին Կտակարանից վերցված պատկերները, որոնք Նոր Կտակարանի հետ զուգահեռով խորհրդանշում են կուսական ծննդյանը: Բերենք այդ բնորոշումներից մի քանիսը. «Մորենի անկէզ» (Ելք. Գ 2-4), թե ինչպես մորենուց ելած բոցը չայրեց մորենին, այնպես էլ Հիսուսի ծննդյամբ չխախտվեց Տիրամոր կուսությունը: «Դուռն փակեալ» (Երգ. Դ 12), որը նույն խորհուրդն ունի: «Սափոր ոսկեղէն» (Եբր. Թ 4)՝ որ Տիրամայրն իրենում՝ որպես ոսկյա սափորում, կրեց Հիսուսին: «Լեառն վիմածին» (Դան. Բ 34), որ ծննդյան իմաստն ունի, նույնը և «Գեղմն Գեդեոնի» (Դատ. Զ 38) արտահայտությունը:

341 Տես **Մաթևոսյան Կ. Ավետիսյան Ա.,** Ավետարանական պատկերներ, էջ 35-36:

ՏԻՐԱՄՈՐԸ ՏՐՎԱԾ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

Արևմտյան արվեստում կան Տիրամորը 12 բնորոշումներով ներկայացնող նման բազմաթիվ պատկերներ: «Շարակնոցում» դրանցից որևէ մեկի փորագրատախտակը չէ, որ օգտագործված է, որովհետև շրջանակի միջի մակագրությունները հայերեն են: Հետևաբար եվրոպական հրատարակություններից կամ դրանց փորագրանկարներից արտապատկերված է, և մակագրություններն են հայերեն դարձված:

Տիրամայրը և Մանուկը միջանկյալ տեղ են գրավում բյուզանդական պատկերագրության և 17-18-րդ դարերի հայկական համաբնույթ պատկերների միջև:

Շրջանակում գրված բնորոշումները Տիրամոր ծննդյան կանխասացություններ են՝ վերցված տարբեր մարգարեություններից: Այս պատճառով նկարի չափածո մակագրության մեջ ասվում է, որ Տիրամոր ծնունդը նախ մարգարեները գուշակեցին և տարբեր խորհուրդներով պատկերեցին, ապա այն իրականացավ Միածնի՝ Սուրբ Կույսից ծննդյամբ[342]:

Տյառնընդառաջ

Սիմեոն կաթողիկոսի «Տոնացույցի» հետևողությամբ է կատարված Տյառնընդառաջի պատկերը, որի աջ անկյունի ներքևում գրված է Յ: Այն ամենայն հավանականությամբ փորագրանկարիչ Հարություն սարկավագի անվան սկզբնատառն է:

Պատկերի չորստողյա չափածոյում միջնադարյան ավանդույթի հետևողությամբ Քրիստոս անվանվում է «Հինաւուրցն», ինչպես որ ասվում էր «հինաւուրցն Աստուած»: Այն միտքն է ընդգծվում, որ Քրիստոս՝ լինելով օրենքների տվողը, Ինքը օրենքի տակ մտավ, այսինքն՝ թույլ տվեց, որ կատարվի անդրանիկներին քառասուն օրեկանում տաճար ընծայելու ծեսը[343]:

Ավետարանում ասվում է, որ համաձայն Մովսիսական օրենքի՝ ամեն արու առաջնեկի համար Տիրոջը «ընծա պետք է տալ մի զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագ» (Ղուկ. Բ 24):

«Տոնացույցի» 1774-75 թթ. հրատարակության մեջ զույգ տատրակների կամ աղավնիների ընծայման դրվագը պատկերված չէ: Այն, սակայն, կա «Շարակնոցի» պատկերում, ուր նկարի ձախ անկյունում ծնկած Աննա մարգարեուհին է՝ ձեռքի ամանում պահած զույգ թռչուններին:

Լուսանցային երեք պատկերներ

Հաջորդ երեք կանոններն ունեն լուսանցային պատկերներ: Առաջինը Դավիթ թագավորի և Հակոբոս Տյառնեղբոր լուսանցանկարն է՝ համանուն կանոնի կողքին: Դավիթը պատկերված է որպես երիտասարդ և հզոր թագավոր, իսկ Հակոբոս առաքյալը նկատելիորեն մեծ է և տանջված դեմք

342 Շարակնոց, Ս. Էջմիածին, 1789, էջ 71:

343 Նույն տեղում, էջ 84:

Ջին աւուրցն Ա՝ մանուկ երևեալ
տուօղն օրինաց՝ ընդ նոքօք մըն տեալ
քառասնօրեայ՝ ի տաճարն եկեալ
ի սիմէօնէ գըգուիլ հաճեալ։

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ

«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

ունի: Երկայն մազերով ու մորուսով նա հիշեցնում է Քրիստոսին: Այս նմանությունը պատահական չէ: Նա Քրիստոսի եղբայրն էր՝ որպես Հովսեփի որդի, և միջնադարյան մանրանկարչությունում պատկերվում է Քրիստոսին որոշակիորեն նման, որը հիմնվում է հետևյալ երկու աղբյուրների վրա: Առաջին՝ Պողոս առաքյալը Գաղատացիներին ուղղված թղթում գրում է. «...զՅակովբոս զեղբայրն Տեառն» (Գաղատ, Ա 19): Երկրորդ՝ պարականոն ավետարաններից մեկում ասվում է, որ Հակոբոսը Տյառնեղբայր կոչվեց ազգակցության, նմանության և առաքինի վարքի համար[344]:

Ս. Ստեփաննոս Նախավկան կանոնի լուսանցային նկարում պատկերվում է ճիշտ այնպես, ինչպես նա պատկերված է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի՝ Ս. Ստեփաննոսի խորանի և Մայր Աթոռում պահվող մի շարք այլ սրբանկարներում:

Ս. Ստեփաննոսն անվանվում է նախասարկավագ և սարկավագական ծառայությանը համահունչ՝ պատկերվում է խնկամանը և բուրվառը պահած:

Առաջավորաց պահքի ուրբաթ օրվա՝ Հովնան մարգարեի հիշատակի կանոնի լուսանցքում պատկերված է այն պահը, երբ կետը կուլ է տալիս Հովնանին: Նկարը լիովին հարմարեցված է լուսանցային պատկերմանը: Կետը վեր է ձգված բացված բերանով, որում երևում է միայն Հովնանի գլուխը (էջ 129):

Առաջավորաց պահքի շաբաթ օրը Ս. Սարգսի տոնն է, որի կանոնն այստեղ որևէ նկար չունի: «Տոնացույցի» մասին գրելիս տեսանք, որ Սիմեոն կաթողիկոսը պայքարում էր, որ տոները ներկայացվեն իրենց եկեղեցական անվանումներով և ոչ թե դրանց ժողովրդական համարժեք անուններով, որպեսզի դա որպես հեթանոսություն չշահարկեին Հայոց եկեղեցու դավանանքը քննադատողները: Սիմեոն կաթողիկոսի «Տոնացույցի» նույն այս ուղղվածության պատճառով է թերևս, որ Ս. Սարգսի նկարը չկա, երբ այն բավականին տարածված էր ուշ միջնադարյան հայ մանրանկարչության մեջ:

Այստեղ հնարավոր է նաև մեկ այլ բացատրություն: Ս. Էջմիածնի հրատարակություններում ազգային-եկեղեցական թեմաներով հանդիպում են միայն Ս. Էջմիածնի, Ս. Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմյանց պատկերները, որոնք իմաստային փոխկապակցվածության մեջ են գտնվում: «Շարակնոցի» այս հրատարակության մեջ ազգային-եկեղեցական թեմաներով որևէ այլ նկար չկա, ուստի կարելի է ենթադրել, որ փորագրիչն այստեղ ևս նպատակահարմար չի գտել պատկերելու Ս. Սարգսին: Այլապես «Շարակնոցում» տեղ գտած պատկերման առումով ավելի բարդ նկարների շարքում առանձնապես դժվարություն չէր ներկայացնի Ս. Սարգսին պատկերելը:

---

344 Տես Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1904, էջ 467:

«ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱ Ի ՄԷՋ ԴՐԱԽՏԻՆ»
«Շարակնոց», Ամստերդամ, 1664-65 թթ.

«ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱ Ի ՄԷՋ ԴՐԱԽՏԻՆ»
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

«Ադամ եւ Եւա ի մէջ դրախտին»

Բուն Բարեկենդանի կիրակին, որով սկսվում են Մեծ Պահքը և Ավագ Շաբաթը, այս տոնի հոգևոր խորհրդին համահունչ ձևով ներկայացված է Ադամի ու Եվայի դրախտային անհոգ կյանքը՝ շրջապատված դրախտի տունկերով և վայրի ու ընտանի կենդանիներով: Համաձայն Եսայու մարգարեության մեջ ասվող «Եւ ճարակեսցէ գայլ ընդ գառին, եւ ինձ առ ուլու մակաղեսցի» (Եսայի ԺԱ 6) խոսքերի՝ միասին են պատկերված ընտանի կենդանիները և վայրի գազանները:

Նկարի չորս տողանոց չափածո մակագրության վերջին երկու տողերը խտացնում են տրված աստվածային պատվիրանը.

Յամենայն ծառոց՝ որք անդ, վայելեալ,
Իսկ ի միոյն չուտել ըզպատուէր առեալ[345]:

Հաջորդ կիրակին քանի որ վերաբերում է դրախտից արտաքսմանը, նույն այս նկարում որպես դեպքերի հաջորդական զարգացման արտահայտություն, Ադամն ու Եվան Աստծու հայացքի ներքո են, իսկ նրանց թիկունքում դրախտի արգելված պտուղը խորհրդանշող ծառն է:

Հաջորդ էջից սկսվող Բուն Բարեկենդանի կանոնը գեղեցիկ ճակատազարդի ներքո է՝ «Ատենի ժամագրքից» վերցված և «Շարակնոցի» համար որոշակիորեն մեծ Բ տառով ու էջի լուսանցքի կեսից ավելին գրավող լուսանցազարդով:

Այս նկարի հետ որոշակի ընդհանրություն ունի «Շարակնոցի» Ամատերդամի 1664-65 թթ. հրատարակության համապատասխան պատկերը (էջ 130):

Ճակատազարդում Աջը պարզած Հայր Աստված է: Բարձրացված Աջը այստեղ թերևս խորհրդանշում է արգելված պտուղից չօգտվելու Աստվածային պատվերը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ. «Մուտն ի վիրապն»

Նման ձևավորումը ազդարարում է Մեծ Պահքի սկսվելը, և մինչև հինգերորդ շաբաթվա շաբաթ օրը որևէ այլ պատկեր չկա: Այդ օրը, ի հիշատակ «Մուտն ի վիրապն» տոնի, Ս. Գրիգորին նվիրված նկարն է: Պատկերի կենտրոնում հայրապետական հանդերձավորմամբ Լուսավորիչն է: Նկարը շրջանակված է Ս. Գրիգորի չարչարանքները ներկայացնող 14 դրվագներով (էջ 226): Այդ դրվագների շարքում բուն չարչարանքները տասներկուսն են, որոնց պատկերի ստորին աջ անկյունի ներքևում հաջորդում են վիրապը նետելը, ապա և Տրդատի բժշկությունը: Այստեղ թեև խոզակերպ Տրդատը բժշկություն է հայցում, սակայն թագը գլխին է: Բժշկության հայցման այս դրվագում արդեն ուվագծվում է պատուհասվածների բժշկությունից Տրդատի՝ Հայոց թագավորության վերականգնման համար բարեխոսության հայցումը Գրիգոր Լուսավորչից:

345 Շարակնոց, Ս. Էջմիածին, 1789, էջ 136:

Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ 14 ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԸ

«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

Գրիգոր Լուսավորչի՝ պատուհասվածների բժշկվելու համար բարեխոսության ազգային վերիմաստավորմամբ հայոց պետականության վերականգնման հայցվածի վերածվելը ավելի ցայտուն է արտահայտվել նկարի չափածո մակագրության մեջ.

Ով Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց,
Հայր հաւատոյ վերապատուեալ յապգաց համայնց,
Վասն անըմբեր չարչարանաց քոց սոսկալից,
Մաղթեա առ Տէր պահել ըզմեզ ի թշնամեաց:

Ղազարոսի հարությունը

Տոնային ներքին բաժանմամբ՝ Ծաղկազարդի կիրակիին նախորդող շաբաթ օրն ազդարարում է Մեծի Պահոց քառասնօրյա շրջանի ավարտը և Ավագ Շաբաթվա սկիզբը: Այն խորհրդանշում է կյանքի հաղթանակը մահվան վրա, և զվարթ ու հաղթական այս տրամադրությունն է արտահայտվում հաջորդ օրվա կանոնի՝ «Մուտքն Երուսաղեմ» պատկերում, որին ավելի պայծառություն է հաղորդում վերջինիս «Ծաղկազարդ» անվանումը: Նույն այս տրամադրությունն է իշխում նաև Ղազարոսի հարության կանոնի առաջին էջի ձևավորման մեջ:

Ղազարոսի հարության պատկերն ակնհայտորեն արևմտյան ոճով է, ընդ որում՝ ավելի շատ Ամստերդամի հրատարակությունների բողոքական և ոչ թե կաթոլիկական խորհրդաբանական ուղղվածությունն ունի: Ավանդական եկեղեցիների միջնադարյան պատկերագրության մեջ Ղազարոսը ելնում է ոչ թե փորված գերեզմանից, այլ ուղղահայաց այրից, որը ծածկող քարը մի կողմ է դրված: Ձեռագրային մանրանկարները համահունչ են ավետարանական հիշյալ դրվագի միջնադարյան մեկնաբանություններին: Այստեղ, այնինչ, ավետարանական պատմության ուղղակի պատկերային վերաշարադրանքն է (էջ 256):

Նկարի չափածոյում այն միտքն է շեշտվում, որ չորսօրյա մեռյալը հառնեց՝

Յուցեալ, թէ կոչօղն՝ լուծիչ մահուան է:

Ծաղկազարդ

Ծաղկազարդի պատկերը հիշեցնում է Տոնացույցի 1774 թ. հրատարակության համապատասխան նկարը:

Այլաբանական ավելի խորը իմաստ ունի նկարի չափածո մակագրությունը, որում ասվում է, թե Փառքերի թագավորը, Ով քերովբեներին էր բազմել, այսինքն՝ հրեշտակաց դասերով էր շրջապատված, հեզությամբ ավանակին նստեց (էջ 264):

«ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՂԱԶԱՐՈՍ»
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

Պատայ թշուառն՝ի քրօքէս բաղմեալ
ՀեզուԹԵ՛ ի նոր յաւանակ նստեալ.
՝ի հեբրայեցւոց ոստովք պատուեցեալ
ովսաննայ երգով օրհնաբանեցեալ։

«ՄՈՒՏՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ»

«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.



ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ

«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

Խաչելություն

«Շարակնոցի» փորագրանկարների մի մասը, որ փորագրված է եվրոպական որևէ հրատարակությունից, երևում է Խաչելության կամ ավելի ճիշտ՝ Բարեխոսության պատկերի օրինակով (էջ 290), որը գրեթե նույնն է «Ատենի ժամագրքի» իններորդ ժամին կից նկարի (էջ 186) և «Սաղմոսարանի» 1787 թ. հրատարակության նույն թեմայով պատկերի հետ: «Սաղմոսարանում» նկարի վերին մասը, այդ թվում և խաչափայտի վերևի հատվածը, ուր Պիղատոսը պատվիրեց գրել «Հիսուս Նազովրեցի՝ հրեաների թագավոր», չկա: «Շարակնոցում» կա այդ հատվածը, ուր մակագրությունը լատիներեն սկզբնատառերով է գրված (էջ 290): Հնարավոր չէ, որ հայ փորագրիչը ինքնուրույն նկարելու դեպքում գրաբար չգրեր: Ասվածը հաստատվում է «Շարակնոցի»՝ Ամստերդամի 1664-65 թթ. հրատարակության համապատասխան պատկերով (էջ 261), որը գրեթե համընկնում է էջմիածնի այս հրատարակության նկարի հետ:

Խաչից իջեցումն

Հայկական պատկերագրությամբ տարածված է Խաչից իջեցման պատկերը, բայց ոչ գերեզման դնելուց առաջ Տիրամոր ողբի տեսարանը, որն ավելի ուշ շրջանի արևմտյան նկարչությանն է բնորոշ: Քրիստոսին գերեզման դնելու Ավագ Շաբաթվա «Կանոն Մեծի շաբաթուն թաղման Տեառն Յիսուսի» կանոնի՝ Տիրամոր ողբի տեսարանը (էջ 314), որը ևս գտնում ենք «Ատենի ժամագրքի» Ս. էջմիածնի հրատարակության մեջ, ակնհայտ նմանություն ունի «Շարակնոցի» ամստերդամյան հրատարակության նույն պատկերի հետ (էջ 289):

Ամստերդամյան հրատարակություններին բնորոշ ձևով նկարը եթե հիմնականում ներկայացնում է ավետարանական պատմությունը, ապա կից չափածո չորս տողերը արդեն պատկերի խորհրդաբանական բացատրությունն են տալիս: Ասվում է, որ արարածներին կենդանություն շնորհողը նույն այս պատճառով մեռավ արարվածների համար, այսինքն՝ իր մահվամբ փրկագնեց մեղուցյալ մարդկությանը:

Վերջին երկու տողերը ներկայացնում են կտավով պատվելը և գերեզման դրվելը.

Պատեալ ի պատանս մաքուր կտաւոց,
Էջ ի գերեզման՝ Փրկիչ գերելոց[346]:

Ս. Էջմիածինը Նոյյան տապանի և Արարատի հետ

Ավագ Շաբաթվա կանոնի վերջում՝ Ս. Հարության կանոնից առաջ դրված է Ս. էջմիածնի հրատարակություններում քանիցս հանդիպող «Ս. էջմիածինը Նոյան տապանի և Արարատի հետ» փորագրապատկերը (էջ

346 Շարակնոց, Ս. Էջմիածին, 1789, էջ 315:

321)։ Վերջինիս զետեղումը Ավագ Շաբաթվա կանոնի վերջում թերևս կարելի է բացատրել հետևյալ մեկնաբանությամբ։ Հին Ուխտի Նոյյան տապանը Նոր Ուխտում վերահառնեց որպես եկեղեցի, հայկական մեկնաբանությամբ՝ Սուրբ Էջմիածին։ Նույն ձևով մահկանացու Հին Ադամի փոխարեն՝ Ս. Հարությամբ հառնեց Քրիստոս։

Ս. Հարություն

Տոնացուցային ընթացք ունեցող բոլոր ձեռագիր ժողովածուների ամենատարածված ու ձևավորված էջը Ս. Հարության կանոնի սկիզբն էր, որով տվյալ ձեռագիրը երկու մասի էր բաժանվում՝ Ս. Ծննդից մինչև Ս. Հարության և հաջորդող շրջանը։

Ս. Հարության պատկերը համահունչ է 16-18-րդ դարերի այս թեմայով նկարներին։ Դարձյալ որոշակիորեն նոր գեղարվեստական մտածողությամբ, սակայն հարազատորեն վերարտադրում է պատկերագրական բոլոր դրվագները՝ բարձրացված կափարիչով թափուր գերեզման, ուշաթափ ընկած պահապաններ և յուղաբեր կանայք կամ Մարիամյանք, ովքեր եկել են օծելու Քրիստոսի մարմինը։

Հրեշտակը, Մարիամին դիմելով, ասում է. «Ձի չէ աստ, այլ յարեաւ» (Ղուկ. ԻԴ 5-6)։ Ավետարանական խոսքերի հետևողությամբ նկարում գերեզմանի կափարիչին նստած և Մարիամյանց դիմող հրեշտակն է։ Հրեշտակի խոսքերի՝ որպես յուղաբեր կանանց ուղղված քարոզ մեկնաբանությամբ նկարի չորս տողանոց չափածոյի վերջին երկու տողերում ասվում է.

Զոր հրեշտակն ահեղ՝ առ վիմին նստեալ,
***Խընկաբեր կանանցն աւետարանեալ** (էջ 322)։*

«Շարակնոցի»՝ Ս. Էջմիածնի հրատարակության կանոնների սկզբնաէջերից ամենաշքեղ ձևավորումը ունի Ս. Հարության կանոնի առաջին էջը։ Ս. Հարության խորհրդին համահունչ ձևով ծաղկած խորանում ճաճանչավոր շրջանակի մեջ պատկերված է «Գառն պատարագեալ»։ Կանոնի սկսվածքը նախ զարդագիր մեծ տառերով, ապա միջինից մեծ երկաթագրով է, և հետո գալիս է սովորական շարվածքը։ Էջի երկայնքով մեծ լուսանցազարդ է։

«Գլխատումն Յովհաննու»

Հովհաննես Մկրտչի գլխատման կանոնի լուսանցքում լուսանցազարդային ձևով պատկերված է Հովհաննես Մկրտչի գլուխը սկուտեղի մեջ (էջ 337)։ Այն կա նաև «Կրկին կանոն Յօհաննու Մկրտչին» կանոնի սկզբում (էջ 469)։

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ

Համբարձում

Նկարի չափածո մակագրության չորս տողերից առաջին երկուսում ասվում է, որ Քրիստոս ինչպես աշխարհ իջավ, վերստին երկինք ելավ։ Վերջին երկու տողերում ներկայացվում է առաքյալների զարմացական հայացքների և հրեշտակային փառաբանության ուղեկցությամբ երկինք համբառնալը.

Առ որ աշակերտքն պըշուցեալ կային,
և երկնայնոց դասքն ըսքանչանային[347]:

«Շարակնոցի» Համբարձման նկարը ոճական փոքր տարբերություններով կրկնում է «Տոնացույցի» նույն պատկերը։

Հոգեգալուստ

Հոգեգալստյան կանոնին կից բերված է «Տոնացույցի» «Ատենի ժամագրքի» և «Սաղմոսարանի» նկարը, բայց ավելի նուրբ փորագրմամբ։ Ավետարանական տեսարանին համահունչ՝ «Շարակնոցի» Հոգեգալստյան այս պատկերի չափածո չորս տողերը ևս նույն պատմողական բնույթն ունեն։ Վերջին երկու տողերում ասվում է.

Էջ առ յառաքեալսն՝ պարգևօք վերին,
Մինչ ի Վերնատանն՝ Նմա սպասէին[348]:

Հոգեգալստյան Ս. Էջմիածնի 18-րդ դարի հրատարակությունների պատկերներին որոշ չափով համապատասխանում է «Յիսուս Որդիի» Ամստերդամի 1660-61 թթ. հրատարակության նկարը (էջ 392)։

Ընդհանրությունը շատ ավելի նկատելի է դառնում «Ճաշոցի» Վենետիկի 1668-88 թթ. հրատարակության Հոգեգալստյան նկարի հետ (էջ 727)։

Նմանությունը արդեն ակնհայտ է Աստվածաշնչի Մխիթար Աբբահոր Վենետիկի 1733 թ. հրատարակության հետ (էջ 1043)։

Ս.Էջմիածնի հրատարակություններում տեղ գտած նկարը վստահաբար վերափորագրվել է կամ այս հրատարակությունից, կամ վերջինիս համար նախատիպ ծառայած մեկ այլ պատկերից։

«Կանօն ծննդեան Յօհաննու Մկրտչին»

Հովհաննես Մկրտչի ծննդյան շարականային կանոնին նախորդող էջի վերջում՝ էջի կեսով բերված նկարում, Հովհաննես Մկրտիչն է՝ անապատական հանդերձավորմամբ և դիմացը «Գառն պատարագեալ»՝ համաձայն Քրիստոսի Նախակարապետի «Ահա գառն Աստուծոյ» (Յովհ. Ա. 29) խոսքերի։ Ինչպես խաչելության տեսարանում, երկնքում պատկերված են արևը և աստղ՝ լուսնի փոխարեն։ Այս պատկերը քանի որ ներկայացնում է նաև Քրիստոսի քարոզության սկիզբը, ուստի սեի ու սպիտակի վարպետ զուգորդմամբ երկնային լուսատուները ոչ թե խավարել են, ինչպես խաչելության ժամանակ, այլ պայծառ փայլում են։

---

347 Շարակնոց, Ս. Էջմիածին, 1789, էջ 402:

348 Նույն տեղում, էջ 430:

Աւր ելն ի վերուստ յարևատնէն ներքին,
պարձել Տաճարաձաճ մարմնովն ի յերկին.
առ որ աշակերտաքն պըշույե սէր կային,
և երկնայնոց դասքն քաքանչասային։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

«ԱՀԱ ԳԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ»
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

Տրդատի մկրտությունը

Տրդատի մկրտության պատկերը ևս նկատելի ընդհանրություն ունի «Տոնացույցի» համապատասխան նկարի հետ: Ոճական տարբերություններից բացի, սակայն, կա ևս երկու էական հավելում:

Առաջին՝ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ նշվում է, որ Արածանիի ափին մկրտվեցին Տրդատը, արքայական ընտանիքը և հայոց ավագանին ու զորքը, որոնց ընդհանուր թիվը ավելի քան տասնհինգ բյուր էր[349]:

---

[349] **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, աշխտ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 465, # 833:

ՏՐԴԱՏԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌԱՄԲ Ս. ԳՐԻԳՈՐԻ
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ԵՎ Ս. ԳԱՅԱՆԵ
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

Երկրորդ՝ Ագաթանգեղոսը գրում է, որ մկրտության ժամանակ «սաստիկ լույս երևաց լուսավոր այան նման» [350]։ Լուսե այունը բացակայում է «Տոնացույցի» նկարում, այն, սակայն, կա «Շարակնոցի» այս պատկերում։

[350] Նույն տեղում:

Տրդատի մկրտության հիշյալ երկու նկարներում աղավնաձև Սուրբ Հոգին պատկերված է ճիշտ այնպես, ինչպես «Շարակնոցի» Հոգեգալստյան պատկերում է և ավելի հարազատ է դեպ վար իջնող ձևով ներկայացվող հայկական ավանդույթին: Հոգեգալստյան «Տոնացույցի» նկարում օդում ճախրող աղավնին է, որը ավելի բնորոշ է արևմտյան ավանդույթին:

Տրդատի մկրտության՝ «Տոնացույցի» և «Շարակնոցի» հրատարակություններում Սուրբ Հոգուն նույն ձևով պատկերելը, ինչպես նաև հիշյալ երկու գրքերում Հոգեգալստյան նկարում աղավնու պատկերման ակնհայտ տարբերությունը հիմք են տալիս ենթադրելու, որ «Տոնացույցը» և «Շարակնոցը» միգուցե ունեցել են տարբեր պատկերների հայկական միջավայրում ստեղծված ձևերը, որոնք նախօրինակ են ծառայել այս երկու հրատարակությունների վերափորագրությունների համար:

«Կանօն Սրբոց Հռիփսիմեանց»

Հռիփսիմյանց կանոնին կից բերված է Ս. Հռիփսիմեին և Ս. Գայանեին պատկերող նկարը, ուր կույսերը հիշեցնում են նրանց նվիրված Հովնաթանյանի նշանավոր երկու նկարները՝ իմաստային մի շարք նրբերանգների տարբերությամբ և պայմանավորված այն հանգամանքով, որ այստեղ երկու կույսերը միասին են ներկայացված: Նկարը մեծապես հիշեցնում է Տիրամոր թագադրման տեսարանը: Վերին մասում՝ երկնային կամարում, հայր Աստված է՝ ձեռքերը պարզած երկու կույսերին օրհնելիս:

Երկու հրեշտակներ նահատակների թագերով են պսակում նրանց:

Հռիփսիմեն, ով հռչակված էր իր գեղեցկությամբ, այստեղ պատկերված է որպես երիտասարդ և գրավիչ կույս: Կրծքին նա կրում է խաչ, որում, համաձայն հայ եկեղեցական ավանդույթի, մի մասունք էր ամփոփված Քրիստոսի խաչափայտից, որը Հակոբոս Տյառնեղբայրը փոխանցել էր Հռոմի Կղոդիոս կայսրի Պատրոնիկե թագուհուն, և ապա կայսրական ընտանիքում սերնդեսերունդ փոխանցվելով՝ հասել էր Հռիփսիմեին:

Կույսը, ի նշան իր նահատակության, պահել է Քրիստոսի խաչափայտը:

Գայանեն՝ որպես մայրապետ, ավելի զուսպ է պատկերված: Ս. Հռիփսիմե-Ս. Գայանե հարաբերակցությունը հիշեցնում է Հայոց Դարձի տեսարանում Աշխեն թագուհի-Խոսրովիդուխտ արքայաքույր հարաբերակցությունը:

Գայանեն ձեռքում պահել է առաջնորդական գավազան, քանի որ մայրապետն էր Հռոմի մոտ գտնվող կուսանաց վանքի:

Հռիփսիմեի խաչափայտի և Գայանեի առաջնորդական գավազանի միջև ծաղկած մի վարդ է վեր ելնում: Ինչպես Ս. Հարության պատկերում ծաղկած և բուսականությամբ պատված գետինը խորհրդանշում էր կյանքի նորոգումը Քրիստոսի հարությամբ, այնպես և այստեղ այն խորհրդանշում է Հայոց աշխարհի ծաղկելը Հռիփսիմյանց նահատակությամբ ոռոգված արյամբ և Սուրբ Գրիգորի քարոզությամբ:

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

Նկարի մակագրության չորս տողերից առաջին երկուսում Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» հետևողությամբ այն միտքն է շեշտվում, որ Հռիփսիմյանք դարձան հարսները երկնային փեսայի։

Վերջին երկու տողերում արտահայտվում է հայ միջնադարյան գրականության մեջ ընդհանրացած այն ըմբռնումը, որ արեգակը թեև ծագում է արևելքից, սակայն կույսերի միջոցով Հայոց աշխարհի իմանալի լույսը ծագեց արևմուտքից.

Ի յարևմըտից՝ իբր արեգակունք,
ծագեալ յարևելս՝ նորոգ լուսատուք[351]։

Պայծառակերպություն

Այս կանոնի նկարը վերափոխված տարբերակն է Սիմեոն Ա Երևանցու «Տոնացույցի» նույն նկարի ոչ միայն պատկերային, այլև կոմպոզիցիոն և ոճական գրեթե նույնությամբ։ «Շարակնոցի» նկարը, ի տարբերություն «Տոնացույցի» պարզ գծագրման, կատարված է առավել բարձր վարպետությամբ։ Նկարի նման կից չորս տող չափածոն ևս հարազատորեն ներկայացնում է ավետարանական պատմության համապատասխան հատվածը[352]։

Ս. Էջմիածնի հիմնարկումը

Այստեղ ևս գտնում ենք «Տոնացույցի» նկարի մի տարբերակը։ Մայր Տաճարը, թերևս, ավելի հարազատ և վեհաշուք է պատկերված։ Էջմիածնի՝ որպես Միածնի էջքի գաղափարը արտահայտվել է նկարի չորստողյա չափածոյի վերջին երկու տողերում.

Զի իջմամբն Աստուծոյ հրաշակերտեցար,
Սուրբ Էջմիածին՝ լուսածև տաճար։

Տիրամոր վերափոխումը

«Տոնացույցի» պատկերի վերափորագրված տարբերակն է «Շարակնոցի» նաև Վերափոխման կանոնի նկարը։ Եկեղեցական ավանդությանը և նկարին համահունչ ձևով կից չափածո չորս տողերում ասվում է, որ Ս. Կույսը հոգին Որդու ձեռքերում ավանդեց, առաքյալների կողմից ամփոփվեց և հրեշտակների կողմից վերափոխվեց[353]։

Հաջորդ էջում շքեղ կիսախորանի ներքո «Այսօր ժողովեալ սրբոցն» սկսվածքով շարականի Ա-ն գրված է զարդագիր երկու աստիճան մեծ տառով։

---

351 Շարակնոց, Ս. Էջմիածին, 1789, էջ 491:

352 Նույն տեղում, 1789, էջ 491:

353 Նույն տեղումն, 1789, էջ 530:

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒՄԸ
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

ՏԻՐԱՄՈՐ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

Քրիստոս նկարում՝ կենտրոնական վերին մասում, ձեռքերում պահել է Տիրամոր հոգին՝ անձամբ երկինք փոխադրելու համար: Տիրամոր հոգին մանկադեմ ու լուսավոր է՝ համաձայն այն ըմբռնման, որ մարդկային մեղքերն են սևացնում և ծերացնում հոգին:

Պատկերի կենտրոնական մասում, մյուս կերպարներից ընդգծված մեծությամբ, Տիրամայրն է: Հանդարտ ննջող ամենասրբուհի կույսի աջ և ձախ կողմերում խմբված են առաքյալների երկու դասերը՝ Պողոսի և Պետրոսի գլխավորությամբ:

Խաչելություն

Ս. Խաչի նավակատյաց կանոնին կից բերված է խաչելության պատկերը, որը ոճական առումով և գեղարվեստական կատարմամբ անհամեմատելի ձևով գերազանցում է այս թեմայով նախորդ հրատարակությունների նկարներին, այդ թվում «Տոնացույցի»: Վերջինիս խաչելության պատկերի զույգ ավազակները «Շարակնոցի» նկարում բացակայում են, շնորհիվ որի խաչելության խորհուրդը և Մարիամյանց ողբը ավելի է ընդգծվում: Եկեղեցական ավանդույթից եկող պատկերագրական կառուցվածք ունի: Խաչի վերևում գրված է «ՅՆՒՀ»՝ «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից»: Խաչափայտի ներքո ադամական գանգն է, իսկ Քրիստոսի կողը զինվորը խոցում է ձիուն նստած:

Բանաստեղծական չափածոյում ասվում է, որ փրկչական արյամբ նվիրագործված Խաչափայտը Քրիստոս եկեղեցուն տվեց, որպես Իր նշան.

Զոր մածեալ արեամբ Քոյով Փըրկական,
Սուրբ եկեղեցւոյ Քոյ ետուր նըշան[354]:

Ս. Խաչին նվիրված տոնի ճակատազարդում (էջ 548) երկու հրեշտակների պահած ձվածիրում խաչափայտն է՝ խաչելության երեք գամերի հետ, իսկ ձվածիրի վերևում՝ փշե պսակը:

Հակոբ Մծբնա հայրապետի կանոնը

«Կանոն Սրբոյն Յակոբայ Մըծբնայ հայրապետին» կանոնի լուսանցազարդում պատկերված է Մծբնա Հակոբ հայրապետը հոգևորական շքեղ հանդերձներով և ակնհայտորեն Ս. Գրիգոր Լուսավորչին նման (էջ 600): Հայ միջնադարյան մանրանկարչությունից եկող ավանդույթով Հակոբ Հայրապետը Լուսավորչին նման էր պատկերվում, որովհետև նրանք մոտ ազգականներ էին:

---

354 Շարակնոց, Ս. Էջմիածին, 1789, էջ 548:

ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

«ԿԱՆՈՆ Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ»
«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

Հրեշտակապետաց կանոնը

Փորագրանկարիչ Հարությունն սարկավագը որ օգտվել է Ամստերդամի հայկական տպարանի պատկերներից, հստակորեն երևում է Գաբրիել և Միքայել հրեշտակապետերին նվիրված կանոնի վերին մասում Ս. Երրորդությունը ներկայացնող գծանկարից (էջ 609), որը վերցված է Վանանդեցիների՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1695 թ. հրատարակությունից[355]։

Հրեշտակաց դասը պատել է Ս. Երրորդությունը ներկայացնող գծանկարը, իսկ ներքևում չարության մարմնավորում վիշապին սատակող Գաբրիել և Միքայել հրեշտակապետերն են։

Նկարի չափածո տողերում հրեշտակները բնորոշվում են որպես Սուրբ Երրորդության «հրաբուն պաշտօնեայք», ովքեր օրհնում են Տիրոջը և մարդկանց բարեկամներն են։

Հաջորդ էջում, ուր սկսվում է Հրեշտակապետաց կանոնը, լուսանցքում պատկերված է վիշապին խոցող Միքայել հրեշտակապետը։ Այս պատկերը տարածված էր և հանդիպում է Ս. Էջմիածնի 1770-90-ական թթ. մի շարք հրատարակություններում։

«Համօրինաց մարտիրոսաց»

Պատկերագրական բարդ կառուցվածք ունի և երկնային արքայությունը հիշեցնող մանրանկարներին է նման «Համօրինաց մարտիրոսաց» կանոնի փորագրանկարը, ուր պատկերի կենտրոնական մասում են Աստված՝ գահին, և խաչը ուսած Որդին, իսկ ներքևում՝ «Գառն պատարագեալ»՝ շրջան կազմած սրբոց դասերով (էջ 686)։

Պատկերագրական այս ձևը համահունչ է նաև «Ամենայն սրբոց» պատկերներին։ Նկարի ներքևի շարքում ոչ թե նահատակներն են, այլ սրբացված հայրապետները։

Կից չափածոն բանաստեղծական համարժեքն է նկարում պատկերվածի.

Գումարտակ Սրբոցն յԱստուծոյ ընտրեալ,
յառաջս աթոռոյն և գառին կացեալ,
լըւացմամբ արեան պայծառապգեստեալ
և վարմաւենիս ի ձեռս ընկալեալ։

Առաջին երկու տողերը ներկայացնում են Աստվածության Աթոռի և Գառան առջև խմբված սրբերին։ Ապա ասվում է, որ նրանց հանդերձները պայծառացել են իրենց նահատակության արյամբ, և որպես նահատակության դափնիներ՝ ձեռքերում արմավենու ոստեր են պահել։

---

355 Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան, յօրինեցեալ ի Մովսիսէ Խորենացւոյ, Յամստէլօդամ, 1695, էջ 308։

«ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ» ԿԱՆՈՆԻ ՆԿԱՐԸ

«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

«ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ» ԿԱՆՈՆԻ ՆԿԱՐԸ
«Շարակնոց», Ամստերդամ, 1664-65 թթ.

«ՀԱՄՕՐԻՆԱՑ ՆՆՋԵՑԵԼՈՑ Ի ՔՐԻՍՏՈՍ» ԿԱՆՈՆԻ ՆԿԱՐԸ

«Շարակնոց», Ս. Էջմիածին, 1789 թ.

«ՀԱՄՕՐԻՆԱՑ ՆՆՋԵՑԵԼՈՑ Ի ՔՐԻՍՏՈՍ» ԿԱՆՈՆԻ ՆԿԱՐԸ

«Շարակնոց», Ամստերդամ, 1664-65 թթ.

Կանոնի վերևում գտնվող ճակատազարդում Քրիստոս պարզել է ձեռքը, կարծես Իրեն է ցույց տալիս՝ ասելով, որ Ինքն է ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը (Հովհ. ԺԴ 6), Ում դիմեցին Իր անվամբ նահատակվածները։

Այս նկարը մի տարբերակն է «Շարակնոցի» Ամստերդամի 1664-65 թթ. նկարի (էջ 736)։ Վերջինիս մեկ այլ տարբերակն է Աստվածաշնչի Մխիթար Աբբահոր Վենետիկի 1733 թ. հրատարակության նկարը (էջ 1158), որին ոճական և պատկերային առումով մոտ է «Շարակնոցի» Ս. Էջմիածնի հրատարակությունը։

Ոսկանյան «Աստվածաշնչում», ինչպես նաև Մխիթար Աբբահոր գրքում տեղ գտած պատկերները իրենց հերթին սերում են Յոհան Զալդեր Ավագի՝ ըստ Յոս վան Վինգեի կորած աշխատանքի։ Այս մասին Ն. Ղարիբյանը և Ա. Սահակյանը գրում են «Ընտրյալների երգը» կամ «Փառաբանություն գառին» (Հյտ. է 9-17) պատկերը ներկայացնում է արդարների դասի երկրպագությունն Աստծուն և Գառին։ Չնայած Ալբերտ Դյուրերի «Հայտնություն» շարքում այս տեսարանն առկա է, սակայն Ոսկանյան Աստվածաշնչում տեղ է գտել Յոհան Զալդեր Ավագի փորագրությունը՝ Նիդեռլանդցի մաներիստ Յոս վան Վինգեի (1542-1603 թթ.) կորած աշխատանքի հիման վրա։

Այն միանգամայն տարբերվում է Դյուրերի գրաֆիկայից՝ թե՛ հորինվածքային կառուցվածքով, թե՛ կատարման տեխնիկայով։ Ի տարբերություն գերմանացի վարպետի՝ բնականության ձգտող տարածքային ընկալմանը, ֆիգուրների բաշխմանը և շարժումների անմիջականությանը՝ այստեղ տեսարանը խիստ պայմանական է և թատերականացված, օգտագործված են հայելային-սիմետրիկ և շրջանաձև հորինվածքային լուծումները[356]։

«Համօրինաց ննջեցելոց ի Քրիստոս»

Նման կառուցվածք և վախճանաբանական բնույթ ունի «Համօրինաց ննջեցելոց ի Քրիստոս» կանոնի պատկերը։ Վերևում՝ երկնային փառքի մեջ, Փրկչի հետ արդարներն են, իսկ ներքևում՝ գեհենում, տանջվող մեղավորները։ Պատկերին համահունչ՝ ներքևի չափածո քառատողում ասվում է.

Գայ Քրիստոս փառօք՝ դատել վպգ մարդկան,
Յարիցեն փողով ննջեցեալք համայն,
Արդարք ժառանգեն զփառս յաջակողման,
Մեղաւորք ի ձախ՝ փուրն յաւէժական[357]։

Այս պատկերը մի տարբերակն է Մխիթար Աբբահոր Մատթեոսի Ավետարանի իե գլխում տեղ գտած նկարի։

---

356 Ոսկանյան Աստվածաշնչի պատկերագրությունը եվրոպական արվեստի զուգահեռներով, աշխտ. Ն. Ղարիբյան, Ա. Սահակյան, Երևան, 2018, էջ 441։

357 Շարակնոց, Ս. Էջմիածին, 1789, էջ 736։

Թովմայի անհավատությունը

ՃԻԴ (124-րդ) «Կարգ Օրհնութեանց Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» կանոնի սկզբում Թովմայի անհավատությունը ներկայացնող պատկերն է, ուր ընդունված պատկերագրությամբ Քրիստոս երևում է առաքյալներին և փարատում Թովմայի անհավատությունը (Յովհ. Ի20-29)։

Քրիստոս Ս. Հարությունից հետո բոլոր աշակերտներին երևում է այս դրվագում, ուստի այն համարվում է Քրիստոսի հայտնությունը աշակերտներին հարությունից հետո։ Նկարի չափածո մակագրության մեջ պատկերին և կանոնի հոգևոր խորհրդին համահունչ ձևով ասվում է.

Որ աշակերտաց կրկին կանձն եցոյց
և ըզԹովմային թերութիւն լըցոյց[358]։

Տերունական պատկերների «Տոնացույցի» և «Շարակնոցի» նկարների համեմատությունը ցույց է տալիս, որ Շարակնոցի նկարները կամ ավելի պարզեցված տարբերակներն են «Տոնացույցի» և կամ երկուսն էլ ընդհանուր նախօրինակ ունեն։ Միևնույն թեմայով «Տոնացույցի» և «Շարակնոցի» ավելի քան 11 պատկերների համընկնումը և դրանց որևէ ընդհանուր նախօրինակի չգտնվելը բացառությամբ Ամստերդամի Ոսկանյան հրատարակությունների և վերջիններիս՝ Կ. Պոլսի վերափորագրումների, ինչպես նաև Աստվածաշնչի Մխիթար Աբբահոր հրատարակության մեջ տեղ գտած մի քանի նկարներից, ցույց է տալիս, որ Ս. Էջմիածնում այլ նախօրինակներ չեն եղել և «Շարակնոցի» Աստվածաշնչային թեմաներով նկարների համար օրինակ են ծառայել «Տոնացույցի» նկարները։

«Շարակնոցի» վերջում, ընդունված կանոնով, տարբեր նյութեր են, որոնք վերաբերում են շարականների ձայներին, ինչպես և Շարակնոցի կանոնների հետ սերտ փոխկապակցման մեջ գտնվող տոմարական աղյուսակներ են։ Տպագրական առումով ուշադրության են արժանի «Անուանք խազից շարականաց» խորագրի ներքո բերված խազերի նշանները, որոնք մաքուր և հստակ են ու նույն ձևով կիրառվում են «Շարակնոցի» շարվածքում։

Այնուհետև գալիս է մի ցանկ, ուր ըստ հայ մատենագրական ավանդույթի՝ նշվում է, թե ովքեր և որ թվականին են գրել շարականները՝ Սահակ Պարթևից մինչև Հովհաննես Պլուզ Երզնկացի ու Գևորգ Սկևռացի։

Սիմէօն Երեւանցի, «Տաղարան», 1793 թ. (45 էջ)

Տաղարանի վերահրատարակումը Ղուկաս կաթողիկոսի կողմից լիովին ստուգաբանվում է նրա տպագրական գործունեության շրջանակում՝ լինելով արտահայտությունը Սիմեոն կաթողիկոսի հոգևոր ժառանգոր-

358 Շարակնոց, Ս. Էջմիածին, 1789, էջ 800:

դության և էջմիածնականության՝ որպես հայ ժողովրդի ազգահավաքման կենտրոնի գաղափարի արծարծման։

Ինչպես տեսանք, ենթադրվում է, որ «Տաղարանի» առաջին հրատարակությունը եղել է 1772 թ.։ Վերջինս կա՛մ քիչ տպաքանակով է տպագրվել և չի պահպանվել, կա՛մ էլ տպագրական առումով բարձր որակ չունենալով՝ չի տարածվել։ Ամեն դեպքում՝ 1777 թ. հրատարակության տիտղոսաթերթում «այժմ ևս տպեցաւ կրկին՝ ի սպառիլ առաջնոյ տպեցելոյն, ի թախանձանաց սիրատաք խնդրողաց» խոսքերից երևում է, որ երկրորդ հրատարակությունն է և վերստին տպագրվում է այն հրատարակված տեսնելու ցանկությունն ունեցողների խնդրանքով։

1777 թ. հրատարակությունը որ երկրորդն է եղել, երևում է 1793 թ. հրատարակության տիտղոսաթերթին նույնությամբ բերված խոսքերից, ուր միայն վերն ընդգծված բառերը դարձվել են «առաջնոց տպագրեցելոցն»։ Այսինքն՝ եթե 1777 թ. հրատարակության տիտղոսաթերթում նրանից առաջ ևս մեկ հրատարակություն էր հիշվում, ապա 1793 թ. հրատարակությունում հոգնակիով է գրված, ուրեմն՝ մինչ այդ նվազագույնը երկու հրատարակություն է ունեցել։

Նույնական արտատպությունն է 1777 թ. հրատարակության, պարզապես տպագրվել է Ղուկաս կաթողիկոսի շրջանում պատրաստված տառերով և տպագրական ավելի բարձր որակով ու շարվածքով։

Ոչ ծավալուն հիշատակարանի առաջին մասը հիմնականում կրկնությունն է առաջին հրատարակության հիշատակարանի, ուր ասվում է, թե հիշեցեք տպարանի աշխատողներին և տպարանի հիմնադիր Գրիգոր Ջաքիկյանցին։

1793 թ. հրատարակության հիշատակարանում այնուհետև ավելացվում է, թե հիշեք Հոհաննչան Հակոբյանին, ում «արդեամբ տպագրուեցաւ»։

«Տաղարանի» տպագրության ծրագրի կամ ընթացքի և ավարտի մասին որևէ հիշատակություն չկարողացանք գտնել կաթողիկոսական դիվանում։ Կարելի է ենթադրել, որ Կարնեցին այն համահունչ է գտել հնդկահայոց բարերարի ծրագրերին և ըմբռնումներին։ Նաև քանի որ «Տաղարանը» ծավալով փոքր է եղել, իսկ տպագրությունն աշխատատար չլինելով՝ միաժամանակ մեծ ծախսեր չի պահանջել, հաշվի առնելով գրքի ազգային-եկեղեցական շեշտված ուղղվածությունը՝ այն տպագրվել է «Մաշտոցից» առաջ կամ վերջինիս տպագրությանը զուգահեռ։

Ս. Ծննդյան նկարը

«Տաղարանի» Ս. Ծննդյան 1793 թ. նկարը ավելի նման է «Տոնացույցի» պատկերներին, սակայն բացակայում է երեք մոգերից ավելի խորք գտնվող չորրորդ անձնավորությունը։ «Տոնացույցում» նա ավելի շատ

սպասավորի տպավորություն է թողնում և չի կարող լինել չորրորդ այն մոգը, ով հանդիպում է պատկերագրական և խորհրդաբանական մեկ այլ մեկնաբանությամբ նկարներում:

«Տաղարանի» 1793 թ. հրատարակության Ս. Ծննդյան նկարի մակագրությունը համընկնում է 1777 թ. հրատարակության պատկերի մակագրության հետ:

Ս. Էջմիածինը Նոյյան տապանի և Արարատի հետ

Սուրբ Էջմիածինը ներկայացնող արվեստի մի շարք գործերում Մայր Տաճարը պատկերվում է Նոյյան տապանը կրող Արարատի հետ միասին: Ավելին, Արարատի փեշերին պատկերվում են նաև Սուրբ Հակոբա վանքը և աղբյուրը, որոնք, համաձայն հայ եկեղեցական ավանդության, կառուցվել են այն տեղում, ուր Տիրոջ հրեշտակը Մծբնա Հակոբ Հայրապետին մի մասունք տվեց Նոյյան տապանից:

Արարատի դիմաց քառագագաթ Արագածն է՝ երկնքից անպարան կախված լուսավորչի կանթեղով:

Պատկերագրական այս դրվագները պայմանավորված չեն Ս. Էջմիածինը Արարատյան դաշտի տեղագրական մանրամասներով ներկայացնելու ձգտմամբ, այլ ունեն ազգային-հոգևոր խորին խորհուրդ, որով մի կողմից շեշտվում է Արարատյան դաշտի՝ որպես նվիրական սրբությունների մի տեղի լինելը և մյուս կողմից՝ Հին Ուխտի Նոյյան տապան- Նոր Ուխտի քրիստոնեական եկեղեցի զուգահեռով, այն միտքն է շեշտվում, որ Արարատի գագաթին հանգրվանած փրկության Նոյյան տապանի հոգևոր համարժեքը Ս. Էջմիածինն է՝ որպես փրկության տապանը հայ ժողովրդի: Ինչպես Ղազար Ա Ջահկեցին (կթղ.՝ 1737-1751 թթ.) է գրում.

Էջմիածին աննման
Քան զտապանն Նոյեան[359]:

Նույն միտքն Աբրահամ Աստապատեցին արտահայտում է հետևյալ ձևով. «Արդ, Քրիստոսահիմն Աթոռս մեր Սուրբ էջմիածին ի ծովու աշխարհիս է իմանալի իմն տապան խորհրդաւոր: Տապան լուսեղէն, տապան գերազանց, քան զՆոյին»[360]:

Քրիստոնեական խորհրդաբանությամբ՝ Հին Ուխտի նյութական՝ որով և ստվերային՝ անցողական համարվող հասկացությունները Նոր Ուխտում փոխարինվեցին հոգևոր հասկացություններով, ինչպես որ գառան զոհաբերումը՝ անարյուն բանական Պատարագով, և մանանան, որ անապատում կերակրեց, բայց չապրեցրեց, փոխարինվեց Ս. Պատարագի հաղորդությամբ:

---

359 Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում, աշխտ. Հ. Քյոսեյանի և Վ. Դևրիկյանի, Երևան, 2003, էջ 227:

360 Նույն տեղում, էջ 399:

Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՀԵՏ
«Տաղարան», Ս. Էջմիածին, 1793 թ.

*Նույն ըմբռնմամբ՝ Հին Ուխտի Նոյյան տապանը դարձավ քրիստոնեական եկեղեցին, ուր մարդ փրկվում է մեղքերի ջրհեղեղից: Ահա այս պատճառով է, որ **նավ** է անվանվում եկեղեցու հիմնախարիսխը, իսկ վաղ շրջանում եկեղեցին պատկերվում էր նավանման:*

Նաև ինչպես որ Նոր Ուխտի հասկացություններն են գերադաս Հին Ուխտի իրենց հոգևոր համարժեքների հանդեպ, այնպես էլ եկեղեցին է գերադաս Նոյյան տապանից, քանի որ տապանը մտնողները ջրհեղեղից փրկվեցին, բայց իրենց բնույթը չփոխեցին, և տապանից գազանը որպես գազան ելավ, իսկ օձը՝ օձ: Եկեղեցում ապաստանող մեղավորները, սակայն, փոխում են իրենց բարքը և այնտեղից դուրս գալիս հեզացյալ հոգով:

Ընդհանրական եկեղեցու հայրերի հետևողությամբ՝ մեր եկեղեցական մատենագրության մեջ ևս տարբեր գեղեցիկ պատկերներով և համեմատություններով է ներկայացվել Նոյյան տապան-եկեղեցի զուգահեռը:

Ներսես Շնորհալու հանելուկներից մեկում տապանն ուղղակիորեն եկեղեցի է անվանվում, և ասվում է, որ Նոյը ջրի վրա գնացող եկեղեցի կառուցեց.

Այր մի արդար, խիստ իմաստուն,
Եկեղեցի շինեաց գնայուն,
Հանց որ վայել էր Աստուծոյ տուն
Եւ ի ներս էած ոչխար և շուն[361]:

Գրիգոր Տաթևացին էլ գրում է. «Եկեղեցի Սուրբ շինեալ ի Քրիստոսէ հոգևոր տապան մեզ ի մէջ ծովու աշխարհիս, որ զհոգիս մեր փրկէ ի ջուրց մեղաց»[362] *(Սուրբ եկեղեցին՝ կառուցված Քրիստոսի կողմից, աշխարհի ծովում մեզ համար հոգևոր տապան է, որ մեր հոգիները փրկում է մեղքերի ջրից):*

Ազգային հինավուրց ավանդությամբ՝ Արարատյան դաշտի տարբեր տեղավայրերի անունների ստուգաբանությունը կապվում է Արարատին իջած Նոյյան տապանի և Նոյի հետ: Սուրբ Էջմիածինը, լինելով Ընդհանրական եկեղեցու ազգային վերամարմնավորումը, ինչպես նաև գտնվելով տապանակիր լեռան դիմաց, դարձել է հայ ժողովրդի փրկության Նոյյան տապանը:

Այսինքն՝ Արարատի գագաթի տապանը Արարատյան դաշտում խորհրդաբար փոխակերպվելու էր Ս. Էջմիածնի Մայր Տաճարին, և Նոյի կատարած զոհաբերման տեղում բարձրանալու էր Նոր Ուխտի զոհագործության սեղանը՝ Մայր Տաճարի Ավագ խորանը: Այս մասին Առաքել Բաղիշեցին (ԺԵ դ.) գրում է.

Էջմիածին, դու նոր խորան,
Հանգիստ կամացն Աստուածութեան,

361 **Ա. Շ. Մնացականյան,** Հայ միջնադարյան հանելուկներ, Երևան, 1980, էջ 217:
362 **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 293:

Սրբոյն Գրիգորի Նոյեան տապան
Շինեաց վքեզ տեղի փրկութեան[363]։

Նկատի ունենալով Լուսավորչի տեսիլքը՝ Սիմեոն Երևանցին ասում է, որ Ս. Էջմիածինը առավել է Նոյյան տապանից, քանի որ Նոյյան տապանը փայտից կազմվեց, իսկ Ս. Էջմիածինը երկնային լույսով գծագրվեց[364]։

Սիմեոն կաթողիկոսի գործունեությունում, քարոզներում և բանաստեղծություններում ավարտուն մի գաղափարի վերածված այս ըմբռնման պատկերային արտահայտությունն է Ս. Էջմիածնի 18-րդ դարի հրատարակություններում քանիցս հանդիպող այս պատկերը, ուր ծիածանի կամարը բարձրանում է Նոյյան տապանի, Արարատի և Ս. Էջմիածնի վրա։

«Մաշտոց», 1794 թ. (88 պահպանված էջ)

Սիմեոն Ա. Երևանցին, տպագրելով Մաշտոց ծիսարանի հոգևորականների թաղման կարգը, տեսանք, որ գրում էր, թե վաղուց ի վեր նպատակ ունենալով տպագրել Մեծ Մաշտոցը՝ տարբեր օրինակներ է հավաքել և իրար հետ համեմատելով՝ խմբագրել կանոնները։

Ըստ գրքի հիշատակարանի՝ Սիմեոն կաթողիկոսը ոչ միայն հոգևորականների թաղման կարգի կանոնն է խմբագրել, այլև «զՄեծ Մաշտոցն իսկ բոլորովիմբ, զոր տպագրելոց եմք յետոյ Տեառն շնորհիւ»։

Եկեղեցու խորհուրդները կատարվում են «Մաշտոց» ծիսարանի միջոցով։ Քանի որ ծեսը կատարվում է եկեղեցում, «Մաշտոցի»՝ Ս. Էջմիածնի 1794 թ. հրատարակության տիտղոսաթերթի դարձերեսին պատկերված է Ս. Էջմիածինը՝ եկեղեցու 7 խորհուրդները ներկայացնող դրվագային 7 պատկերներով։ Ազգագրական առումով արժեքավոր է հատկապես Ս. Պսակի արարողության տեսարանը, ուր հարսն ու փեսան ծնկել են գլուխ գլխի տված։ Ասվածը վերաբերում է նաև Մկրտության տեսարանին, ուր երեխան դրված է մկրտության ավազանում՝ շրջապատված արարողության մասնակիցներով։

Դժվար է ասել՝ երջանկահիշատակ հայրապետը իրապե՞ս հրատարակության էր պատրաստել Մաշտոցի բոլոր կանոնները և պարզապես չկարողացավ տպագրել այն, թե՞ հիշատակարանում ասվածը եղել է կաթողիկոսի ունեցած ծրագիրը, որը չի հասցրել իրականացնել։

Սիմեոն կաթողիկոսը որ զբաղվել է նաև մյուս կանոնների բնագրերի ճշտման աշխատանքներով, երևում է Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 2891 և 2892 ձեռագրերից։ Երկուսն էլ ընդօրինակվել են Սիմեոն կաթողիկոսի կազմած կաթողիկոսական Մաշտոցից։

---

363 Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում, աշխտ. Հ. Քյոսեյանի և Վ. Դևրիկյանի, էջ 148-149:

364 Տես Ս. Էջմիածինը հայ մատենագրությունում, էջ 359-360:

«ՄԱՇՏՈՑԻ» ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ ԵԿԵՂԵՑՈՒ ՅՈԹ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

«Մաշտոց», Ս. Էջմիածին, 1794 թ.

Ըստ այմ՝ երկու ձեռագրերն էլ համապատասխանաբար ունեն կաթողիկոսի ձեռնադրության, Մյուռոնի օրհնության և եպիսկոպոսական ձեռնադրության կանոնները: Կաթողիկոսական Մաշտոցի՝ չորրորդ՝ թագավորի օրհնության կամ օծման կանոնը, սկսած 14-15 դարերից, շատ քիչ է ընդօրինակվել, քանի որ գործնական կիրառություն չուներ: Ավելին, այն մատնությունների և մեղադրանքների առիթ էր ծառայում, թե փորձ է արվում վերականգնել հայկական թագավորությունը:

Հիշյալ երեք կանոնները Սիմեոն կաթողիկոսն ընդօրինակել է տվել Եփրեմ վարդապետին՝ ապագա Եփրեմ Ա Զորագեղցի կաթողիկոսին: Երկու ձեռագրերը այնուհետև ծաղկազարդել է Երեմիա արքեպս. Օշականցին:

Ձեռագրերի ընդօրինակություններն ավարտվելուց հետո, մինչ կկազմվեին, Սիմեոն կաթողիկոսը վախճանվում է, և ձեռագրում ավելացվում է Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսների գործունեության վերաբերյալ ծավալուն մի հիշատակարան: Այն հավասարազոր է պատմագրական մանր միավորի: Հիշատակարանում ասվում է, որ հիշյալ երեք կանոնները Սիմեոն կաթողիկոսը գրել է տալիս, որպեսզի իր կենդանության օրոք ինքը այս ձեռագրով կատարի «զկարգս և զօրհնութիւնս սրբազնագործօղս», և իր վախճանվելուց հետո հիշյալ երեք կանոններն այս ձեռագրով կատարեն նրա հաջորդները[365]:

Կանոնների բնագրերի խմբագրված տարբերակները կազմելու համար կաթողիկոսի կատարած աշխատանքները գրիչն այսպես է ներկայացնում. «Ձեռն արկեալ ի հին օրինական եւ զգուշութեամբ մեծաւ սրբագրեալ եւ այլ եւս վայելչացուցեալ զարարողութիւնսն սոյն կարգաց սրբազնագործից եւ զխըրատսն նոցին եւ բարեպէս դիւրացուցեալ, գրեցոյց ապա ինձ»:

Երեք կանոնների բնագրերը Եփրեմ վարդապետին Սիմեոն կաթողիկոսը պատվիրում է երկու օրինակից արտագրել և կազմել, որպեսզի մեկը միշտ մնա իր մոտ և իր վախճանվելուց հետո՝ հաջորդների, իսկ մյուսն ամեն անգամ տրվի ծեսին մասնակից խարտավիլակին, որպեսզի նա ևս ծեսը կատարի ըստ ձեռագրում եղած խմբագրված օրինակի:

1778 թ. մայիսի 20-ին ավարտվում է ընդօրինակությունը, որից հետո Երեմիա արքեպս. Օշականցին, ում անվանում է «նրբարուեստ նկարակերտ», ցանկանում է «երփնազարդել զսոսա գեղեցկագոյն ծաղկօք եւ ձագագրօք, ի յազնիւ եւ ի զանազան երանգոց եւ ի մաքուր ոսկւոյ»: Նման նկարագրությունը կարևորվում է գրքարվեստի տեսանկյունից, որովհետև ցույց է տալիս նկարազարդման և հատկապես ծիսական գրքերի ձևավորման սկզբունքները, որոնք Սիմեոն կաթողիկոսի հայրապետության շրջանում գործել են Մայր Աթոռում:

Երեք կանոնները երկու ձեռագրերով հնարավորինս իրար նման ըն-

365 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, խմբ. Գ. Տէր-Վարդանեանի, հտ. Թ, էջ 1141:

դօրինակելու մասին Եփրեմ վարդապետը գրում է. «Ջանս եդի մեծապէս՝ ամենայնիւ համանմանս միմեանց գծագրել զերկոսին հատորքս, որ եւ արարի իսկ, որպէս տեսանէք ահա»[366]:

Կազմարվեստի տեսանկյունից կարևորվում է հաջորդ վկայությունը, թե քանի որ երեք կանոնները գրված, սակայն նկարազարդված չէին, ուստի դրանք չեն կազմել, այլ «կերպիւ միով կապէաք զտետերսն ի միմեանս եւ իբրու զամբողջ գիրք արարեալ, տայաք գերերջանիկ Տեառն մերոյ՝ առ ի կատարել զսրբազնագործութիւնս հարկաւորեալս, որով քանիցս ձեռնադրեաց զեպիսկոպոսունս, եւ անգամ մի օրհնեաց զսրբալոյս մեռոն ի ՌՄԻԶ (1777) թուոջն»[367]:

Այստեղ գտնում ենք գրքերի կազմման մասին ճիշտ այնպիսի մի նկարագրություն, ինչպիսիք կան կաթողիկոսական դիվանում: Քանի որ ձեռագրերը նկարազարդված չեն եղել, դրանք ոչ թե կազմվել են, այլ մամուլներն իրար են կապվել, և որպես մեկ ամբողջական գիրք՝ տրվել կաթողիկոսին, որով նա մի քանի անգամ կատարել է եպիսկոպոսական ձեռնադրություն և 1777 թ.՝ Մյուռոնի օրհնություն: Այստեղ ևս մամուլն անվանվում է «տետեր»:

Նաև արտացոլված է այն մտածումը, որ կաթողիկոսական կենտրոնի «Մաշտոցը», թեկուզ և ձեռագիր, պետք է ունենար շքեղ ձևավորում: Այս հանգամանքով էր պայմանավորված 1777 թ. տպագրված հոգևորականների թաղման կարգի շքեղ ձևավորումը: Նույն ըմբռնումն է պայմանավորել և 1794 թ. հրատարակության ձևավորումը:

Ձեռագիր և ապա տպագիր Մաշտոցները բաժանվում են երեք խմբի՝ քահանայական, եպիսկոպոսական և կաթողիկոսական՝ պայմանավորված Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում հոգևոր այս երեք աստիճաններից յուրաքանչյուրն ունեցող հոգևորականին վերապահված համապատասխան կանոնները կատարելու իրավասությամբ: Ըստ այսմ՝ քահանայական Մաշտոցում տեղ են գտնում այն կանոնները, որոնք իրավունք ունի կատարելու քահանան, իսկ եպիսկոպոսականում՝ այն կանոնները, որոնք վերապահված են եպիսկոպոսական իշխանությանը: Քահանայի կողմից կատարվող կանոններից բացի, եպիսկոպոսական իշխանությանը վերապահված երկու գլխավոր կանոններն են դպիր, սարկավագ և քահանա ձեռնադրելը, ինչպես նաև եկեղեցու հիմնարկեքը և օծումը կատարելը: Հայոց եկեղեցում բացառապես կաթողիկոսական իշխանությանն են վերապահված եպիսկոպոսական ձեռնադրությունը, մյուռոնի օրհնությունը, իսկ հայոց պետականության շրջանում՝ նաև թագավորի օրհնությունը կամ օծումը: Կաթողիկոսական Մաշտոցներին մաս է կազմում կաթողիկոսի օրհնության կամ օծման կանոնը:

Նվիրապետության եռաստիճան կանոնակարգմամբ՝ քահանայական Մաշտոցներում տեղ են գտնում միայն այն կանոնները, որոնց կատարու-

366 Նույն տեղում, էջ 1145:
367 Նույն տեղում, էջ 1146:

մը վերապահված է քահանաներին, եպիսկոպոսական Մաշտոցներում՝ քահանայական կանոնները և այն կանոնները, որոնք վերապահված են եպիսկոպոսներին, իսկ կաթողիկոսական Մաշտոցներում՝ քահանաներին և եպիսկոպոսներին վերապահված կանոնները և կաթողիկոսին վերաբերող՝ վերը հիշված չորս կանոնները։

Տարբեր դարերում կաթողիկոսական տարբեր կենտրոններում նաև առանձին ընդօրինակել և պահել են հատկապես կաթողիկոսական չորս կանոնները, իսկ հայոց պետականության անկումից հետո, երբ թագավորի օրհնության կանոնը չի կիրառվել՝ մյուս երեք կանոնները։

Պայմանավորված գործնական կյանքի թելադրանքով՝ բոլորից շատ կիրառություն է ունեցել և ըստ այդմ՝ բոլորից շատ ընդօրինակվել քահանայական Մաշտոցը, որի կանոնները հարաբերվում էին ժողովրդի ամենօրյա կյանքի հետ։ Քահանայական կանոնների շարքում, իրենց հերթին, բոլորից շատ տարածված էին հետևյալ չորս կանոնները, որոնք կապվում էին մարդկային կյանքի ընթացքի հետ՝ մկրտության, պսակի, հաղորդություն տալու և թաղման կանոնները։ Այս չորս կանոնները կազմում էին քահանայական Մաշտոցի միջուկը։ Առանց այս կանոններից որևէ մեկի՝ թերի կլիներ որևէ քահանայական Մաշտոց։

«Մաշտոցի» առաջին հրատարակությունը ևս քահանայական է, որի տպագրությունը 1569 թ. իրականացրել է Աբգար դպիր Թոխատեցին։ Քահանայական կանոնները թեև ամենակիրառականն են, սակայն նրանց շարքում կան ավելի գործնական անհրաժեշտություն ունեցող կանոններ, որոնցից երեք գլխավորներն են Մկրտության (կապված մարդու ծնվելու հետ), Պսակի և Թաղման կանոնները։ Հենց այս երեք կանոններն են գտնվում Աբգար Դպիրի հրատարակած «Մաշտոցում»։

Ինչպես որ մարդկային կյանքն սկսվում է ծնունդով, այնպես էլ քահանայական Մաշտոցներն սկսվում են մկրտության կանոնով։

Կարող է առաջ գալ այն հարցը, որ եթե Սիմեոն կաթողիկոսը ծրագրել էր հրատարակել Մեծ Մաշտոցը, ինչո՞ւ է նա երկու օրինակով այդքան աշխատատար և ծախսատար ձևով իրականացնում հիշյալ երեք կանոնների ձեռագիր ընդօրինակությունը։

Այսպես վարվելու պատճառը կաթողիկոսական կանոնների փակ լինելն էր։ Կաթողիկոսական կանոնները փակ էին համարվում երկու պատճառով։ Նախ՝ գործառնական առումով սահմանափակ կիրառում ունեին, և եպիսկոպոսների կամ քահանաների համար նախատեսված Մաշտոցներում դրանք ընդօրինակելն անիմաստ կլիներ։ Երկրորդ՝ այս կանոնը կաթողիկոսական կենտրոններում հատուկ էին փակ պահում, որպեսզի արտաքին ուժերի ազդեցությամբ որևէ մեկը կաթողիկոսական ձեռնադրության կանոնով կաթողիկոս չձեռնադրվեր և իր հերթին եպիսկոպոս չձեռնադրեր ու Մյուռոն չօրհներ։

Հիշյալ կանոնները մնացյալի հետ չընդօրինակելու մասին վկայություն գտնում ենք արդեն 10-րդ դարում։ Նույն դարում գրված և Ս. Ղա-

զարում պահվող ընտիր և ծավալուն Մաշտոցի 30-րդ կանոնը նվիրված է Մյուռոնի օրհնությանը: Բերված է խորագիրը, որից հետո ընդօրինակողը ոչ թե բուն կանոնն է ներկայացնում, այլ գրում է. «Բայց մեք ոչ իշխեմք գրել, զի մի՛ անհնազանդ գտանիցիմք Սուրբ Լուսաւորչի Աթոռոյն եւ մեծի հայրապետին մերոյ»[368]: Հետևաբար գրիչը չի համարձակվել ընդօրինակել այն, քանի որ փակ կանոն է եղել:

Նման ավանդույթն այնքան ուժեղ էր, որ այն ծնող ազգային-քաղաքական ու եկեղեցաիրավական նախադրյալների վերացումից դարեր անց էլ՝ 1878 թ., Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոսը հիշյալ երեք կանոնները տպագրում է ընդհանուր Մաշտոց ծիսարանից դուրս և սահմանափակ քանակով, առանձին երեք տետրանման գրքույկներով՝ հատուկ կարգադրելով, որ դրանք պահվեն միայն Մայր Աթոռում: Ըստ էության, նույն ձևով է վարվել և Սիմեոն Ա կաթողիկոսը՝ գտնելով, թե խմբագրված կանոններից բավական է երկու օրինակը:

Երեք կանոնների՝ Սիմեոն կաթողիկոսի կատարած խմբագրումը լրացուցիչ մի փաստարկ է, որ նա զբաղվել է նաև մյուս կանոնների խմբագրմամբ:

Ղուկաս Ա Կարնեցին, շարունակելով իր նախորդի տպագրական գործունեությունը, ձեռնամուխ է եղել Մաշտոց ծիսարանի տպագրությանը, ինչը հասցնում է իրականացնել իր վախճանվելուց առաջ՝ 1794 թ.:

Ինչպես Սիմեոն կաթողիկոսը ևս խնամքով է նախապատրաստվել ծիսական նման կարևոր ժողովածուի հրատարակությանը: Որպես «Մաշտոցի» տպագրության բարերար՝ դարձյալ հիշվում է Հոհաննջան Հակոբյանը, ում համար «Շարակնոցի» հիշատակարանում ասվում է. «Որ և բարեհեաւնչ բաղձանօք խնդրէ զայլ ևս հարկաւորագոյն գրեանս տպագրել տայ ի սուրբ Աթոռոջս»:

Հնդկահայոց նվիրակ Եփրեմ վարդապետին «Շարակնոցի» տպագրությունից մեկ տարի անց՝ 1788 թ. հունիսի 21-ին գրած նամակից տեղեկանում ենք, որ Հոհաննջան Հակոբյանը կաթողիկոսին է դիմել «Մաշտոցի» տպագրության խնդրանքով: Կարնեցին ասում է, որ այն հնարավոր կլինի տպագրել միայն «Խորհրդատետրի» լույս տեսնելուց հետո[369]: «Խորհրդատետրից» հետո, սակայն, նա սկսում է «Շարակնոցի» տպագրությունը, որը պակաս դժվար և աշխատատար չէր: Հետևաբար կարելի է ենթադրել, որ «Մաշտոցի» տպագրության հետաձգման պատճառը ոչ թե տպագրական դժվարություններն են եղել կամ միջոցների պակասը, առավել ևս, եթե բարերարն ինքն է խնդրել տպագրել, այլ բնագրի խմբագրման հետ կապված հարցերը: Նման ենթադրության համար հիմք է տալիս տպագրության տիտղոսաթերթը: Այստեղ բնագրային երեք

---

368 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Գ, Վենետիկ, 1966, էջ 35:

369 Դիվան Հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 374:

շերտ է նշվում՝ առաջինը՝ մեր եկեղեցու հայրերի կազմածը՝ Գրիգոր Լուսավորչից մինչև Սահակ Պարթև ու Մեսրոպ Մաշտոց, և ապա Մաշտոց Եղիվարդեցին ու նրա հաջորդները։

Երկրորդը՝ «ի ձեռն զգուշաւոր գիտնականաց ոմանց ըստ մասին մասին յապաւեցեալ յաւելորդացն բառից և բանից՝ և վայելչագոյն ևս կարգադրեցեալ»։ Այստեղ նշվում է բնագրի վրա կատարված խմբագրական աշխատանքի մասին, որը հիշեցնում է հոգևորականի թաղման կարգի կանոնի հիշատակարանում Սիմեոն կաթողիկոսի գրածը՝ իր կատարած խմբագրման մասին։

Երրորդը Կարնեցու հայրապետության շրջանում կատարված աշխատանքն էր. «Իսկ նարդենիս համեմատութեամբ ընտիր օրինակաց, և կարևոր զգուշութեամբ տպագրեցեալ ի Սուրբ Էջմիածին»։ Այս խոսքերից երևում է, որ Սիմեոն կաթողիկոսի վախճանվելուց հետո ևս շարունակվել են «Մաշտոցի» բնագրի ճշտման աշխատանքները, որի համար այն ամենավերջում է լույս տեսել։ Տպագրական առումով «Շարակնոցը» հրատարակելը շատ ավելի դժվար էր, քան թե «Մաշտոցը»։ Փոխարենը «Շարակնոցի» բնագիրը կանոնիկ էր։ Այն գործնականում համեմատելու և ճշտելու կարիք չկար, ուստի նախ «Շարակնոցն» է տպագրում և հետո՝ «Մաշտոցը», որի տպագրելու մտադրության մասին գրում է Հոհաննջանին 1789 թ. ուղղված նամակում[370]։

Դարձյալ Հոհաննջան Հակոբյանին 1791 թ. դեկտեմբերի 31-ին գրած նամակում «Մաշտոցի» տպագրությունն սկսելու միակ խոչընդոտը համարում է ժամանակի ոչ նպաստավոր լինելը՝ նկատի ունենալով Աղա Մահմադ խանի արշավանքն Անդրկովկաս[371]։ Հետևաբար այս ժամանակ «Մաշտոցի»՝ Էջմիածնում կատարված խմբագրումն արդեն պատրաստ է եղել տպագրության հանձնելու։

«Մաշտոցի» այս հրատարակությունից, ցավոք, մեզ է հասել ընդամենը պակասավոր երկու օրինակ, այն դեպքում, երբ նախորդ հրատարակություններից յուրաքանչյուրից պահպանվել են որոշակի թվով օրինակներ։ Այս հանգամանքը, թերևս, հետևյալ բացատրությունը կարող է ունենալ։ Հայտնի է, որ տպարանը և թղթի գործարանն ավերվել են 1790-ական թվականների կեսերին, և «Մաշտոցի» այնտեղ գտնվող նոր տպագրված տպաքանակը ևս ոչնչացվել է՝ կա՛մ այրվելով և կա՛մ էլ ավար է տարվել որպես գործածելու թուղթ։ Կաթողիկոսական դիվանի վավերագրերից երևում է, որ յուրաքանչյուր տպագրված գրքի առաջին կազմված օրինակները Կարնեցին ուղարկել է բարերարներին, Պոլիս և Երուսաղեմ։ Նույն ձևով թերևս փրկվել է Երուսաղեմ ուղարկված և տիտղոսաթերթ ունեցող օրինակը։ Նման ենթադրության ճիշտ լինելու դեպքում, սակայն, առաջանում է այլ հարց. ինչո՞ւ և որքանո՞վ են պակասավոր մեզ հասած երկու օրինակները։

370 Նույն տեղում, էջ 432:
371 Նույն տեղում, էջ 684:

Արդյո՞ք այդքանն է տպագրվել կամ ևս մի քանի էջ, թե՞ գրքի մնացյալ մասն ինչ-ինչ պատճառներով պոկված է: Առավել հավանական է վերջին տարբերակը, քանի որ պակասավոր երկու օրինակները կազմի միայն առաջին փեղկն ունեն, իսկ թիկունքից կազմի երկրորդ փեղկը չկա: Էլեկտրոնային տարբերակով առկա օրինակից հնարավոր չէ ճշտորեն տեսնել՝ ընդհատվող էջում մամուլը կամ պրակը վերջանո՞ւմ է, թե՞ ոչ: Այնուամենայնիվ, նկատելի է, որ վերջին էջը տվյալ մամուլի վերջին էջը չէ, հետևաբար ավելի մեծ է հավանականությունը, որ պահպանվել է գրքի միայն մի մասը: Նույն այս համոզմանն է բերում տիտղոսաթերթի տվյալների և գրքի պահպանված մասի համեմատությունը:

Գրքում եղած կանոնների համար տիտղոսաթերթում ասվում է. «Մաշտոց գիրք յորում պարունակին կարգք և խրատք կատարման եօթանց սրբազանից խորհրդոց եկեղեցւոյ և այլ կանոնք օրհնութեանց ի վերայ զանազան իրաց՝ որպէս խաչի, եկեղեցւոյ և այլոց»: Ըստ այս նկարագրության՝ գիրքը պետք է ունենար եկեղեցու յոթ խորհուրդների՝ պսակի, մկրտության, դրոշմի, թաղման, վերջին օծման, ապա և եկեղեցու ու խաչի հետ կապված, ինչպես նաև Մաշտոց ծիսարանի մնացյալ բազմազան կանոնները: Այնինչ մեզ հասած օրինակում չկան յոթ խորհուրդները:

Գրքի պահպանված կանոնների քննությունը ցույց է տալիս, որ դրանց հերթականության ընթացքը ճշտորեն համընկնում է Մեծ Մաշտոցի կանոնների ընթացքին՝ սկսվելով եկեղեցու հիմնարկեքի՝ Հովհան Մանդակունու սահմանած կանոնով, որին հաջորդում են դարձյալ եկեղեցու կառուցմանը և օծմանը նվիրված ու նորից Մանդակունունը համարվող կանոնները: Այս կարգը գտնում ենք սկսած 9-10-րդ դարերի Մեծ Մաշտոցից: Եկեղեցու օրհնության հետ կապված կանոններին հաջորդում են եկեղեցական պատկերների, խաչի, հանդերձների և սպասքի օրհնության հետ կապված կանոնները: Ճիշտ նույն կառուցվածքն ունի Մաշտոցի՝ էջմիածնի 1794 թ. հրատարակությունը: Այլ կերպ չէր կարող լինել Հայոց հայրապետական աթոռում տպագրված Մաշտոցի դեպքում: Այն հարազատ ձևով պետք է ներկայացներ Մաշտոց ծիսարանի կանոնների ընդունված կարգը և հերթականությունը: Վերջինս արտահայտվել է Մաշտոցի տարբեր հրատարակությունների տիտղոսաթերթերի ծավալուն բովանդակության խորագրից սկսած, ինչպես որ նաև այս հրատարակության տիտղոսաթերթում է:

Այժմ ներկայացնենք գրքի պահպանված մասում տեղ գտած կանոնները՝ ըստ հրատարակության հերթականության:

Ինչպես ասացինք, առաջին 4 կանոնները վերաբերում են եկեղեցու հիմնարկությանը և նավակատիքին, եկեղեցու ավազանի և խաչի օրհնությանը, որոնք կազմել է Հովհան Ա Մանդակունի հայրապետը (կթղ.՝ 478-490 թթ.):

Ձեռագիր և տպագիր Մեծ Մաշտոցների կանոնաշարը այս կանոններով է սկսվում, որով ընդգծվում է եկեղեցու խորհրդի կարևորությունը:

Այս կանոնները նաև եպիսկոպոսական են, ուստի պետք է դրվեին քահանայական կանոններից առաջ։ Կար և երրորդ պատճառը։ Դրանք իրենց լեզվով և խորհրդաբանական մտածողությամբ ու բանաձևումներով իրապես հնության դրոշմն են կրում՝ կազմելով ծիսարանի վաղ շերտը, որի համար ևս սկզբում են զետեղված։

Հաջորդ չորս կանոնները, որոնք վերաբերում են եկեղեցում գտնվող Փրկչական, Տիրամոր և Սրբոց պատկերների օրհնությանը, դարձյալ եպիսկոպոսի կողմից կատարվող կանոններ են։

Գրքի պահպանված մասի մյուս կանոնները ևս վերաբերում են եկեղեցուն։ Դրանց շարքում թեև մի քանի քահանայական կանոններ կան, մնացյալը, ինչպես, օրինակ, պղծյալ եկեղեցու վերօրհնությունը, դարձյալ եպիսկոպոսական կանոններ են։

Գրքարվեստի տեսանկյունից ևս բարձր որակով կատարված տպագրություն է։

Ծիսական ժողովածուներից շարվածքային առումով ամենաբարդը «Մաշտոցի» հրատարակությունն էր։ Սկսած ձեռագրերից՝ տառատեսակներն այստեղ նաև իմաստատարբերակիչ գործառույթ ունեին, ուստի գրիչն ընդօրինակելիս շարունակ պետք է փոխեր գրվող տառատեսակը, իսկ տպագրի դեպքում՝ շարվածքը։ Բազմաստիճան շարվածքում տարբեր տառատեսակներով էին ներկայացվում սուրբգրային ընթերցվածները, եկեղեցու հայրերի աղոթքները, վերնագրային մասերը և ծիսական հրահանգները։ Նման տարբերակվածությունը խնամքով պահպանվել է «Մաշտոցի» 1794 թ. հրատարակությունում։

Տպագրական արվեստի դրսևորումներից են նաև եկեղեցու մանրակերտի լուսանցային տարբեր պատկերումները, որոնք ամեն անգամ համահունչ են տվյալ կանոնի արարողությանը։ Այսպես, եթե կանոնը նվիրված էր եկեղեցու ներսի պատկերների և սպասքի օրհնությանը, ապա մանրակերտի ներսում դրանք են պատկերվում։ Պղծյալ եկեղեցու կանոնին կից մանրակերտում ներսի խորանի ավագ սեղանի վեմ քարը թեքված է՝ խորհրդանշելով եկեղեցին վերստին օրհնելու անհրաժեշտությունը։ Ոչ մեծ չափերի մանրակերտում կատարված նման աշխատանքը գրեթե ոսկերչական վարպետության է հասնում (էջ 87)։ Ի դեպ, Հարություն սարկավագը նաև վանքի ոսկերիչն էր։

Գրքի պահպանված մասն ավարտվում է պղծյալ տաճարի վերօրհնության կանոնով։ Ինչպես ասացինք, տիտղոսաթերթում հիշվում են նաև եկեղեցու յոթ խորհուրդները և հավաքաբար մյուս կանոնները։ Պետք է ենթադրել, որ դրանք ևս եղել են գրքի չպահպանված բաժնում։ Որ պետք է տպագրված լիներ Մեծ Մաշտոցը, փաստվում է և այս ծիսարանի ամբողջական հրատարակությունն ունենալու Մայր Աթոռի ձգտմամբ։

Երբ Ոսկան վարդապետ Երևանցին 1667 թ. հրատարակում է քահանայական Մաշտոցը, Հակոբ Դ Ջուղայեցին 1673 թ. նրան է ուղարկում

Մեծ Մաշտոցի մի օրինակ, որպեսզի այն տպագրի համապատասխան խմբագրման ենթարկելուց հետո, ինչպես որ մեկ դար անց Սիմեոն կաթողիկոսն էր գրում իր կատարած նույնաբնույթ աշխատանքի մասին։

ՊՂՇՅԱԼ ՏԱՃԱՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԸ
«Մաշտոց», Ս. Էջմիածին, 1794 թ.

Հետևաբար Ս. Էջմիածնի կողմից հրատարկվելիք Մայր Մաշտոցի կարևորությունը գիտակցվել է՝ սկսած Հակոբ Դ Ջուղայեցուց։ Սիմեոն կաթողիկոսի հրատարակած կանոնի հիշատակարանում ևս ասվում է, որ «զՄեծ Մաշտոցն իսկ բոլորովիմբ, զոր տպագրելոց եմք յետոյ»։ Նշանակում է հրատարակության է պատրաստվել Մեծ Մաշտոցը, որը մեկ անգամ ևս խմբագրվել էր Ղուկաս Ա Կարնեցու հայրապետության շրջանում և տպագրվել 1794 թ.։

Մինչ գրքի տպագրությունը կարնեցին 1791 թ. դեկտեմբերի 31-ին Հոհաննջան Հակոբյանին դարձյալ գրում է Մեծ կամ Բուն Մաշտոցը տպագրելու մասին. «Այլև կամիմք աստ տպել զՇարակնոցն և զբուն Մաշտոց»[372]։

Գ. Տեր-Վարդանյանը գրում է, որ «Մաշտոցի» 1794 թ. հրատարակության համար պատրաստված բնագիրը Կ. Պոլիս է տարել և այնտեղ «Մաշտոցի» 1807 թ. հրատարակության մեջ օգտագործել Մայր Աթոռի միաբան, ապա Կ.Պոլսում Ս. Էջմիածնի նվիրակ դարձած Մինաս արքեպս. Վաղարշակերտցին։ Տեր-Վարդանյանը վկայակոչում է 1807 թ. հրատարակության հիշատակարանը, ինչպես նաև 152-րդ էջից հետո եկող չհամարակալված ութ էջերը, որտեղ բերված են մի քանի կանոններ, որոնք կան նաև նույն այս գրքի համարակալված էջերում, իսկ պայմանականորեն 152 է թվագրվող էջում հիշվում է «Մաշտոցի» 1794 թ. հրատարակությունը։ Փաստերի համադրմամբ Գ. Տեր-Վարդանյանը գրում է. «Այս բոլոր փաստերը հաստատում են, որ 1807 թ. այս տպագիրը Մայր Աթոռի հրատարակությունն է, որ Պոլսում լույս է տեսել միայն ժամանակի էջմիածնական միջավայրի քաղաքական-տնտեսական աննպաստ պայմանների պատճառով»[373]։

Տեսանք, որ Մինաս արքեպս. Վաղարշակերտցին հրատարակության է պատրաստել նաև Հովսեպիոսի «Յաղագս պատերազմին հրէից» ծավալուն գործի բնագիրը։ Այնպես որ նա խմբագրական աշխատանքի փորձ ունեցող հոգևորական է եղել։

Փաստերի համադրումը բերում է այն եզրակացությանը, որ Ղուկաս Ա կարնեցին Ս. Էջմիածնում իրականացրել է Մեծ Մաշտոցի տպագրությունը, որի ամբողջական մի օրինակը կամ գրքի չպահպանված մնացյալ մասը հուսանք որ կգտնվի հայ հնատիպ գրքերի խոշոր հավաքածուներ ունեցող գրադարանային կենտրոններից որևէ մեկում։

Սիմեոն Ա Երևանցու կաթողիկոսական Մաղթանքը

Ռուսահայոց թեմը որպեսզի Ս. Էջմիածնին ենթարկվի և ճանաչվի թեմի ազատ գործունեության իրավունքը, Սիմեոն կաթողիկոսը 1766 թ. օգոստոսի 1-ին նամակ է գրում Եկատերինա Երկրորդ կայսրուհուն՝ խնդրելով, որ առանձին հրովարտակով ճանաչի Ռուսաստանի Հայոց թեմի իրավունքները։ Սիմեոն Ա Երևանցին իր թուղթն սկսում է Ռուսաց պետությանն ու Եկատերինա կայսրուհուն մեծարանքի և օրհնության խոսքերով։ Գեղեցիկ պատկերավորությամբ ու մտքի տրամաբանական կուռ ընթացքով գոհունակություն է հայտնում, որ քրիստոնեական հզոր այս թագավորությունում կայսերական ողորմությունը լիառատ վայելում են նաև այնտեղ բնակվող հայերը։

372 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 683:

373 Մայր Մաշտոց, Ժդ, հտ. Ա, Գիրք Ա, աշխտ. Գ. Տեր-Վարդանյանի, Երևան, 2012, էջ 32:

Տրվելիք նման հրովարտակի, որպես աստվածային մի պարգևի զուգահեռով, ասում է, որ ինչպես Քրիստոս ամոթ չհամարեց խոնարհվել դեպ մեր մարդկային բնությունը, որի համար շարունակ փառաբանվում է մարդկանց կողմից, այնպես էլ, որ, եթե կայսրուհին նման հրովարտակով գա «խոնարհիլ ի նուաստութիւն մեր», ապա իր հովված ժողովուրդն էլ կդառնա եկատերինայի թագավորության օրհնաբանողը։

Որպես հոգևոր վեհապետ՝ մարմնավոր իշխանության կրողին ասում է, թե քանի որ ձեզ չենք կարող նյութական պարգևներով «ընծայամատույց լինել», բայց և չցանկանալով դատարկաձեռն երևալ, «հոգևոր և աստուածային անգին գանձիւք» արտահայտում է իր երախտագիտությունը՝ ուղարկելով մեկական նշխար Սուրբ Կարապետի, Հովհաննես Մկրտչի, Հռիփսիմե կույսի, Սուրբ Գևորգի և Նոյյան տապանի մասունքներից «ի պահպանութիւն ձեզ և ձերոյ թագաւորութեան»։

Նշխարների տուփի մասին «Ջամբռի» Սիմեոն կաթողիկոսի կենսագրությանը նվիրված գլխում ասվում է. «Զմասունս ի Նոյեան տապանէն, ի սրբոյն Յօհաննու կարապետէն, ի սրբոյն Գէորգեայ և ի սրբոց Հռիփսիմեանց նշխարացն, միով քառաչեայ արծաթեայ ոսկեջրեալ տփով կնքեցելով ձեռամբ թիփլիզեցի Դավիթ վարդապետին առաքեաց ի Ռմծե [1766] թուոջն մերում»[374]։

Այնուհետև հաջորդում է 1768 թ. հունիսի 30-ի կայսերական նշանավոր հրովարտակն՝ ուղղված Սիմեոն կաթողիկոսին և ողջ հայ ժողովրդին[375]։ Հրովարտակը տրվում է ռուսերենին զուգահեռ հայերեն թարգմանությամբ։ Եկատերինա II-ը հրովարտակի սկզբում համառոտ շարադրանքով նախ ներկայացնում է Սիմեոնի իրեն ուղղված թուղթը՝ ասելով, որ ինքն այս հրովարտակը տալիս է, որպեսզի, ինչպես կաթողիկոսն է ասում, այն պահի «յԱթոռ անդր ի գանձարանի տաճարին ի յիշատակ յաւիտենական ողորմութեան և շնորհաց մերոց»։

«Ջամբռում» այս հրովարտակի նկարագրությունում ասվում է. «Գրեցեալ ի վերայ մագաղաթի ռուսերէն, ոսկէզարդեալ ընդ հայերէն թարգմանեցելոյն ի ՌէճԿը [1769] թուոջն Փրկչի»[376]։

Այս և ժամանակի մի շարք այլ վկայությունների հիման վրա Գյուտ քահանա Աղայանը գրում է. «Եկատերինա Բ թագուհին սիրով ընդունեց կաթողիկոսի գրութիւնը ուղարկուած ընծաների հետ և պատուիրեց պատրաստել հրովարտակ մագաղաթի վերայ ոսկէ տառերով և նորա հայերէն թարգմանութիւնն առանձին մագաղաթի վերայ։ Երկու օրինակն էլ

374 Ջամբռ, էջ 39-40:

375 Собрание актов, часть 1, стр. 173-175. Армяно-русские отношения в XVIII веке, том IV, Ереван, стр. 76-77: Մսեր մագիստրոս Մսերյան, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմէօնէ մինչև Յովհաննէս Ը, Մոսկվա, 1887, էջ 161-163: Դիվան հայոց պատմության, հտ. Գ, էջ ՃԻԸ-ՃԼ:

376 Ջամբռ, էջ 49-50:

միասին կապած և կայսերական կնքով կնքած ուղարկում է Դաւիթ վարդապետի ձեռքով կաթուղիկոսին»[377]:

Եկատերինա II-ին գրված թղթում Սիմեոն կաթողիկոսն ասում է, որ Ռուսահայոց թեմի համար իր ցանկացած հրովարտակը կայսրուհուց ստանալուց հետո ոչ միայն որպես մի «երկնաւոր պարգև» կպահի Մայր Աթոռում, այլև «Աթոռոջս միշտ վասն ձեր աղօթեսցուք, և ի Սուրբ Պատարագս, որ մատչիցի ի սուրբ Իջման տեղւոջս Քրիստոսի, յատուկ Տէր ողորմեա կանօնեսցուք վասն առաւել հաստատութեան թագաւորութեանդ և վասն բարեյաջող կենացդ ձերոց»[378]:

Խոստացված աղոթական այս մաղթանքը Սիմեոն կաթողիկոս գրում է 1771 թ.: Պահպանվել է 1771 թ. գրված և նույն թվականին հայրապետական կնիքով ու ստորագրությամբ հաստատված կաթողիկոսական ինքնագիր այն օրինակը, որը հատուկ պատրաստվել և ուղարկվել է Եկատերինա II-ին և գահաժառանգ Պավել Պետրովիչին: Առաջին էջի վերին մասում ոսկեգրոշմ խաչ է և գրված է. «Կայսերուհւոյն Եկատերինեայ մօրն ողորմութեան» և «Արքայ որդւոյն իւրոյ Պավլ Պետրովիչին»[379]:

Անուններից յուրաքանչյուրի առջև դարձյալ ոսկեգրոշմ, իրար նման, բայց և տարբեր գծագրության երկու խաչեր են, որը նշանակում է, թե այդուհետև թագուհու և գահաժառանգի անունը գրելու փոխարեն այդ խաչերն են դրվելու: Այս պատճառով ոսկեգիր անուններից անմիջապես հետո սկսվող հայրապետական առաջաբանում կայսրուհու և նրա որդու անունների փոխարեն դրված են այդ խաչերը:

Սիմեոն կաթողիկոսը առաջաբանի սկզբում վկայակոչում է Պողոս առաքյալի խոսքերը, թե հարկավոր է «աղօթել հասարակապէս վասն ամենայն թագաւորաց»: Ապա ավելացնում է, թե որքան ևս պետք է «աղօթել վասն քրիստոնէից թագաւորաց», շնորհիվ որոնց «անունն Քրիստոսի փառաւորի և սուրբ Խաչն նորին պայծառացեալ փայլի՝ ընդ ծագս տիեզերաց»[380]: Որից հետո, խոսքը մասնավորեցնելով, դիմում է կայսրուհուն և թագաժառանգին, որոնց համար «պարտական իսկ եմք աղօթել վասն մերոյս յոգներախտի և խնամաշատի»:

Ասում է, որ կայսրուհու վերաբերմունքին չկարողանալով այլ կերպ երախտահատույց լինել՝ կայսերական այս մաղթանքն է սահմանում. «Զի ազգս հայոց որքան գոն ընդ օրհնեալ տէրութեամբ նոցին ի յաւուրս շնորհալի տօնից նոցին, եկեղեցականօք և աշխարհականօք, մեծաւ հանդիսաւորութեամբ կատարեսցեն զայս կարգ»[381]:

---

377 Դիվան հայոց պատմության, հտ. Գ, էջ ՃԻԹ-ՃԼԱ:

378 Армяно-русские отношения в XVIII веке, том IV, стр. 72:

379 Երևանի Մատենադարան, թիվ 7788, թերթ՝ 4ա:

380 Նույն տեղում:

381 Նույն տեղում, թերթ 4 բ:

Թագավորական ընտանիքի ամենամյա տոների համար սահմանված մաղթանքի կանոնի սկզբում պատվիրվում է այն կատարել «յետ աւարտման գիշերային ժամուն կամ զկնի պատարագին»: Սիմեոն կաթողիկոսն առաջաբանի վերջում գրում է. «Զոր ամենաթագաւորն Աստուած ի փառս Իւր համարելով լուիցէ զխնդրուածս բազմութեան կատարեսցի»: Այս խոսքերով ցանկանում է ասել, որ երկրային թագավորի համար սահմանված այս աղոթքը երկնային թագավորը թող լսի ու համարի Իր փառքի համար սահմանված և «զխնդրուածս բազմութեան կատարեսցէ: Ամէն»:

Ասվածին համահունչ, Մաղթանքը սկսվում է «Շարականոցից» վերցված այն հատվածով, որում Աստծուն՝ որպես երկնային թագավորին ուղղված խնդրանքում ասվում է, թե ինչպես Քո երկնային ու աներևույթ թագավորության օրինակով հաստատեցիր երկրային թագավորությունը, այնպես էլ հանուն նրա իշխանության ներքո գտնվող ժողովրդի, այդ թագավորին պահիր «անսասան և անպարտելի»: Ապա բերվում են նույնաբնույթ աղոթքներ և Սուրբգրային հատվածներ:

Կանոնն ավարտվում է գրաբարով ու հոգևոր ավանդների դասական հետևողությամբ գրված ծավալուն աղոթքով, որում, ինչպես կանոնի սկզբում բերված շարականային հատվածում, դարձյալ նույն ձևով հայցվում է, որ Աստված զորություն պարգևի թագավորին ու նրա իշխանության ներքո գտնվող մեծամեծներին: Թագավորը անվանվում է «Քոյապսակս», այսինքն՝ Քո՝ Տիրոջ կողմից պսակված՝ թագադրված, և որպես վերջին աղոթական խնդրանք՝ ասվում է, որ թագավորի սիրտն «քաղցր և գթած պահեսցես առ յամենայն ստորագրեցեալսն իւր և մանաւանդ առ խղճալի ազգս հայոց, ընդ որոյ և հովանաւորութեամբն մնալով ի խաղաղութեան փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ»:

Կանոնի մեջ կայսրի և թագավորական ընտանիքի անդամների անունները հիշված չեն, քանի որ նրանք ժամանակի ընթացքում փոխվում են, իսկ կանոնի կատարումը շարունակվում է:

Նույն ձևն էր կիրառվում նաև միջնադարյան ծիսական ժողովածուներում, երբ գրվում էր «թագաւորին մերոյ՝ այս անուն» կամ «հայրապետին մերոյ՝ այս անուն»:

Հիշյալ օրինակը, որ հատուկ գրվել է Եկատերինա Երկրորդի համար, երևում է նրանից, որ այն իր ինքնագրով և հայրապետական կնիքով հաստատել է Սիմեոն կաթողիկոսը: Այսպես, Սիմեոն կաթողիկոսը առաջաբանի վերջում իր ձեռագրով, որը տարբերվում է գրչի գեղեցիկ բոլորգրից, գրել է. «Քրիստոսի նուաստ ծառայ Սիմէոն կաթողիկոս Ամենայն Հայոց սրբոյ Աստուածածիջի Աթոռոյս էջմիածնի ի թուոջ Փրկչին մերոյ ՌՉՀԱ (1771) ի յուլիս ամսոյ Ժ (10) ձեռամբ իմով»,[382] որին հաջորդում է հայրապետական կարմիր կնիքը: Նույն ձևով կանոնի վերջում Սիմեոն կաթողիկոսը դարձյալ

382 Նույն տեղում, թերթ 4բ:

գրում է. «Ձեռամբ իմով գրեցի ի հաստատութիւն բանից»[383]:

Ձեռագրում հայերեն կանոնի վերջում Սիմեոն կաթողիկոսի կնիքին և հաստատական այս խոսքին անմիջապես հաջորդում է Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի հիշատակարանը[384]:

Սիմեոն կաթողիկոսի հեղինակած մաղթանքը Եկատերինա կայսրուհուն հանձնելու մասին Արղությանը գրել է իր Հիշատակարանում: 1780 թ. մայիսի 3-ին, պալատում հանդիպելով թագուհուն, ասում է, որ Ձեր կայսերական հրովարտակը ստանալուց հետո Սիմեոն կաթողիկոսը, այլ հնարավորություն չունենալով իր շնորհակալությունը հայտնելու, սահմանել է այս աղոթքը՝ այն կարգելով մեր եկեղեցում կատարելու համար, որ թագուհու գահակալության տոնի օրը Աստծուն փառաբանեն և երկարակեցություն խնդրեն կայսրուհու համար[385]:

Սիմեոն կաթողիկոսի օրինակում Արղությանի ավելացրած ռուսերեն թարգմանությունը զետեղված է 11ա – 16ա էջերում: Ռուսերեն թարգմանության վերջում Արղությանն ավելացրել է գոհաբանական մի մաղթանք՝ նվիրված կայսերական ընտանիքին և ռուսաց պետությանը[386]:

Արղությանը որ Սիմեոն կաթողիկոսի հենց այս ձեռագիրն է հանձնել Եկատերինային, երևում է իր հիշատակարանի այն խոսքերից, թե տվել է «զսրբազանի (կաթողիկոսի) արարեալ տօնախմբութեան տետրակն»: Հակառակ պարագայում նա կասեր տոնախմբության մաղթանքը կամ աղոթքը: Տետրակը որոշակի առարկա է և ոչ թե ստեղծագործություն, որը կարող է ունենալ մի քանի ընդօրինակություններ: Տետրակ ասելով՝ Արղությանը նկատի ունի կաթողիկոսի ուղարկածը, նաև, եթե դա չէր տալու կայսրուհուն, ապա իմաստ չէր ունենա մաղթանքի ավարտից անմիջապես հետո դնել այս կանոնի ռուսերեն թարգմանությունը: Ջուտ թարգմանական նպատակով արվածն այլ ձեռագրի մեջ կընդօրինակեին և ոչ թե հայրապետական ինքնագրի ավարտից անմիջապես հետո: Հետևաբար այստեղ ռուսերեն թարգմանության ավելացումը նպատակ ուներ կանոնի հայրապետական հաստատությամբ օրինակը հանձնել ռուսերեն թարգմանությամբ, որն այնքան ընդունված էր այն ժամանակ:

Ասացինք, որ համանման ձևով Եկատերինա կայսրուհին իր նշանավոր հրովարտակը ևս ուղարկում է կից հայերեն թարգմանությամբ: Այս դեպքում, սակայն, կարող է այն հարցն առաջանալ, որ, եթե հիշյալ օրինակն է տվել Եկատերինային, ապա ինչպես կարող էր նրանում այս մասին որպես արդեն կատարված մի իրադարձության գրել Արղությանը: Նման հարցմանը պատասխանելուն օգնում են հետագայի մյուս գրությունները, որոնք թվագրված են 1793 թվականով: Նրանցում ասվում է, որ կայսե-

383 Նույն տեղում, թերթ 9բ:

384 Նույն տեղում, թերթ 9 բ:

385 Դիվան հայոց պատմության, գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 29:

386 Ձեռագիր թիվ 4488, թերթ 16 ա:

րական ընտանիքի համար նախատեսված այս մաղթանքը թույլատրվում է տպագրել, և որպես թույլտվության թվական նշվում է 1793-ը: Նման նշումից պարզ է դառնում, որ այդ ժամանակ այն արդեն պալատում չի պահվել, այլ գրաքննական կոմիտեին է ներկայացվել որպես տպագրվող մի ձեռագիր, որի համար կատարվել է այդ նշումը:

Մաղթանքի 1794 թ. առաջին տպագիր հրատարակությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այն կատարվել է Սիմեոն Երևանցու օրինակից: Վերջինս և առաջին հրատարակությունը ոչ միայն բառացի համընկնում են, որը կարող էր լինել Սիմեոն կաթողիկոսի ձեռագրից մեկ այլ ընդօրինակության պարագայում, այլև, որ առաջաբանի վերջում, այնտեղ, ուր կաթողիկոսական կնիքն էր և ինքնագիր հավաստումը, նույնը գտնում ենք և այս հրատարակության մեջ, ինչը վկայում է, որ հրատարակիչն աշխատել է հավատարիմ մնալ Սիմեոնի ձեռագրին:

Վերջինիս էջերի լուսանցքներում՝ Սուրբգրային ընթերցվածների կողքին, այլ ձեռքով գրված են Աստվածաշնչից բերված հատվածների համարները և առաջին հրատարակությունում յուրաքանչյուր ընթերցվածի դիմաց նշված է, թե Սուրբգրային որ հատվածն է այն: Այսինքն՝ կաթողիկոսական օրինակը աշխատանքային բնագիր է դարձել առաջին հրատարակության տպագրիչի համար, որտեղից և նա կատարել է շարվածքը՝ օգտագործելով Սուրբգրային տեղիների այս նպատակով կատարած նշումները, որոնք թեև չեն պատշաճում ձեռագրի գրությանը և գցում են նրա տեսքը, փոխարենը, սակայն, անհրաժեշտ էին տպագրության համար:

Մաղթանքի՝ Սիմեոն կաթողիկոսի ինքնագրում գտնվող Արղությանի ավելացրած հիշատակարանը գրեթե նույնությամբ գտնում ենք առաջին տպագրության վերջում, միայն այն հավելմամբ, որ այստեղ նաև ասվում է, թե այս կանոնը ռուսերեն է թարգմանել Ստեփանոս Ասլանյանը: Վերջինս եղել է գաղութի ժամանակի հարգված մտավորականներից մեկը: Այս թարգմանությունից տարիներ անց հաջորդ հայրապետ Ղուկաս Ա Կարնեցին նրան 1784 թ. հունվարի 16-ին դիմում է առանձին մի թղթով. «Թուղթ ի Մօզտօք առ Ասլանեան պարոն Ստեփաննոս թարգմանն. օրնհութիւն և յորդորումն առ ի հարազատութիւն»[387]:

Փաստերի համադրությունը ցույց է տալիս, որ Սիմեոն կաթողիկոսի՝ ի նշան երախտագիտության հեղինակած Մաղթանքի՝ Եկատերինա II-ի համար գրված օրինակի վերջում՝ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանն ավելացրել է այս կանոնի՝ 1775 թ. Ստեփանոս Ասլանյանի կատարած ռուսերեն թարգմանությունը և այն 1780 թ. Պետերբուրգում ընծայել Եկատերինա II-ին: Այնուհետև այս օրինակը հաջորդող տարիներին վերստին հայտնվել է Արղությանի մոտ, որից և կատարվել է գրքի առաջին հրատարակությունը 1794 թ. Նոր Նախիջևանում:

387 Դիվան հայոց պատմության, նոր շարք, Գիրք առաջին, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 397:

Քանի որ Սիմեոն կաթողիկոսի կողմից նվիրված լինելով Եկատերինա կայսրուհուն՝ նախատեսված էր հայկական եկեղեցիներում կատարվել ռուսական կայսերական տան հանդիսության տոնի օրը, ուստի և հաջորդող տասնամյակներում՝ մինչև 1917 թ. ռուսական հեղափոխությունը, այն շարունակվում է կատարվել ռուսական կայսրության գահին հաջորդած մյուս թագավորների գահակալության և կայսերական ընտանիքի անդամների հետ կապված տոնական օրերին, որով պայմանավորված ունենում է ինը հրատարակություն։

Առաջին հրատարակությունն ամբողջովին համընկնում է Սիմեոն կաթողիկոսի գրած կանոնի բնագրի հետ։ Հաջորդ հրատարակություններում, սակայն, մի շարք փոփոխություններ ու տոնացուցային հավելումներ են կատարվում, քանի որ Արևելյան Հայաստանի ու Ս. Էջմիածնի՝ Ռուսաստանին միացմամբ փոխվել էր քաղաքական իրավիճակը։ Եթե Սիմեոն Երևանցին որոշակի զգուշությամբ պետք է գրեր, քանի որ այդ ժամանակ Էջմիածինը ռուսական տիրապետության ներքո չէր գտնվում, ապա 1828 թվականի Թուրքմենչայի պայմանագրից հետո այն առավել հանդիսավոր պետք է դարձվեր, որպեսզի պատշաճեր կայսերական ընտանիքի համար կատարվող մաղթանքին։ Այս փոփոխություններն արտահայտվում են առաջին և հաջորդ հրատարակությունների հենց վերնագրերում։ Առաջին հրատարակությունը, եթե վերնագրված էր «Գիրք աղօթից սակս ըստ արժանւոյն հանդիսիւ տօնեցելոցն ի մէնջ տօնից թագաւորականաց», ապա հաջորդող հրատարակությունների վերնագիրն է «Գիրք հանդիսադրութեանց տօնից կայսերականաց»։ Հետևաբար առաջին հրատարակության վերնագիրը եթե ընդհանուր հոգևոր է և հստակորեն չի մատնացույց անում, թե ինչ տոնի համար է նախատեսված, ապա հաջորդներում այն արդեն պարզորոշ ասվում է։

1883 թ. հրատարակության տիտղոսաթերթին նշված է, որ Սիմեոն Երևանցու կողմից «շարակարգեալ» այս մաղթանքը տպագրվում է «յաւելուածովք նորահիւս շարականաց և աղօթից»։

Ս. Էջմիածնի մինչև ռուսական տիրապետության ներքո անցնելը այս Մաղթանքը երախտագիտության ու քաղաքական իղձերի մի արտահայտություն էր, ապա 1828 թվականից հետո այն արդեն, ինչպես և ռուսաց եկեղեցու համանման արարողությունները, դառնում է Ռուսաց պետության ինքնակալի հանդեպ հարգանքի պարտադիր մի արտահայտություն։

Սիմեոն կաթողիկոսի Մաղթանքում, որը նույնությամբ տպագրվել է առաջին հրատարակությունում, այս արարողության կատարման մասին ասվում է, որ այն պետք է կատարվի ժամերգությունից կամ Ս. Պատարագից հետո։ Հաջորդ հրատարակություններում արդեն հստակորեն նշվում է, որ պատարագից հետո պետք է կատարվի և տեղի է ունենում ավելի հանդիսավոր արարողությամբ. «Եւ յաւարտ պատարագին վառեսցեն զջահս և զաշտանակսն և զկանթեղս և երկու դպիրք յառաջոյ սեղանոյն

ընդ աջմէ և ընդ ահեկէ ունիցին զմոմեղէնս ի ձեռս, յորժամ և ամենայն հոգևորականք ունելով ըստ իւրաքանչիւր աստիճանի զշուրջառ կամ զշապիկ ելցեն յատեան»: Ինչպես տեսնում ենք, ավելացվել են ոչ միայն կանոնի մեջ մտնող միավորները, այլև կատարմանն է առավել մեծ վեհաշքություն հաղորդվել:

Մաղթանքի կանոնի կառուցվածքի մասին Օրմանյանը գրում է, որ ոչ թե «արդէն ծանօթ եւ գործածական հայկական աղօթքներով եւ երգերով, այլ Սիմէոն ինքնին **Ամենահզօր Աստուած** *սկսուածքով երեք տուն շարական մը շինած է, եւ* **Օրհնեալ ես Հայր ամենակալ** *աղօթք մըն ալ յօրինած, եւ* **Արդ մեք** *հանգիստով: Անոնց վրայ աւելցուցած է ի սաղմոսէ 7 տուն, Առակէ, Եսայիէ, Պետրոսի եւ Պօղոսէ, եւ Մատթէոսի աւետարանէն ընթերցուածներ, եւ Անդաստանի ձեւով Տեառնագրութիւն ու Պահպանեա ու Հայր Մեր»[388]:*

Ինչ վերաբերում է այն հարցին, թե հայ ծիսական ավանդույթի տեսանկյունից որքանով էր կանոնական այս մաղթանքը, Օրմանյանը գրում է. «Թագաւորաց համար աղօթքը հայ պաշտամանց մէջ ընդունուած էր, եւ շատ կտորներ ունինք այդ իմաստով, որոնցմէ կրնար օգտուիլ Սիմէոն, առանց իրմէ յօրինուած կտորներ մուծանելու, որոնց մէջ կը պակսին հայ եկեղեցւոյ ծիսական աղօթքներուն եւ երգերուն յատուկ եղող լեզուի օծութիւնը եւ ոճի վեհութիւնը: Հնար էր չափազանցուած ըսել Սիմէոնի կազմած ձեւերը, եւ Հայոց եկեղեցւոյն ծեսին հակառակ ըսել՝ եկեղեցւոյ մէջ վեղարը վար առնելու կամ ծնրադիր աղօթելու կերպերը, եւ նոր յօրինուած աղօթքներուն եւ երգերուն մէջ ալ՝ արտաքին գովաբանութեանց նմանող բացատրութիւնները պէտք է բացատրիլ իր ապրած ժամանակով»[389]:

Լեոն ևս, անդրադառնալով Սիմեոն կաթողիկոսի «Մաղթանքի» գրության եկեղեցաքաղաքական հանգամանքներին, նշում է, որ այն ստուգաբանվում է հայ-ռուսական հարաբերությունների շրջանակում և ոչ թե պարզապես կաթողիկոսի շնորհակալության արտահայտությունն է եկատերինա կայսրուհու տված հրովարտակի. «Բացատրել այս խոշոր հավատարմական ցույցը միայն նրանով, թե Ռուսաստանի հայերի առաջնորդական հարցը հաջող լուծում էր ստացել՝ անկարելի է: Մենք նկատի պիտի առնենք և այդ ժամանակի քաղաքական հանգամանքները»[390]:

«Գիրք, որ կոչի Կտակ Մեծի Ուրբաթին»

Ս. Էջմիածնում այսպիսի գործի տպագրության մասին հիշատակություն չկա հայկական տպագրությանը և հայ գրքի մատենագիտությանը վերաբերող որևէ աշխատանքի մեջ:

388 Նույն տեղում, էջ 3535:

389 Նույն տեղում, էջ 3535-3536:

390 **Լեո,** Հայոց պատմություն, Երկեր, հտ. 3-րդ, Գիրք երկրորդ, Երկերի ժողովածու, հտ. 3-րդ, Երևան, 1975, էջ 282:

Նման հրատարակություն որ կարող էր 1787 թ. եղած լինել Ս. Էջմիածնում, գրում է Մ. Մինասյանը «Հայերէն նորայայտ հնատիպ հրատարակութիւններ» հոդվածում[391]: Հետազոտողը վկայակոչում է Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի Ձեռագրացուցակի երկրորդ հատորը՝ հիշատակելով Նոր-Ջուղայի մասնավոր անձանց մոտ պահվող ձեռագրերից Վ. Դավիթխանյանի մոտ պահված ժողովածուն: Այն 1787 թ. Բասրայում գրել է Անդրեաս երեցը: Ձեռագիրը ունի 321 թերթ (642 էջ) և պարունակում է վեց միավոր, որոնք իրենց հերթին ընդօրինակություններ են տարբեր գործերի, այդ թվում և Ս. Էջմիածնի հրատարակությունների:

Առաջին միավորը (1ա-12բ) հատված է Նարեկից:

Երկրորդ միավորը (12ա-162ա) Սիմեոն կաթողիկոսի «Պարտավճարի» (1779-1783 թթ.) ընդօրինակությունն է:

Երրորդ միավորը (162բ-163ա) Սիմեոն կաթողիկոսի «Ջբօսարան հոգեւոր» (1772 թ.) աղոթագրքի ընդօրինակությունն է:

Չորրորդ միավորն է (193բ-262բ), որ անմիջաբար առնչվում է մեր նյութին:

Հինգերորդ միավորը (263ա-304բ) Եփրեմ Ասորու «Գիրք աղօթից» գործի ընդօրինակությունն է:

Վեցերորդ միավորը (305ա-318բ) դարձյալ հատված է Նարեկից (193բ-262բ)[392]:

Նկարագրության մեջ ասվում է. «Գիրք, որ կոչի Կտակ Մեծի Ուրբաթին» (ընդօրինակած Էջմիածնի 1787 թ. հրատարակութիւնից):

Նման գրքի մասին որևէ հիշատակություն հայտնի չէ: Ելնելով այս ձեռագրում «Ջբօսարանի» և «Պարտավճարի» ընդօրինակությունների գրաված ծավալից, թե այդ տպագիրներից յուրաքանչյուրը քանի թերթ է զբաղեցնում Նոր–Ջուղայում պահվող ձեռագրում, Մ. Մինասյանը ենթադրում է, որ նույն հարաբերակցությամբ «Կտակի» ենթադրյալ տպագրությունը պետք է 200 էջ ունեցած լինի. «Ձեռագրին մէջ իր գրաւած էջերուն քանակը նկատի առնելով (թերթ 193բ-262բ), եւ բաղդատելով տպագիր միւս երկու գիրքերու էջաթիւներուն հետ, կրնանք ենթադրաբար ըսել, որ «Գիրք, որ կոչի Կտակ Մեծի Ուրբաթին»-ի տպագիր օրինակը բաղկացած պիտի ըլլայ աւելի քան 200 տպագիր էջերէ»[393]:

Կարելի է ասել, որ բացառվում է, թե Ս. Էջմիածնում 1787 թ. նման գիրք է տպագրվել: Նոր-Ջուղայի ձեռագրում հիշված «Կտակի», որպես թե տպագիր գրքի առկայությունը, մեր կարծիքով, հնարավոր երկու բացատրություն կարող է ունենալ:

391 **Մինասեան Մ.,** Հայերէն նորայայտ հնատիպ հրատարակութիւններ, «Բանբեր Մատենադարանի», հմր. 25, Երևան, 2018, էջ 123-131:

392 Տես **Մինասեան Լ.Գ.,** Ցուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ա. Ամենափրկչեան Վանուց թանգարանի, խմբ. Օ.Ս. Եգանեանի, հտ. Բ, Վիեննա, 1972, էջ 194:

393 **Մինասեան Մ.,** Հայերէն նորայայտ հնատիպ հրատարակութիւններ, «Բանբեր Մատենադարանի», հմր. 25, էջ 127:

Առաջին՝ այն շփոթվել է Սիմեոն կաթողիկոսի նույնանուն գործի ձեռագիր որևէ ընդօրինակության հետ, ինչպես որ մեծագործ հայրապետի «Կայսրական մաղթանքի» 1771 թ. ձեռագիր ինքնագիրն է շփոթվել և համարվել տպագիր։

Գ. Հարությունյանը գրում է, որ Սիմեոն կաթողիկոսի «Կտակ չարչարանաց» քարոզը վերջինիս «Քարոզգրքից» դուրս առանձին ընդօրինակություն չի ունեցել[394]։ Կարելի է սակայն ենթադրել, որ Ավագ Ուրբաթին ընթերցվելու համար այն առանձին ընդօրինակվել է, որը որպես տպագիր է ընկալվել և շփոթության տեղիք տվել։

Երկրորդ՝ այն շփոթվել է Գեորգ Մխայլիմի «Ճառ վասն Ծննդեան և Չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» հայատառ թուրքերեն գործի հետ[395], որը Կ. Պոլսում տպագրվել է 1787 թ.։ Շփոթության տեղիք կարող էր տալ թերևս այն հանգամանքը, որ գրքի տիտղոսաթերթին ասվում է. «Տպագրեցեալ ի հայրապետութեան գերահռչակ Սրբոյ էջմիածնի, Տեառն Ղուկասու գերերջանիկ սրբազան կաթողիկոսի ամենայն հայոց»։ Այս նշումը հնարավոր է, որ շփոթվել և ընկալվել է որպես տպագրության տեղի նշում։

Թերևս շփոթության տեղիք կարող է տված լինել նաև այն հանգամանքը, որ 1820 թ. Ս. էջմիածնում տպագրվել է «Կտակը»։ Չնայած դժվար է ասել, թե այն ինչպես կարող էր շփոթվել և համարվել 1787 թ. հրատարակություն։

«Ճաշոցի» տպագրման ծրագիրը

Միասական հրատարակությունների այս շարքը պետք է եզրափակվեր Հայոց եկեղեցու ամենօրյա արարողությունների «Ճաշոց» ժողովածուի հրատարակությամբ։ «Ատենի ժամագրքի», «Շարակնոցի» և «Մեծ Մաշտոցի» հրատարակությունները, և այն էլ նման շքեղ տպագրությամբ, եկան հաստատելու, որ Ս. էջմիածնի տպարանում կարող էր տպագրվել նաև մեծադիր այս ժողովածուն, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանները կարող էին կազմել վերջինիս հրատարակության պատրաստվելիք բնագիրը։

Կաթողիկոսական դիվանի վավերագրերը գալիս են վկայելու, որ Կարնեցին ծրագրել էր տպագրել «Ճաշոցը»։ Հնդկահայ բարերար Խաչիկ Պողոսյանին Կարնեցին դեռևս 1784 թ. գրում էր, որ «Ատենի ժամագրքից» հետո, «եթէ կամիցի և յաջողեսցէ Աստուած, լինի թէ զՃաշոց կարիցեմք տպել, յարմար նորոյ Տօնացուցին, որ այն ևս հարկաւոր է և օրհնեալդ

---

394 **Հարությունյան Գ.**, «Կտակ չարչարանացի»-ի կամ Ավագ Ուրբաթի քարոզի Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի խմբագրությունը, «Բանբեր Մատենադարանի», հմր. 33, Երևան, 2022, էջ 139:

395 Տես **Գէորգ Մխայլիմ**, Ճառ վասն ծննդեան և Չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Կ, Պոլիս, 1787, էջ 67:

նորին վարձուցն ևս ես հաղորդիլոց ըստ բարւոք ջանիցդ, զոր ունիս»[396]*:*

Այս խոսքերից հետևում է, որ հնդկահայ բարերարը պատրաստ է եղել վճարելու «Ճաշոցի» տպագրական ծախսերը: Բերված հատվածից երևում է, որ ոչ միայն կարևորվել է ինքնին «Ճաշոցի» տպագրությունը, այլև «Ճաշոցի» այնպիսի խմբագրված տարբերակի տպագրությունը, որը համապատասխանեցված լիներ Սիմեոն կաթողիկոսի «Տոնացույցի» տպագրությանը:

«Ճաշոցը» օրվա եկեղեցական տոների արարողությունների մատյանն է: Հետևաբար եթե փոխվել էր «Տոնացույցը», ապա պետք է փոխվեին և մի շարք տոների ու կիրակիների արարողությունների կատարման ընթացքը և հերթականությունը, որպեսզի դրանք համապատասխանեցվեին «Տոնացույցին»: Այլապես գրքերից մեկում մի շարք օրերի և կիրակիների համար մի տոն նշված կլիներ, և մյուսում՝ մեկ այլը:

«Ճաշոցի» տպագրության մասին 1788 թ. հունիսի 21-ին կաթողիկոսը գրում է նաև հնդկահայոց նվիրակ Եփրեմ վարդապետին: Այս ժամանակ տպագրվում էր «Խորհրդատետրը»: Ղուկաս կաթողիկոսը գրում է, որ հաջորդը պետք է «Մաշտոցը» լույս տեսնի, թեև մինչ այդ լույս տեսավ «Շարակնոցը»: Կարնեցին այնուհետև «Ճաշոցի» տպագրության մասին գրում է. «Այլ ճաշոցն այժմոյս յոյժ դժուարին է տպիլ աստ վասն բազում պատճառաց, զորս ոչ երկարեմք աստ, բայց ո՛ գիտէ, եթէ Աստուած յաջողութիւն իմն հանդիպեալ տպել լինիցի աստ Ճաշոցին, ի յիշատակ Յօհաննջան աղային տպել տացուք և ոչ այլոց»[397]*:*

Նամակի գրության ժամանակ Խաչիկ Պողոսյանն արդեն վախճանված էր, և տպագրության ծախսերը պատրաստ էր հոգալ Հոհաննջան Հակոբյանը: Տարբեր բարերարների պատրաստակամությունը՝ հովանավորելու այս ժողովածուի տպագրությունը, վկայում է, որ աշխարհական գործիչները ևս գիտակցում էին, թե այն ինչ կարևորություն ուներ Հայոց եկեղեցու ամենօրյա արարողությունների կատարման համար:

Կաթողիկոսը «Ճաշոցի» տպագրությունը հույժ «դժվարին» է անվանում և չի նշում պատճառները՝ ասելով, որ դրանք շատ են: «Ճաշոցի» տպագրության հետ կապված 3 դժվարություն կարելի է նշել: Առաջին՝ տպագրական, որովհետև մինչ այդ տպագրված գրքերից և ոչ մեկը չուներ նման ծավալ: Երկրորդ՝ բնագրի խմբագրումը և համաձայնեցումը Սիմեոն կաթողիկոսի «Տոնացույցին», և երրորդ՝ ծախսատար լինելը:

Կարնեցու գրածներից երևում է, որ նա ծրագրել էր տպագրել նաև Փարպեցու «Հայոց պատմությունը», սակայն չի գտել բավարար ճշտությամբ ընդօրինակված որևէ ձեռագիր: Այս մասին գրում է. «Իսկ զՂազար Փարբեցւոյ պատմագիրն մինչ կամեցաք սրբագրել, տեսաք թէ սխալն

396 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 482

397 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք երկրորդ, էջ 374:

շատ է, քան զուղիղն, և ոչ թէ գրասխալ և բառասխալ է, այլ տողիւք պակաս ունի և փոփոխեալ, և սխալ գոլոյ հաւաստութիւնն անտի քաջ գիտացաք, զի զՍահակայ տեսլեան տպեալն գոյր, Մինաս վարդապետն մեր համեմատեալ էր առ միմեանս և բնաւին անյարմար գտեալ և գրչեայն սխալ, քան թէ տիպն»[398]։

Նման մանրամասն նկարագրությամբ ցանկանում է ասել, թե Փարպեցու առկա օրինակը ոչ թե պարզապես բնագրային տարընթերցվածներ ունի, այլ մի ուրիշ ոչ հաջող խմբագրության է պատկանում։ Ավելին, Ս. Սահակի տեսիլի եղած տպագրությունը ավելի ճիշտ էր, քան Փարպեցու իրենց ունեցած ձեռագիր օրինակինն էր, ուստի ասում է, որ առայժմ չեն կարող տպագրել։ Միաժամանակ գրում է, որ եթե ևս երկու-երեք օրինակ գտնվի, ապա դրանց համեմատությամբ հնարավոր կլինի կազմել բնագիրը։

Կ. Պոլսի նվիրակին պատվիրում է, որ «զտիրացու Գէորգին»՝ Գևորգ դպիր Պալաթացուն դիմի՝ ավելի լավ օրինակ գտնելու, և հատկապես Նալյանի ունեցած օրինակը վերցնի և ուղարկի, որպեսզի համեմատեն Մայր Աթոռում եղածի հետ։ Նաև ասում է, որ Զմյուռնիայում մի օրինակ կա, որը ևս անհրաժեշտ է ուղարկել։ Կաթողիկոսի թվարկումները ցույց են տալիս, թե Մայր Աթոռում որքան զգուշությամբ և ուշադրությամբ են փորձել կազմել տպագրվող գրքերի բնագրերը։

Փարպեցու «Հայոց պատմությունը» իրապես կարող էր չտպագրվել առկա բնագրագիտական խնդիրների և Մայր Աթոռում լավ ընդօրինակություն չունենալու պատճառով։ «Մեծ Մաշտոցից» միայն երկու պակասավոր օրինակներով այսօր հայտնի լինելը, ինչպես նաև «Ճաշոցի» չտպագրվելու պատճառը, սակայն, վստահաբար տպարանի ավերվելն էր Աղա Մահմադ խանի արշավանքի ժամանակ, երբ ալեկոծվեց ողջ Անդրկովկասը, և ավերվեց նաև Թիֆլիսը։

Ս. Էջմիածնի ժամանակի ականատես միաբանների պատմածների բանավոր փոխանցմամբ հոգևորականների հաջորդ սերնդին՝ դարձյալ նշվում է տպարանի և թղթի գործարանի ավերման մասին։ Ինչպես տեսանք, ասվածը վերաբերում է հատկապես թղթի գործարանին, որն առավել էր ավերվել, քանի որ գտնվում էր վանքի պարսպից դուրս։

Տպարանի չաշխատելու պատճառը, ավերածությունից բացի, կարող էր լինել ճանապարհների վտանգավոր և անանցանելի դառնալը, որի պատճառով հնարավոր չէր Ս. Էջմիածին հասցնել թուղթ և տպագրության համար անհրաժեշտ մյուս նյութերը։ Ժամանակի վկայություններում ասվում է, որ տպագրական տառերը տարվել են որպես կապար՝ ձուլելու և փամփուշտների գնդակ պատրաստելու համար։

Տեղի ունեցած իրադարձություններին ժամանակով ամենամոտը եղող Հովհաննես եպս. Շահխաթունյանցը գրում է. «Ի պատճառս յարուցման

398 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 518-519:

պատերազմաց ի զանազան նահանգակալ իշխողաց ի վերայ միմեանց ի դաշտի աստ Արարատեան՝ շուրջ զայսու պատրիարգական Աթոռով, խանգարեցան մեծ մասամբ և գլխովին իսկ գործարանն թղթաշինութեան, զի գոլով արտաքոյ պարսպին, երկաթեայ և պղնձեայ գործիք նորա յափշտակեալ ի զօրաց ասպատակողացն՝ ցան և ցիր եղեն ի հեռաւոր տեղիս, մինչ զի և զձուլեալ տառսն տպարանին ի հեռաւոր քաղաքաց գնեալ ի գերչացն հայազգի անձինք՝ վերադարձուցանէին յԱթոռ այսր զկնի այնպիսի պատերազմաց»[399]։

Շահխաթունյանցը թեև գրում է պարսպից դուրս գտնվող թղթի գործարանի երկաթյա և պղնձյա սարքավորումների կորստյան համար, սակայն նշում է նաև ձուլված տառերի՝ մինչև հեռավոր քաղաքները տանելու մասին։ Ինչպես նախորդ դարերում հեռավոր վայրերից բերված ձեռագրերն էին փրկագնում և այս մասին գրում ձեռագրերի հիշատակարաններում, այնպես էլ այս դեպքում հեռավոր այդ քաղաքներում հայերը գնել են որպես ավար տարված տպագրական տառերը և վերադարձրել Մայր Աթոռ։

Աղ. Երիցյանը 1870-ական թվականներին գրում էր. «Ս. էջմիածին այցելողը այսօր էլ կը տեսնէ թղթագործութեան այդ գործարանի աւերակները, որ անշուշտ վանքի պարծանքներից մէկն է»[400]։

Արտակ եպս. Սմբատյանցը Մայր Աթոռում 18-րդ դարավերջին տպագրական գործունեության ընդհատվելու մասին գրում է. «Մանավանդ աղա Մահմադ խանի արշավանքի հետևանքով ավերմունքը կատարելության է հասնում»[401]։

«Մաշտոցի» 1794 թ. հրատարակությունից հետո ենթադրվում էր, որ մինչև 1838 թ. էջմիածնի տպարանում որևէ գիրք չի տպագրվել։ Շ. Շահնազարյանի հետևողական որոնումների շնորհիվ, սակայն, գտնվեց 1819 թ. տպագրված մի «Սաղմոսարան», որի տիտղոսաթերթին գրված է. «Տպագրեցեալ ի մեծի Աթոռոյ էջմիածնի, հրամանաւ Տեառն Եփրեմի, կաթողիկոսի Ամենայն հայոց ի թուոջն մերում 1268», այսինքն՝ 1819։

«Սաղմոսարանի» այս հրատարակությունն ասես անմիջական շարունակությունը լինի 1787 թ. հրատարակության։ Երկուսն էլ ունեն նույն տիտղոսաթերթային պատկերները, դարձերեսին՝ Դավիթ մարգարեի նույն պատկերը և բանաստեղծական միևնույն չորս տող չափածոն։

Երրորդ էջից սկսվում է «Սաղմոսարանը»։ Շարվածքը թեև մի փոքր տարբեր է, սակայն երևում է, որ 1819 թ. հրատարակության մեջ աշխատել են տող առ տող հետևել 1787 թ. հրատարակության տողատմանը։

Անհրաժեշտ է նշել, որ իրար հետ համընկնում են «Սաղմոսարանի»

399 **Հովհաննես** եպս. **Շահխաթունյանց**, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի, հտ. Ա, էջ 100։

400 **Աղ. Երիցյան**, Պատմական տեսութիւն հայ տպագրութեան մինչև տասնևիններորդ դարը, «Փորձ», 1881, հմր. 4, էջ 1-32։

401 **Արտակ** եպս. **Սմբատյանց,** Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, էջ 43։

սաղմոսները պարունակող բոլոր էջերը: 44-րդ էջում երկու հրատարակություններում էլ Սուրբ Երրորդության նույն պատկերն է: Համանման ձևով էջ 91-ում՝ Ավետման, էջ 140-ում՝ Ս. Ծննդյան և 326 էջում Հոգեգալստյան նկարներն են:

«Սաղմոսարանի» 1787 թ. հրատարակության մեջ, ինչպես ասվեց, Խաչելության, Ս. Հարության և Համբարձման նկարները Ս. Էջմիածնից դուրս են պատրաստվել և ծառայել պատկերային նախօրինակներ: «Սաղմոսարանի» 1819 թ. հրատարակության մեջ այս երեք նկարների փոխարեն արդեն դրվել են այդ պատկերների՝ Մայր Աթոռում վերստեղծված նոր տարբերակները:

Գրքի հիշատակարանային հետևյալ տողերից տեղեկանում ենք, որ Եփրեմ կաթողիկոսը հիմնովին վերանորգել է Ս. Էջմիածնի տպարանը «... որ ի նեղութեանս ժամանակի գերագոյն քան զառաջին պայծառացոյց և գրեթէ ի հիմանէ նորոգեաց զտպարանն Սրբոյ Գահիս, ի լոյս մանկանց նորոյ Սիոնի՝ զխանգարեալն ի բազում ամաց հետէ»[402]:

Ասացինք, որ 1820 թ. տպագրվում է Մայր Աթոռի միաբան Գրիգոր վարդապետ Աշտարակեցու «Կտակ վասն փրկագործ չարչարանաց և Խաչելութեան Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի» 30 էջանոց գրքույկը:

Մեսրոպ Թաղիադյանը, գրելով Եփրեմ կաթողիկոսի 1821 թ. Շուշի գնալու մասին, կաթողիկոսին ուղեկցողների շարքում հիշում է նաև «Գրիգոր Աշտարակեցի՝ շարադիր կոնդակաց»[403]: «Շարադիր» բառն այստեղ չի նշանակում ընդօրինակող՝ գրված կոնդակները մաքրագրող, այլ ուղղակիորեն գրող, որովհետև որպես կոնդակների գեղագիր գրիչ Թաղիադյանը հիշում է Հովհաննես եպիսկոպոսին:

Գրիգոր վրդ. Աշտարակեցին հիշվում է նաև «Սաղմոսարանի» 1819 թ. հրատարակության հիշատակարանում. «Արժանի համարեսջիք յիշման այլև զՍրբազան Վեհապետի հարազատ պաշտօնեայ իսկ և հոգեւոր որդեակ՝ զսրբագրիչ Գրիգոր վարդապետն Աշտարակեցի Վարդազարեանց»[404]:

Գրքի տիտղոսաթերթի դարձերեսին, համահունչ «Կտակի» բովանդակությանը ու հոգևոր խորհրդին, բերված է Ս. Էջմիածնի 18-րդ դարի հրատարակություններում հանդիպող Խաչելության նկարը՝ Փրկչի կողը խոցող ձիավորով և Մարիամյանց պատկերմամբ: «Կտակի» սկզբում դրված է Ս. Էջմիածնի 18-րդ դարի հրատարակություններում դարձյալ հանդիպող մի ճակատազարդ, որի վերևում պատկերված են Խաչելության գամերը և Զարչարանաց գործիքները: Նույնը վերաբերում է լուսանցազարդին, որում պատկերված է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի

---

402 Սաղմոս Դաւթի, որ և կոչի Սաղմոսարան, Ս. Էջմիածին, 1819, էջ 415:

403 **Մ. Թաղիադյան,** Ուղեգրություններ, Երևան, 1975, էջ 152:

404 Սաղմոս Դաւթի, որ և կոչի Սաղմոսարան, Ս. Էջմիածին, 1819, էջ 417:

զանգակատունը Քրիստոսի էջքով և ներսում Իջման Ս. Սեղանին հաղորդության սկիհով, որը խորհրդանշում է պատարագյալ Քրիստոսին։

Ս. էջմիածնի 18-րդ դարի հրատարակություններում օգտագործված այս երեք փորագրատախտակների կիրառումը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ Մայր Աթոռի թղթի գործարանը և տպագրական գործիքները եթե վնասվել էին, ապա զարդապատկերները և նկարների կլիշեները, ինչպես նաև տարբեր տառատեսակները պահպանվել էին, շնորհիվ որոնց նախ 1819-20-ական թվականներին հնարավոր է լինում իրականացնել երեք գրքերի հրատարակությունը, ապա 1833 թվականից տպարանն սկսում է անխափան աշխատել։

Հետևաբար Դավթի և Դանիելի աթոռակալությունների և հակամարտության շրջանից հետո Եփրեմ կաթողիկոսը վերսկսել է տպարանի գործունեությունը։ Ռուս-պարսկական պատերազմների ու Արևելյան Հայաստանի 1827-28 թթ. Ռուսաստանին միանալուն նախորդող դժվարին ու լարված տարիներին ուղղակի սխրանք կարելի է համարել տպարանի գործունեության վերականգնումը։ Ինչպես Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսների դեպքում, այն վկայում է, որ անհողդողդ կամքն ու նպատակին հասնելու նվիրումը հաղթահարելի են դարձնում առկա դժվարությունները։

Մեծ խորհուրդ ունի և այն, որ տպարանի գործունեությունը վերականգնվում է Եփրեմ կաթողիկոսի հայրապետության տարիներին։ Տեսանք, որ 1772 թ., երբ նա տակավին սարկավագ էր, գրաշար է եղել Ս. էջմիածնի տպարանում։ 1780 թ. որպես վարդապետ՝ գրել է կաթողիկոսական Մաշտոցի հիշատակարանը՝ նշելով և Սիմեոն կաթողիկոսի տպագրական գործունեության մասին։

Պաղտասար Դպիրի «Քերականության»՝ 1791 թ. Մադրասի վերահրատարակության հիշատակարանում ասվում է, թե հիշեցեք հնդկահայոց նվիրակ Եփրեմ արքեպիսկոպոսին, ով առիթ հանդիսացավ այս գրքի տպագրության համար։ Երջանկահիշատակ հայրապետը, փաստորեն, Հայոց եկեղեցու նվիրապետության բոլոր աստիճաններն անցնելիս կապված է եղել հայկական տպագրության հետ, որոնց լրումը հանդիսացող կաթողիկոսական աստիճանում վերականգնեց քառորդ դար անգործության մատնված տպարանի աշխատանքը։

ՎԵՐՋԱԲԱՆ

Տպարանի վերաբացման հարցը տարակարծություններ է տվել: Ըստ Հ. Գ. Զարպհանալյանի՝ այն վերստին սկսել է գործել 1842 թվականից, երբ հրատարակվել է Հովհաննես եպս. Շահխաթունյանցի «Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի» երկասիրությունը[405]: Միևնույն կարծիքին է նաև Թեոդիկը. «1793 թվականէն վերջ կէս դար շարունակող տպարանական ամլութիւն մը կը տիրէ էջմիածին»[406]: Գ. Լևոնյանը այս թվականը իջեցնում է մինչև 1838 թ., երբ լույս է տեսել «Հարիւր և չորս սուրբ պատմութիւն Հին և Նոր կտակարանաց յօգուտ մանկանց» գիրքը[407]:

Սմբատյանցի կարծիքով՝ տպարանը պարբերաբար գործել է, սակայն «Դժբախտաբար պատմությունը չի պահել, թե ԺԹ դարի առաջին քառորդում ի՞նչ հրատարակություններ են լույս տեսել Մայր Աթոռի տպարանից»[408]: Ըստ Ռաֆայել Իշխանյանի՝ «Հայաստանի առաջին տպարանը վերսկսեց աշխատանքը 1818 թ., երբ Եփրեմ կաթողիկոսը տպարանի նախկին ավերակների տեղում կառուցեց նոր շենք ու սարքավորեց տպարան, ուր նույն տարին սկսեց տպագրվել Ժամագիրք, հաջորդ 1819 թ.՝ Սաղմոսարան»[409]: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է մի «Ժամագիրք», որը սկզբից և վերջից թերի է: Ընկած է տիտղոսաթերթը, ինչպես նաև վերջում չկա հիշատակարանը: Հանգուցյալ բանասեր, մատենագետ Հայկ Դավթյանը այն համարել է պոլսական հրատարակություն՝ ելնելով գրքի տառատեսակից, ձևավորումից և թղթից:

1985 թ. անակնկալ ձևով մեզ հաջողվեց գտնել այս Ժամագրքից մեկ օրինակ: Այն վերջից թերի է. պահպանվել է հիշատակարանը: Քանի որ մինչ այդ Մատենադարանում պահվող այս գրքից հայտնի միակ օրինակը, սկզբից և վերջից թերի լինելով, հայտնի չի եղել տպագրության տեղը, ուստի նշված չէ մինչև 1850 թվականը էջմիածնում տպագրված գրքերի հիշատակարանների շարքում[410]: Ստորև ներկայացնում ենք մեզ հասած օրինակի հիշատակարանը. «Փառք և գոհութիւն, պատիւ և երկրպագութիւն Ամենասուրբ Երրորդութեանն և միասնական Աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ Անեղ և անմահ բնութեանն խնամողին ամենայն արարածոց առատազեղ ողորմութեամբ:

---

405 **Հ. Գ. Զարպհանալյան,** Պատմություն հայկական տպագրության, էջ 193:

406 **Թեոդիկ,** Տիպ ու տառ,Կոստանդնուպոլիս, 1912, էջ 177:

407 **Գ. Լևոնյան,** Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 215:

408 **Արտակ** եպս. **Սմբատյանց**, Սուրբ Էջմիածնի միաբանության գրական կրթական կյանքը և Մայր Աթոռի տպարանը, էջ 65:

409 **Ռ. Իշխանյան,** Հայ գիրքը, Երևան, 1981, էջ 109:

410 Տես **Հ. Դավթյան**, Հայ գիրքը 1801-1850 թվականներին, Երևան, 1967, էջ 92:

Որ և նովին Արարչական նախախնամութեամբն յաջողեաց մեզ յանգ հանել ահա զսուրբ Ժամգիրքս նորոգ տպագրութեամբ ի Մայր Աթոռս ամենայն հայոց ի սուրբ Կաթուղիկեն էջմիածին՝ ի Տպարանի Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին յամի Տեառն 1821 և ի մերս թուականութեանն ՌՄՀ [1270], յամսեանն հոկտեմբերի։

Արդ՝ ո՛վ լուսերամ դասք ջերմեռանդ աղօթաւորաց մինչ կանխէք սովաւ յաղօթս առ առատախնամն Աստուած՝ յիշեսջիք ի խնկանուէր մաղթանս ձեր զնախկին կառուցանող Տպարանիս զմեծավաստակ Տէր Սիմէօն և զՏէր Ղուկաս լուսահոգի Սրբազան Հայրապետսն։ Եւս առաւել զվերահաստատօղն սորին նորոգ պայծառազարդութեամբ, զՏէր ԵՓՐԵՄ յոգնավիշտ Սրբազան Կաթուղիկոսն ամենայն հայոց։

Մի մոռասջիք յիշել, նաև զպատճառն նախկին շինութեան Տպարանիս Խօջաջանեան Զաքիկեանց ազնուազուն Գրիգոր Աղայն, հանդերձ համայն կենդանեօք և ննջեցելովք նորին։

Եւ զնորոգ նուիրօղն ծախուց վերահաստատութեան Տպարանիս, ի Հնդիկս ի Բթաւիա վախճանեալ Մահտեսի Յակոբեան լուսահոգի Եղիայն և զնորին կտակատար ջուղայեցի աղայ Վարդան Գասպարեանն զբնակեալն ի Մատրաս»։

Հիշատակարանի պահպանված մասում այնուհետև հիշվում են տպագրության հետ կապված մի քանի անձնավորություններ։

Հիշատակարանում թեև ասվում է, որ տպագրությունն ավարտվել է 1821 թ., սակայն Ազգային գրադարանի կայքում տեղադրված օրինակի թվային տարբերակի տիտղոսաթերթում նշված է 1820 թ.։

Գիրքը, երբ համեմատում ենք 1787 և 1819 թվականներին դարձյալ էջմիածնում հրատարակված Սաղմոսարանների, ինչպես նաև 1774 թ. «Տոնացույցի» հետ, ապա նմանությունն ակնհայտ է։ Երեք գրքերն էլ տպագրված են նույն տառատեսակով։ Համընկնում են բազմաթիվ զարդեր, ինչպես նաև՝ մի շարք գլխագրեր։ Նմանությունը երևում է հատկապես, երբ համեմատում ենք 1819 և 1787 թվականների սաղմոսարանները։

Երկու գրքերում էլ 44-րդ էջում Ս. Երրորդության միևնույն պատկերն է, որը կա նաև 1820 թվականի հրատարակության 14-րդ էջում, իսկ 45-րդ էջում Դավթի ԺԸ Սաղմոսն է։ Այն շարված է մեծատառերով և ունի միևնույն գլխագիր Ե-ն։ Երբ այս երեք գրքերը համեմատում ենք Պողոս Արապյանի՝ Պոլսում հրատարակած 1776, 1787, 1801, 1819 թվականների Սաղմոսարանների և 1803 թվականի «Ժամագիրք հայոց»-ի հետ, դարձյալ գտնում ենք միևնույն ընդհանրությունները։ Այս հրատարակությունների տառատեսակները հանդիպում են թե՛ էջմիածնի և թե՛ Պոլսի տպագրություններում։ Համընկնում են նաև գլխագրերը և զարդանախշերը։ Բերենք մի քանի օրինակ։ Միևնույն մեծ գեղագիր Ե-ն (հրեշտակի պատկերով, գլուխը ձախ) հանդիպում ենք Պոլսի 1787, 1804 և էջմիածնի

հրատարակություններում: ՏՐ-ն, փորագրված երկու թռչունների կամ երկու մանուկների նմանությամբ, կամ Զ-ն՝ ձուկ բռնող թռչունի ձևով, կան երկու վայրերի հրատարակություններում էլ:

Բերված օրինակներից կարելի է եզրակացնել, որ գոյություն ունի կապ Կ. Պոլսի և Էջմիածնի հրատարակությունների միջև:

Ինչպես վերը նշեցինք, Էջմիածնի տպարանի գործունեության շրջանից՝ 1819-1821 թթ., առայժմ հայտնի է երեք գիրք՝ «Սաղմոս Դաւթի, որ կոչի Սաղմոսարան» (1819 թ.), «Կտակ վասն փրկագործ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի» (1820) և «Ժամագիրք» (1821 թ.) [411]:

Բացի նշված երեք գրքերից, հնարավոր է, որ ևս մի քանի հրատարակություններ եղած լինեն այս շրջանում, սակայն տպարանը կարճատև գործունեությունից հետո փակվել է, և դարձյալ ջանքեր են գործադրվել այն բացելու:

Էջմիածնի վանքի գրադարանապետ, հոգևոր բարձրագույն խորհրդի անդամ Մանվել Կյումուշխանեցին խնդրել է իրեն հանձնել տպարանի վերաբացման գործը: Այս մասին տեղեկանում ենք նրան գրված պատասխանից, որում ասվում է, թե քանի որ «Սուրբ Աթոռն ի պատճառս բազմադէմ անյաջողութեանց՝ չէ այժմ ձեռնհաս վերահաստատել զուսումնարան իւր ըստ կարգի և ըստ ամենայն հարկաւոր հանգամանաց, կամ ի գործ դնել զտպարանն, և այնպէս վերակացութիւն նոցին ձեզ յանձնել, եթէ արժան իցէր» [412]:

Տպարանը երրորդ անգամ սկսում է գործել 1833 թվականից, երբ հրատարակվում է «Ձայնքաղ շարական» գիրքը, որի հիշատակարանում ասվում է, որ հիշեցեք «զՍրբազնակատար Ութերորդ Յովհաննէս Կարբեցի զարժանընտիր Կաթուղիկոսն ամենայն հայոց, որ յետ վճարելոյն զմեծ մասն պարտուց սրբոյ Աթոռոյս՝ հոգ կալաւ, զմեծաջան աշխատութեամբ և վասն շինութեան և պայծառութեան սորին» [413]:

Այս գիրքը իր տառատեսակով, զարդերով, գլխագրերով և շարվածքով տարբերվում է նախորդ հրատարակություններից, թեև մի քանի տառերի գլխագրեր նախորդ շրջանից են:

Այս հրատարակությունից հետո Ս. Էջմիածնի տպարանը գնալով կատարելագործվում է: Սկսում է գործել անխափան՝ իր նպաստը բերելով հայ մշակույթի ու լուսավորության տարածման գործին:

---

411 «Ժամագրքի» 1821թ. Ս. Էջմիածնի հրատարակության մասին տես Վ. Դևրիկյան, Մի էջ Էջմիածնի տպարանի պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1986, հմր. 1, էջ 147-151:

412 Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԲ, աշխտ. Գիւտ քհնյ. Աղանեանցի, Թիֆլիս, 1917, էջ 128:

413 Ձայնքաղ շարական, Ս. Էջմիածին. 1833, էջ 562:

Սիմեոն կաթողիկոս Երևանցին (կթղ. 1763-1780 թթ.), հայկական տպագրությունը հաստատելով Հայաստանում՝ Սուրբ Էջմիածնում, Եվրոպայում որոնում է Ոսկանյան տպարանի տառատեսակներից ու փորագրապատկերներից։

Ոսկան վարդապետի վախճանվելուց հետո տպագրությունը հսկայաքայլ առաջ էր գնացել Եվրոպայում։ Սիմեոն Ա Երևանցին և Մխիթար Սեբաստացին, սակայն, Ոսկանյան տպարանի մասունքներն են որոնում՝ իրենց հիմնարկելիք տպարանները հայ գրքի տպագրության նվիրական այդ նշխարների վրա խարսխելու համար։

Խորհրդանշական է, որ 18-րդ դարում իրենց գործունեությունը սկսած հայկական բազմաթիվ տպարաններից միայն Մխիթարյան միաբանության և Սուրբ Էջմիածնի տպարաններն են, որ անընդհատ հաջորդականությամբ շարունակում են իրենց գործունեությունը մինչև այսօր։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԿԱԶՄՈՂԻՑ

Ս. Էջմիածնի 18-րդ դարի հրատարակությունների մեր նկարագրությանը նախորդել է Ն. Ոսկանյանի, Ք. Կորկոտյանի և Ա. Սավալյանի կազմած «Հայ գիրքը 1512-1800 թվականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտություն» (Երևան, 1988, 864 էջ) հիմնարար աշխատանքը: Այն կատարյալ է գրքագիտական առումով, սակայն յուրաքանչյուր գրքի բովանդակությանը մաս կազմող միավորների և ենթամիավորների բաժանումը կատարվել է ըստ տվյալ հրատարակությունների գրքագիտական զարդաշարվածքային բաժանման: Վերջինս՝ հատկապես տոնային կանոնների դեպքում, միշտ չէ, որ համընկնում է տվյալ գրքի ներքին իմաստաբովանդակային բաժանմանը: Ուստի գրքերի տառատեսակների մասին տեղեկությունները և գրքագիտական առումով տեխնիկական բոլոր տվյալները վերցնելով սույն Մատենագիտությունից՝ բովանդակային նկարագրության ժամանակ հետևել ենք Մաշտոցի անվան Մատենադարանի «Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց» շարքի հատորներում տեղ գտած ձեռագրերի նկարագրության սկզբունքներին, առավել ևս, որ Ս. Էջմիածնի 18-րդ դարի մի շարք հրատարակություններ ուղղակիորեն տպագրված են ձեռագրերից, ինչպես «Տոնացույցի», «Աստեղի ժամագրքի», «Մաշտոց» ծիսարանի, «Շարակնոցի» և «Սաղմոսարանի» հիշյալ հրատարակությունները հայ ձեռագրային ավանդույթի տպագրական շարունակություններն են:

Մեր նկարագրած յուրաքանչյուր միավորի վերջում նշել ենք 1512-1800 թթ. ընդգրկող մատենագիտության մեջ Ս. Էջմիածնի համապատասխան հրատարակությանը վերաբերող էջը:

Այս աշխատանքը հանձնել էինք տպագրության, երբ մեր նկարագրություններից որոշակի տարբերություններով լույս տեսավ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայ գրատպության կենտրոն. Հրատարակությունների մատենագիտություն՝ 1772-1920 թթ.» արդեն հիշված ծավալուն հատորը, որի 49-83 էջերում բերված է Ս. Էջմիածնի 18-րդ դարի հրատարակությունների մատենագիտությունը:

Մեր կազմած մատենագիտությունը ներկայացնում ենք ստորև, որպեսզի Ս. Էջմիածնի տպարանի 18-րդ դարի գործունեությանը նվիրված այս գործը առավել ամբողջական լինի, ինչպես նաև ընթերցողը, մեր կա-

տարած աշխատանքը համեմատելով հիշյալ երկու Մատենագիտությունների հետ, տեսնի նկարագրությունների միջև առկա ընդհանրությունները և տարբերությունները։

Գրքային յուրաքանչյուր միավոր ներկայացրել ենք երկու թվահամարով։ Առաջինը Ս. Էջմիածնի 18-րդ դարի իրարահաջորդ հրատարակությունների հերթականությունն է նշում։ Փակագծերում բերված երկրորդ համարակալմամբ ներկայացրել ենք, թե այն որ թվահամարն ունի հայ գրքի 1512 -1800 թթ. ընդգրկող ամբողջական մատենագիտության մեջ։

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ 18-ՐԴ ԴԱՐՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ԳՐՔԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐՔԱԳԻՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. (631). ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, 1772 Թ.

2. (644). ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ, ԶԲՕՍԱՐԱՆ ՀՈԳԵՒՈՐ, Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, ՏՊ. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ, 1772 Թ.

ՏԻՏՂԹ.՝ ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ ՈՐ ԿՈՉԻ ԶԲՕՍԱՐԱՆ ՀՈԳԵՒՈՐ

Արարեալ ի Սիմէօնէ վշտակիր Կաթ[ո]ղիկոսէ Ամենայն Հայոց ի դիմաց Լուսաւորչակրօնից անձանց ի փառս Աստուծոյ.

Եւ տպեցեալ ի Սուրբ Էջմիածին հրամանաւ նոյնոյ Սրբազան Հայրապետին ի նորոգ տպարանի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Ի թուոջ ՓրկչինՌՉՀԲ [1772]. Եւ ի մերումս թուոջ ՌՄԻԱ [1221]:

184 էջ: Ութածալ, մամուլանիշերը հայատառ: Շարվ. չափը՝ 7,5 x 5,2 սմ: Բնագիրը 12 կետաչափի բոլորագրով, օգտագործված են նաև նոտրգիր և գլխագրեր:

Զարդանկարչութիւն. Փորագրապատկերներ. էջ 26՝ Սուրբ Երրորդութիւն,

Ճակատազարդ՝ էջ 27, 35,

Բովանդակութիւն

էջ 3-24 Յառաջաբանութիւն փոքրիկ տետրակիս, յորում սակաւ ինչ և զորպիսութենէ աղօթից: - 24- 25 Առ ի լցուցանել զպակաս տեղին թղթոյս՝ զայս ոտանաւորս ևս եդաք-Լիցի և այս ձեզ գիտելի: - 26 – [Սուրբ Երրորդութեան փորագրապատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետեւեալ սկսուածքով]Երրորդութիւն և մի Աստուած: -27 – 34 Աղօթք առ Սուրբ Երրորդութիւն, զի մի բարկանայցէ աղօթողին վասն մեղաց, այլ ներելով տացէ զհամարձակութիւն ի յաղօթելն- Օրինեալ ես Հայր Սուրբ Աստուած ճշմարիտ: - 35- 57 Աղօթք յատուկ վասն անձին աղօթողի – Եւ արդ ես յետնեալս: - 58 – Աղօթք առաւօտեան ժամու – Տէր եթէ զշրթունս իմ: - 58 – 60 – Գլուխ Գ.Գոհանամ զՔէն Տէր իմ: - 61 – 64 – Աղօթք յերեկոյին ի ժամ ննջման. Գլուխ Դ - Գոհանամ զՔէն Տէր իմ: - 64 – 66 Աղօթք վասն հասարակ ննջեցելոց, և մանաւանդ վասն ընտանեաց և երախտաւորաց. Գլուխ Ե – Այլև աղաչեմ: - 66 – 69 – Աղօթք վասն թշնամեաց և չարակամաց. Գլուխ Զ – Արդ ով ողորմած և բազմագութ Աստուած իմ: - 69 – 84 – Աղօթք ողբերգականք վասն հասարակ ազգիս և եկեղեցեացս հայոց. Գլուխ Է – Եւ արդ Տէր իմ և Աստուած իմ: - 85 – 104Շնորհակալութիւնք առ Աստուած վասն յատուկ բարերարութեանցն, որք առ ազգս հայոց, և խնդրուածք դարձեալ, զի և ևս ողորմեսցի և բարերարեսցէ. Գլուխ Ը – Վերակրկնելով զպաղատանս իմ: - 105 – 113 Աղօթք առ ամենասուրբ Աստուածածինն Մարիամ. Գլուխ Թ – Յետ այսքան վշտագնեալ: - 114-128 Աղօթք և հառաչանք առ երջա-

նիկ սուրբսն Աստուծոյ և առ յատուկ լուսաւորիչսն և երախտաւորսն ազգիս Հայոց. Գլուխ Ժ – Յետ այսքան հառաչանաց: - 129-134 Աղօթք առ ամենայն սուրբսն Աստուծոյ. Գլուխ ԺԱ – Ով ամենայն Սուրբք: - 135 -138 Աղօթք առ երկնային Զինուորութիւնսն. Գլուխ ԺԲ – Արդ առ Ձեզ է աղաչանքս: - 139-156 Աղօթք առ Սուրբ Խաչն Փրկչական: Գլուխ ԺԳ – Մեծաւ երկիւղիւ - 156-171 Դաւանութիւն ճշմարիտ և Ուղղափառ հաւատոյ Սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց և իմ Շարադրողիս իսկ: Եւ վերջաբանական Աղօթք առ Սուրբ Երրորդութիւն. Գլուխ ԺԴ – Արդ ով ամէնօրհնեալ Սուրբ Երրորդութիւն: - 172- 182 Յիշատակարան տետրակիս Աղօթից: - 182-183 Աղօթք ձայնիւ երգելի յեկեղեցւոջն ընդ Տէր Ողորմեային – Արի Աստուած հարցըն մերոց: -183-184 Վասն դատարկութեան տեղւոյն [բանաստեղծութիւն] –Եթէ ոք քեզ հարցանիցէ. Վերջ:

«Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 487-489

3. (645). **ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ, ՏԱՂԱՐԱՆ, Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, ՏՊ. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ, 1772**

ԾԱՆՈԹ.՝ տեղեկությունը քաղված է Գ. Զարբհանալյանի «Պատմութիւն հայկական տպագրութեան» ուսումնասիրությունից, որտեղ գրված է. «Էջմիածնի տպարանէն ընծայուած առաջին երախայրիքն Զբօսարան կոչուած աղօթից մատենիկն էր ըսինք, յետոյ Տաղարան մը, որոյ նախկին տպագրութիւնն տեսած չենք, և կերևնա թէ անարուեստ և անհարթ տպագրութեանն համար մասնաւոր դիտմամբ անհետ ըրած են…»:

Թեոդիկի և Գ. Լևոնյանի տվյալներով նույն ժամանակ Էջմիածնում տպագրվել է միայն մեկ գիրք, ըստ Թեոդիկի («Տիպ ու տառ»)՝ «Տաղարան», ըստ Գ. Լևոնյանի՝ («Հայ գիրքը և տպագրության արվեստը») «Զբօսարան հոգևոր» կամ «Փոքրիկ Տաղարան»:

Շ. Շահնազարյանը («Պատմաբանասիրական հանդես» 1963, N 1, էջ 263) Տաղարանի տպագրության թվականը համարել է 1773-ը:

«Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 487-489

4. (655). **ՏՕՆԱՑՈՅՑ, Հտ. 1-2, Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, Տպ. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ, 1774-1775**

ՏԻՏՂՈՍ.՝ ՏՈՆԱՑՈՅՑ: Նախապէս կարգեալ և սահմանեալ սրբոյն Սահակայ Պարթևի Հայապետին հայոց, ըստ աւանդութեան Հայաստանեայցս Սրբոյ Եկեղեցւոյ:Արդէն վերստին նորոգմամբ ի յերկուս հատորս բաժանեցեալ. Աշխատասիրութեամբ Տեառն Սիմէոնի Յոգնաջան և Սրբազան Կաթուղիկոսին ամենայն հայոց:

Եւ նորին հրամանաւն տպագրեցեալ ի Սուրբ և յԱստուածակերտ Աթոռս Էջմիածին. ի նորահաստատ Տպարանի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Յամի Փրկչին մերոյ՝ ՌՉՀԴ [1774] և ի թուին հայոց՝ ՌՄԻԳ (1223):

564 զարդափակ էջ: Ութաճալ, մամուլանիշերը հայատառ: Շարվ. չափը շրջանակով՝ 12,3 x 7 սմ: Տիտղթ. և հատորների խորագրերը զարդափակ: Ժամամուտքը լուսանցանիշերով: 13 փորագիր պատկեր: Գլխազարդեր, վեր-

ջազարդեր, լուսանցազարդեր և զարդագրեր: Բնագիրը 10 կետաչափի բոլորագրով, օգտագործված են նաև նոտրգիր և գլխագրեր:

Փորագրապատկերներ. էջ 23՝ Ս. Ծնունդ, էջ 44՝ Տեառնընդառաջ, էջ 76՝ Մուտքն յԵրուսաղէմ, էջ 110՝ Ս. Յարութիւն, էջ 123՝ Աւետումն, էջ 154՝ Համբարձումն, էջ 166՝ Հոգեգալուստն, էջ 184՝ Ս. Գրիգորը մկրտում է Արածանիի ափին, էջ 206՝ Պայծառակերպութիւն, էջ 224՝ «Էջ Միածինն ի Հօրէ», էջ 228՝ Վերափոխումն, էջ 248՝ Խաչելութիւն, էջ 328՝ Ս. Էջմիածնի հիմնարկումը Արագածի և Արարատի պատկերներով:

Լուսանցանկար, էջ 284՝ Միքայէլ հրեշտակապետը:

Կիսախորան՝ էջ 25, 111, 207, 229, 329

Ճակատազարդ՝ էջ 45, 58, 77 (Գառն Պատարագեալ նշանով), 124, 127, 145, 155, 167, 185 (Հայրապետական խոյրով), 186, 194, 198, 214, 226, 237, 244, 249 (Տիրամայրը Խաչը ուսած Յիսուսի հետ), 264, 278, 290, 296, 300, 315, 544:

ԲՈՎԱՆԴ.՝ էջ 2-21 Առազդեցութիւն ինչ առ հայազնեայ օրինեալ որդիսդ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, և շնորհածին զաւակսդ Մօրս մերոյ հաւատոյ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Եւ իբր յառաջաբանութիւն սոյնոյ գրոցս՝ որ կոչի Տօնացոյց: - 22 Առ ի ծանուցանել զդժուարութիւն գործոյս, եդաւ ոտանաւորս այս-Է կարի մեծ ըսքանչելի: - 23 Ա հտ. խորագիրը՝ ՏՕՆԱՑՈՅՑ: ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ: Որ ունի զամենայն Տօնս և զՊահս Սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց հանդերձ պատճէիւքն իւրեանց: Եւ ցուցանէ զԱնշարժսն և զՇարժականսն՝ ըստ կանոնի Առաջնոյ Տոնացուցին մերոյ:

Օգնեա Հոգիդ Սուրբ Աստուած, և զսկըսեալս մեր խաղաղութեամբ հասո յաւարտ: -24 [Սուրբ Ծննդեան պատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով]- Որ ի կուսէն այսօր ծընար Փրկիչ մարդկան: 25-43 Կանոն Ծննդեան և Յայտնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ -Աստուածայայտնութեան գիշերին հակումն է – 44 [Տեառնընդառաջի պատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Ով լցուցիչ փափագանաց Սուրբ Ծերունւոյն: -45-58 Կանօն Քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի Տաճարն- Իսկ զտօն Քառասնօրեա գալստեանն Քրիստոսի: -58-75- [Բուն Բարեկենդան]- Ի Բուն Բարեկենդանի կրկին փոխեա զձայնն: - 76 [Մուտքն յԵրուսաղէմ պատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Արդ որ նստար ի յաւանակ խոնարհութեամբ: -77-109 Կանօն գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւանակաւ յԵրուսաղէմ - Ծաղկազարդ[ի] կիրակէ: Ի գիշերին հսկումն է: - 110 [Ս. Յարութեան պատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Որ ինքնիշխան կամաւ մեռեալ այսօր յարեար: - 111-122 Կանօն Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի- Զատիկի կիւրակէի գիշերին հսկումն է: - 123 [Աւետման պատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Խոստովանիմ ըզքեզ ըստոյգ Աստուածածին:-124-126 – Կանօն Աւետեաց Սրբուհւոյ Կուսին Մարիամու -Սուրբ Աստուածածնի Աւետեաց տօնն: -127-144 [Նոր Կիրակի] – Նոր կիրակէ (Որ և ասի Կրկնազատիկ)- Ի գիշերին հսկումն է: - 145 -153[Երևման Սուրբ Խաչի] – Հինգերորդ կիւրակէ

տօն է Երևման Սրբոյ Խաչին: - 154 [Համբարձման պատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Որ Համբարձար փառօք առ Հայր, յորմէ ելեր: - 155-165- Կանօն սրբոյ Համբարձմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ -Հինգշաբաթ՝ Օր համբարձմանն Քրիստոսի ի յերկինս: - 166 [Հոգեգալստեան պատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Որ զառաքեալսն գետօրէն ոռոգեցեր: - 167-183- Կանօն Հոգւոյն Սրբոյ Գալստեանն - Հոգւոյն Սրբոյ Գալստեան կիրակէ: -184 [Ս. Գրիգոր Լուսաւորչի կատարած մկրտութեան պատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Ով Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ տանըս Հայոց: - 185-186 Կանօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելմանն ի վիրապէն - Շաբաթ տօն է: - 186- 194 Երկրորդ Կիրակէ զկնի Հոգւոյ Գալստեանն – ԴԿ. Տօն է Կաթուղիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի: -194-205 [Գիւտ նշխարաց] – Շաբաթ դարձեալ տօն է Գիւտի նշխարաց: - 206 [Պայծառակերպութեան նկարի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Որ ընտրելոցդ այսօր ցուցեր ըզփառըս Քո: - 207-224 Կանօն Պայծառակերպութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի Թափօր լերինն - Վարդավառի Կիւրակէ. Ի գիշերին հսկումն է: - 225 [Ս. Էջմիածնի հիմնարկման պատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով]- Սա է, յոր էջ Միածինն Հօր լուսով փառաց:-226-227 Կանօն Սրբոյ Շողակաթին. Այսինքն՝ Սրբոյ Էջմիածնի - Շաբաթ տօն է Շողակաթին Սրբոյ Էջմիածնի: - 228 [Վերափոխման նկարի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Որ բազմեցար արքայուհիդ ընդ արքայիդ:- 229-244 Կանօն Վերափոխման սուրբ Աստուածածնին - Սուրբ Աստուածածնի Վերափոխման Կիւրակէ. Ի գիշերի հսկումն է: -244-247 Կանօն ծննդեան Սուրբ Կուսին - Իսկ տօն ծննդեան Սրբուհւոյ Կուսին: - 248 [Խաչելութեան նկարի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Որ պատուական արեամբըդ Քով զմեզ գնեցեր:- 249-264 Կանօն Վերացման Սրբոյ Խաչին: - Սրբոյ Խաչի վերացման Կիւրակէ: - 264-277 [Տօն Վարագայ Սրբոյ խաչի]- Երրորդ կիւրակէ զկնի Սրբոյ խաչին. Տօն է Վարագայ Սրբոյ խաչին: -278-314 [Տօն Գիւտ Խաչի] – Եօթներորդ կիւրակէ Խաչգիւտ է: - 315-318 Կանօն ճրագալուցի Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի - Իսկ ի յԱստուածայայտնութեան ճրագալուցի գիշերին: -319-320 Վասն բաց մնալոյ թղթոյս,եդաք զաղիւսակս զայս վասն ձայնագիւտի. Որ կարի հարկաւոր է Տօնացուցիս: - 321 Խրատ վասն Կիւրակէ պահելոյ աւուրց: - 322-326 Սակաւ ինչ Յառաջաբանութիւն վասն Երկրորդ Հատորի Տոնացուցիս: - 327 Բ հտ. խորագիրը՝ ՏՕՆԱՑՈՅՑ: ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ, Որ է Քանօն և կառավարիչ առաջնոյ հատորին:

Յօրինեցեալ ԼՋ [36]խորանօք ի վերայ ԼՋ գրոցն մերոց այբուբենականից: Որոց իւրաքանչիւր տարեգրոյ խորան ըստ բերման իւրոյ տարւոյն, զամենայն շարժական և տեղափոխ տօնսն՝ կանօնաւորեալ տեղաւորէ:

Զմարտիրոսաց, պահոց, և Յարութեան հարցիցն՝ և կիրակէից Համբարձեացն՝ Ամսաթուց և Աւուր ձայնից կարգսն պահելով՝ անտարակոյս ցուցանէ հանդերձ շարժական միջոցից որքանութեամբքն՝ մշտնջենաւորապէս և դիւրին ճանապարհաւ:

Ի փառս Աստուծոյ՝ և ի զուարճութիւն մանկանց եկեղեցւոյ: -328 [Ս. Էջմիածինը Միածնի էջքով ներկայացնող փորագրապատկեր բանաստեղծութեամբ] -329-518 [Տոնացոյց ԼԶ խորանօք]-519 Վասն դատարկութեան տեղւոյն եդաւ. [Չափածոյ հետևեալ սկսուածքով] – Երբ վճարես դու զիին տարին:- 520-523 Խրատ վասն առաջակայ Աղիւսակաձև Շրջանիդ: - 524-527 Աղիւսակ: -528-544 Որովհետև ի յանհմուտ գրչաց և ի տպագրաց՝ ի ժամամուտս մեր բազմապէս սխալմունք էին ներմուծեցեալ որպէս յայտնի է գիտնոց. վասն որոյ հարկ գիտացեալ ի վերայ մեր, զայնս ուղղեցաք և զքանի մի հարկաւոր ժամամուտս ևս նորոգ շարադրեալ ընդ նոսայ եդաք և ընդ Տօնացուցիս տպեցաք: Որք պարտիք այսուհետև զայսոսիկ ասել յեկեղեցւոջ յաւուրս իւրեանց: - 544-556 Վերջաբանութիւն Տոնացուցիս, և իբրու Կտակ արարողի սորին առ մերազնեայս: - 556-558 Վասն տեղափոխեցեալ տօնիցնգիտասջիք և զայսքանս ի կարճոյ: - 558-560 Տեղափոխեցեալ տօնք: -560 - Յիշատակարան:

«Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 496-498

5. (679). ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳԱԽՈՐԱՑ, Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, ՏՊ. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐՉԻ, 1777

ՏԻՏՂԹ.՝ ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳԱԽՈՐԱՑ: Այսինքն, Հայրապետաց, Եպիսկոպոսաց և Քահանայից.

Զոր ի բուն Մաշտոցէն մերմէ առեալ՝ սրբագրեալ և կարգաւորեալ տեառն Սիմէօնի գերերջանիկ և գիտնական Կաթուղիկոսի ամենայն Հայոց, ետ տպագրել մեծաւ զգուշութեամբ, ինքնին իսկ լինելով վերահասու:

Ի փառս Աստուծոյ, և ի հեշտութիւն և ի դիւրութիւն կատարողաց սոյնոյ սրբազան կարգիս, զոր յառաջ կարի դժուարութեամբ և տաժանմամբ առնէին:

Ի թուոջ Փրկչին, ՌՉՀԷ [1777]և ի մերում թուոջ ՌՄԻԶ [1226]:

Ի ՍՈՒՐԲ ԱԹՈՌՍ ԷՋՄԻԱԾԻՆ: Ի տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

160 զարդափակ էջ: Ութաճալ, մամուլանիշերը հայատառ: Շարվ. Չափը շրջանակով՝ 15 x 10 սմ: Տիտղթ. զարդափակ: Էջախորագրերով: 1 փորագիր պատկեր տիտղթ. դարձերեսին «Յարութիւն» մակարգրությամբ (նկարիչ-փորագրող) և փորագրության թվականով (1772 և ՌՄԻԱ) [1221]): Գլխազարդեր, վերջազարդեր, լուսանցազարդեր և զարդագրեր: Բնագիրը 10 կետաչափի բոլորագրով, օգտագործված են նաև նոտրգիր և գլխագրեր:

Փորագրապատկեր. Սուրբ Էջմիածնի հիմնարկումը Արարատի և Արագածի պատկերներով՝ էջ 2

Ճակատազարդ՝ էջ3, 126

ԲՈՎԱՆԴ.՝ էջ 3-125 Կանոն յորժամ եպիսկոպոս, կամ քահանայ, կամ հայրապետ,կամ ուխտի առաջնորդ կատարի մահուամբ, զայս կարգաւորութիւն արասցեն լուացման և պատանաց և այլ կանոնեալ պայմանաւոր կարգացն: - 126 -133 Իսկ յերկրորդում աւուրն երթան ի հանգիստն. Եւ յերթալն ասեն զԱմբիծսն: Եւ ապա այս կանոն կատարի – Սաղմոս ԻԹ [29] Կցորդ: - 134-136 Կանոն երրորդ աւուրն: Երթան ի գերեզմանն և ի գնալն ասեն զԱմբիծսն…Եւ ապա

այս կանոն կատարի – Սաղմոս ՃԻԹ [129]: -137-139 Կանոն Չորրորդ աւուրն… Եւ այս կանոն կատարի – Սաղմոս կցորդ ՃԽԲ [142]: -140-142 Կանոն Հինգերորդ աւուրն – Եւ այս կանոն կատարի. Սաղմոս ԻԹ [29]: - 142-144 Կանոն Վեցերորդ աւուրն: Եւ այս կանոն կատարի – Սաղմոս ՃԺԴ [114]: -145-150 Կանոն Եօթներորդ աւուրն: - 150-152 Կանոն Հնգետասան աւուրն: -152-155 Կանոն Քառասուն աւուրն: - 155-157 Կանոն Տարելցին: -158-159 Սակաւ ինչ վերջաբանութիւն ի սրբագրողէ գրքոյս Տեառն Սիմէօն Սրբազան Կաթուղիկոսէ ամենայն Հայոց, առ բարեմիտ վերծանօղս: -159-160 Յիշատակարան տպողաց:

«Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 509-510

6. (680) ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ: ՏԱՂԱՐԱՆ ՓՈՔՐԻԿ: Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսաւորչի, 1777:

ՏԻՏՂԹ.՝ ՏԱՂԱՐԱՆ ՓՈՔՐԻԿ:

Շարահիւսեցեալ ի Սիմէօնէ սրբազան կաթուղիկոսէ Ամենայն Հայոց՝ յայլ և այլ ժամանակս:

Որոյ և հրամանաւն այժմ ևս տպեցաւ կրկին՝ ի սպառիլ առաջնոյ տպեցելոյն, ի թախանձանաց սիրատարփ խնդրողաց:

Ի թուոջ Փրկչին, ՌՉՀԷ [1777] և ի մերում թուոջ ՌՄԻԶ [1226]: Ի ՍՈՒՐԲ ԱԹՈՌՍ ԷՋՄԻԱԾԻՆ:

Ի տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

40 էջ: Ութածալ, մամուլանիշերը հայատառ: Շարվ. չափը՝ 8 x 5 սմ: Բնագիրը 8 կետաչափի բոլորագրով, օգտագործված են նաև նոտրգիր և գլխագրեր:

Փորագրապատկեր. Սուրբ Ծնունդ՝ էջ 2

ԲՈՎԱՆԴ.՝ էջ 2 [Ս. Ծննդեան փորագրապատկեր երկտող չափածոյի հետևեալ սկսուածքով] – Աստուածածին մայր Քրիստոսի: - 3 - 4 Տաղ ի սուրբ ծնունդն Քրիստոսի՝ ի դիմաց Սրբուհւոյ Աստուածածնին՝ ասացեալ տեառն Սիմէօնի Սրբազան Կաթուղիկոսի. Ա –Խորհուրդ մեծ յայտնեցաւ այսօր յաշխարհի: -4-5 Նորին տաղ առ Սուրբ Աստուածածինն. Բ - Սիրելի մայր իմոյ Փրկչին: - 5-7 Նորին առ ամենաբժիշկն Յիսուս ասացեալ ի հիւանդութեանն. Գ - Սէր անուն Յիսուս սիրելի: 7-9 Նորին առ Սուրբ Էջմիածին ասացեալ ի հեռուստ վայրէ. Դ - Ի տարանջատ վայրէս ահա: -9-11 Նորին դարձեալ առ սուրբ Էջմիածին ներբողեան հանդերձ խնդրուածովք. Ե - Ի բոլոր աշխարհի ոչ գոյ քեզ նման: - 11-12 Նորին առ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր: Զ -Արի՛ Լուսաւորիչ մեր: -12-15 Նորին ի դիմաց ազգիս հայոց առ մայրս մեր Սուրբ Էջմիածին աղերս և ի սմանէ պատասխանիք առ նոսա: Է - Ի գիրկ ծնողիդ մերոյ: -15-17 Նորին առ աստուածակոխ քաղաքն սուրբ Երուսաղէմ. Ը - – Ի բոլոր աշխարհի յատկացեալ տեղի -17-19 Նորին՝ սըտգտանք յանձն իւր. Թ - Նախատանաց ես արժանի: -19-21 Նորին՝ բողոք ի սուտ կենցաղոյս. Ժ- -Ի յայս անկայուն և սուտ աշխարհէս: -21-23 Նորին՝ ոգորումն ընդ աշխարհս այս խաբող. ԺԱ – Ի Քոց ձեռացդ ես ոիւր փախեայց: -23-26 Նորին հառաչանք առ Աստուած վասն թշուառութեանցն երկրիս Հայոց և Սրբոյ Աթոռոյս ի ՌՃՂԶ [1196]թուոջն մերում. ԺԲ - Ով բարերար և մարդասէր Տէր իմ: -26-29 Նորին ասացեալ յաւուրս

հայրապետութեանն մինչ ետես զինքն ընկղմեցեալ ի յամենուստ կուսէ ի բազմատեսակ վիշտս և ի հոգս, գոլով անօգնական. ԺԳ -Ի քեզ կարդամ ոմ Արարիչ բոլորից, Աստուած բոլորից: -29-31 Նորին՝ քաջալերութիւն և յուսադրութիւն ցաւաշատ և տրտմաթախիծ անձին. ԺԴ -Ով պանդուխտ այր դու: -31-33 Նորին ի դիմաց միաբանից Սրբոյ Աթոռոյս և ամենայն սոցապիսեաց շնորհակալութիւնք առ Աստուած. ԺԵ -Ի Քոց բարեացդ լիացեալ յագեցաք, Աստուած, յագեցաք: -33-34 Նորին ասացեալ առ ծով մրրկեալ՝ ի ժամ ալէկոծութեան. ԺԶ -Ի հատուցումն իմոց չարեաց: -35-38 Նորին դաւանութիւն և մաղթանք առ Սուրբ Երրորդութիւն: Որ յաւուրս Կիւրակէից յէտ առաւօտեան ժամուն երգի ի սուրբ Աթոռոջս ի դպրատանն, ըստ եղանակի Նորաստեղծեալին: ԺԷ. -Աստուած հզօր, Հայր գթութեան: -39 Աղօթք ձայնիւ երգելի յեկեղեցւոջն ընդ Տէր ողորմեայն - Արի Աստուած հարցըն մերոց: -40 Հանդէպ համարագրացդ եդեալ տաղքն ցուցանեն զեղանակս տաղից տետրակիս: Ա. Կարմիր և սպիտակ. Ղազարու է.... ԺԶ, Նոր գոյն է, լսել պիտոյ է:- 40Յիշեսջիք... [Յիշատակարան]

«Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 510

7. (693) ՍԻՄԷՕՆ ԵՐԵՒԱՆՑԻ: ՊԱՐՏԱՎՃԱՐ: Ս. Էջմիածին, տպ. Գրիգոր Լուսաւորչի, 1779 – 1783:

ՏԻՏՂԹ.՝ ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ՊԱՐՏԱՎՃԱՐ

Արարեալ Տեառն Սիմէօնի վշտակօծ և ցաւակիր Կաթուղիկոսի, մեծագործ և յոգներախտ Հայրապետի ամենայն ՀայոցԵրևանեցւոյ՝ ի Քրիստոսահիմն սուրբ Աթոռս Էջմիածին:

Ի հաստատութիւն ճշմարտութեան միաբնադաւան հաւատոյ սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց, և ի յորդորումն ազգիս մերոյ՝ ի նոյնն մնալ անշեղապէս:

Եւ ի դատապարտութիւն ի մէնջ հեստեալ ուրացօղ չիք եպիսկոպոսաց և սուտ կարգաւորաց:

Որ և տպեցաւ նորին հրամանաւն, Ի ՍՈՒՐԲ ԱԹՈՌՍ ԷՋՄԻԱԾԻՆ: Ի տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Ի թուոջ Փրկչին, ՌՉՀԹ [1779]: Եւ ի մերում թուոջ, ՌՄԻԸ [1229]:

383 զարդափակ էջ: Ութածալ, մամուլանիշերը հայատառ: Շարվ. չափը շրջանակով՝ 13,4 x 7, 3 սմ: Տիտղթ. զարդափակ: 2 գլխազարդ, վերջազարդեր, լուսանցազարդեր և զարդագրեր: Բնագիրը 10 կետաչափի բոլորագրով, օգտագործված են նաև նոտրգիր և գլխագրեր:

Փորագրապատկեր. Սուրբ Երրորդութիւնը չորս Աւետարանիչներով՝ էջ 6, Սուրբ Էջմիածնի հիմնարկումն՝ էջ 170, Ս. Էջմիածինը Արարատի և Արագածի հետ՝ էջ 290,

Կիսախորան՝ էջ 7, 171

ԲՈՎԱՆԴ.՝ էջ 2-5 Իբր յառաջաբանութիւն առ բարեմիտ լսօղսդ՝ վասն փոքրիկ գրքոյս, որ կոչի Պարտավճար: - 6 [Սուրբ Երրորդութիւնը ներկայացնող պատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Ով եռանձնեա մի էութիւն և մի Աստուած: -7-9 Գլուխ Ա. Յորում ցուցանի բոլոր դիտումն գրոցս: -10-17 Առաջին հատոր վասն Աստուածայնոյ հաւատոյ. Գլուխ

Բ. -17-41: Գլուխ Գ. Թէ ո՛րքան ժողովք եղեն. և պատճառք և որպիսութիւնք նոցին: -41-54 Գլուխ Դ. Վկայութիւնք սրբոց վարդապետաց: - 54-70 Գլուխ Ե. Պատասխանիք ընդդէմ ներհակաց վասն միոյ բնութեանն Քրիստոսի և վասն Հոգւոյն Սրբոյ բղխմանն ի Հօրէ: -70-82 Գլուխ Զ. Յորում ցուցանի պատճառ մնալոյն հայոցս ի բուն ճշմարիտ հաւատն, և պատճառ ժողովոցն մերոց: -83-130 Գլուխ Է. Հարցմունք և առարկութիւնք առ երկաբնակսն՝ վասն միութեանն Քրիստոսի: - 130-142 Գլուխ Ը.Յորում ցուցանի ճշմարտութիւն՝ դատաստանաւ և վճռաւ քրիստոնէական հաւատոյ՝ և վկայութեամբ աստուածայնոց գրոց: -142-168 Գլուխ Թ. Խրատական բանք և յորդորակք առ ազգս հայոց՝ առ ի զգուշանալ յայլադաւան աղանդաւորաց, և մանաւանդ ի մէնջ հեստեալ կորստեան որդւոցն: -169 Առ վճարումն Առաջնոյ Հատորի գրոցս, և սկսումն երկրորդին: [Չափածոյ] -Բաղձալի գրոցս որ Պարտավճար: - 170 [Ս. Էջմիածնի հիմնարկման պատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] -Սա է յոր Էջ Միածինն Հօր լուսով փառաց: -171-179 Հատոր երկրորդ: Յաղագս երկրորդ տեսակ հաւատոյն՝ որ ասի խղճմտանք: Գլուխ Ա. Յորում ցուցանի խղճմտանքն և որպիսութիւն նորին: - 180-191 Գլուխ Բ. Յորում ցուցանի ճշմարտութիւնն՝ ըստ վճռոյ խղճմտանաց և վկայութեամբ գործոց: -192-201 Գլուխ Գ. Յորում ցուցանին նենգագործութիւնքն ի մէնջ հեստեալ ուրացողացն, և պատճառ ուրացման նոցա: -201-238 Գլուխ Դ. Յորում ցուցանի իսկապէս անհաւատ գոլն ի մէնջ հեստեալ ախթարմայ կոչեցելոցն, և մանաւանդ ուրացող կարգաւորաց. եղեալ և հաւաստի օրինակաւ [Ունի և՝ Օրինակ վկայականին, զոր Հայրապետն տայ նոր ձեռնադրեցեալ եպիսկոպոսաց՝ էջ 230] -238-263 Գլուխ Ե. Յորում ցուցանին նենգաւորութիւնք և անկարգութիւնք ի մէջ հայոց գտանեցեալ ոմանց կարգաւորաց: -264-327 Գլուխ Զ. Յորդորակ առ ազգս հայոց, արիանալ ի յուսումն գրոց, ի տանիլ համբերութեամբ զպէսպէս փորձութիւնս վասն հաւատոց, ի մտի ունիլ զՍուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր և զնորին Աթոռն Սուրբ Էջմիածին… -328 [Չափածոյ] -Կանօն ճշմարիտ ազինըս հայոց: - 329-374 Գլուխ Է. Յորում ծանուցանի զհարկաւորութենէ բարեգործութեանց՝ որք են կեանք և հոգի ճշմարիտ հաւատոյն: -374-376 [Չափածոյ] Նոր թուղթ՝ նոր գիր՝ նոր տպարան… -377-383 Առ յեզր գրոցս, համառօտ իմն ազդարարութիւն յաղագս որպիսաբար տպեցման սորին. և Յիշատակարան տպեցուցչաց և տպողացն:

«Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 516-518

8. (759) ԺԱՄԱԳԻՐՔ: Ս. Էջմիածին, տպ. Գրիգոր Լուսաւորչի, 1785:

Ա ՏԻՏՂԹ. Գիրք ժամակարգութեանց Սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց. և կարգաւորութեան Սաղմոսացն Դաւթի մարգարէին

Արարարեալ Սրբոց Թարգմանչաց և Հայրապետացն մերոց ի փառս Ամենասրբոյ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, որ է օրինեալ յաւիտեան: Ամէն:

Բ. ՏԻՏՂԹ.՝ ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ. ՅՈՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿԻՆ ԵՐԵՔ ԳԻՐՔ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՄԵՐՈՅ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՑՆ:

Նախ՝ Գիրք Սաղմոսացն Դաւթի՝ հարիւր և յիսուն Ալէլուիցն. յութ կանոնս բաժանեալ և յեօթնական Գուբղայս: Զի ութերրորդքն յայլոց են:

Երկրորդ՝ Ժամագիրքն, յորում են կարգաւորութիւնք հասարակաց Աղօթից Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ: Արարեալ մեծին Իսահակայ Պարթևի՝ հայոց Հայրապետի և Մեսրոպայ Վարդապետի, և Գիւտայ և Յօհաննու Մանդակունւոյ:

Երրորդ՝ Տօնացոյցն Հայոց, որ ցուցանէ զպատշաճ երգեցմունս և զընթերցուածս տօնից Տէրունականաց, և Սրբոցն և Պահոց: Ըստ արարողութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ: Արարեալ նոյնոյ Իսահակայ Մեծի՝ հայոց Հայրապետի:

Եւ ապա՝ համառօտ խրատ արարողութեանց սուրբ Եկեղեցւոյս հայոց ժամակարգութեանցն՝ թէ որն յոր դասէ պարտի ասիլ և այլն:

Վերստին տպեցեալ ի յԱստուածակերտ և ի Լուսակառոյց Աթոռս Սուրբ Էջմիածին:

Ի Հայրապետութեան, և հրամանաւ իսկ Տեառն Ղուկասու Սրբազան և Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց: Եւ ի Պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի փրկառիթ տնօրինական Տեղեացն՝ և մեծի մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ՝ Տեառն Յովակիմայ և Տեառն Զաքարիա Աստուածիմաստ վարդապետացն:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՄԵՐՈՅ:

426 երկսյուն, զարդափակ էջ: Քառաձալ, մամուլանիշերը հայատառ: Շարվ. չափը23 x 16,5 սմ: Տիտղթ. լրիվ խորանի մեջ: Լուսանցանիշերով: Գլխազարդեր, վերջազարդեր, լուսանցազարդեր և զարդագրեր: Բնագիրը 12 կետաչափի բոլորագրով, օգտագործված են նաև գլխագրեր և նոտրգիր:

Պատկերագրութիւն. Ա ՏԻՏՂԹ.՝ Բ ՏԻՏՂԹ., էջ 99, Գ ՏԻՏՂԹ.՝ էջ 236 (էջը չորս կողմից շրջանակուած Ս. Երրորդութեան, Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների, Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի, Տ Գիւտ և Ս. Յօհան Մանդակունու և Ս. Էջմիածնի հիմնարկեքի պատկերներով), Ս. Ծնունդ՝ էջ 4, 244, Սուրբ Երրորդութիւն՝ էջ 104, 182, Երեք մանկունքն ի հնոցին՝ էջ 146, Ս. Յարութիւն՝ էջ 172, 272, Հոգեգալուստ՝ էջ 179, Խաչելութիւն՝ էջ 186, Բարի Սամարացին՝ էջ 202, Հաւալուսնը ձագերի հետ՝ էջ 409

Կիսախորան՝ էջ 5, էջ 105 (ներսում՝ Գառն պատարագեալ), էջ 245, 341

Ճակատազարդ՝ էջ 16, 27, 40, 50, 63, 74, 85, 100, 133, 138, 147, 173, 179, 189, 202, 209, 212, 224, 251, 255, 261, 272 (Քրիստոսի օրհնութեամբ պարզուած Աջով), 276, 283, 286, 290, 295, 298, 299, 301 (Քրիստոսի պատկերով), 303, 307 (Տիրամօր պատկերով), 312, 313, 318, 323, 327, 330, 335, 417:

Լուսանցային նկարներ. Եկեղեցի՝ էջ 11, 94, 327: Յովնան մարգարէն ի փոր կիտին՝ էջ 84, Միքայէլ հրեշտակապետ՝ էջ 325:

ԲՈՎԱՆԴ.՝ էջ 4 [Ս. Ծննդեան պատկերի ներքոյ 6 տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Ի տեսողէն Դաւիթ ընտրեալ: -5-15 Գիրք Սաղմոսաց Երջանիկ Մարգարէին Դաւթի: Սաղմոս Ա-ԺԷ:- Երանեալ է այր որ: -16-27 Ի կատարած Սաղմոս Դաւթի. ԺԸ-ԼԵ: -27-39 Ի կատարած Սաղմոս Դաւթի. ԼԶ-ԾԴ: -40-50

Ի կատարած վասն ժողովրդեանն, որք ի սրբութեանց հեռացեալք էին: Դաւթի արձանագիր. Ի ժամանակի յորժամ կալան զնա այլազգիքն ի Գէթ. ՃԵ-ՀԱ: -50-62 Սաղմոս Ասափայ. ՀԲ-ՁԸ – Իբրև զի բարի է Իսրայէլի Աստուած: -63-73 Աղօթք Մովսէսի առն Աստուծոյ. ՁԹ-ՃԵ – Տէր ապաւէն եղեր մեր յազգէ: - 74-85 Ալէլուիա. ՃՋ-ՃԺԸ – Խոստովան եղերուք Տեառն:-85-96 Օրհնութիւն Աստիճանաց. ՃԺԹ-ՃՃ- Ի նեղութեան իմում:

- 99 Խորագիր՝ Ժամագիրք որ է Կարգաւորութիւն հասարակական Աղօթից և ժամերգութեան Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ: Արարեալ և հաստատեալ սրբոց Թարգմանչաց և Հայրապետացն մերոց՝ Իսահակայ և Մեսրոպայ,Գիւտայ և Յօհաննու Մանդակունւոյ, և այլոց Հոգելից Վարդապետացն սրբոց. ի փառս Ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, օրհնեցելոյն յաւիտեանս յաւիտենից: -100-102 Հրաժարումն: - 104 [Ս. Երրորդութեան պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Սուրբ Երրորդութիւն անբաժանելի:-105-146 Կարգաւորութիւն Հասարակաց Աղօթից Հայաստանեայց Եկեղեցւոյ: Որ կատարի ի մէջ գիշերի ի դէմս Հօր Աստուծոյ- Տէր եթէ զշրթունս իմ բանաս: - 146 [Երեք մանկունքն ի հնոցին նկարի ներքոյ բանաստեղծութիւն հետևեալ սկսուածքով] - Երից մանկանց Բաբիլոնին: -147-172Կարգաւորութիւն Հասարակաց Աղօթից առաւօտու ժամուն: Որ կատարի իդէմս Որդւոյն Աստուծոյ, որ երեւեցաւ իւղաբերիցն -Լցաք առաւօտու ողորմութեամբ Քով: - 172 [Ս. Յարութեան պատկերի ներքոյ գտնուող բանաստեղծութիւն հետևեալ սկսուածքով] – Որ ինքնիշխան կամաւ մեռեալ: -173-179 Կարգաւորութիւն Հասարակաց Աղօթից Արևագալի ժամուն: Որ կատարի ի դէմս Հոգւոյն Սրբոյ: Այլև ի դէմս յարութեանն Քրիստոսի և երևման աշակերտացն -Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան: - 179 [Հոգեգալստեան պատկերի ներքոյ բանաստեղծութիւն հետևեալ սկսուածքով] – Աստուած Հոգիդ կենդանանար: - 179-182 Կարգաւորութիւն Հասարակաց Աղօթից Երրորդ ժամուն:Որ կատարի իդէմս իջման Հոգւոյն Սրբոյ. Եւ ի դէմս նախամօրն ճաշակման և ազատութեան Քրիստոսիւ -Օրհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ: Ամէն: -182-185 Կարգաւորութիւն Հասարակաց Աղօթից Վեցերորդ ժամուն: Որ կատարի ի դէմս Հօր Աստուծոյ: Այլև ի դէմս չարչարանաց և խաչելութեան Որդւոյն Աստուծոյ- Օրհնեալ Հայր Սուրբ Աստուած ճշմարիտ. Ամէն: -186-189 Կարգաւորութիւն Հասարակաց Աղօթից Իններորդ ժամուն: Որ կատարի իդէմս Որդւոյն Աստուծոյ: Այլ և մահուանն և բանական հոգւոյն աւանդմանն -Օրհնեալ Որդիդ Սուրբ Աստուած ճշմարիտ: -189-201 Ժամամուտք ըստ կարգի Աւուրց՝ Պահոց, Տօնից Տէրունականաց և ամենայն Սրբոց: - 202 [Բարի Սամարացու պատկերի ներքոյ բանաստեղծութիւն հետևեալ սկսուածքով]- Որ ի նախնումն գրով ցուցեր: - 202-211 Կարգաւորութիւն Հասարակաց Աղօթից Երեկոյի ժամուն: Որ կատարի ի դէմս Որդւոյն Աստուծոյ, որ էջ ի խաչէն և պատեալ պաստառակալաւ եդաւ ի գերեզմանի – Ես առ Աստուած կարդացի:-212-224 Կարգաւորութիւն Հասարակաց Աղօթից Խաղաղականի ժամուն: Որ կատարի ի դէմս Հոգւոյն Աստուծոյ: Այլ և ի դէմս Բանին Աստուծոյ, որ եդաւ ի գերեզմանի՝ և էջ ի դժոխս, և խաղաղութիւն արար հոգւոցն -Օրհնեցից զՏէր

յամենայն ժամ: - 224-232 Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հանգստեան ժամուն: Որ կատարի ի դէմս Հօր Աստուծոյ, զի պահպանողական Աջով Միածնին պահեսցէ զմեզ ի խաւարային գիշերի – Առաքեա Տէր զլոյս Քո:

-235 Խորագիր՝ Տօնացոյց: Նախապէս կարգեալ և սահմանեալ Սրբոյն Իսահակայ Պարթևի Հայրապետին հայոց, ըստ աւանդութեան Հայաստանեայցս սրբոյ Եկեղեցւոյ: Եւ ապա վերստին նորոգմամբ ի յերկուս հատորս բաժանեցեալ: Աշխատասիրութեամբ Տեառն Սիմէօնի Յոգնաջան և Սրբազան Կաթուղիկոսին ամենայն Հայոց: - 236-242 Յառաջաբանութիւն վերանորոգողի գրքոյս Տեառն Սիմէօնի սրբազան Կաթուղիկոսին: - 242 Առ ի ծանուցանել զդժուարութիւն գործոյս եդաւ ոտանաւորս այս – Է կարի մեծ ըսքանչելի:

- 243 Խորագիր՝ Տօնացոյց. Առաջին Հատոր: Որ ունի զամենայն Տօնս և զՊահս Սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց հանդերձ պատճէիւքն իւրեանց: Եւ ցուցանէ զԱնշարժսն զՇարժականսն ըստ կանոնի Առաջնոյ Տօնացուցին մերոյ -Օգնեա Հոգիդ Սուրբ Աստուած և զսկսեալս մեր խաղաղութեամբ հասո յաւարտ: - 244 [Ս. Ծննդեան փորագրանկարի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Որ ի Կուսէն այսօր ծընար Փրկիչ մարդկան:-245-251 Կանօն Ծննդեան և Յայտնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ -Աստուածայայտնութեան գիշերին հսկումն է: -251-255 Կանօն Քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի Տաճարն - Իսկ զտօն Քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի: - 255 - [Բուն Բարեկենդան] – Ի բուն Բարեկենդանին: -261-272 Կանօն Գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւանակաւ յԵրուսաղէմ -Ծաղկազարդ կիրակէ. Ի գիշերին հսկումն է: - 272 [Սուրբ Յարութեան մէկսիւնեայ նկարի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Որ ինքնիշխան կամաւ մեռեալ այսօր յարեար: -272-286 Կանօն Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի –Զատիկ Կիւրակէ, Ի գիշերին հսկումն է: -286-289 Կանօն սրբոյ Համբարձմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ –Հինգշաբաթ՝ օր համբարձմանն Քրիստոսի ի յերկինս: -290-295 Կանօն Հոգւոյն Սրբոյ Գալստեանն: –Հոգւոյն Սրբոյ Գալստեան կիրակէ: -295-301 Կանօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելմանն ի վիրապէն-301-307 Կանօն Պայծառակերպութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի Թաբօր լերինն –Վարդավառ Կիւրակէ. Ի գիշերին հսկումն է: -307 Կանօն Սրբոյ Շողակաթին, այսինքն՝ Սրբոյ Էջմիածնի -Շաբաթ տօն է Շողակաթին Սրբոյ Էջմիածնի: -307-312 Կանօն Վերափոխման Սուրբ Աստուածածնին –– Սուրբ Աստուածածնի վերափոխման Կիրակէ: -312-313 Կանօն Ծննդեան Սուրբ կուսին- Իսկ տօն ծննդեան սրբուհւոյ կուսին Մարիամու: -313-318 Կանօն Վերացման Սրբոյ Խաչին –Սրբոյ Խաչին վերացման կիւրակէ: - 318-335 [Տօն Վարագայ Սրբոյ խաչի] – Երրորդ կիւրակէ զկնի Սրբոյ Խաչին:-335-336 Կանօն Ճրագալուցի Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի –Իսկ ի յԱստուածայայտնութեան Ճրագալուցի: - 336-338 Վասն բաց մնալոյ թղթոյս եդաք զաղիւսակս զայս վասն ձայնագիւտի, որ կարի հարկաւոր է Տօնացուցիս: - 337-338 – Սակաւ ինչ յառաջաբանութիւն վասն Երկրորդ հատորի Տօնացուցիս ի նոյնոյ Սիմէօնէ Սրբազան Կաթուղիկոսէ յօրինողէ սորին – Գիտեա աստանօր նախապէս:

-339 Խորագիր՝ Տօնացոյց. Երկրորդ Հատոր. Որ է Քանօն և կառավարիչ առաջնոյ հատորին: Յօրինեցեալ ԼՋ [36] խորանօք ի վերայ ԼՋ [36] գրոցն մերոց այբուբենականաց, որոց իւրաքանչիւր Տարեգրոյ խորան ըստ բերման իւրոյ տարւոյն, զամենայն շարժական և տեղափոփոխ տօնսն՝ կանօնաւորեալ տեղաւորէ: Զմարտիրոսաց, Պահոց և Յարութեան հարցիցն՝ և Կիւրակէից Համբարձեացն՝ Ամսաթուոց և Աւուր ձայնից կարգսն պահելով անտարակոյս ցուցանէ հանդերձ շարժական միջոցից որքանութեամբքն՝ մշտնջենաւորապէս և դիւրին ճանապարհաւ: Ի փառս Աստուծոյ և ի զուարճութիւն Մանկանց Եկեղեցւոյ: -341-409 Գիր տարւոյն, Եօթներեակ Հռօմայեցւոց 4: - 409 Վասն դատարկութեան տեղւոյն եդաւ – Երբ վճարես դու զիին տարին: -410-411 Խրատ վասն առաջակայ Աղիւսակաձև Շրջանիդ: -412-416 Վերջաբանութիւն Տօնացուցիս, և իբրու Կտակ արարողի սորին առ մերազնեայս: - 416-417 Խրատք յաղագս Պաշտամանց եկեղեցեաց Հայաստանեայց. Արարեալ ի սուրբ վարդապետէն Թովմայէ Մեծոբեցւոյ ի պայծառութիւն կարգաց եկեղեցւոյ: - 417-424 Կարգաւորութիւն Եկեղեցւոյ և Արարողութիւն Ժամատեղեաց Տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի, որ ետ բերել ի սուրբ և ի հռչակաւոր, աստուածաբնակ և հրեշտակակրօն Սուրբ Հարցն Մեծ ուխտին Մաքենեաց: -425-426 Յիշատակարան Տպեցման և Տպողաց Սուրբ Գրոցս:

«Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 571-573

9. (800) ՅՈՎՍԵՊՈՍ ՓԼԱԲԻՈՍ: ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀՐէԻՑ ԸՆԴ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ: Թարգմ. Ստեփանոս Լեհացու: Ս. Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսաւորչի, 1787:

Ա ՏԻՏՂԹ.՝ ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ Յովսեպոսի Երբայեցւոյ արարեալ Յաղագս պատերազմի Հրէից ընդ Հռովմայեցիս, և աւերման Երուսաղէմի: Թարգմանեալ ի լատինացւոց բարբառոյ ի Հայոց լեզու, ի ձեռն ուրումն Իլովացւոյ Ստեփաննոսի բանին Աստուծոյ սպասաւորի: Ի փառս Քրիստոսի Աստուծոյ յուսոյն բնաւից:

Բ ՏԻՏՂԹ.՝ ՊԱՏՄԱԳԻՐՔ ԱՐԱՐԵԱԼ ՅՈՎՍԵՊՈՍԻ Եբրայեցւոյ Յաղագս պատերազմին Հրէից ընդ Հռօմայեցիս, և աւերմանն Երուսաղէմի և Տաճարին հնոյ: Թարգմանեալ ի լատինացւոց բարբառոյ ի մեր լեզու, աշխատասիրութեամբ երջանկակրօն Միաբանի Քրիստոսասէջ սրբոյ գահիս Տեառն Ստեփաննոսի գերիմաստ Վարդապետի Իլովացւոյ, քաջահմուտ և հարազատ թարգմանչի, ի թուականութեան մերում, ՌՃՌ [1109]: Իսկ նարդենիս տպագրութեամբ ի լոյս ածեցեալ ի ստոյգ ձեռագրէ նոյնոյ Թարգմանչին ի Լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածին, վեհափառ հրամանաւ Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսին ամենայն Հայոց, ի յեօթներորդում ամի Հայրապետութեան նորին: Եւ ի Պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ, տեառն Յովակիմայ և տեառն Զաքարիայ Աստուածիմաստ Վարդապետաց և Արհի Եպիսկոպոսացն:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՄԵՐՈՅ:

Ի թուոջ Փրկչին 1787. և ի մերում թուականիս, ՌՄԼՋ [1236]:

496 զարդափակ էջ, 12-րդ էջը չտպագրված: Քառածալ, մամուլանիշերը հայատառ: Շարվ. չափը 18,9 x 13,4 սմ: Ա տիտղթ. խորանի մեջ, Բ տիտղթ. զարդափակ: Գլխազարդեր, վերջազարդեր, լուսանցազարդեր և զարդագրեր: Բնագիրը 12 կետաչափի բոլորագրով, օգտագործված են նաև գլխագրեր և նոտրգիր:

Ճակատազարդ՝ էջ 5, 13, 124, 215, 269, 302, 337, 399, 445

ԲՈՎԱՆԴ.՝ Էջ -5-10 Յառաջաբանութիւն Հեղինակի գրոցս - Վասնզի պատերազմն, զոր հրէայք ետուն ընդ հռովմայեցիս: -11 Ցանգ Առաջին դպրութեան պատմութեան Յովսեփոսի: -13-122 Առաջին դպրութեան պատմութեան, Ճառ Ա - Յաղագս թէ ո՛րպէս Անտիոքոս զԵրուսաղէմ հրձիգ արար, և թէ զի՛նչ գործեաց: -122-123 Ցանկ Երկրորդ Դպրութեան Պատմութեան Յովսեփոսի: -124-213 Դպրութիւն Երկրորդ Պատմութեան Հրէից: Գլուխ Առաջին. Ա- Յաղագս յաջորդացն Հերովդէի, և վրէժխնդրութեան աւերեալ ոսկի արծուոյն: -214 Ցանգ Երրորդ դպրութեան Պատմութեան Յովսեփոսի: -215-268 Դպրութիւն Երրորդ Պատմութեան հրէից: Գլուխ Առաջին. Ա- Յաղագս գալստեան Վեսպիանոսի զօրավարի, և կրկին հարուածոցն հրէից: – 268 Ցանգ Չորրորդ դպրութեան Պատմութեան Յովսեփոսի: --269-301 Չորրորդ Դպրութիւն Պատմութեան հրէից: Առաջին ճառ. Ա- Յաղագս պաշարման գամաղեցւոց: -301-302 Ցանգ ՀինգերորդԴպրութեան Պատմութեան Յովսեփոսի: -302-335 Հինգերորդ Դպրութիւն Պատմութեան Հրէից: Ճառ Առաջին. Ա- Յաղագս միւս հարուածոյն հրէից, և դարձի եդովայեցւոցն, և անգթութիւն նախանձայուզացն -336 Ցանգ Վեցերորդ Դպրութեան Պատմութեան Յովսեպոսի: -337-398 Վեցերորդ Դպրութիւն Պատմութեան Հրէիցն: Ճառ Առաջին Ա- Յաղագս երից խռովութեանցն ի քաղաքին Երուսաղէմացւոց: -398 Ցանգ Եօթներորդ Դպրութեան Պատմութեան Յովսեպոսի: -399-444 Եօթներորդ դպրութիւն Պատմութեան Հրէից, արարեալ ի Յովսեպոսէ: Առաջին ճառ. Ա- Թէ ո՛րպէս պարիսպքն նգախարխար եղեն, և պատնէշքն այրեցան, և վասն նահատակութեան Սաբինոսի զինաւորին: - 444 Ցանգ Ութերորդ Դպրութեան Պատմութեան Յովսեպոսի: -445-488 Ութերորդ Դպրութիւն Պատմութեան Հրէից, արարեալ ի Յովսեպոսէ - Ճառ Ա- Յաղագս պարգևաց զօրացն: - 488-489 Յիշատակարան թարգմանողի Պատմութեան Յովսեպոսի Եբրայեցւոյ. ԺԵ: - 489-491 Նորին Ստեփաննոսի վարդապետի Իլովացւոյ ժողովեալ ի Յովսեպոսէ յաղագս քահանայապետից ազգին հրէից: ԺԶ: -491 Յիշատակարան Յօհաննու վարդապետին Կարճաւանցւոյ, որ եդաւ աստ ի վկայութիւն ստուգութեան հեղինակին գրքոյս: -492-496 Բան առ ընթերցօղս և Յիշատակարան տպեցման գրքոյս:

«Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 596-601

10. (801) ՍԱՂՄՈՍԱՐԱՆ:Ս. Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսաւորչի, 1787:

ՏԻՏՂԹ.՝ ՍԱՂՄՈՍ Դաւթի: Որ և կոչի ՍԱՂՄՈՍԱՐԱՆ: Տպագրեցեալ ի Մեծի Աթոռոջ Սրբոյ Էջմիածնի, հրամանաւ Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսի Ամենայն Հայոց ի թուոջ մերում, ՌՄԼՋ [1236]: Ի տպարանի սուրբ Լուսաւորչին:

418 զարդափակ էջ: Ութածալ, մամուլանիշերը հայատառ: Շարվ. չափը

շրջանակով՝ 13 x 7,5 սմ: Տիտղթ. խորանի մեջ: 2-րդ էջի պատկերի վրա փորագրողի անվան սկզբնատառերը՝ ԱԲ, 326-րդ էջի պատկերի վրա՝ ՅԱՈՒԹ (Յարութիւն): Գլխազարդեր, վերջազարդեր, լուսանցազարդեր և զարդագրեր: Բնագիրը 10 կետաչափի բոլորագրով, օգտագործված են նաև նոտրգիր և գլխագրեր:

Փորագրապատկեր՝ Տիտղոսաթերթ. [Շրջանակուած Ս. Էջմիածնի, Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների և Դաւթի ու Սաւուղի պատկերներով], Դաւիթ մարգարէ՝ էջ 2, Սուրբ Երրորդութիւն՝ էջ 44, Աւետումն՝ էջ 90, Ս. Ծնունդ՝ էջ 140, Խաչելութիւն՝ էջ 184, Ս. Յարութիւն՝ էջ 236, Համբարձում՝ էջ 280, Հոգեգալուստ՝ էջ 326

Կիսախորան՝ էջ 3

Ճակատազարդ՝ էջ 45 [Սուրբ Հոգու իջման պատկերով], 141, 185 [Տիրամայրը մանկան հետ պատկերով]. 237, 281, 327, 371, 377, 384, 388, 395

ԲՈՎԱՆԴԱԿ.՝ էջ 2 [Դաւիթ մարգարէի փորագրապատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Ձեռք իմ արարին զՍաղմոսարան: -3-43 Սաղմոս Դաւթի. Ա-ԺԷ-Երանեալ է այր: -44 [Սուրբ Երրորդութեան պատկերի ներքոյ Դաւթի ԼԲ (32) սաղմոսի Դ տողը] -45-89 -Ի կատարած Սաղմոս Դաւթի. ԺԸ-ԼԵ –Երկինք պատմեն զփառս Աստուծոյ: -89-90 [Աւետման նկարի ներքո չորս տող Դաւթի ԽԴ (44) սաղմոսից]- 91-139 Սաղմոս Դաւթի ԼԶ-ՃԴ: Մի նախանձիր ընդ չարս: -140 [Ս. Ծննդեան պատկերի ներքոյ Դավթի ՀԱ [51] սաղմոսի Ժ տողը] -141-183 Ի կատարած վասն ժողովրդեանն, որք ի սրբութեանց հեռացեալք էին: Դաւթի արձանագիր ի ժամանակի, զի կալան զնա այլազգիքն ի Գէթ. ՃԵ-ՀԱ- Ողորմեաց ինձ Աստուած: -184 [Խաչելութեան պատկերի ներքոյ Դաւթի ՁԵ [85] սաղմոսի ԺԳ տողը]: -185-235 Սաղմոս Ասափայ. ՀԲ-ՁԸ-Իբրև զի բարի է Իսրայէլի Աստուած: -236 [Ս. Յարութեան պատկերի ներքոյ Դաւթի ՃԱ [101] սաղմոսի ԺԲ տողը] -237-279 Աղօթք Մովսէսի առն Աստուծոյ. [Սաղմոս] ՁԹ-ՃԵ-Տէր ապաւէն եղեր մեր: -280 [Համբարձման պատկերի ներքոյ Դաւթի ՃԷ [107] սաղմոսի Ե տողը] -281-325Ալէլուիայ. [Սաղմոս] ՃՋ-ՃԺԸ – Խոստովան եղերուք Տեառն: -326 [Հոգեգալստեան պատկերի ներքոյ Դաւթի ՃԽԲ [152] սաղմոսի ԺԲ տողը]: -327-383 Օրհնութիւն աստիճանաց. [Սաղմոս] ՃԺԹ-ՃԾ – Ի նեղութեան իմում: - 384-388 Աղօթք Մանասէի թագաւորին –Տէր ամենակալ Աստուած Աբրահամու: -388-390 Մաղթանք զօրաւորք ընդդէմ արհաւիրաց գիշերայնոց. Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ: Բան ԺԲ –Ընկալ քաղցրութեամբ Տէր Աստուած -391-393 Նորին սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ: Բան ՂԳ –Աստուած յաւիտենական, բարերար և ամենակալ: -393-394 Նորին սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ: Բան ԽԱ –Որդի Աստուծոյ կենդանւոյ -395-402 Աղօթք իւրաքանչիւր անձին հաւատացելոյ ի Քրիստոս: Արարեալ Տեառն Ներսէսի Շնորհալւոյ՝ Հայոց Կաթուղիկոսի –Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ-403-404 Խրատ վասն առաջիկայ Տօմարական աղիւսակացդ: -405-415 Տօմարական աղիւսակներ: -416-418 Յիշատակարան:

«Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 601

11. (815) ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ: Ս. Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսաւորչի, 1788:

ՏԻՏՂԹ.՝ ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ. Ըստ Արարողութեան Սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց: Տպագրեցեալ ի Քրիստոսահիմն և ի Լուսանկար Աթոռոջ Սրբոյ Էջմիածնի: Հրամանաւ Տեառն Ղուկասու Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց: Յամի մարդեղութեան Փրկչին, ՌՉՁԸ [1788]: Եւ ի թուականիս Հայոց, ՌՄԼԷ [1237]:

ԼԵ (35) երկսյուն, զարդափակ էջ: Քառածալ, մամուլանիշերը հայատառ: Շարվ. չափը շրջանակով՝ 23 x 16 սմ: Տիտղթ. զարդափակ: Գլխազարդեր, վերջազարդեր, զարդագրեր և լուսանցազարդեր: Բնագիրը մոտ 16 կետաչափի բոլորագրով, օգտագործված են նաև մոտ 10 կետաչափի բոլորագիր և գլխագրեր:

Փորագրապատկեր՝ Տիտղոսաթերթ տե՛ս հմր. նկարագրութիւնը, Խաչելութիւն՝ էջ Դ, Արարատը՝ Ս. Էջմիածնի և Նոյեան տապանի հետ՝ էջ ԼԴ

Լուսանցապատկեր. Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը՝ էջ ԻԳ:

Կիսախորան՝ էջ Ե

Ճակատազարդ՝ էջ Բ

ԲՈՎԱՆԴ.՝ էջ Բ-Գ Օրէնք արկանելոյ սպաս եկեղեցւոյ: Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել: - Դ [Խաչելութեան պատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևևալ սկսուածքով] –Քրիստոս գառն անմեղ: -Ե-Ը Աղօթք առանձնական պատարագիչ քահանային յառաջ քան զգեստաւորիլն – Որ զգեցեալ ես զլոյս: -Թ-ԻԲ Իսկ թէ եպիկոպոս լինիցի խորհրդածուն: -ԻԳ-ԼԳ Եւ կացեալ սարկաւագն առընթեր քահանային… ասելով ի ծածուկ – Որով զհացս օրհնեալ: -ԼԴ Եւ քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն և ասասցէ բարձր – Օրհնեալք եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն: -ԼԴ-ԼԵ Յիշատակարան:

«Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 612

12. (835) ՇԱՐԱԿՆՈՑ: Ս. Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսաւորչի, 1789:

Ա ՏԻՏՂԹ.՝ ՇԱՐԱԿՆՈՑ. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԳԵՑՄՈՒՆՔ հոգևորականք.

Աստուածայնոց և երջանկաց սրբոց Վարդապետաց մերոց Թարգմանչաց, զԿարգաւորութիւնս Եկեղեցւոյ Վայելչացուցանողաց:

Բ ՏԻՏՂԹ.՝ ՏՊԱԳՐԵՑԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ. Ի Հայրապետութեան, և հրամանաւ իսկ՝ Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսի Ամենայն Հայոց:

Եւ ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ՝ Տեառն Յովակիմայ և Տեառն Զաքարիայ արհի Եպիսկոպոսաց:

Յամի Քրիստոսի Փրկչին մերոյ, ՌՉՁԹ [1789]: Եւ ի թուականիս հայոց, ՌՄԼԸ [1238]: Ծախիւք ջուղայեցի Գէրաքեանց Յակոբեան բարեպաշտ Յոհանջան աղային՝ բնակեցելոյ ի Սուրաթ քաղաքի:

895 զարդափակ էջ: Ութածալ, մամուլանիշերը հայատառ: Շարվ. չափը շրջանակով՝ 12,5 x 8 սմ: Ա տիտղթ. պատկերազարդ խորանի մեջ, Բ տիտղթ. զարդափակ: Լուսանցանիշերով և երաժշտական խազերով: 27 փորագիր

պատկեր: Գլխազարդեր, վերջազարդեր, լուսանցազարդեր և զարդագրեր: Բնագիրը 12 կետաչափի բոլորագրով, օգտագործված են նաև գլխագրեր և նոտրգիր:

Զարդանկարչութիւն. Փորագրապատկերներ՝ Տիտղոսաթերթ (Ս. Էջմիածնի, Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների և Դաւթի ու Սաւուղի պատկերներով)՝ էջ 1, Ծնունդ Մարիամու՝ էջ 6, Աւետումն՝ էջ 20, Տիրամայրը Մանկան հետ՝ էջ 28, Հաւալուսնը ձագերի հետ՝ էջ 33, Ս. Ծնունդ՝ էջ 34, Մկրտութիւն՝ էջ 65, Տիրամայրը Մանկան հետ՝ 12 առաքինութիւնները ներկայացնող շրջանակներով՝ էջ 71, Տեառնընդառաջ՝ էջ 84, Ադամ եւ Եւայ ի մէջ դրախտին՝ էջ 136, Գրիգոր Լուսաւորիչը չարչարանքների պատկերներով՝ էջ 226, Յարութիւնն Ղազարու՝ էջ 258, Մուտքն յԵրուսաղէմ՝ էջ 264, Խաչելութիւն՝ էջ 290, 548, Խաչից իջեցումն՝ էջ 314, Արարատը Ս. Էջմիածնի և Նոյեան տապանի հետ միասին՝ էջ 321, Ս. Յարութիւն՝ էջ 322, Համբարձումն՝ էջ 402, Հոգեգալուստն՝ էջ 430, «Ահա Գառն Աստուծոյ»՝ էջ 458, Մկրտութիւն Արածանիի ափին՝ էջ 473, Ս. Հռիփսիմէ և Ս. Գայանէ՝ էջ 490, Պայծառակերպութիւն՝ էջ 510, Ս. Էջմիածնի հիմնարկումն՝ էջ 525, Վերափոխումն՝ էջ 530, Սուրբ Երրորդութիւն և Գաբրիէլ ու Միքայէլ Հրեշտակապետերը՝ էջ 609, Աստուածային աթոռի առջև՝ էջ 686, Ահեղ Դատաստան՝ էջ 736, Թովմայի անհաւատութիւնը՝ էջ 800

Լուսանցապատկերներ՝ Հուշկապարիկ՝ էջ 14, 94, 366, Տաճարի մանրակերտ՝ էջ 85,ծաղկած սիւն՝ էջ 90, 284, 431, 505, 556, 563, 652, Դաւիթ մարգարէն և Յակոբոս առաքեալը՝ էջ 99, Ս. Ստեփաննոս Նախավկան՝ էջ 102, Տաճարի զանգակատուն՝ էջ 108, 227, Յունան մարգարէն ի փոր կիտի՝ էջ 129, Յովհաննէս Մկրտիչ՝ էջ 337, 469, Մծբնայ Յակոբ հայրապետ՝ էջ 600, Միքայէլ հրեշտակապետ՝ էջ 610:

Կիսախորան՝ էջ 7, 323 (Գառն պատարագեալ նշանով), 323:

Ճակատազարդ՝ էջ 29 (Տիրամօր և խաչը ուսած մանուկ Յիսուսի պատկերով), 137, 687 (Քրիստոսի օրհնութեամբ), 151, 165, 210, 242, 259, 319, 431, 531 (Տիրամօր պատկերով), 549(Ս. Խաչի պատկերով), 801, 855

ԲՈՎԱՆԴ.՝ էջ 3-5 Նշանակութիւն Երգողացն զՇարականս -Որք զծորանս Հոգւոյն արբին: -5 [Չափածոյ] - Ամենակալ Տէր մեծանուն: -6 [Տիրամօր ծննդեան պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Ի Յովակիմայ և ի յԱննայէ: -7-19 Կանօն Հրաշափառ Ծննդեան Տիրուհւոյ Կուսին Մարիամու ի Յովակիմայ և յԱննայէ: Ա – Երգեցէք որդիք Սիօնի: - 20 [Աւետման նկարի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Ցնծա Մարիամ՝ յողջոյն հրեշտակին: -21-27 Կանօն Աւետեաց Աստուածածնին. Օրինութիւն ԱԿ. (Գ) – Խորհուրդն անճառ: -28 [Տիրամայրը Մանկան հետ նկարի ներքոյ վեց տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Թագուհի երկնից Սուրբ Կոյս աննման: -29-33 Կանոն Աստուածայայտնութեան ճրագալուցին. Օրինութիւն ԲՁ (Դ) –Ուրախացիր Սրբուհի: -34 [Սուրբ Ծննդեան պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Նախայաւիտեան Ծնունդն ի Հօրէ: -35-64 Կանօն Ծննդեանն Քրիստոսի. Առաջնոյ աւուր: Օրինութիւն ԴԿ

(Ե) –Խորհուրդ մեծ եւ սքանչելի: -65 [Յորդանանում մկրտութեան պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Տէրն ի ծառայէն ի գետ Մըկըրտի: -66 -70 Կանօն Ութերորդի աւուրն. Օրի. ԴՁ (ԺԲ) –Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար: -71 [Տիրամայրը Մանկան հետ պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Սուրբ Աստուածածին Տէրունեան տաճար: -72-83 Մեծացուսցէք Յարութեան Տեառն. ԱՁ (ԺԳ) –Յանճառ փառաց: -84 [Տեառնընդառաջի պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Հինաւուրցն Աստուած մանուկ երևեալ: -85 – 135 Կանօն քառասնօրեայ Գալստեան Տեառն ի տաճարն. Օրինութիւն (ԺԴ) –Մարմնացեալդ ի Կուսէն: -136 [Ադամն ու Եւան դրախտում պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Ադամ եւ Եւայ ձեռամբ Տեառն հաստեալ: -137-225 Կանօն Բուն Բարեկենդանին. Օրի. ԴԿ (ԻԴ)-Բանն որ ընդ Հօր. -226 [Գրիգոր Լուսաւորչի. պատկերի ներքոյ] –Ով Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց, հայր հաւատոյ: -227-257 Ի հինգերորդում շաբաթի աւուր. Կանօն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի. Օրինութիւն ԳԿ (ԼԷ)-Այսօր զուարճացեալ: -258 [Ղազարու յարութեան պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Կենարարն Յիսուս առ Ղազար ձայնէ: -259-263 Կանօն Յարութեանն Ղազարու Օրի. ԱՁ (Խ) –Այսօր գոլով ի Բեթանիա: -264- [Մուտքն յԵրուսաղէմ պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Փառաց թագաւորն ի Քրօբէս բազմեալ:-265 -289 Կանօն Ծաղկազարդի Կիրակէին աւուր Գալստեան Տեառն յԵրուսաղէմ. Օրի. ԱՁ (ԽԱ) – Որ վերօրինիս: -290 [Խաչելութեան պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Անչարչարելի Բանն Հօր վասըն մեր: - 291-313 Կանօն Մեծի Ուրբաթուն. Օրի. ԴՁ (ԽՋ) – Այսօր ի կատարումն: -314 [Խաչից իջեցման նկարի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Որ կենդանութիւն շնորհէ եղելոց: -315- 321 Կանօն Մեծի Շաբաթուն թաղման Տեառն Յիսուսի. Օրինութիւն. ԲՁ (ԽԸ) –Պարգևատուն ամենեցուն: -322 [Ս. Յարութեան պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով]-Լուսասփիւռ հրաշիւք Քրիստոս յարուցեալ: -323-401 Կանօն Կենսաբեր Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի -Այսօր յարեաւ ի Մեռելոց: - 402 [Համբարձման պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով]- Որ էջն ի վերուստ՝ յաշխարհիս ներքին: -403-429 Կանօն Համբարձման Քրիստոսի. Օրի. ԴՁ (ԿԱ) – Համբարձաւ Տէրն մեր յերկինս: - 430[Հոգեգալստեան պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Բղխումն ի Հօրէ՝ Աստուած Սուրբ Հոգին: -431 -472 Կանօն Պենտէկոստէին.ՕրինութիւնԴՁ (ԿԴ) – Առաքելոյ Աղաւնւոյ – 473 [Մկրտութիւն Արաճանիի ափին պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Սուրբ Լուսաւորիչն՝ զարքայն Տրդատէս: -474-489 Կանոն Սրբոյն Գրիգորի Լուսաւորիչին մերոյ. Օրի. ԲՁ (ՀԳ) – Ով երջանիկ Տէր Սուրբ Գրիգոր: -490 [Ս. Հռիփսիմէի և Ս. Գայանէի պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Անմահ փեսային՝ երջանիկ հարսունք: -491-509 Կանոն Սրբոց Հռիփսիմեանց. Օրի. ԴԿ (ՀՋ) – Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի: -510 [Պայծառակերպութեան պատկերի ներքոյ

չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Յիսուս հրաշացեալ ի լեառըն Թաբօր: -511-524 Կանօն Վարդավառին Առաջնոյ աւուր. Օրի. ԱՁ (ՀԸ) – Որ ի լերինն: -525 [Ս. Էջմիածնի հիմնարկման նկարի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Սխրագործ յօրինմամբ նոր իմն յայտնեցար:-526-529 Կանօն Շողակաթին. Օրի. ԳՁ (ՁԱ)- Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի: -530 [Վերափոխման պատկերի ներքոյ] -Աստուածամայր կոյսն ամէնօրհնեցեալ: -531-547 Կանօն Վերափոխման Աստուածածնին: Օրի. ԴՁ (ՁԲ) – Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին: - 548 [Խաչելութեան պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Երկիր պագանեմք խաչիդ պատուական: -549-608 Կանօն նաւակատեաց Սուրբ Խաչին. Օրի. – Ի վերայ վիմի հաւատոյ: - 609 [Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակապետերի պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Սուրբ Երրորդութեան հրաբուն պաշտօնեայք: - 610-651 Կանօն Սրբոց Հրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի և ամենայն երկնայնոց Զօրացն.Օրի. ԲԿ (Ճ) – Որ յանէից ստեղծեր: - 652-662 Կանօն Սրբոց Ղևոնդեանց. Օրի. ԴՁ (ՃԲ) – Որ յառաջագոյն սահմանեցեր: -էջ 662-674 [Երգ աւուրցն Արարչութեան]: - 675-685 Երգ Արևագալին [և այլք]: -686 [Սրբոց՝ Աստուածային Աթոռի առջև պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Գումարտակ Սրբոցն յԱստուծոյ ընտրեալ: -687-735 Կանօն համօրինաց Մարտիրոսաց (ՃԷ). Հարց. ԱՁ – Ըզքեզ արդար և ուղիղ դատաւոր: -736 [Ահեղ Դատաստանի պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով]- Գայ Քրիստոս փառօք դատել զազգ մարդկան: -737-799 -Կանօն համօրինաց աննջեցելոց ի Քրիստոս. Հարց. ԱՁ (ՃԺԵ)-Օրհնեալ ես Դու Քրիստոս: -800 [Քրիստոս շրջապատուած առաքեալներով պատկերի ներքոյ չորս տող չափածոյ հետևեալ սկսուածքով] –Երգեսցուք երգ նոր անձկութեամբ հոգւոց: -801-854 Կարգ Օրհնութեանց Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ԱՁ (ՃԻԴ) -Երգեսցուք երգ նոր Աստուծոյ Փըրկչին մերոյ: -855-884 Քաղուածք օրհնութեանց՝ տօնից Տէրունականաց: -885 Վասն թուոց Շարականաց և նոցին Հարցից ըստ ձայնիցն: -886 -Ձայնագիւտ այսպէս արա: - Եւ ձայնք են այսոքիկ: Անուանք խազից շարականաց: - 887-889 Այք ի նախահարցն մերոց զայս երգս կամ շարականս յօրինեցին:- 890 Աղիւսակ Ձայնագիւտական, որով դիւրագոյն լինի գտանել զձայնն աւուր: - 891 Խրատ վասն կիրառութեան հանդիպակաց Ձայնագիւտական Աղիւսակիդ: - 892 – 895 Յիշատակարան Տպեցման և Տպողաց Շարակնոցիս:

«Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 634-635

13. (892) ՍԻՄԷՕՆ ԵՐԵՒԱՆՑԻ: ՏԱՂԱՐԱՆ: Ս. Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսաւորչի, 1793:

ՏԻՏՂԹ.՝ ՏԱՂԱՐԱՆ ՓՈՔՐԻԿ: Շարահիւսեցեալ ի Սիմէօնէ սրբազան Կաթուղիկոսէ Հայոց՝ յայլ և այլ ժամանակս: Դարձեալ վերստին տպագրեցեալ ի սպառիլ առաջնոց տպագրեցելոցն, ի թախանձանաց սիրատարփ խնդրողաց:

Ի Վեհափառ Հայրապետութեան Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, և նորին իսկ հրամանաւ: Ամի Փրկչին հանուրց, ՌՉՂԳ [1793]: Եւ ի թուականիս Հայոց՝ ՌՄԽԲ [1242]:

Ի սուրբ Էջմիածին: Ի տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

45 զարդափակ էջ: Ութածալ, մամուլանիշերը հայատառ: Շարվ. չափը շրջանակով՝ 10,8 x 7 սմ: Տիտղթ. զարդափակ, դարձերեսին փորագիր պատկեր: 2 վերջազարդ, 1 զարդագիր: Բնագիրը 10 կետաչափի բոլորագրով, օգտագործված են նաև նոտրգիր և գլխագրեր:

Զարդանկարչութիւն. Փորագրապատկեր՝ Ս. Ծնունդ՝ 2, Ս. Էջմիածինը Արարատի և Նոյեան տապանի համապատկերում՝ 42:

ԲՈՎԱՆԴ.՝ Էջ 2 [Ս. Ծննդեան պատկերը հետևեալ մակագրութեամբ]-Աստուածածին մայր Քրիստոսի. ընդ մեր մաղթեա Քո Միածնի: Էջ 3-4 Տաղ ի սուրբ Ծնունդն Քրիստոսի ի դիմաց Սրբուհւոյ Աստուածածնին, ասացեալ տեառն Սիմէօնի սրբազան Կաթուղիկոսի: (Ա) -Խորհուրդ մեծ յայտնեցաւ այսօր յաշխարհի: -4-5 Նորին Տաղ առ սուրբ Աստուածածինն: (Բ) - Սիրելի մայր իմոյ Փրկչին: -5-7 Նորին՝ առ ամենաբժիշկն Յիսուս, ասացեալ ի հիւանդութեանն: (Գ) -Սէր անուն Յիսուս սիրելի: -7-10 Նորին առ սուրբ Էջմիածին ասացեալ ի հեռուստ վայրէ: (Դ) -Ի տարանջատ վայրէս ահա՝ առընծայեմ քեզ ողջոյն: -10-11 Նորին դարձեալ՝ առ սուրբ Էջմիածին ներբողեան հանդերձ խնդրուածովք: (Ե) -Ի բոլոր աշխարհի ոչ գոյ քեզ նման: -12-13 Նորին՝ առ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր: (Զ) - Արի Լուսաւորիչ մեր: - 13-16 Նորին՝ ի դիմաց ազգիս հայոց առ մայրս մեր սուրբ Էջմիածին աղերս, և ի սմանէ պատասխանիք առ նոսա: (Է) - Ի գիրկ ծնողիդ մերոյ հանգչիլ ճրբ իցէ: -16-18 Նորին՝ առ Աստուածակոխ քաղաքն Սուրբ Երուսաղէմ: (Ը) - Ի բոլոր աշխարհի՝ յատկացեալ տեղի: -18-20 Նորին ստգտանք յանձն իւր: (Թ) - Նախատանաց ես արժանի: -20-22 Նորին բողոք ի սուտ կենցաղոյս: (Ժ) -Ի յայս անկայուն՝ և սուտ աշխարհէս:-22-24 Նորին՝ ոգորումն ընդ աշխարհս այս խաբօղ: (ԺԱ) - Ի քոց ձեռացդ ես ոիւր փախեայց: -24-27 Նորին՝ հառաչանք առ Աստուած վասն թշուառութեանցն երկրիս հայոց և սրբոյ Աթոռոյս. ի թուականիս մերում ՌՃՂՋ [1196=1747]: (ԺԲ) - Ով բարերար և մարդասէր Տէր իմ Աստուած պետական: -28-31 Նորին ասացեալ յաւուրս հայրապետութեանն… (ԺԳ) - Ի քեզ կարդամ ով Արարիչ բոլորից: -31-33 Նորին՝ քաջալերութիւն և յուսադրութիւն ցաւաշատ և տրտմաթախիծ անձին: (ԺԴ) - Ով պանդուխտ այր դու: -33-35 Նորին ի դիմաց միաբանից սրբոյ Աթոռոյս և ամենայն սոցապիսեաց շնորհակալութիւնք առ Աստուած: (ԺԵ) - Ի քոց բարեացդ լիացեալ յագեցաք: -36-37 Նորին ասացեալ առ ծով մրրկեալ՝ ի ժամ ալեկոծութեան: (ԺԶ) - Ի հատուցումն իմոց չարեաց: -38-42 Նորին Դաւանութիւն և Մաղթանք առ Սուրբ Երրորդութիւն… (ԺԻ) - Աստուած հըզօր՝ Հայր գթութեան: -43 Աղօթք ձայնիւ երգել ի յեկեղեցւոջն ընդ Տէր Ողորմեային: - Արի Աստուած հարցըն մերոց: -44 Հանդէպ համարագրացդ եդեալ տաղքն ցուցանէն զեղանակս տաղից տետրակիս: -45- Յիշատակարան

«Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 679-680

14. (910) ՄԱՇՏՈՑ: Ս. Էջմիածին, առանց տպարանի հիշատակութ., 1794:

Ա ՏԻՏՂԹ.՝ ԳԻՐՔ ԿՈՉԵՑԵԱԼ ՄԱՇՏՈՑ յանուն Սրբոյն Մաշտոցայ Երկնակենցաղ և Իմաստուն Վարդապետին մերոյ՝ Յօրինողի սորին: Որ է ՑՈՒՑԱԿ բազմաց սրբարար Կարգաց և Արարողութեանց սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց:

Բ ՏԻՏՂԹ.՝ ՄԱՇՏՈՑ ԳԻՐՔ ՅՈՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿԻՆ ԿԱՐԳՔ և խրատք կատարման եօթանց սրբազանից Խորհրդոց Եկեղեցւոյ, և այլ Կանոնք օրինութեանց ի վերայ զանազան իրաց՝ որպէս Խաչի, Եկեղեցւոյ և այլոց: Արարեալք և կարգեալք ըստ կիսոյն ի Սրբոյ Լուսաւորչէն մերմէ և յայլոց նախնեաց Աստուածարեալ Հարցն սրբոց, և ըստ կիսոյն յօրինեալք ի Հոգելից հայրապետացն Իսահակայ և Մեսրոպայ և յաշակերտաց նոցին՝ մերոցս Թարգմանչաց, և բնաւքն լրացուցմամբ առ ի նոցունց սահմանեալք յեկեղեցիս Հայաստանեայց: Ապա ի մի գիրս ժողովեցեալք յերանաշնորհ վարդապետէն մերմէ ի սրբոյն Մաշտոցայ հայրապետէն: Եւ զկնի յոմանց հանճարամիտ բանասիրաց և ևս ճոխացուցեալ պատշաճական երգօք և ինչ ինչ արարողութեամբք: Հուսկ յետոյ՝ և ի ձեռն զգուշաւոր գիտնականաց ոմանց ըստ մասին յապաւեցեալ յաւելորդացն բառից և բանից՝ և վայելչագոյն ևս կարգադրեցեալ: Իսկ նարդենիս համեմատութեամբ ընտիր օրինակաց, և կարևոր զգուշութեամբ տպագրեցեալ ի Սուրբ Էջմիածին: Հրամանաւ տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, ի չորեքտասաներորդում ամի Հայրապետութեան նորին: Յամի Փրկչին՝ 1794: Եւ ի Թուականիս Հայոց՝ ՌՄԽԳ [1243]: Արդեամբք բարեպաշտ և իմաստնախոհ պարոն Յօհանջան աղային Գէրաքեանց՝ Ջուղայեցւոյ, բնակեցեալ ի Սուրաթ քաղաքի:

88 (ՁԸ) զարդափակ էջ, կրկնակի էջակալություն հայատառ և արաբական թվանշաններով: Ա տիտղթ. խորանի մեջ, Բ տիտղթ. զարդափակ: 1 փորագիր պատկեր՝ 2-րդ էջում: Գլխազարդեր, լուսանցազարդեր և զարդագրեր: Բնագիրը բոլորագրով, օգտագործված են նաև գլխագրեր և նոտրգիր:

Զարդանկարչութիւն. Փորագրապատկեր՝ մէկ շրջանակի մէջ վերևում Սուրբ Երրորդութիւնը, կենտրոնում՝ Սուրբ Էջմիածինը շրջապատուած եկեղեցու եօթ խորհուրդները ներկայացնող պատկերներով՝ էջ 2:

Լուսանցանկարներ. Ս. Ստեփաննոս Նախավկայ՝ էջ 70, Մատուռ եկեղեցի՝ էջ 19, 69, 85-87

Կիսախորան՝ էջ 3

Ճակատազարդ՝ էջ 18, 49, 54, 69, 87:

ԲՈՎԱՆԴ.՝ Էջ 2 [Եկեղեցու եօթը խորհուրդները ներկայացնող փորագրապատկերի ներքոյ երկու տող չափածոյ հետևեալ սկսուածքով] – Եկեղեցի Սուրբ ի Հօրէ ընտրեալ, Միածնի Որդւոյ Նորին հարսնացեալ: - 3-18 Կանոն Հիմնարկութեան Սուրբ [գրուած է Բ փոխանակ ՍԲ] Եկեղեցւոյ, արարեալ Տեառն Յօհաննու Մանդակունւոյ Հայոց Կաթուղիկոսի –Ժողովեալ Աստուածածնոյ Քահանայապետին: - 18-49 Կանոն Նաւակատեաց Եկեղեցի օրինելոյ: Նորին տեառն Յօհաննու Մանդակունւոյ –Յերեկորեայ հսկումն լինի ի նմին եկեղեցւոջ: -49-54 Կանօն աւազան օրինելոյ. Արարեալ նորին Տեառն Յո-

հաննու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի –Հաստատեն զաւազանն ի տեղւոջ իւրում: -54-69 Կանոն խաչ օրհնելոյ. Արարեալ նորին Տեառն Յոհաննու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի – Բերեն զխաչն յեկեղեցին: -69-73 Կանոն օրհնութեան նկարեալ եկեղեցւոյ և ամենայն սրբոց պատկերաց – Յերեկոյեայ հսկումն առնին ի նմին եկեղեցւոջ: -73-77 Կանոն Փրկչական պատկեր օրհնելոյ – Բերեն զպատկերն յեկեղեցին առաջին բեմին: -78-80 Կանոն օրհնելոյ զպատկեր Սուրբ Աստուածածնին - Բերեն զպատկերն յեկեղեցին առաջի բեմին: -80-81 Կանօն սկիհ և մաղզման օրհնելոյ. Արարեալ Տեառն Յօհաննու Մանդակունւոյ - Բերեն յեկեղեցին առաջի Սուրբ սեղանոյն: -81-82 Կանոն օրհնութեան հանդերձեղէն սպասուց եկեղեցւոյ - Տանին յեկեղեցին առաջի բեմին: -82 – Կանոն նորակերտ գիրք օրհնելոյ - Բերեն յեկեղեցին և հանին ի բեմն: -83-85- Կանոն ժամահար օրհնելոյ, որ է կոչնակ - Բերեն յեկեղեցին առաջին բեմին: -85-86 Կանոն օրհնելոյ զնոր դուռն եկեղեցւոյ – Հաստատեն զդուռն ի տեղւոջ իւրում: -86- Կանոն խունկ օրհնելոյ -Տանին յԵկեղեցին, և Քահանայն ի վեր ունելով առաջի Բեմին ասէ զԱղօթս: -Ամենակալ Տէր Աստուած մեր: -87 Կանոն Նաւակատեաց Սրբելոյ պղծեալ տաճարի յանօրինաց մոլեգնութենէ և շարժեալ Սեղանոյ օրհնութիւն վերստին հաստատելոյ: Արարեալ տեառն Յօհաննու Մանդակունւոյ - Ի գիշերի հսկումն լինի:

«Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 699-700

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ 11
ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ 24

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

«Սաղմոսարան», 1771 թ. 41
Սիմէոն Երեւանցի, «Զբօսարան հոգեւոր», 1772 թ. 43
«Տօնացոյց», հտ. 1-2, 1774-75 թթ. 54
«Կանոն Սրբոյ Շողակաթին՝ այսինքն Սրբոյ Էջմիածնի» 82
«Կարգ թաղման կարգաւորաց», 1777 թ. 101
Էջմիածնականության գեղարվեստական բարձրակետը՝ «Տաղարան», 1777 թ. 105
Սիմէօն Երեւանցի, «Պարտավճար», 1779-1783 թթ. 114

ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 122

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

«Ատենի ժամագիրք», 1785 թ. 136
Յովսեպոս Փլաբիոս, «Գիրք Պատմութեանց Յովսէպոսի Եբրայեցւոյ արարեալ յաղագս պատերազմին Հրէից ընդ Հռովմայեցիս», Ս. Էջմիածին, 1787 թ. 166
«Սաղմոսարան», 1787 թ. 171
«Խորհրդատետր», 1788 թ. 182

«Շարակնոց», 1789 թ. 191
Սիմէօն Երեւանցի, «Տաղարան», 1793 թ. 237
«Մաշտոց», 1794 թ. 242
Սիմեոն Ա Երևանցու կաթողիկոսական Մաղթանքը 252
«Գիրք, որ կոչի Կտակ Մեծի Ուրբաթին» 260
«Ճաշոցի» տպագրման ծրագիրը 261

ԱՄՓՈՓՈՒՄ 266

ՀԱՎԵԼՎԱԾ 271
Ս. Էջմիածնի տպարանում 18-րդ դարում տպագրված գրքերի մատենագիտություն և գրքագիտական նկարագրություն 273

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ
ՇՈՂԱԿԱԹ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 18-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Հրատարակչության տնօրեն՝ Տ. Արարատ քահանա Պողոսյան
Հրատարակչության գլխավոր խմբագիր՝ Սարգիս Մելքոնյան
Հրատարակչական խորհրդի անդամներ՝ Տ. Մկրտիչ եպս. Պռոշյան, Տ. Ռուբեն վրդ. Զարգարյան, Տ. Ասողիկ աբդ. Կարապետյան, Տ. Արարատ քհն. Պողոսյան, Տ. Գաբրիել քհն. Վարդանյան, Գևորգ Տեր-Վարդանյան, Կարեն Մաթևոսյան
Սրբագրիչ և խմբագիր՝ Հերիքնազ Որսկանյան
Էջադրումը՝ Տ. Ղևոնդ ավ. քհն. Մայիլյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2022

Չափսը՝ 165x250 մմ, թուղթը՝ 80 գ.,
ծավալը՝ 296 էջ (18.5 տպ. մ.):

ISBN 978-9939-59-296-1